



ԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՐԱԿԻՑ
ԵՐԿՐՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ







9(47.925)

7-24

(56.)

հ.


796

Շ. Դուրանյան
Գրեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Զեռնարկ միջնակարգ դպրոցի
7-րդ դասարանի համար

4680



Հեղինակներ՝ Ա. Ա. Բոգոյան, Մ. Տ. Բոջոյան, Հ. Մ. Եզան-
յան, Ն. Հ. Հովհաննիսյան, Հ. Գ. Մարգարյան, Ա. Ա. Մել-
իսյան, Պ. Մ. Մուրադյան, Պ. Ա. Զորանյան, Ռ. Գ. Սահակ-
յան, Գ. Խ. Սարգսյան, Հ. Ա. Սվազյան, Հ. Դ. Փափազյան
Ա. Վ. Քոսյան

Բ $\frac{4306021000 (40)}{702 (01) 1992}$ 38.1992

ISBN—5—545—00923—x

©
Ա. Ա. Բոգոյան, Մ. Տ. Բոջոյան, Հ. Մ. Եզանյան, Ն. Հ. Հովհաննիսյան,
Հ. Գ. Մարգարյան, Ա. Ա. Մելիքոյան, Պ. Մ. Մուրադյան, Պ. Ա. Զորան-
յան, Ռ. Գ. Սահակյան, Գ. Խ. Սարգսյան, Հ. Ա. Սվազյան, Հ. Դ. Փա-
փազյան, Ա. Վ. Քոսյան—1992

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մերձավոր և Միջին Արևելքը, որին պատմաաշխարհագրական առումով պատկանում է նաև Հայաստանը, մարդկային քաղաքակրթության հնագույն ընթրրաններից է։ Նրա տարածքում, Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի այդ խաչմերուկում, դեռևս հազարամյակներ առաջ ձևավորվել և զարգացել են մարդկությանը հայտնի հնագույն քաղաքակրթությունները՝ իրենց մշակույթներով, կրոններով, պետական կազմավորումներով, որոնք անշնչելի հետք են թողել համաշխարհային պատմության մեջ։ Դարեր ի վեր այստեղ գոյությունը առաջընթաց է ապրել, ստեղծվել են արվեստի և դրամատիկայի զարգացման հուշարձաններ։ Մերձավոր և Միջին Արևելքը հայրենիքն է երեք նշանավոր կրոնների՝ հրեականության, քրիստոնեության և մահմեդականության, այստեղ է կատարվել մարդկային հանճարի ամենակարևոր գյուտերից մեկը՝ սեպագրի և ապա այբուբենի հայտնադրությունը։ Մի խոսքով, այստեղ է արարվել մարդկային հասարակության հնագույն շրջանի պատմությունը։

Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը սերտորեն առնչվում է այս տարածքաշրջանի իր անմիջական հարեւանների հետ։ Չնուց ի վեր նրանց միջև հաստատվել են բազմաբնույթ հարաբերություններ, որոնք ընդգրկել են քաղաքական, ռազմական, կրոնադավանական, հոգևոր-մշակութային և առևտրատնտեսական ոլորտները։ Տարբեր շրջաններում և տարբեր երկրների հետ նրանք դրսևորվել են ամենատարբեր կերպերով, ծավալով և խորությամբ, կրել են ընդհանուր բարիքների և սկզբնական, մերժ հակամարտության, զինված

բախումների և պատերազմների և մերթ՝ ողբերգական
բնույթ (Օսմանյան կայսրություն)։ Հայաստանի պատմու-
թյունը ընթացել է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների
ժողովուրդների միջավայրում, որի ազդեցությամբ կրողը և
միաժամանակ որի վրա ազդողը եղել է հայ ժողովուրդը։

Այսուհանդերձ, Հայաստանի հարակից երկրների պատ-
մությունը մինչև այսօր չի դարձել դասավանդման առանձին
առարկա։ Այժմ, երբ վերանայվում են կրթական ամբողջ
համակարգը և ուսումնական ծրագրերը, հասունացել է մեր
հարևան ժողովուրդների և երկրների պատմությունը որպես
ինքնուրույն առարկա դասավանդելու անհրաժեշտությունը։
Դա մի կողմից կնպաստի հայ ժողովրդի պատմության
ավելի խորը, բազմակողմանի և ճշմարտացի ուսումնասի-
րությանը, կօգնի ավելի օբյեկտիվ գնահատել Հայաստանի
և հայ ժողովրդի տեղն ու դերը համաշխարհային քաղաքա-
կրթության մեջ ընդհանրապես, և մերձավորարևելյան տա-
րածաշրջանի պատմության մեջ՝ մասնավորապես, իսկ մյուս
կողմից կհարստացնի հայ աշակերտի գիտելիքները և
պատկերացումները Հայաստանի շրջապատի մասին, նրան
կծանոթացնի հարևան երկրներում տեղի ունեցած պատմա-
կան և քաղաքական իրադարձություններին, մշակույթին և
այլն, որոնք այս կամ այն չափով առնչվել են հայ ժողովրդ-
դին և ազդել նրա պատմական ճակատագրի վրա։ Եվ, վեր-
ջապես, չպետք է մոռանալ, որ Մերձավոր և Միջին Արևելքի
երկրներում հին ժամանակներից ի վեր գոյություն ունեն
հայ համայնքները, և հայերը նշանակալից դեր են խաղացել
հյուրընկալ երկրների պետական և քաղաքական կյանքում,
տնտեսության և առևտրի բնագավառում և իրենց ավանդը
ներդրել նրանց մշակույթի զարգացման ոլորտում։ Հարակից
երկրների պատմության դասավանդումը որպես ինքնուրույն
առարկա նոր հեռանկարներ կբացի նրանցում ապաստան
գտած հայերի մասին աշակերտներին ավելի հիմնավոր և
բազմակողմանի գիտելիքներ տալու առջև։ Իսկ քանի որ հայ
ժողովրդի պատմությունը ոչ միայն բնօրրանի, այլև արտ-
երկրի հայության պատմությունն է, նրանց ամբողջությունը,
ապա այդ հանգամանքը ևս հարկ է նկատի ունենալ։

Սույն հարցը բացի պատմագիտական կողմից ունի նաև գործնական քաղաքական տեսանկյուն։ Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ պետություն, բնականաբար, պետք է քաղաքական, ինչպես նաև գործնական, առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ դարձացնի իր անմիջական և մերձակա հարևանների հետ։ Այդ հանգամանքը բոլորովին նոր խնդիրներ է դնում կադրերի պատրաստման առջև։ Անհրաժեշտ են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմությանը, քաղաքականությանը, տնտեսությանը և մշակութային իրադեպ մարդիկ, որոնք օգտակար լինեն Հայաստանի հարակից երկրների հետ փոխհարաբերությունների հաստատման և զարգացման հարցերում։

Այս նկատառումներով է ղեկավարվել հեղինակային կոլեկտիվը, որը հիմնականում կազմված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական աշխատողներից, որոնք տասնամյակներ շարունակ մասնագիտորեն ուսումնասիրում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմությունը՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը։

Դպրոցում առանձին դասընթացով անցնելու համար առաջարկվող երկրները բաժանվում են երեք խմբի։

Առաջին խմբի մեջ մտնում են այն ժողովուրդները, երկրները և պետությունները, որոնք վաղուց իջել են պատմության բեմից, սակայն որոնք ժամանակին մեծ դեր են խաղացել և սերտորեն առնչվել Հայաստանի հետ։ Դրանց շարքին են պատկանում Բաբելոնը, Ասորեստանը, Բյուզանդիան, Աղվանքը և այլն։

Երկրորդ խումբը կազմում են այն երկրները, որոնք առաջացել և ձևավորվել են դեռևս հին ժամանակներում և անընդմեջ հարատևում են ցայսօր, ինչպես Իրանը, Վրաստանը և ադաբական երկրները։

Երրորդ խումբը կազմում են միջին դարերում Մերձավոր և Միջին Արևելքի տարածքներում հայտնված թյուրքալեզու անասնապահ քոչվոր ժողովուրդները, որոնք նախկին քաղաքակիրթ պետությունների և հասարակությունների

քախումների և պատերազմների և մերթ՝ ողբերգական
ընույթ (Օսմանյան կայսրություն)։ Հայաստանի պատմու-
թյունը ընթացել է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների
ժողովուրդների միջավայրում, որի ազդեցության կրողը և
միաժամանակ որի վրա ազդողը եղել է հայ ժողովուրդը։

Այսուհանդերձ, Հայաստանի հարակից երկրների պատ-
մությունը միևնույն ժամանակում չի դարձել դասավանդման առանձին
առարկա։ Այժմ, երբ վերանայվում են կրթական ամբողջ
համակարգը և ուսումնական ծրագրերը, հասունացել է մեր
հարևան ժողովուրդների և երկրների պատմությունը որպես
ինքնուրույն առարկա դասավանդելու անհրաժեշտությունը։
Դա մի կողմից կնպաստի հայ ժողովրդի պատմության
ապելի խորը, բազմակողմանի և ճշմարտացի ուսումնասի-
րությանը, կօգնի ապելի օբյեկտիվ գնահատել Հայաստանի
և հայ ժողովրդի տեղն ու դերը համաշխարհային քաղաքա-
կրթության մեջ ընդհանրապես, և մերձավորարևելյան տա-
րածաշրջանի պատմության մեջ՝ մասնավորապես, իսկ մյուս
կողմից կհարստացնի հայ աշակերտի գիտելիքները և
պատկերացումները Հայաստանի շրջապատի մասին, նրան
կծանոթացնի հարևան երկրներում տեղի ունեցած պատմա-
կան և քաղաքական իրադարձություններին, մշակույթին և
այլն, որոնք այս կամ այն չափով առնչվել են հայ ժողովրդ-
դին և ազդել նրա պատմական ճակատագրի վրա։ Եվ, վեր-
ջապես, չպետք է մոռանալ, որ Մերձավոր և Միջին Արևելքի
երկրներում հին ժամանակներից ի վեր գոյություն ունեն
հայ համայնքները, և հայերը նշանակալից դեր են խաղացել
հյուրընկալ երկրների պետական և քաղաքական կյանքում,
տնտեսության և առևտրի բնագավառում և իրենց ավանդը
ներդրել նրանց մշակույթի զարգացման ոլորտում։ Հարակից
երկրների պատմության դասավանդումը որպես ինքնուրույն
առարկա նոր հեռանկարներ կբացի նրանցում ապաստան
գտած հայերի մասին աշակերտներին ապելի հիմնավոր և
բազմակողմանի գիտելիքներ տալու առջև։ Իսկ քանի որ հայ
ժողովրդի պատմությունը ոչ միայն բնօրրանի, այլև արտ-
երկրի հայության պատմությունն է, նրանց ամբողջությունը,
ապա այդ հանգամանքը ևս հարկ է նկատի ունենալ։

Սույն հարցը բացի պատմագիտական կողմից ունի նաև գործնական քաղաքական տեսանկյուն։ Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ պետություն, բնականաբար, պետք է քաղաքական, ինչպես նաև գործնական, առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ դարգացնի իր անմիջական և մերձակա հարևանների հետ։ Այդ հանգամանքը բոլորովին նոր խնդիրներ է դնում կադրերի պատրաստման առջև։ Անհրաժեշտ են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմությանը, քաղաքականությանը, տնտեսությանը և մշակութային իրազեկմարդիկ, որոնք օգտակար լինեն Հայաստանի հարակից երկրների հետ փոխհարաբերությունների հաստատման և զարգացման հարցերում։

Այս նկատառումներով է ղեկավարվել հեղինակային կոլեկտիվը, որը հիմնականում կազմված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական աշխատողներից, որոնք տասնամյակներ շարունակ մասնագիտորեն ուսումնասիրում են Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմությունը՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը։

Դպրոցում առանձին դասընթացով անցնելու համար առաջարկվող երկրները բաժանվում են երեք խմբի։

Առաջին խմբի մեջ մտնում են այն ժողովուրդները, երկրները և պետությունները, որոնք վաղուց իջել են պատմության բեմից, սակայն որոնք ժամանակին մեծ դեր են խաղացել և սերտորեն առնչվել Հայաստանի հետ։ Դրանց շարքին են պատկանում Բաբելոնը, Ասորեստանը, Բյուզանդիան, Աղվանքը և այլն։

Երկրորդ խումբը կազմում են այն երկրները, որոնք առաջացել և ձևավորվել են դեռևս հին ժամանակներում և անընդմեջ հարատևում են ցայսօր, ինչպես Իրանը, Վրաստանը և արաբական երկրները։

Երրորդ խումբը կազմում են միջին դարերում Մերձավոր և Միջին Արևելքի տարածքներում հայտնված թյուրքալեզու անաանապահ բոլոր ժողովուրդները, որոնք նախկին քաղաքակիրթ պետությունների և հասարակությունների

րի փլատակների փրա ստեղծեցին իրենց կազմավորումները: Դրանցից առաջինը 13-րդ դարի վերջին Փոքր Ասիայի տա-
րածքում ձևավորված Թուրքական պետությունն է, որը հե-
տագայում վերածվեց Օսմանյան կայսրության, իսկ երկ-
րորդը՝ Անդրկովկասի արևելյան մասում ավելի ուշ առա-
ջացած կազմավորումները, որոնք 1918 թ. ստացան Ադրբե-
ջանի Հանրապետություն անվանումը:

Ժամանակագրական առումով սույն ձեռնարկն ընդգրկում
է հին շրջանից մինչև 1918 թ., երբ ավարտվեց մի ամբողջ
պատմական դարաշրջան, և նոր էջ սկսվեց Հայաստանի և
նրա հարևան երկրների պատմության մեջ: Ի նկատի ունենա-
լով Օսմանյան կայսրության կործանումը, արարների Թուրքա-
կան լծից ազատագրումը և հետագայում իրենց անկախ պե-
տությունների ստեղծումը, 1918 թ. մայիսի 26-ին Վրաստա-
նի, իսկ մայիսի 28-ին Հայաստանի իրենց կորցրած պե-
տականության վերականգնումը, տեղի ունեցած կարևոր
իրադարձությունները իրանում և Թուրքիայում: Այս նկա-
տառումներից ելնելով է, որ պատմության շարադրանքը
հասցվել է մինչև առաջին համաշխարհային պատերազմի
ավարտը:

Հանդիսանալով առաջին և դեռևս միակ ուսումնական
ձեռնարկը՝ «Հայաստանի-հարակից երկրների պատմությու-
նը» նախատեսված է ինչպես 7-րդ դասարանի աշակերտ-
ների, այնպես էլ ուսուցիչների և բարձր դասարանների
սովորողների համար, որի պատճառով ձեռնարկում մի շարք
պատմական դեպքեր և իրադարձություններ տրված են
ամենալին մանրամասնություններով, օգտագործված են
բազմաթիվ թվեր, անուններ, երկրանուններ և այլ փաստա-
գրական նյութեր, իսկ «Հայաստանի հարակից երկրների
պատմությունը» ներկայացված է մինչև 20-րդ դարի առա-
ջին քառորդը: Այդ պատճառով 7-րդ դասարանում անցնելիք
սլաքտադիր ուսումնական նյութը ձեռնարկում տրված է
բոլորապիսի տառերով, իսկ մնացած մասը՝ մանրատառերով
(պետիտով):

«Հայաստանի հարակից երկրների պատմություն» ձեռ-

նարկը», որն իր տեսակի մեշ առաջին փորձն է, գրել է հե-
ղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով.

1. Հ. Զ. Ալեքսանյան, պատմական գիտությունների
թեկնածու — Ներածություն:

2. Ա. Ա. Բոզոյան, պատմական գիտությունների
թեկնածու — Փոքրասիական երկրներ, գլուխ 2-րդ, § 3:

3. Մ. Տ. Բոջոյան, պատմական գիտությունների թեկ-
նածու — Թուրքիա, գլուխ 4-րդ, § 1:

4. Հ. Մ. Եգանյան, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր — Իրան, գլուխ 8-րդ, § 6, 7:

5. Ն. Հ. Հովհաննիսյան, պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր — Ներածություն, Արարական երկրներ,
գլուխ 3-րդ, § 2, 3:

6. Հ. Գ. Մարգարյան, պատմական գիտությունների թեկ-
նածու — Վրաստան, գլուխ 5-րդ:

7. Ա. Ա. Մելիքյան, պատմական գիտությունների թեկ-
նածու — Արարական երկրներ, գլուխ 3-րդ, § 1:

8. Պ. Մ. Մուրադյան, պատմական գիտությունների դոկ-
տոր — Աղվանք, գլուխ 6-րդ, § 3, Վրաստան, գլուխ 5-րդ,
Ադրբեջան, գլուխ 7-րդ, § 1:

9. Պ. Ա. Չոբանյան, պատմական գիտությունների թեկ-
նածու — Ադրբեջան, գլուխ 7-րդ, § 2, 3:

10. Ռ. Գ. Սահակյան, պատմական գիտությունների
դոկտոր — Թուրքիա, գլուխ 4-րդ, § 2:

11. Գ. Խ. Սարգսյան, ՀԳԱ իսկական անդամ — Հին Մի-
ջագետք, գլուխ 1-ին, Փոքրասիական երկրներ, գլուխ 2-րդ,
§ 2, Իրան:

12. Հ. Ս. Սվազյան, պատմական գիտությունների թեկ-
նածու — Աղվանք, գլուխ 6-րդ, § 1, 2:

13. Հ. Դ. Փափյազյան, պատմական գիտությունների դոկ-
տոր, պրոֆեսոր — Իրան, գլուխ 8-րդ, § 3, 4, 5:

14. Ա. Վ. Ջոսյան, պատմական գիտությունների թեկնա-
ծու — Փոքրասիական երկրներ, գլուխ 2-րդ, § 1:

Ձեռնարկը խմբագրել են ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Խ. Սար-
գսյանը, պատմական գիտությունների դոկտորներ
Ն. Հ. Հովհաննիսյանը և Պ. Մ. Մուրադյանը, պատմական
գիտությունների թեկնածու Հ. Զ. Ալեքսանյանը:

ԳԼՈՒԽ առաջին

ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ

§ 1. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ Մ.Թ.Ա. 8-ՐԴ ՀԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Շումեր և Աքքադ: Մարդկության քաղաքակրթության օրրանը երկու բարեբեր հովիտներ են եղել՝ Նիլոսի և Տիգրիս գետերի ավազանը, որը սովորաբար անվանում են Միջագետք՝ Ասիայում, և Նեղոսի հովիտը՝ Աֆրիկայում:

Հնագույն պետություններ. Շումերը և Աքքադը առաջացել են Պարսից ծոցին հարող Ստորին կամ Հարավային Միջագետքում: Սրանց բնակիչները խոսում էին տարբեր լեզուներով: Շումերերենը այժմ հայտնի լեզուների մեջ իր հարազատը չունի, իսկ աքքադերենը սեմական լեզու է, հարազատ արաբերենին ու եբրայերենին:

Ստորին Միջագետքի մանր քաղաք-պետությունները՝ Ուրուքը, Ուրը, Լագաշը և ուրիշներ, որոնք կառավարվում էին արքայիկների ու քրմապետների կողմից և անդադար զինված բախումների մեջ էին, մ. թ. ա. 3-րդ հազ. կեսերին սկսում են միավորվել, կազմում են ավելի խոշոր պետություններ և դիմում արտաքին նվաճումների ու ասպատակությունների:

Այսպես, Աքքադի Սարգոն թագավորը (մ. թ. ա. 2316—2261 թթ.) և նրա թոռ Նարամ-Սուենը (մ.թ.ա. 2236—2200 թթ.)՝ միավորելով Շումերը և Աքքադը, ասպատակում են Վերին կամ Հյուսիսային Միջագետքը, Հայ-

կական լեռնաշխարհի հարավային եզրերը, Հյուսիսային Ասորիքը, որտեղ ծաղկել էր հնադույն քաղաքակրթության կենտրոններից ևս մեկը՝ էրլա քաղաք պետությունը, և նույնիսկ՝ Փոքր Ասիան, Նարամ-Սուենը նվաճում է էրլայի հետ հիշատակվող Արմանում երկիրը, որի անվանումը ոմանք կապում են «արմեն» ցեղանվան հետ:

Մ.թ.ա. 22-րդ դ. վերջին Միջագետքը միավորվում է Ուր քաղաքի թագավորների իշխանության ներքո (Ուրի 3-րդ հարստությունը) և ստեղծում տնտեսապես ու քաղաքականապես ծայրահեղորեն կենտրոնացված մի պետություն, որը հիմնված էր համայնականների և ստրուկների շահագործման վրա: Այդ պետությունը, հարատևելով շուրջ մեկ դար, քայքայվում է և նվաճվում լեռնային ցեղերի կողմից:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամ գիրը, դպրությունը ստեղծվել են Շումերում, նախապես պատկերազրի ձևով, և սկզբում օգտագործվել են սոսկ տնտեսական հաշվարկների համար: Պտուտակիշի նման տափակ ծայր ունեցող գրչով կավե սալիկի վրա արվող պատկերները հետզհետե ստանում են վերացական սեպախմբերի տեսք, և այդպես ստեղծվում է սեպագիրը, որի «այբուբենը» կազմված է հարյուրավոր դադափարագրերից և վանկագրերից: Այն ընդունվեց աքքադցիների կողմից և հարմարեցվեց իրենց լեզվին: Աքքադցիներից էլ այն ժառանգել են նրանց հետնորդներ բաբելոնացիներն ու ասորեստանցիները, իսկ սրանցից՝ խեթերը, խուռիներն ու ուրարտացիները: Էլամի սեպագիրը ևս ծագում է աքքադականից:

Շումերական գրականությունն ընդգրկում է օրհներգեր, ողբեր, երգ-պոեմներ, առասպելներ և այլն:

Դրանք նվիրված են երկնքի, երկրի և ծովի աստվածներ էնլիլին, Անուին, էային, գլխավոր դիցուհի Ինանային և սրա տարփածու՝ մեռնող և հարություն առնող աստված Դումուզիին, ալքի ընկնող թագավորներին, զանազան քաղաքներին, տաճարներին և այլն: Շումերում է ծագել համաշխարհային ջրհեղեղի առասպելը, որի հերոս Զիսուռդրան այնուհետև աքքադական միջավայրում դարձել է Ուտնապիշտիմ, իսկ հրեականում՝ Նոյ նահապետ:

Շումերական ճարտարապետական ձևերից հարկ է նշել տաճարային բազմաստիճան աշտարակ զիկուրատը, որից էլ ծագել է հայտնի «Բաբելոնյան աշտարակի» դադափարը:

Բաբելոնիա (Ռիմ և միջիմ շրջաններ): Շումերի և Աք-
քադի անկումից հետո մեծանում է Վերին և Ստորին Մի-
ջագետքերի սահմանին գտնվող Բաբելոն քաղաքի դերը: Սա
կարողանում է միավորել ողջ Միջագետքը: Բաբելոնիայի
թագավորներից աչքի է ընկնում Համուրաբին (մ.թ.ա. 1792-
1750 թթ.), որը բացի բազմաթիվ նվաճումներից ու լայնա-
ծավալ շինարարական գործունեությունից բարեփոխություն-
ներ է մտցնում երկրի կյանքի մի շարք բնագավառներում:
Համուրաբիի կարևորագույն ձեռնարկումը նրա հռչակավոր
օրենքների ժողովածուի ստեղծումն էր, որը շատ ավելի կա-
տարյալ էր, քան նախորդ թագավորների նմանօրինակ փոր-
ձերը (Ուրուինիմզինայի, Ուրնամմուի, Լիպիտ-Իշտարի և
այլն) և իր ազդեցությունն է գործել հետագա բոլոր երկր-
ների օրենսդրությունների վրա:

Ժողովածուն ընդգրկում է 282 հոդված, որոնք նվիրված են արդարա-
դատության ընդհանուր սկզբունքներին, մասնավոր սեփականության պաշտ-
պանությանը, առևտրական և այլ տիպի գործարքներին, մարմնական
վնասվածքների հատուցմանը և այլն:

Համուրաբիի օրենքներում ցցուն կերպով դրսևորվում է
հասարակության սոցիալական կառույցվածքը: Այն բաղկա-
ցած էր «ամարդկանցից» (կամ «ամարդու որդիներից»), որոնք
կազմում էին ազատ և լիիրավ քաղաքացիների դասը, «խո-
նարհվողների» կախյալ դասից և իրավազուրկ ստրուկներից:
Սրանց կատարած կամ սրանց նկատմամբ կատարված հան-
ցագործությունները տարբեր պատժաչափերի էին արժա-
նանում: Այնտեղ, ուր ստրուկին կամ «խոնարհվողին» մա-
հապատիժ էր սպառնում, «ամարդու որդին» ազատվում էր
տուգանքի վճարմամբ և այլն: Մյուս կողմից, սակայն,
օրենքները չափավորում էին վաշխառուների ախորժակները,
սահմանափակում էին պարտային ստրկությունը երեք տա-
րով և այլն:

Համուրաբին ամրապնդում է պետական իշխանությունը,
արգելում մասնավոր միջազգային առևտուրը, հողի առու-

ծախքը նրա բարեփոխությունները հիմնականում պահպանողական բնույթ էին կրում:

Հին բարեխոյան պետությունը գոյություն ունեցավ մինչև մ.թ.ա. 1595 թ., երբ Բաբելոնը գրավվեց ու ավարառության ենթարկվեց խեթական թագավոր Մուրսիլիս I-ի կողմից, որից օգտվելով հյուսիսից ներթափանցած կասսիտական ցեղերը նվաճեցին այն և գրավեցին երկրի թագավորական փշխանությունը:

400-ամյա կասսիտական (միջին բաբելոնյան) շրջանը հարուստ չէ պատմական իրադարձություններով:

Հայտնի է Հայաստանում՝ Մեծամորում, մ.թ.ա. 10-րդ դարի դամբարանում պեղված ազաթե մի գորտածե կշռաքար՝ մեկ սիկլ (8,5 գ) ծանրությամբ, որը հնազույն շփումների մի վկայություն է: Վրան փորադրված են կասսիտական երկու թագավորների՝ Բուռնարուրարիաշի և սրա որդի Ուլամբուրարիաշի անունները: Սրանք թագավորել են մ.թ.ա. 16-15-րդ դդ.:

Բաբելոնյան սեպագիրը, ինչպես ասվեց, ժառանգված է շումերա-աքքադյան սեպագրից: Պահպանվել են տասնյակ հազարավոր սեպագրական սալիկներ՝ տնտեսական, իրավական, ծխական, գիտական, ինչպես նաև գրական-գեղարվեստական բովանդակությամբ: Վերջիններից կարևորագույնն է Գիլգամեշ հուշակավոր էպոսը՝ բաբելոնյան գրականության զուլխ-գործոցը, որը պարունակում է նաև համաշխարհային ջրհեղեղի առասպելի աքքադերեն տարբերակը: Հարուստ տվյալներ կան կրոնի մասին:

Բաբելոնյան կրոնում օւմեդ էին շումերական տարրերը. պահպանվում էր էնիլ-Անու-էա եռյակի պաշտամունքը, սակայն առաջին տեղը զիցարանում պատկանում էր Բաբելոնի զլխավոր աստված Մարդուկ-Քեթին: Մեծ տեղ ունեին սեմական Շամաշ (արեի), Սին (լուսնի), Ադադ (ամպ-րոպի) և մանադանդ կանացի Իշտար աստվածությունները:

Բաբելոնյան գիտությունը մեծ նվաճումներ է ունեցել աշխարհագրության, մաթեմատիկայի (նրանց հայտնի էր Պյութագորասի թեորեմի էությունը), հատկապես աստղաբաշխության բնագավառներում: Վերջինս իր ազդեցությունն է դործել համաշխարհային գիտության վրա: Աստղաբաշխության հետ սերտորեն կապված էր լայն համարում ստացած աստղագուշակությունը:

Միտամի պետությունը: Մ.թ.ա. 17-16-րդ դդ. եզրին վերին Միջագետքում առաջանում է Միտանի (Խուռի) պետությունը, որի բնակիչները խոսում էին ուրարտեերենին ազգակից խուռիերեն լեզվով, որը գրի էր առնվում ասուրաբարելոնյան սեպագրով: Սակայն իշխող թագավորական հարստությունն այստեղ հնդկական ծագում ունեւր, որի մասին են վկայում նրա ներկայացուցիչների անունները: Պետության հիմնադիրն էր Շուտարնա թագավորը:

Պարատարեան նվաճեց Հյուսիսային Ասորիքը, Սաուսադատարը ասպատակեց Աշշուր քաղաք-պետությունը: Թագավորության մայրաքաղաքն էր Վաշշուգանին: Միտանիում մեծ զարգացում ստացավ ձիարուծությունը, և նրա բանակի կարևոր մասն էին կազմում ռազմականքերը, որոնց կառավարներն անվանվում էին հնդկական մարիանի բառով:

Վերջին թագավորներից էր Թուշրատան (մ.թ.ա. 14-րդ դ. առաջին կես), որը ժամանակի միջազգային լեզու աքքադենքենով նամակագրություն էր վարում Եգիպտոսի էխնաթոն փարավոնի հետ: Խեթերի հետ պատերազմում ծանր պարտություն կրելուց հետո Միտանին մ. թ. ա. 13-րդ դ. կեսերին նվաճվում է հզորացած Ասորեստանի կողմից:

Խուրիական գլխավոր աստվածն էր Բեշուրը (ուրարտացիների Բեշեբան), արևի աստվածը՝ Շիմհեին (ուրարտացիների Շիվինին), կանացի աստվածությունները՝ Հեբաթը, Շաուշկան: Սրանց կողքին արքունիքում ընդունված էր հնդկական Միթրա, Վարունա, Ինդրա, Նասատյա աստվածների պաշտամունքը:

Ասորեստան (հին և միջին շրջաններ): Ասորեստանը սկզբնապես փոքր տարածք է գրավել՝ Տիգրիսի միջին հոսանքի հովտում դասվող Աշշուր քաղաք-պետության շրջակայքը: Աշշուրը մ. թ. ա. 2-րդ հազ. առաջին դարերում սերտ առևտրական կապերի մեջ էր Առաջավոր Ասիայի մի շարք կենտրոնների և, առաջին հերթին, փոքր Ասիայի Կանիշ քաղաքի հետ, որը, փաստորեն, նրա մի մասնաճյուղն էր կազմում: Աշշուրն արտահանում էր անագ ու գործվածքեղեն և ներմուծում արծաթ:

Մ.թ.ա. 2-րդ հազ. կեսերին Աշշուրն սկսում է ընդլայնել իր տարածքը և նվաճելով արևելքում Տիգրիս գետի ավազանի, իսկ հյուսիս-արևելքում՝ Զագրոս լեռների շրջանները, հիմք դառնում Ասորեստանյան թագավորության:

Աղաղների 1-ին (մ. թ. ա. 1307-1275 թթ.) թագավորը հաղթանակ է տանում Միտանիի նկատմամբ, իսկ նրա հաջորդ Սալմանասար I-ը (մ. թ. ա. 1274-1245 թթ.) վերջնականապես նվաճում է այն և շրջվում դեպի հյուսիս, Հայկական լեռնաշխարհը, ուր Վանա լճի ավազանում բախվում է Ուրուաուրի ցեղային միության 8 ցեղերի հետ։ Սրա հետևորդը՝ Թուկուլթինինուրթա I-ը (մ. թ. ա. 1244-1205 թթ.), նվաճում է Բաբելոնիան և ասպատակության ենթարկում Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում գտնվող Նախրի ցեղային միությունը։

Թիգլաթպալասար I-ի ժամանակ (մ. թ. ա. 1115-1077 թթ.) առանձնապես աշխուժացել էր Արարական թերակղզուց նախորդ դարերում հայտնված արամեացիների ներթափանցումը Միջագետք։ Նշենք, որ հաջորդ դարերում ևս այն շարունակվեց, և դրա հետևանքը եղավ Առաջավոր Ասիայի մեծ տարածությունների արամեացումը։ Ահա, Թիգլաթպալասար I-ը խոշոր ջանքեր է թափում նրանց առաջխաղացումը խոշրնդոտելու ուղղությամբ և որոշ ժամանակավոր հաջողությունների հասնում։ Հյուսիսում, Հայկական լեռնաշխարհում, նա մի մեծ արշավանք է իրականացնում Նախրի ցեղային միության դեմ, հաղթում է տասնյակ ցեղերի միացյալ ռազմական ուժերին, հասնում հյուսիսում Դիաուխի (Տայք) երկրին ու Սև ծովի ափերին։ Հյուսիս-արևմուտքում նա բախվում է հայալեզու մուշկու և ուրումու ցեղերի հետ։ Թիգլաթպալասար I-ից հետո Ասորեստանը ժամանակավոր քաղաքական ու ռազմական թուլություն է ապրում։

Ասորեստանի մշակույթը մեծապես աղղված էր շումերականից և վերջինիս գլխավոր ժառանգորդ բաբելոնյան մշակույթից։ Նույն ակունքներն ունի և ասորեստանյան սեպաագիրը։

Կրոնական պատկերացումները և դիցարանը հար և նման էին բաբելոնյանին, սակայն Ասորեստանում գլխավոր, աստված էր համարվում Աշուր քաղաքի նույնանուն Աշշուր աստվածը։ Հայտնի է միջին-ասորեստանյան շրջանի օրենքների ժողովածուն, Աշքի ընկնող զրական հուշարձաններ են Ասորեստանի հզոր արքաների գործունեությունը, առավելապես՝ նրանց ռազմական ձեռնարկումները նկարագրող ու փառաբանող արձանագրությունները։

§ 2. ՄԻՋԱԳԵՏՔԸ Մ.Թ.Ա. 2-ՐԴ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ Մ.Թ.Ա. 7-ՐԴ ԴԱՐԸ

Փյունիկիա և Պաղեստին: Միջերկրականի արևելյան առափնյա շրջանը հնագույն ժամանակներից սկսած մեծ դեր է կատարել Արևմուտքի և Արևելքի նյութական ու հոգևոր արժեքների փոխանակման գործում: Փյունիկիայի (այսօրվա Լիբանանի) վաճառաշահ նավահանգիստները՝ Բիբլոսը, Ուդարթը և մյուսները, դարձան նաև դպրության նոր և հեռանկարային ձևի՝ տառային (այբբենական) գրության օրբան: Ժամանակի տարածված դպրությունները՝ սեպագրականը և եգիպտական հիերոգլիֆայինը, խիստ բարդ էին թե՛ սովորելու, և թե՛ կիրառելու առումով: Նվաճա, վերոհիշյալ քաղաքներում, առևտրական խավերի պահանջմունքներից ի պատասխան, ծնվում են աշխարհում առաջին այբուբենները: Նախապես սրանցում կար մինչև 100 վանկանշան, հետագայում, կորցնելով ձայնավորները, դրանք նվազեցին, հասնելով 22 տառանշանի, որոնք և լայն տարածում գտան ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, կազմելով այսօր գործածվող այբուբենների հիմքը:

Պաղեստինում մ.թ.ա. 2-րդ հազ. երկրորդ կեսում նստակեցություն են հաստատում հրեական սեմական ցեղերը, ուծացնելով քանանեական, դարձյալ սեմական լեզվով խոսող բնակչությանը և դուրս մղելով նախապես այդ երկրներին տիրացած փղշտացիներին (որոնցից գալիս է Պաղեստին անվանումը):

Հրեական ցեղերից մեկի առաջնորդ Սավուղը մ.թ.ա. 1030 թ. մոտերքը դառնում է թագավոր, սակայն նրանից շուտով իշխանությունը խլում է մի այլ ցեղի ներկայացուցիչ Դավիթը (մ.թ.ա. 1004-965), որը գրավում է քանանեացիների կարևորագույն կենտրոն Երուսաղեմը և դարձնում այն պետության մայրաքաղաք:

Պաղեստինն իր ծաղկման շրջանին է հասնում Դավիթի որդի Սողոմոն թագավորի օրոք (մ.թ.ա. 965-928 թթ.): Ընդարձակվում է պետության տարածքը, սահմաններին հզոր ամրոցներ են կառուցվում, Երուսաղեմում բարձրանում է

հռչակավոր տաճարը: Սողոմոնը առևտրական նավատորմ է ստեղծում, որ փյունիկյան նավերի հետ միասին նորանոր առևտրական երթուղիներ է իրացնում: Բազավորության տարածքը նա բաժանում է 12 շրջանի, յուրաքանչյուրին պարտավորեցնելով տարվա մեկ ամսվա բնթացքում ապահովել արքունիքի բոլոր կարիքները: Ստեղծում է հսկայական բյուրոկրատական ապարատ, լայնորեն ներգրավելով քրմության ներկայացուցիչներին: Մանրանում են հարկերն ու տուրքերը:

Սողոմոնի մահվանից երեք տարի անց ժողովրդական ընդվզման հետևանքով թագավորութունը բաժանվում է երկու մասի՝ Իսրայելի (հյուսիսային մասը) և Հուդայի (հարավայինը)՝ Սամարիա և Երուսաղեմ մայրաքաղաքներով, և հարատևում այդ վիճակում:

Իսրայելին հզոր հարված է հասցնում մ.թ.ա. 722 թ. Ասորեստանի թագավոր Սարգոնը, իսկ Հուդային՝ մ.թ.ա. 586 թ. Նոր-Բաբելոնյան տերության արքա Նաբոլզոդոնոսոր II-ը: Վերջինս հրեական բնակչության հոծ զանգվածներ է գերեվարում դեպի Բաբելոնիա, ինչը խոշոր հետևանքներ է ունենում հրեաների հետագա պատմական բախտի համար:

Այդ ժամանակներում Պաղեստինում իր դրսևորումն է գտնում հայտնի մարգարեական շարժումը: Մարգարեները (Եսայի, Երեմիա, Եզեքիել և յօրիշներ) հանդես են գալիս որպես աստծո կամքին տեղեկացող և նրա ու մարդկանց միջև միջնորդ ծառայող գործիչներ: Նրանց գործունեության մեջ հատկապես ուժեղ էր սոցիալական քննադատության տարրը:

Հրեաները ի սկզբանե ուրիշ ժողովուրդների նման բազմաստվածություն են դավանել, սակայն շատ շուտով հանդել են միաստվածության՝ Յահվե (Յեհովա) աստծո պաշտամունքին: Այն իր արտահայտությունն է գտել Աստվածաշնչի Հին կտակարանի մեջ, որը փաստորեն ոչ թե մեկ գիրք է, այլ մի ամբողջ դրադարան, ստեղծված շուրջ հազար տարվա ընթացքում, մ.թ.ա. 2-րդ հազ. վերջին դարերից սկսած: Այստեղ շարադրված են հրեա ժողովրդի առասպել-

լական և իրական պատմութիւնը, օրենքների մի ժողովածու, գրական հոյակապ կոթողներ («Երգ երգոցը», առականեր, սաղմոսներ), մարգարեութիւններ և այլն: Հին կտակարանի ազդեցութիւնը մարդկութեան հոգևոր զարգացման վրա հսկայական է:

Նոր-սասորեստանյան մեծ տերութիւնը: Ասորեստանը իր ժամանակավոր թուլութիւնը թոթափում է մ.թ.ա. 10-րդ դ. վերջին, ուժեղացնելով պայքարը Հյուսիսային Միջագետքում և Ասորիքում իրենց բազմաթիւ իշխանութիւնները հաստատող արամեական ցեղերի դեմ:

Աշշուրնափրալ 2-ը (մ.թ.ա. 884-859 թթ.) կրկին հասնում է Միջերկրականի ափերը: Այս թագավորը աչքի է ընկել իր առանձնահատուկ դաժանութեամբ. նրա արշավանքներից հետո մնում էին հիմնահատակ ավերված քաղաքներ, ոչնչացված այգիներ ու դաշտեր, խափանված ոռոգիչ ջրանցքներ և տղամարդկանց, կանանց ու երեխաների դիակների կույտեր:

Սալմանասար 3-ը (մ.թ.ա. 858-824 թթ.) իր ուշադրութիւնն ուղղում է դեպի հյուսիս, որտեղ նախորդ՝ Նաիրի և Ուրուաւրի ցեղային հեղհեղուկ միութիւնների փոխարեն գտնվում էր արդեն միավորված պետութիւն՝ Վանի թագավորութիւնը, որն ասորեստանցիները անվանում էին Ուրարտու, իսկ տեղացիները՝ Բիայնիլի: Սալմանասարի զորքերը մի քանի անգամ բախվում են այդ պետութեան թագավոր Արամի, այնուհետև նրան հաջորդած Սարգուրի 1-ի հետ:

Ադադներարի 3-րդ թագավորի (մ.թ.ա. 811-781 թթ.) մանկահասակութեան պատճառով սկզբում տերութիւնը դեկավարում էր նրա մայր Սամմուրամաթը: Սրա անունը և թագավորական դիրքը հիմք են ծառայել առասպելական Շամիրամ (Սեմիրամիդա) թագուհու կերպարի ստեղծման և նրա շուրջը այլևայլ պատմութիւնների հյուսման համար հին աշխարհում և մասնավորապես՝ Հայաստանում, ուր նա հանդես է գալիս հայոց նահապետ Արա Գեղեցիկի կողքին:

Մ.թ.ա. 8-րդ դ. առաջին կեսում Վանի հզոր Մենուա, Արգիշտի 1-ին և Սարգուրի 2-րդ արքաների օրոք Ասորեստանը կրկին տեղատվութիւն է ապրում, զիջելով Առաջավոր Ասիայում իր ունեցած գերակշռութիւնը հյուսիսային հարևանին:

Կրկին ոտքի է կանգնում Ասորեստանը Թիգլաթպալասար 3-րդ թագավորի օրոք (մ.թ.ա. 745-727 թթ.): Սա բարեփոխումներ է մտցնում տերութւյան կյանքի բոլոր բնագավառներում:

Վերջ է տալիս նվաճվող երկրների բնակչության բնաջնջմանը, վերաբնակեցնելով այն տերութւյան ամայացած տարածքներում և զբաղեցնելով հողագործութւյամբ: Սրանք լրացնում էին հողին ամրացված այն ստրուկների զանգվածները, որոնք տարբերվում էին դասական ստրուկներից իրենց աշխատանքի արդյունքի որոշակի մասը յուրացնելու հնարավորութւյամբ, տուն և բնտանիք ունենալու իրավունքով: Դրանք թագավորական և տաճարային տերութւյունների հիմնական աշխատուժն էին: Իրական ստրուկների թիվը մեծ չէր և նրանք հիմնականում սպասարկում էին իշխող խավի ներկայացուցիչներին: Հարատւում էին և ազատ գյուղացիական համայնքները:

Բարեփոխվում է և ռազմական գործը: Ստեղծվում է զինված ուժերի կորիզը կազմող կանոնավոր, պետական միջոցներով պահվող բանակ՝ «թագավորական զունդը»: Տերութւյան խոշոր մարզերը, որոնց կառավարիչները հաճախ վտանգ էին ներկայացնում կենտրոնական իշխանութւյան համար, մանրաստվում են և նրանց գլուխ են կանգնեցվում մեծ մասամբ ներքինիներ:

Նախապես հպատակեցնելով Բաբելոնիան, Թիգլաթպալասար 3-ը դառնում է դեպի իր գլխավոր թշնամին՝ Վանի թագավորութւյունը, որը Հյուսիսային Ասորիքում և արևելյան Փոքր Ասիայում ստեղծել էր դաշնակից պետութւյունների հակաասորեստանյան մի ուժեղ խմբավորում: Մ.թ.ա. 743-735 թթ. նա ջախջախում է սրանց միացյալ ուժերը և հասնում Տուշպա-Վանի պարիսպներին, սակայն քաղաքն առնել չի կարողանում:

Հաջորդ տարիներին նա վերանվաճում է Ասորիքը և Փյունիկիան, հասնելով Եգիպտոսի սահմաններին: Բաբելոնիայում իր իշխանութւյունն ամրապնդում է, թագադրվելով որպես այդ երկրի արքա՝ Պուլու անվան տակ:

Սարգոն 2-ի օրոք (մ.թ.ա. 722-705 թթ.) կրկին գլուխ են բարձրացնում հարավում՝ Բաբելոնիան, հյուսիսում՝ Վանի թագավորութւյունը, արևմուտքում՝ Ասորիքը: Հպատա-

կեցնելով վերջինս, նա մ.թ.ա. 714 թ. դիմում է դեպի Հայկական լեռնաշխարհ: Այդ արշավանքն ամենայն մանրամասնությամբ նկարագրված է Աշշուր աստծուն նրա հասցեագրած հանդիսավոր ուղերձի մեջ: Սարգոնը տեղափոխում է Ասորեստանի մայրաքաղաքը Նինվե:

Սինախերիբ (Սենհերիբ) թագավորը (մ.թ.ա. 705—681) թթ. իր իշխանության գրեթե ողջ ընթացքում զբաղվել է ապստամբած Բաբելոնիան հպատակեցնելով: Մ.թ.ա. 784 թ. նա անավոր հաշվհարդար է տեսնում Հին Արևելքի հնագույն և խոշորագույն կենտրոն՝ Բաբելոն քաղաքի հետ, հիմնահատակ կործանելով այն և մեծ ջրանցքի հորձանքը բաց թողնելով քաղաքի վրա: Սինախերիբը սպանվում է իր իսկ որդիների կողմից, որոնք փախչում են Վանի թագավորություն: Սրան հաջորդած Ասարխատոն արքային (մ.թ.ա. 681—669 թթ.) հաջողվում է տարածել Ասորեստանյան տերության իշխանությունը նաև Նգիպտոսի վրա, այնպես որ նրա որդի Աշուրբանակալի (մ.թ.ա. 669—629 թթ.) օրոք տերությունը գտնվում էր ծաղկման բարձրակետում և գրավում հսկայական տարածք՝ Պարսից ծոցից ու Իրանական սարահարթից մինչև Միջերկրականի ափերը՝ ներառյալ Նգիպտոսը: Դժվար էր պատկերացնել, թե երկու-երեք տասնամյակ անց նրան վիճակված էր հիմնահատակ կործանվել: Աշուրբանակալը թերևս միակ «ուսույալ արքան» է եղել Հին Արևելքի պատմության մեջ, նա հայտնի է նինվեում ստեղծած՝ սեպագրական սալիկներից կազմված հսկայական դրաղարանով:

Մ.թ.ա. 7-րդ դ. վերջերին իր ծաղկումն ապրող իրանական Մեդական (Մարական) թագավորությունը ըմբոստանում է իր նախկին տերերի՝ Ասորեստանի արքաների դեմ: Կիսքսար թագավորը Բաբելոնիայի օժանդակությամբ մ.թ.ա. 612 թ. գրավում է Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Ըստ Մովսես Խորենացու, Ասորեստանի կործանման գործին մասնակցել է նաև հայոց Պարույր Նահապետը, որն այնուհետև մարական արքայի կողմից պսակվել է Հայոց առաջին թագավոր:

Ասորեստանյան մեծ տերությունը առաջինն էր մ.թ.ա. 1-ին հազ. Առաջավոր Ասիայում մեկը մյուսի հետևից ստեղծվող ու փլուզվող «աշխարհակալ» տերությունների այն շարքում, որի մեջ պիտի մտնեին այնուհետև Մարական ու Նոր-Բաբելոնյան, այնուհետև՝ իրանական Աքեմենյան հսկայածավալ տերությունները, որոնց պիտի հաջորդեին Ալեքսանդր Մակեդոնացու, Սելևկյանների, Պարթևական ու Տիգրանյան Հայաստանի տերությունները: Նշված երկույթը պայմանավորված էր արևելյան ստրկատիրական հասարակարգի այն ճգնաժամով, որը ժամանակավորապես հաղ-

թահարվում էր տերութիւնների ուժեղացման, նվաճվող երկրների թաւանի ու բնակչության նորանոր զանգվածների՝ շահագործման ոլորտը ներգրավելու հաշվին:

§ 8. ՀԻՆ ՄԻՋԱԳԵՑՔԸ Մ.Թ.Ա. 7-ՐԴ ԳԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ Մ.Թ.Ա. 4-ՐԴ ԳԱՐԸ

Նոր-Բաքելոնյան տերությունը: Բաքելոնիան վերջնականապես թոթափում է Ասորեստանի լուծը մ.թ.ա. 626 թ., նաքուպալասար թագավորի օրոք: Սրա որդի Նաբուգոդոնոսոր 2-ը (մ. թ. ա. 605—562 թթ.), գրավելով վերին միջագետքի խառան քաղաքը, վերջին հարվածը հասցրեց շախախաժ Ասորեստանին, Այնուհետև նա գրավեց Ասորիքն ու Պաղեստինը և գերեվարեց Երուսաղեմի բնակչությունը: Նա հայտնի է նաև իր ժափալուծ շինարարական գործունեությամբ լայնատարած տերութիւն մեջ և հատկապես Բաբելոն քաղաքում: Նրա կառուցած «Կախտվի պարտեզները» համարվում էին հին աշխարհի «Յոթ հրաշալիքներից» մեկը և հետագայում վերագրվում էին կիսաառասպելական Շամիրամ թագուհուն: Նաբուգոդոնոսոր 2-ից հետո Նոր-Բաքելոնյան տերութիւնը բռնում է անկման ուղին և մ.թ.ա. 539 թ. Բաքելոն քաղաքը, շնայած իր արտակարգ հզոր ամրութիւններին, գրավվում է պարսից արքա Կյուրոս Մեծի կողմից:

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետությունը Առաջավոր Ասիայում: Պարսկական Աքեմենյան տոհմի ներկայացուցիչ Կյուրոս Մեծին (մ.թ.ա. 558—530 թթ.) հաջողվում է, տիրանալով Մեդական և Նոր-Բաքելոնյան տերութիւններին, ստեղծել մի հսկայածավալ կայսրութիւն, որը ձգվում էր Հնդկաստանից մինչև Հունաստան:

Նրա որդի Կամբիսեսը նրան ավելացնում է նաև Եգիպտոսը, Դարեհ Վշտասպանի թագավորութիւն սկզբում՝ մ. թ.ա. 522—520 թթ. տերութիւն գրեթե բոլոր մասերն ապստամբում են պարսիկների տիրապետութիւն դեմ և այդ շարժմանը սկիզբ է դնում Բաքելոնիան: Այստեղ ապստամբում է ոմն Նիդինտու-Քել, որն իրեն հայտարարում է Նաբուգոդոնոսոր 3-րդ, Դարեհն անձամբ ճնշում է այդ ապստամբությունը: Ապա նա կոտորում է տերութիւն մյուս մասերում, այդ թվում և Հայաստանում (Ար-

մինա) ծագած շարժումները, Վերջում կրկին անգամ անհաջող ապստամբում է Բաբելոնիան, այս անգամ հայ (արմինացի) Արախայի ղեկավարությամբ, որն իրեն կոչել էր Նաբուգոդոնոսոր 4-րդ:

Սրանից հետո Միշագեսը, Արևելյան Միջերկրականի առափնյա երկրները, Հայկական լեռնաշխարհը, Միջին Ասիան շուրջ երկու դար մնում են Աքեմենյանների տիրապետության ներքո, վերածվելով առանձին սատրապությունների: Բաբելոնիա սատրապությունը տերության մեջ ամենազարգացածն ու հարուստն էր և վճարում էր բոլորից շատ տուրք՝ տարեկան 1000 տաղանդ (ավելի քան 30 տ) արծաթ:

Մ.թ.ա. 5-րդ դ. առաջին կեսում Աքեմենյանների տերությունը ժանր պարտություն է կրում հույն-պարսկական պատերազմներում և մ.թ.ա. 4-րդ դարում ապրում իր քայքայման շրջանը: Շուտով այն նվաճվում է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

Ալեքսանդր Մադեկոնացու և Սելևկյանների տիրապետությունը Առաջավոր Ասիայում: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, որքան էլ փայլուն էին ռազմական հաջողությունների առումով, շատ ավելի մեծ նշանակություն ունեցան Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների և ընդհանրապես մարդկության հետագա քաղաքական, մշակութային ու տնտեսական զարգացման մեջ: Նրանցից է սկսվել «հելլենիզմ» կոչված երևույթը, որի հիմնական արդյունքը մարդկության մինչ այդ էապես անջրպետված երկու՝ արևմրտյան և արևելյան հատվածների ու նրանց քաղաքակրթությունների սերտ շփման, փոխթափանցման ու համագործակցության սկզբնավորումն էր: Այս գործընթացների մեջ առաջնակարգ դեր էր խաղում հունարեն լեզուն, որը դարձել էր ժամանակի միջազգային շփման լեզու:

Հույն-պարսկական պատերազմներից հետո մեկ դար շարունակ Հունաստանում հասունանում էր պատասխան արշավանքի գաղափարը, սակայն հունական անջատ-անջատ ապրող քաղաք-պետությունների համար նրա իրացումն անհնարին էր: Հունաստանի հյուսիսային հարևան Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս 2-ին (մ.թ.ա. 359—336 թթ.) հաջողվեց միավորել Հունաստանը և նրա որդի Ալեքսանդրը (մ.թ.ա. 336—323 թթ.) ուղղեց այդ բոլորնցի հարվածը խարխլվող Աքեմենյան տերության դեմ ու կործանեց այն:

Ալեքսանդր Մակեդոնացին կարողացավ հաղթահարել իր դարն ապրած «հելլեն-բարբարոս» հակադրությունը և հիմք դրեց հունա-մակեդոնական նվաճողների և նվաճված երկրների իշխող խավերի սոցիալական դաշինքին։ Հատկապես նշական է, որ թեև նա արևելքում բազմաթիվ հելլենիստական քաղաքներ (սյուրիսներ) հիմնադրեց, բայց և այնպես իր տերության մայրաքաղաք դարձրեց արևելյան հույական Վոր կենտրոն Բաբելոն քաղաքը։

Ալեքսանդրի մահվանից հետո նրա տերությունը բաժանվեց նրա հաջողակ զորավարների միջև, ըստ որում ասիական տիրութենները բաժին ընկան Սելևկոսին (մ.թ.ա. 312—281 թթ.) և նրա հետնորդներ Սելևկյաններին։

Սելևկյանները մ.թ.ա. 3-րդ դարի ընթացքում հաջողությամբ հետևում էին Ալեքսանդրի քաղաքականության հիմնական գծերին, իշխելով հսկայական տարածքների վրա։ Սելևկյանների իշխանության օրոք փարթամորեն ծաղկեց տերության կենտրոնական շրջան Ասորիքը և նրա կորիզը կազմող, Սելևկիա անվանված գաղառը՝ իր շորս ծաղկուն քաղաքներով, որոնք էին տերության մայրաքաղաք Անտիոքը, Լաոդիկեա և Սելևկիա նավահանգիստները և Ապամեա ռազմական կենտրոնը։ Բաբելոնիայի Բաբելոն, Ուրուք և մի քանի այլ քաղաքներում իր վերջին առկայծումներն էր ապրում սեպագրական բաղմահազարամյա քաղաքակրթությունը։ Զարգանում էր գիտությունը՝ մաթեմատիկան, աստղագիտությունը, գրվում էին տարեգրություններ, ստեղծվում էր կրոնական-ծիսական գրականություն, մասնավոր գործարքները գրի էին առնվում սեպագրով։ Բաբելոնիայում կառուցվեց ժամանակի խոշորագույն քաղաքներից մեկը՝ Տիգրիսյան Սելևկիան։ Քաղաքաշինությունը ընդհանրապես մեծ թափ էր ստացել Սելևկյանների տերության ողջ տարածքում։

Սելևկյան հզոր թագավորներից վերջինն էր Անտիոքոս 3-րդ Մեծը (մ.թ.ա. 223—187 թթ.), որը կրկին անգամ իր արդավանքներով միավորեց թուլահող տերությունը և ի վերջո անհաջող փորձ արեց խլել հռոմեացիներից Հունաստանը։ Մ.թ.ա. 190 թ. Մազինսիայի ճակատամարտում Անտիոքոսի՝ նրանցից կրած պարտությունը շատ թանկ նստեց

Սեւեկյաններին, Անշատվեցին տերության մի շարք մասեր, այդ թվում հայկական պետությունները՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Մոփքը և Կոմմագենեն։ Եռանդուն Անտիոքոս 4-ը (մ.թ.ա. 175—164 թթ.) ապարդյուն փորձեր էր անում կանգնեցնել պետության քայքայման ընթացքը։ Ենթարկվելով պարթևների հարձակումներին, այն ի վերջո կծկվում է Ասորիքի, Փյունիկիայի և Կիլիկիայի տարածքում։ Մ.թ.ա. 83 թ. այդ երկրները նվաճվում են Հայաստանի Տիգրան 2-րդ Մեծ թագավորի (մ.թ.ա. 95—55 թթ.) կողմից։ Տիգրանը նվաճում է նաև նախկին սեւեկյան տիրույթներ Վերին Միջագետքը և Ատրպատականը, ետ մղելով պարթևներին։

Այդ իսկ ժամանակները, մ.թ.ա. 1-ին դ. սկզբներին, ծայր է առնում նախապես գրեթե ողջ Փոքր Ասիային տիրացած Հռոմեական հանրապետության դեպի արևելք առաջխաղացման մի նոր փուլ։

Մ.թ.ա. 69—66 թթ. տեղի ունեցած հայ-հռոմեական պատերազմի ընթացքում Հռոմը գրավում է Տիգրանից Սեւեկյանների տերության նրա նվաճած տարածքը և մ.թ.ա. 64 թ. հայտարարում այն հռոմեական նահանգ։

Մերձավոր և Միջին Արևելքը Իրանի և Հռոմի տիրապետության տակ։ Մ.թ.ա. 250 թ. Սեւեկյանների հետ պայքարի բովում Իրանում ստեղծվել էր Պարթևական թագավորությունը, որի առաջին թագավորն էր Արշակը՝ Արշակունի հարստության հիմնադիրը։ Մ.թ.ա. 2-րդ դ. պարթևները մեծ տերություն էին ստեղծել՝ արևմուտքում սեղմելով Սեւեկյաններին Միջերկրականի ափերին։ Նվաճված Բաբելոնիայում նրանք հիմնադրել էին իրենց Տիգրոն մայրաքաղաքը։

Մ.թ.ա. 1-ին դ. Տիգրան 2-րդ Մեծի և ապա, վերջնականապես, Հռոմի կողմից Սեւեկյանների պետության վերացումից հետո, Պարթևական տերությունը բախվում է Հռոմի հետ։ Միջագետքը և Հայաստանը, որոնք ընկած էին երկու տերությունների միջև, երկար ժամանակով դառնում են կռիվախնձոր և ուժերը չափելու ասպարեզ։ Հայաստանը նախորդ դարաշրջաններում իր ունեցած, թեև հզոր, բայց մեկ գիշատիչ հարեանին դիմակայելու իրավիճակից անցնում է

երկու հզոր ու գիշատիչ հարեաններին դիմակայելու իրավիճակին, որն իր հետ բերում էր ախոյաններից մեկի վրա կողմնորոշվելու անհրաժեշտութիւն, քանի որ նրանցից ոչ մեկը չէր հանդուրժում Հայաստանի ոչ միայն անկախութիւնը, այլ նույնիսկ՝ սոսկ շեղոքութիւնը: Սկզբնապես Հայաստանը կողմնորոշվում է հիմնականում դեպի պարթևները և հայոց գահին հաստատվում է Արշակունիների հայկական ճյուղը:

Մ.թ. առաջին տասնամյակներում Հռոմի իշխանութիւն տակ գտնվող Պաղեստինում ծագում է քրիստոնեութիւնը: 33 թ. այդ ուսմունքը ստեղծող Հիսուս Քրիստոսը մահապատժի է ենթարկվում իր հայրենակից հրեաների կողմից՝ հռոմեական իշխանութիւնների թողտվութեան պայմաններում, Ուսմունքը, որը նախապես արտահայտում էր հասարակութեան ճնշված խավերի դադափարներն ու շահագրգռութիւնները, իր գրավոր ձևակերպումն է ստանում Աստվածաշնչի նոր կտակարանում կամ Ավետարանում, որտեղ հավաքված են շորս հեղինակների տված՝ Հիսուս Քրիստոսի կյանքի, դործունեութեան ու մահվան նկարագրութիւնները, ինչպես և նրա անմիջական աշակերտների՝ առաքյալների ստեղծագործութիւններն ու այլ նյութեր: Շուտով ուսմունքը արագորեն սկսում է տարածվել Հռոմի արևելյան նահանգներում, ապա և ողջ կայսրութիւնում:

Քրիստոնեութեան կարևորագույն կենտրոններ են դառնում Ասորիքը (Սիրիան) և Կապադովկիան, իրենց Եղեսիա (էդեսսա, Ուռհա) և Կեսարիա քաղաքներով, որտեղից էլ նոր ուսմունքը թափանցում է արևելյան երկրները՝ Միջագետք, Հայաստան, Իրան: Գնալով, քրիստոնեութիւնը մի կողմից կորցնում է իր սկզբնական դեմոկրատական դիմքը, ստեղծելով հոգևորականութեան ուժեղ նվիրապետական համակարգ, մյուս կողմից երկփեղկվում է արևմտյան՝ երկաթեակ և արևելյան՝ միաբնակ հատվածների, որոնք հովանավորվում են, համապատասխանաբար, Հռոմի և Իրանի կողմից, և սրանց միջև պայքար է ծավալվում:

Մ.թ. 226 թ. Իրանում իշխանութիւնը պարթև Արշակունիներից անցնում է պարսիկ Սասանյաններին և հռոմեա-

իրանական պայքարը էլ ավելի է բորբոքվում: Սասանյան-ները թշնամական դիրք են բռնում նաև Հայաստանի նկատմամբ և Հայաստանը, նրանցից պատսպարվելու համար, ստիպված է լինում փոխել իր նախկին կողմնորոշումը և հիմնականում հարել Հռոմին: Պատերազմների դադարներից մեկի պահին ախոյանները համաձայնության են գալիս, և 387 թ. իրականանում է Հայաստանի առաջին բաժանումը: Բաժանումների է ենթարկվում նաև Միջագետքը, սակայն ընդհանուր դրությունը էապես չի փոխվում: Ե՛վ Միջագետքը, և՛ Հայաստանը այդ անվերջ պայքարում անընդհատ ձեռքից ձեռք են անցնում և այդ իրավիճակը շարունակվում է նաև Հռոմեական կայսրության երկու մասի՝ Արևմտյան կայսրության և Արևելյան կայսրության (Բյուզանդիայի) բաժանվելուց հետո՝ 5—7-րդ դդ., մինչև որ Մերձավոր և Միջին Արևելքի պատմաբան են իջնում արաբական նվաճողները:

ԱՂԱՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. И. М. Дьяконов, Эпос о Гильгамеше. В кн. «Эпос о Гильгамеше», М.—Л., 1961
2. И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967
3. Хрестоматия по истории Древнего Востока, под редакцией В. В. Струве и Д. Г. Редера, М., 1963.
4. Д. Г. Редер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965
5. История древнего мира, под редакцией И. М. Дьяконова, В. Д. Нероновой, И. С. Свенцицкой, I—III, М., 1982
6. История Древнего Востока, «Высшая школа», М., 1979

Գլուխ երկրորդ

ՓՈՋՐԱՍԻԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

§ 1. ՓՈՋՐ ԱՍԻԱՆ Մ. Թ. Ա. 8-ՐԴ ՀԱԶ. ՄԻՆՉԵՎ Մ.Թ.Ա. VI Դ. ԿԵՍԵՐԸ

Ազգային առևտրական գաղութները և փոքրասիական քաղաք-պետությունները: Փոքր Ասիան հինարևելյան քաղաքակրթության ձևավորման առավել կարևոր օղակներից է:

Մետաղների և շինանյութերի հարուստ պաշարները և երկրագործության համար նպաստավոր պայմանները խթանեցին այստեղ հետառցակալման շրջանում հասարակության արագ զարգացումը: Մասնավորապես, Փոքր Ասիայի հարավում, հարավ-արևելքում և արևմուտքում արդեն մ. թ. ա. 8—6-րդ հազ. գոյություն ունեին մշտական բնակավայրեր (Զաթալ-Շյոյուք, Հաջիլար), որոնց բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և պարզագույն արհեստներով: Պղնձի և բրոնզի մշակման շնորհիվ մ. թ. ա. 3-րդ հազ. Փոքր Ասիայի մի շարք շրջաններում առաջ են գալիս մեծ թվով ամրացված բնակավայրեր: Բնական հարուստ ռեսուրսները և արհեստագործության զարգացումը նպաստեցին Փոքր Ասիայի՝ միջազգային առևտրի կարևոր բաղադրիչ մաս դառնալուն:

Հենց այս շրջանում ձևավորվում են մի շարք պետական կազմավորումներ (ինչպես հաթթին և Քանեսը), որոնք հիշատակվում են Աքքադի արքաներ Սարգոնի և նրա որդի Նարամսուսին՝ դեպի Փոքր Ասիայի հարավ-արևելք ձեռնարկած արշավանքները նկարագրող արձանագրություններում:

Մ.թ.ա. 20-18-րդ դդ. Փոքր Ասիայի հարավ-արևելքում և արևելքում միջազգային աղբյուրները հիշատակում են մեծ թվով փոքր քաղաք-պետություններ (Պուրուսիանդա, Կուսասար, հաթթի, Քանես և այլն), որոնք սերտ կապեր ունեին այստեղ Աշշուր քաղաքի ստեղծած առևտրական դադուքների հետ: Աշշուրցիները Փոքր Ասիայից արտահանում էին մետաղներ, շինանյութ, արհեստագործական արտադրանք և ներմուծում էին բրոնզի ստացման համար անհրաժեշտ անագ և այլ ապրանքներ: Աշշուրի և փոքրասիական քաղաքների սերտ տնտեսական փոխհարաբերությունները նպաստեցին վերջիններին հարստացմանն ու հզորացմանը և լավ նախադրյալներ ստեղծեցին խեթական հին թագավորության կազմավորման համար:

Առկա գրավոր աղբյուրները վկայում են Փոքր Ասիայի բնակչության էթնիկական կազմի բազմաառարկության մասին: Մասնավորապես մ.թ.ա. 3-րդ հազ.—2-րդ հազ. սկզբին թերակղզու հարավ-արևելքում և արևելքում բնակվում էին հնդեվրոպական խեթա-լուվիական ժողովուրդները և ոչ-հնդեվրոպալեզու խուրրիները, կենտրոնական մասում՝ խաթերը, հյուսիսում՝ կասկերը: Այս շրջանի աղբյուրները ոչինչ չեն հաղորդում Փոքր Ասիայի արևմտյան մասի վերաբերյալ:

Հիմ խեթական թագավորությունը: Տեղեկիմուսի օրհմը:

Խեթական պետության համարյա վեցդարյա պատմությունը ընդունված է բաժանել երկու ժամանակաշրջանի՝ Հին և Նոր (կամ Կայսերական):

Հին խեթական պետությունը կազմավորվել է մ. թ. ա. 18-րդ դ. խեթական մի շարք քաղաք-պետությունների երկարատև պայքարի հետևանքով: Քանհա (կամ Նեսա) քաղաքի արքա Անիտասը, հաջորդաբար նվաճելով բոլոր հակառակորդ քաղաքները, տիրում է հարավ-արևելյան և արևելյան Փոքր Ասիայի մեծ մասին:

Անիտասի հաջորդներից մեկը՝ Խաթթուաիլիս 1-ը, նորաստեղծ պետության մայրաքաղաք է դարձնում Խաթթուասա քաղաքը:

Խաթթուաիլիս 1-ի բազմաթիվ հաջող արշավանքների շնորհիվ խեթական պետությունը (կամ Խաթթին) տիրեց ոչ միայն Փոքր Ասիայի մեծ մասին, այլև իր ազդեցության ոլորտն առավ մի շարք հյուսիստիրիական պետություններ և իշխանություններ՝ Յահմադը (ժաման. Հալեպը), Ալալաի, Ուրշուն և այլն: Սակայն Խաթթուաիլիսի ստեղծած պետությունը խիստ անկայուն քաղաքական միավոր էր, քանի որ նվաճված երկրները հաճախ ապստամբում էին և նույնիսկ հարձակումներ գործում բուն խեթական քաղաքների վրա: Խաթթուաիլիսի որդի Մուրսիլիս 1-ը ավելի մեծ թափով է շարունակում հոր նվաճողական քաղաքականությունը: Մ.թ.ա. 16-րդ դ. սկզբին Մուրսիլիսը գրավում է Հալեպ քաղաքը և վերացնում է Յահմադի թագավորությունը, որից հետո ձեռնարկում է մի անախաղենալ արշավանք դեպի Միջագետք. խեթական զորքը նվաճում և թալանում է Բաբելոն քաղաքը:

Խաթթուաիլիս 1-ի և Մուրսիլիս 1-ի լայնածավալ նվաճողական քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ առաջին հերթին հենց Բաբելոն քաղաքը:

Անդադար պատերազմները ոչ միայն մարդկային և նյութական խոշոր կորուստներ պատճառեցին խեթերին, այլև նպաստեցին հարևան երկրների ու ժողովուրդների համախմբմանը ընդդեմ Խաթթիի:

Խաթթիի թուլացմանը զգալիորեն նպաստեց նաև Մուրսիլիս 1-ի օրոք սկսված և ամբողջ 16-րդ դ. շարունակվող ներդինաստիական պայքարը, որը պայմանավորված էր գահաժառանգման մայրական սկզբունքի գոյությամբ: Չնայած խեթական հասարակությունը վաղուց արդեն անցել էր հայր-

իշխանության, սակայն ընդհուպ մինչև մ.թ.ա. 16-րդ դ. վերջը զահր ժառանգում էր ոչ թե արքայի, այլ նրա քրոջ կամ դստեր որդին: Գահաժառանգման նման անկայուն կարգը պարարտ հող էր ստեղծում արքունիքում՝ դավերի համար: Այդ պատճառով խեթական արքա Տելեպինոսը մտափորապես մ.թ.ա. 1500 թ. հաստատեց զահաժառանգման հայրական սկզբունքը, որը վերջ դրեց արքունիքում և երկրում տիրող խառնակ վիճակին: Տելեպինոսի օրենքն արգելեց նաև թագավորական տոհմի անդամների սպանությունը:

Խեթական պետության ներքաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի կայունացմանը մեծապես նպաստեցին նաև Տելեպինոսի ժամանակներից սկսված և հետագա շրջանում պարբերաբար հրատարակվող օրենքները, որոնք կարգավորում էին հասարակության կենսագործունեության բոլոր հիմնական ոլորտները:

Խեթական տերությունը: Խեթական օրենքները: Խեթական պետության հզորացումը սկսվում է նոր թագավորության շրջանում, հատկապես Սուպպիլուլիումաս 1-ի օրոք (մոտ 1385—1345 թթ.): Մերձավոր Արևելքում խեթական շահերի գլխավոր հակառակորդը խուրրիական Միտանի պետությունն էր (Հյուսիսային Միջագետքում և հարակից տարածքներում), որը վերահսկում էր Փոքր Ասիայից դեպի Միջագետք և Եգիպտոս տանող բոլոր առևտրական ուղիները: Խեթա-խուրրիական տեղական պատերազմները, ի վերջո, ավարտվեցին մ.թ.ա. 14-րդ դ. կեսերին հօգուտ խեթերի: Արդյունքը եղավ ողջ Հյուսիսային Միդիայի հպատակեցումը, իսկ Միտանին դարձավ խեթերից կախյալ մի երկրորդական պետություն: Սուպպիլուլիումասին հաջողվեց գրավել, կամ, առնվազն, խեթական զերիշխանության տակ մտցնել Փոքր Ասիայի արևմտյան, հյուսիսային և արևելյան փոքր պետությունները և ցեղային միությունները (Արցախ, Կասկա, Հայասա-Ազգի, Իսուվա և այլն): Սուպպիլուլիումասի օրոք խեթական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին:

Խեթական պետության Կոնստանդնուպոլսի արտաքին քաղաքականությունը շարունակվեց Սուլթանուլթիմաթի հաջորդներին՝ Մուրադիս 2-ի (մոտ. 1345—1315 թթ.) և Մուվաթալլահի (մոտ. 14-րդ դ. վերջ 13-րդ դ. սկիզբ) օրոք։ Մուրադիսին հաջորդեց վերանվաճել հոր մահից հետո ապստամբած բուլղոս երկրները, իսկ Մուվաթալլահը մոտավորապես մ.թ.ա. 1295 թ. Քաղեջի մոտ տեղի ունեցած խեթա-եգիպտական ճակատամարտից հետո խեթերի գերիշխանության ոլորտն ընդարձակեց ժամանակակից Սիրիայի տարածքի մեծ մասի վրա։

Այսպիսով, մ. թ. ա. 13-րդ դ. սկզբին Խեթական պետությունը իրեն հավասարը չունեւր ողջ Առաջավոր Ասիայում։

Սակայն արդեն մ.թ.ա. 13-րդ դ. կեսերից սկսվում է Խեթական պետության աստիճանական թուլացումը, ինչը առաջին հերթին պայմանավորված էր հզորացող Ասորեստանի ակտիվ արտաքին քաղաքականությամբ և արևմտափոքրասիական պետությունների կենտրոնախույս նկրտումներով։ Նվազ կարևոր դեր չէին խաղում նաև բազմալեզու և բազմակենցաղ կայսրության տարբեր շրջանների նկատմամբ մըշտական հսկողության հետ կապված դժվարությունները։ Խաթթիի հետագա կեսդարյա պատմությունը լի է բազմաթիվ ապստամբություններով և նախկինում նվաճված երկրների վերանվաճման դժպքերով։

Խեթա-հայաստան հարաբերությունները մ.թ.ա. 15—14-րդ դդ.։

Խեթական նոր թագավորության սեպագիր աղբյուրներում զգալի թվով վկայություններ կան Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների վերաբերյալ, որոնք մ.թ.ա. 15—13-րդ դդ. այստեղ գոյություն ունեցած պետական միավորների մասին ամենաարժանահավատ, իսկ երբեմն էլ միակ զրավոր տեղեկություններն են։

Ըստ խեթական աղբյուրների, արդեն մ.թ.ա. 15-րդ դ. Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում գոյություն ունեւր Հայասա-Ազգի պետական միավորը, որը զգալի դեր

էր խաղում խեթական պետութեան արտաքին քաղաքականութեան մեջ:

Հայաստ-Ազգին առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. 15-րդ դ. վերջին խեթական արքա Թուգխալիյաս 3-ի մոտ՝ խեթական Սամուխա բազմաթիւ գրավման կապակցութեամբ: Սուպպիլուլիումաս 1-ի և Մուրսիլիս 2-ի օրոք Հայաստ-Ազգին բազմիցս պատերազմներ է մղում խեթերի դեմ, ընդ որում՝ երբեմն հայաստական կողմը ինքն էր նախահարձակ լինում: Հայաստ-Ազգիի կարեւոր դերը խեթերի արտաքին քաղաքականութեան մեջ առանձնապէս նկատելի է Սուպպիլուլիումաս 1-ի Միտաննիի դեմ մղվող պայքարում երկրի արեւմտյան և հյուսիս-արեւմտյան սահմանների անվտանգութեան ապահովմանն ուղղված խեթ-հայաստական դաշնադրի տեքստից, որը կնքվել էր նրա արքա Խուկկանայի հետ: Այդ դաշնադրի տեքստը կարեւոր տեղեկութիւններ է պարունակում հայաստական հասարակութեան կառուցվածքի և սովորութիւնների վերաբերյալ: Մասնավորապէս, հայտնի է դառնում, որ Հայաստանում գոյութիւն է ունեցել մերձավոր ազգակիցների միջև ամուսնական կապերի սովորույթ:

Սակայն Մուրսիլիս 2-ի կառավարման շրջանում (մ.թ.ա. 14-րդ դ. երկրորդ կես) Հայաստ-Ազգին ներքաշվում է հակախեթական ուժերի շարքերը, որի հետեանքով վերսկսվում են նրա ընդհարումները Խաթթիի հետ: Մուրսիլիս 2-ից հետո խեթական ազդրւորներում Հայաստ-Ազգիի վերաբերյալ տեղեկութիւններ չեն պահպանվել:

Խեթական կայսրութեան անկումը մ. թ. ա. 12-րդ դ. սկզբ-բիւն և ժողովուրդների տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում («ծովի ժողովուրդներ», մուշկեր, կասկեր և ուրումնացիներ):

Մ.թ.ա. 13-րդ դ. երկրորդ կեսին խեթական կայսրութեան արտաքին և ներքին վիճակը ծանրանում է: Ուժեղանում է ճնշումը կայսրութեան սահմանների վրա. հարավ-արեւելքից՝ Ասորեստանը, հյուսիսից՝ կասկերը, արեւմուտքից՝ կիսանկախ փոքրասիական պետութիւնները և Ախիսիյավան (Միկենյան Հունաստան): Մի քանի տարի շարունակվող երաշտը իր հերթին քայքայում էր երկրի տնտեսութիւնը: Ահա այսպիսի պայմաններում, մոտավորապէս մ.թ.ա. 12-րդ դ. սկզբին հանկարծակի ընդհատվում են խեթական գրավոր ազդրւորները: Ենթադրվում

է, որ Էրա պատճառը այդ նույն ժամանակներում Փոքր Ասիայի արևմուտքն ու հարավն ընդգրկված խոշոր էթնիկական տեղաշարժերն էին, որոնց հետևանքով խեթական կայսրութիւնը կործանվում է։ Այդ մասին ուշագրավ վկայութիւն է պահպանվել եգիպտական փարավոն Ռամզես 3-ի մի արձանագրութիւնում, որտեղ հիշատակվում է «ծովի ժողովուրդներ» հարձակման և նրանց կողմից մի շարք փոքրասիական ու սիրիական պետութիւնների (Խաթթի, Արցափա, Կիցցուվատնա, Կարգամիս, Ամուրրու) կործանման մասին։

Խեթական կայսրութեան անկմանը հաջորդող շրջանում Փոքր Ասիայի տարածքի զգալի մասում տեղի ունեցան էթնիկական խոշոր տեղաշարժեր, որոնք որոշակիորեն փոփոխեցին նրա էթնոքաղաքական և մշակութային դիմագիծը։ Նախնորհների ճնշման տակ բնիկ խեթա-լուվիական ժողովուրդները մասնակի տեղաշարժ կատարեցին դեպի հարավ-արևելյան Փոքր Ասիա, Կիլիկիա, վերին Նիքատի ավազան և հյուսիսային Սիրիա։ Թերակղզու արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջաններում հաստատվեցին թրակա-փոյուղական ցեղերը, իսկ նրա էգեյան և Միջերկրական առափնյա շերտում սկսեցին կազմավորվել հունական գաղութներ։ Տեղաշարժերի մի ակիք էլ ընդգրկեց Փոքր Ասիայի արևելյան շրջանները և վերին Նիքատի ու վերին Տիգրիսի ավազանները, որտեղ, ըստ ասորեստանյան աղբյուրների, մոտավորապես մ.թ.ա. 1165 թ. սկսած մուշկերից, կասկերից և ուրումեացիներից բաղկացած մի հզոր դաշնակցութիւն զբաղեցրեց Ասորեստանին ենթակա Ալզի (հայկ. Աղձնիք) և Կադմուխի (հայկ. Կադմեայ տուն) երկրները։

Այսպիսով, մ.թ.ա. 12-րդ դ. ընթացքում խեթական տերութեան անկման և էթնիկական տեղաշարժերի հետևանքով արմատապես փոխվեց Փոքր Ասիայի էթնոքաղաքական քարտեզը։

Լուվիական (ուշ խեթական) պետությունները Փոքր Ասիայում, վերին Եփրատի ավազանում և հյուսիսային Սիրիայում: Փոչուզիա: Խեթական տերության անկումից որոշ ժամանակ անց նրա տարածքի մի մասում կազմավորվեցին երեք համեմատաբար խոշոր պետություններ՝ Մելիդ-Մալաթիան (արևելյան Փոքր Ասիայում), Կարգամիսը (Հյուսիսային Սիրիայում) և մի պետություն, որի անվանումը առայժմ հայտնի չէ (հարավ-արևելյան Փոքր Ասիայում): Հետագայում, մ.թ.ա. 10—9-րդ դդ. ընթացքում պայմանականորեն լուվիական (կամ ուշ խեթական) կոչվող այս պետությունները տրոհվեցին մեկ տասնյակից ավելի մանր քաղաքական միավորների:

Լուվիական պետությունները հարմար աշխարհագրական դիրքի և բնական հարստությունների (երկաթ, պղինձ և այլն) պատճառով մշտապես գտնվում էին Ասորեստանի և Ուրարտուի արտաքին քաղաքականության նշանակետում: Ընդհուպ մինչև մ.թ.ա. 8—7-րդ դդ. լուվիական պետությունները համառորեն դիմադրում էին իրենց ագրեսիվ հարևանների ոտնձգություններին: Սակայն, ի վերջո, Ասորեստանին հաջողվեց նվաճել դրանց մեծ մասը, իսկ մյուսները (Մելիդը, Թաբալը և Խիլակկուն) դարձան նրա հարկատուները:

Լուվիական էթնոսը, հատկապես նրա արևելափոքրասիական հատվածը (Մելիդ), որոշակի դեր է խաղացել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, քանի որ ավելի ուշ շրջանում Մելիդի տարածքի զգալի մասը մտնում էր հայկական պետության կազմի մեջ:

Մ.թ.ա. 12—11-րդ դդ. թերակղզու արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջաններում հաստատված փոյուզական ցեղերը արդեն մ.թ.ա. 8-րդ դ. Սանգարիոս գետի հովտում (Ժաման. Սակարյա) ստեղծեցին Փոյուզական թագավորությունը՝ Գորդիոն մայրաքաղաքով (ասորեստանյան աղբյուրների Մուշկուն): Մ.թ.ա. 8-րդ դ. վերջին քառորդում Փոյուզիան արդեն բավական հզոր պետություն էր, որն ի վիճակի էր

բացահայտ պայքարի մեջ մտնելու Ասորեստանի հետ՝ արե-
վելյան Փոքր Ասիայում գերիշխանության համար: Այդ ժա-
մանակաշրջանում Փոյուզիայի և Ուրարտուի ջանքերով
ստեղծվեց հակասորեստանյան մեծ դաշինք, որի մեջ
մտան նաև փոքրասիական և հյուսիսսիրիական լուվիական
պետութունները: Սակայն փոյուզական պետության վերելքն
ընդհատվեց մ.թ.ա. 675 թ. կիմմերներից կրած պարտու-
թյամբ, որից հետո այն ընկավ հարևան Լիդիայի գերիշխա-
նության տակ՝ վերածվելով կախյալ պետության:

Փոքր Ասիայի հունական քաղաքները: Հին Հունաստա-
նի մի մասը՝ Հոնիան (այստեղից հայերեն «հույն», «Հունաս-
տան») ընդգրկել է էգեյան ծովի փոքրասիական ափը և նրան
հարող Քիոս, Սամոս և այլ բազմաթիվ կղզիներ: Արդեն մ.թ.ա.
8-րդ դ. սկսած այստեղ առաջանում են հին հունական այն-
պիսի տնտեսական, քաղաքական ու մշակութային կարևո-
րագույն կենտրոններ, ինչպես, օրինակ, Միլեթ և Նփեսոս
քաղաք-պետութունները: Սրանք շուտով դառնում են նա-
խիջերկրական և Սև ծովերի ափերի հունական գաղութաց-
ման գործուն նախաձեռնողներ: Այսպես, Միլեթը հիմնա-
դրել է 60-ից ավելի գաղութներ, որոնք տարածված էին
Նգիպոտոսի ափերից մինչև Դրիմի թերակղզին: Սրանք կապ-
ված էին մեծ իրենց մայր-քաղաքների հետ սերտ առևտրա-
կան և այլ կապերով, որոնք նպաստում էին հունական
առաջատար քաղաքակրթության տարածմանը:

Միլեթը հույն, հետևաբար և համաշխարհային փիլիսո-
փայության օրրանն է եղել: Այստեղ մ.թ.ա. 6-րդ դ. գործել
են առաջին հույն փիլիսոփաներ Թալեսը, Անաքսիմանդ-
րոսը, և Անաքսիմենեսը, իսկ Նփեսոսը տվել է խոշորագույն
հույն փիլիսոփաներից Հերակլիտեսին: Հալիկառնաս քաղա-
քը ծննդավայրն է Հերոդոտոսի: Հոնիական քաղաքների մի-
ջոցով է, որ հունական աշխարհը փոխհարաբերութունների
մեջ է մտել փոքրասիական Փոյուզիա, Լիդիա թագավորու-
թյունների հետ:

Լիդիա բազավորությունը: Փոյուզիայի անկման ընթաց-
քը համընկնում է նրանից արևմուտք ընկած և նրա մի մասը

դրադնցրած Լիդիայի վերելքի հետ: Լիդիացիները լղթաւմ էին հնգեվրոպական, խնթերենին մօտ լեզվով:

Մ.թ.ա. 7-րդ դ. սկզբներին Լիդիան, Գրեհա Թագավորի օրոք, հաշուդությամբ ետ է մղում սեփական հյուսիսային շրջաններից Թափանցած կրճմերական ցեղերի արշավանքը, սակայն շուրջ կես դար անց ս. անք ժամանակավորապես նվաճում են Լիդիան իր մայրաքաղաք Սարգեսի հետ միասին:

Հաջորդ Թագավոր Արդիսը վոնգում է կրճմերներին և մասամբ հպատակեցնում Հոնիայի հունական քաղաք-պետութիւնները, էլ ավելի բարելավելով Արեւմուտքի և Արեւելքի միջև իր առևտրական հանգուցային դերը:

Հետ ավանդության, աշխարհի առաջին դրամները հատվել են Լիդիայում:

Մ.թ.ա. 6-րդ դ. սկզբներին Լիդիան ենթարկվում է Միդիայի (Մարաստանի) արշավանքներին, սակայն դրանք անհետեանք են մնում Հալիս գետի ափին մ.թ.ա. 585 թ. մայիսի 28-ին տեղի ունեցած վճռական ճակատամարտի հանկարծակի ընդհատման պատճառով: Ըակատամարտն ընդհատվել էր արևի խավարման կապակցությամբ, որից էլ մեզ հայտնի է նրա ճշգրիտ օրը: Ի դեպ, արևի այս խավարումը կանխագուշակել է միլեթցի փիլիսոփա Թալեսը:

Կրեսոս Թագավորի օրոք Լիդիան ընդլայնում է իր տարածքը, տիրանալով գրեթե ողջ փոքրասիական թերակղզուն: Մասնավորապես նա ամրապնդում է իր իշխանութիւնը փոքրասիական հունական քաղաքների նկատմամբ: Սակայն Կրեսոսին վիճակված չէր մինչև կյանքի վերջը վայելել իր երջանկութիւնը, ինչպես և ըստ ավանդության կանխագուշակել էր ժամանակին նրան այցելած հույն խոշոր գործիչ Սոլոնը, Կրեսոսի պարծենկոտ խոսքերին պատասխանելիս, թե մարդուն լիովին երջանիկ կարելի է համարել նրա մահվանից հետո միայն: Մ.թ.ա. 546 թ. Լիդիան նվաճվում է Աքեմենյան Կյուրոս Մեծի կողմից, իսկ Կրեսոսը գերի է ընկնում և խոշտանգումների ենթարկվում:

**§ 2. ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ
ՀՈՈՄԻ ՏԻՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԶԱՆՈՒՄ: ՍԱՍԱՆՅԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԲԱԽՈՒՄԸ ՓՈՔՐ
ԱՍԻԱՅՈՒՄ**

Փոքր Ասիան արեմեմկյան տերության կազմում: Լիդիայի, փոքրասիական հունական քաղաքների (Հոնիա), Լիկիայի ու Կարիայի նվաճումով Փոքր Ասիան ընկավ Աքեմենյան պետության տիրապետության տակ: Այստեղ կազմակերպվեցին արեմենյան շորս սատրապություններ (Հոնիա, Լիդիա, Կապադովկիա, Կիլիկիա):

Պարսկական արքաների կողմից նշանակվող սատրապներն իրականացնում էին իրենց վստահված տարածքների հսկողությունը և հարկերի հավաքման գործը: Սակայն ինչպես Աքեմենյան տերության մի շարք առավել զարգացած և պետականության հին ավանդույթներ ունեցող շրջաններում, Փոքր Ասիայում նույնպես ղվերացվեցին տեղական վարչաքաղաքական ինստիտուտները, փոքրասիական սատրապություններում տեղական բնակչությունը տնտեսական և քաղաքական որոշակի ինքնուրույնություն ուներ:

Լիդիայի անկումից հետո Փոքր Ասիայում քաղաքական ակտիվության ծանրության կենտրոնը տեղափոխվում է ծովեզրյա հունական քաղաքներ, որը բացատրվում է նրանց տնտեսական հզորությամբ: Մ.թ.ա. 499—494 թթ. Հոնիայում, Կարիայում, Լիկիայում և Կիպրոսում տեղի է ունենում խոշոր ապստամբություն Միլեթ քաղաքի ղլխավորությամբ, որի նպատակն էր ազատագրվել պարսկական տիրապետությունից: Ապստամբությունը պարտվում է նրա մասնակիցների միջև թույլ փոխհամաձայնության և մայրցամաքային հունական պոլիսների տնտեսական օգնության պատճառով:

Հոնիական քաղաքների դրությունը զգալիորեն փոխվում է մ.թ.ա. 5-րդ դ. հուն-պարսկական պատերազմներից և, մասնավորապես, Աթենական ծովային միության և Արեմեյան պետության միջև մ.թ.ա. 449 թ. կնքված Նաւքիոսյան պայմանագրից հետո: Այսուհետև արևմտյան Փոքր Ասիան, չնայած ձևականորեն մնում էր արեմենյանների տիրապետության տակ, սակայն փաստորեն կառավարվում էր Աթենական ծովային միության կողմից և նրա էր հարկատու: պարսկական կողմը պարտավորվում էր զորք

լպահել է գեյան ծովեղերթից և ուրյա ճանապարհի վրա: Այս պայմանագրով, ըստ էության, Հոնիան մտցվեց Աթենական ծովային միության ազդեցության ոլորտը:

Մ.թ.ա. 5-րդ դ. վերջին, Աթենական պետության թուլացման շրջանում, Փոքր Ասիայի արևմուտքում և հարավում տեղի են ունենում մի շարք ապստամբություններ, որոնց կազմակերպիչները ինքնուրույնության ձգտող աթենական սատրապներն էին (օրինակ՝ Լիդիան) կամ տեղական բնակչությունը (կարիացիները, միլեթցիները և այլն):

Մ.թ.ա. 405—401 թթ. Փոքր Ասիայում ծավալվում է խոշոր ապստամբություն աթենական արքայազն Կյուրոս կրտսերի գլխավորությամբ ընդդեմ Արտաքսերքսես 2-րդ արքայի: Այս ապստամբության պատմությանն է նվիրված Քսենոփոնի «Անաբասիս» երկը, որտեղ խիստ արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում նաև Հայաստանի վերաբերյալ, որի տարածքով պարսկած Կյուրոսի հունական վարձու 10-հազարանոց ջուկատը Քսենոփոնի շեկավարությամբ նահանջել էր դեպի Սև ծովի ափերը: Սակայն Փոքր Ասիայում աթենականների ազդեցությունը արդեն հիմնավորապես խախտված էր և մ.թ.ա. 360-ական թվականներին անկախում են Կարիան, Լիդիան և Կիլիկիան, Այս հանգամանքն էլ կարևոր դեր խաղաց Ալեքսանդր Մակեդոնացու բանակի արագ հաջողությունների գործում մ.թ.ա. 334 թ.:

Ալեքսանդր Մակեդոնացին Փոքր Ասիայում: **Մ.թ.ա.**

334 թ. Հունաստանից հյուսիս գտնվող Մակեդոնիայի թագավոր Ալեքսանդրը (մ.թ.ա. 336—323 թթ.) մակեդոնական զորքի և իր հոր՝ Փիլիպոս 2-ի միավորած ու հալատակեցրած հունական քաղաք-պետությունների ռազմական ուժերի զուլի կանգնած, անցնում է սևծովյան նեղուցները և հայտնվում Փոքր Ասիայում: Գրանիկ գետի ափին նա հաղթում է փոքրասիական սատրապների միացյալ ուժերին, այնուհետև նվաճում է գեյան ծովափի հունական քաղաքները՝ Եփեսոսը, Միլեթը և մյուսները՝ նրանց պարսկական լծից ազատագրելու կարգախոսով: Իրականում դրանք ոչ թե վերադառնում են իրենց ինքնուրույն՝ քաղաք-պետությունների փլեճակին, այլ դառնում են նոր՝ Ալեքսանդրի կողմից ստեղծվող տերության հպատակ: Կտրելով անցնելով Փոքր Ասիան արևմուտքից արևելք, Ալեքսանդրը հասնում է Կիլիկիա և այստեղ մ.թ.ա. 333 թ. Իսոսի ճակատամարտում առաջին

անգամ հանդիպում պարսից արքա Դարեհ Յ-ի հետ։ Ալեք-
սանդրը մեծ հաղթանակ է տանում, Դարեհը փախչում է,
յթելով ճամբարում իր ընտանիքը։ Ալեքսանդրը շրջվում է
Էփեսոսի հարավ, գրավում Փյունիկիան և Պաղեստինը, այնու-
հետև տիրանում Սգիպտոսին, և ապա հետամուտ լինում
Դարեհին ու նվաճում Աքեմենյանների տիրության արևելյան
մասերը մինչև Հնդկաստան։

Փոքր Ասիան մ.թ.ա. Յ-րդ դ.։ Ալեքսանդրի մահվանից
հետո նրա տերությունը բաժան-բաժան է լինում և Փոքր
Ասիան շուրջ շորս տասնամյակ նրա հետևորդ-զորավարների
միջև ձեռքից ձեռք է անցնում։ Ի վերջո, թերակղզուն տի-
րաւում է Սելեկոս զորավարը, Սելեկյան տերության և թա-
գավորական հարստության հիմնադիրը (մ.թ.ա. 312—
281 թթ.)։ Սակայն արդեն նրա օրոք Փոքր Ասիայի հյուսի-
սային գոտում, Սելեկյանների դեմ պայքարի բռնվում սկսում
են առաջանալ և ամրապնդվել մի քանի թագավորություն-
ներ, որոնք ևս մեծ չափով համակված էին հելլենիզմով և
որոնցում որպես գրավոր և պաշտոնական լեզու կիրառվում
էր հունարենը։

Այսպես, թերակղզու արևմուտքում ձևավորվում է Պեր-
գամոնի թագավորությունը՝ համանուն մայրաքաղաքով։

Սրա երկրորդ տիրակալ Նվմենեսը մ.թ.ա. 282 թ. հաղթում է Սելե-
կաններին Ռադի դաշտում, իսկ նրա հաջորդները տիրանում են թերա-
կղզու մի խոշոր մասին։

Հյուսիս-արևմուտքում ստեղծվում է Բյութանիա թագա-
վորությունը, որտեղ մ.թ.ա. 264 թ. Նիկոմեդես թագավորը
հիմնադրում է Նիկոմեդիա մայրաքաղաքը։

Սրա որդի Զիանեսը, ժամանակավորապես դուրս մղված լինելով իր
թագավորությունից, ապաստան և օժանդակություն է գտել Հայաստանի
(գուցե՝ Փոքր Հայքի) թագավորից։

Փոքր Ասիայի կենտրոնական մասում (ներկայիս Անկա-
րայի շրջանում) առաջանում է Գալաթիա իշխանությունը։

Գալաթների (գալների) կելտական քաղաքական ցեղերը մ.թ.ա. Յ-րդ
դ. տղերներին Սկուպայից թափանցում են Փոքր Ասիա և իրենց առաջատա-
կություններով մեծ անհանգստություններ պատճառում բնակչությանը։

նրանց նվաճողական ծշտումները ռազմի գաշտում չափավորում են նախ Սեւեկյան Անտիոքոս 1-ին թագավորը՝ մ.թ.ա. 278 թ. և ապա՝ Պերգամոնի Ատտալոս 1-ին թագավորը՝ մ.թ.ա. 228 թ. և նրանք նստակյաց դառնալով, սկսում են շրջակա պնտաթյուններին վարձկան զորք մատակարարել:

Թերակղզու արևմտյան և հյուսիս-արևմտյան մասը զբաղեցնում էր Կապադոքիկիա երկիրը, որի Սև ծովի ափերին հարող մասը կոչվում էր Պոնտոսյան Կապադոքիկիա, իսկ հեռավայրում՝ Պոնտոս:

Կապադոքիկիան հարուստ էր հինավուրց տաճար-քաղաքներով, որոնք մեծ հողային տարածքների և բազմաթիվ տաճարային ստրուկների (հեբրոուլների) տեր էին: Սրանցից խոշորները, ինչպես օրինակ, Մա դիցուհու պաշտամունքին նվիրված Կոմանան, Անահիտի պաշտամունքի կենտրոն Ջելան, Ջևի տաճարով Վենասան, ոչ միայն նաև առևտրական հանգույցներ էին, ի ղեկավարա կապված Հայաստանի հետ, այլև ինքնավարության մեծ իրավունքներ էին վայելում Կապադոքիկիայի և Պոնտոսի թագավորների իշխանության ներքո:

Պոնտոսի կյանքում մեծ դեր էին խաղում նաև ծովափնյա հին հունական դադութ-քաղաքները՝ Տրապիզոնը, Ամիսը, Սիևոպը, որոնցից վերջին երկուսը նաև որպես մայրաքաղաքներ հն ժառանգել Պոնտոսյան թագավորության համար: Կապադոքիկիայի մայրաքաղաքն էր Մամաքը՝ հետադապի Կեսարիան:

Թե՛ Պոնտոսը, և թե՛ Կապադոքիկիան ինքնուրույնություն են ձեռք բերել Սելևկյաններից մ.թ.ա. 4-րդ դ. վերջից 3-րդ դ. առաջին կեսի ընթացքում:

Տեղեկություններ կան, որ Կապադոքիկիայի թագավորանգ Արխարաթը մ.թ.ա. 300 թ. Հայաստանի թագավոր նրվանդի տրամադրած զորքի օգնությամբ է վերանվաճել իր երկիրը մակեդոնացիներից:

Սրանից արեւելք, մինչև Նիքարտի հովիտը, տարածվում էր Փոքր Հայքը, որը մ.թ.ա. 3-րդ դ. նույնպես մեծ մասամբ ինքնուրույն պետություն էր:

Փոքր Ասիայի՝ Սելևկյաններին պատկանող հարավային զոտում ևս ժամանակ առ ժամանակ հակասելկյան ընդվզումներ էին ծագում, ընդ որում դրանց նախաձեռնողները հենց Սելևկյան տոհմի ներկայացուցիչներն էին: Այսպես, Փոքր Ասիայի կառավարիչ նշանակված Անտիոքոս Հինրաքը, որ Սելևկոս 2-ի կրտսեր եղբայրն էր, իրեն անկախ թագավոր է հայտարարում և, նեղն ընկնելով, մ.թ.ա. 230 թ. ապաստանում է հայոց Արշամ թագավորի քնտանիքում, Անտիոքոս 3-ի ազգական Աթայոսը

ևս, որը նույնպէս նշանակված էր Փոքր Ասիայի կառավարիչ, իրեն թագավոր է հայտարարում և մ.թ.ա. 213 թ. պարտութուն կրելով, մահապատժի է ենթարկվում:

Հռոմի ցերեպիսցումը Փոքր Ասիա: Մ.թ.ա. 2-րդ դարի սկզբին Սելևկյան թագավոր Անտիոքոս 3-րդ Մեծը, նախապէս ամրապնդելով տերութիւնն արևելյան ծայրամասերում թուլացած ու խախտված իր իշխանութիւնը և ժամանակավորապէս գրավելով Մեծ և Փոքր Հայքը, Մոփքը, և Կոմմագենեն, որտեղ իշխում էին Երվանդյան թագավորական տոհմի շառավիղները, անցնում է սևծովյան նեղուցները և սկսում Հունաստանի նվաճումը: Սա փաստորեն պատերազմ էր Հունաստանն արդեն իր ռազմաքաղաքական ոլորտի մեջ առած Հռոմեական հանրապետութիւնի դեմ, որին, ի դեպ, Անտիոքոսին հրահրում էր դիմելու նրա մոտ ապաստանած կարթագենացի զորավոր Հաննիբալը՝ Հռոմի անհաշտ թշնամին:

Որոշ հաջողութուններից հետո, Անտիոքոսը ստիպված եղավ հռոմեացիների ճնշման տակ ետ քաշվել և պատերազմը տեղափոխվեց Փոքր Ասիայի հողը: Այստեղ մ.թ.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանները ջախջախիչ պարտութուն կրեցին հռոմեացիներից, որը ճակատագրական նշանակութուն ունեցավ նրանց տերութիւն համար: Սկսվեց նրա քայքայման մի նոր փուլ, որը նշանավորվեց առաջին հերթին նրա նվաճած վերահիշյալ հայկական թագավորութիւնների վերստին անկախացմամբ, ապա և թուլահոգ տերութիւն մյուս մասերի անջատմամբ:

Փոքր Ասիայի պետութիւնները բաժանվեցին երկու՝ հռոմեամետ և Սելևկյաններին հարող ճամբարի: Վերջիններին ապավինում էին հիմնականում Պոնտոսը և Փոքր Հայքը, մինչդեռ հռոմեական կողմնորոշում ունէին Պերգամոնը և Կապադովկիան, ինչպէս և Պափլագոնիան ու Գալաթիան: Մ.թ.ա. 183 թ. երկու ճամբարների միջև պատերազմ է ծագում, որի նախաձեռնողները՝ Պոնտոսն ու Փոքր Հայքը, որոշ հաջողութուններից հետո պարտվեցին, շտառալով Սելևկյաններից ակնկալած օգնութիւնը: Մեծ Հայքը և Մոփքը, որ հռոմեասեր թե՛ն էին համարում, արեւմուտքում որոշ տարածքներ ձեռք բերին: Այսպէս, Մեծ Հայքը, որ նախորդ դարում եւս առանձին գեպքերում միջամտում էր Փոքր Ասիայի գործերին, այնժամ դառնում է միջազգային կարեւոր գործոններից մեկը, կայուն կերպով գրաւորելով իր քաղաքականութիւն հակաՍելևկյան ուղղվածութիւնը:

Հռոմի հաստատումը Փոքր Ասիայում: Հռոմի ներթափանցումը Փոքր Ասիա գնալով ուժեղանում էր, և նրա առա-

շին զոհը դարձավ իր դաշնակից Պերգամոնը։ Բանը հասավ նրան, որ Ատտալոս 3-րդ թագավորը մ.թ.ա. 133 թ. կտակեց իր թագավորությունը Հռոմին։ Սակայն այդ ժառանգությանը տիրանալուց առաջ Հռոմը ստիպված եղավ մեծ ջանքեր թափել ճնշելու համար Ատտալոսի խորթ եղբայր Արիստոնիկոսի ապստամբությունը, որն ընդգրկեց նաև ստրուկների զանգվածներ և առաջնորդվում էր «արեային քաղաքացիության» ստեղծման ուսույթական կարգախոսով։ Ապրստամբները խոշոր հաղթանակ տարան հռոմեական զորքի նկատմամբ, սակայն մ.թ.ա. 129 թ. պարտվեցին և Արիստոնիկոսը Հռոմ տարվելով մահապատժի ենթարկվեց։ Պերգամոնի թագավորությունը միացվեց Հռոմին «Պրովինցիա Ասիա» անվան տակ։

Նույն բախտին էին հետզհետե արժանանում նաև մյուս փոքրասիական պիտությունները։ Սակայն այդ ընթացքը ժամանակավորապես ընդհատեց Պոնտոսի թագավոր Միհրդատ 6-րդ նվապատորը (մ.թ.ա. 111—63 թթ.)։ Նախապես տիրանալով Սև ծովի առափնյա մի շարք երկրներին (Ղրիմի Բոսպորյան թագավորությունը, Փոքր Հայքը, Կոլխիդան և այլն), իսկ մյուսների հետ պայմանագրեր կնքելով ու դարձնելով Սև ծովը իր նորաստեղծ տերության նեքերին ծով, Միհրդատը, դաշնակից Հայաստանի թագավոր Տիգրան 2-րդ Մեծի օգնությամբ գրավել էր Կապադովկիան և, Բյուբանիայի օգնությամբ՝ Գալաթիան։ Մ.թ.ա. 88 թ. նա պատերազմ սկսեց Հռոմի դեմ։ Գրավեց ողջ Փոքր Ասիան և կազմակերպեց նրա բոլոր մասերում ապրող հռոմեացի բնակչության հանկարծակի բնաջնջումը։ Այնուհետև նա նվաճեց Հունաստանը։ Այս հաջողությունները, սակայն, երկարատև չէին։ Միհրդատը երեք պատերազմ է մղել Հռոմի դեմ («Միհրդատյան պատերազմներ»), որոնց ընթացքում նա հետզհետե կորցրել է նվաճված հողերը, իսկ վերջում նաև Պոնտոսը, որը մ.թ.ա. 63 թ. հայտարարվեց հռոմեական նահանգ։ Հռոմի առաջխաղացումը Փոքր Ասիայում դեպի արևելք կանգ է առնում, հանդիպելով Հայաստանի դիմադրությանը մ.թ.ա. 69—66 թթ. հայ-հռոմեական պատերազմում։

Հռոմի տիրապետությունն արևելքում նվաճված հողերի

վրա և հատկապես՝ Փոքր Ասիայում, գնալով ամրապնդվում է։ Մ.թ. առաջին դարերում Կապադովկիան, նրա մայրաքաղաք Մաժաք-Կեսարիան, դառնում են քրիստոնեություն տարածման կարևոր հենակետ, որը, որպես այդպիսին, մըրցում էր Ասորիքի և նրա Նդեսիա (էդեսսա, Ուռհա) քաղաքի հետ։ Այստեղից քրիստոնեությունը միսիոներների միջոցով տարածվում էր դեպի արևելքի երկրները, մասնավորապես՝ Հայաստան։ Սկզբնական շրջանում Հայոց կաթողիկոսները ձեռնադրվում էին Կեսարիայում՝ տեղի արքեպիսկոպոսի կողմից։ Կապադովկիան հայտնի է իր երեք խոշորագույն եկեղեցական հայրերով, որոնք էին Բաբսեղ Կեսարիացին, Գրիգոր Նյուսացին և Գրիգոր Նազիանզացին։ Սրանց ստեղծագործությունները վաղ միջնադարում թարգմանվել են հայերեն և մեծ դեր են խաղացել հայերի դավանաբանական-փիլիսոփայական աշխարհայեցողության ձևավորման մեջ։

Հռոմեական կայսրության զարգացման ընթացքը տա-նում էր դեպի տերություն երկփեղկումը, և դրա կարևոր փուլերից մեկն էր Կոստանդինոս Մեծ կայսրի կողմից մայրաքաղաքի տեղափոխումը Հռոմից Բոսպորի նեղուցի եվրոպական ափին գտնվող հինավուրց հունական Բյուզանդիոն քաղաքը, որն այդ կապակցությամբ ստացավ Կոստանդնուպոլիս անունը։ 395 թ. կայսրությունը վերջնակա-նապես բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Հռոմեական կայսրության և Արևելյան Հռոմեական կայսրության, որի կենտրոնական մասը կազմեց Փոքր Ասիան։

Ժամանակակից պատմագրության մեջ Արևելյան Հռոմեական կայսրությունը հանդես է գալիս Բյուզանդիայի ան-վան տակ։ Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ հազարամյա գոյության ընթացքում Բյուզանդիայի և նրա հարևանների թե՛ պաշտոնական, թե՛ անպաշտոն մատե-նագրությունը այդ կայսրությունն անվանում է հիմնակա-նում Հռոմեական, իսկ նրա բնակիչներին՝ հռոմեացիներ։ Այն երբեմն կոչվում է նաև հույների երկիր, հույների կայս-րություն։ Այս պետությունը, որը տարածված էր երեք աշ-խարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի վրա, ողջ միջնադարի ընթացքում իրեն համարում էր Հռոմեական

կայսրության մշակույթի ուղղակի ժառանգորդը, Բյուզանդիան սնվում էր նաև երկրի տարածքում բնակվող բազմաթիվ ժողովուրդների հոգևոր և նյութական հսկայածավալ մշակույթից, Բյուզանդական մշակույթը հոռմեականի համեմատությամբ նոր որակ է նաև այն պատճառով, որ այս երկրի քաղաքական մտածողության և մշակույթի բնագավառում հսկայական հեղաշրջում կատարեց նոր գաղափարախոսությունը՝ քրիստոնեությունը, որը պաշտոնական և ապա պետական դավանանքի կարգավիճակ ձեռք բերեց 4-րդ դարի ընթացքում: Բյուզանդական կայսրության առաջացումը տնտեսապես կայունացրեց և դանդաղեցրեց դասական ստրկատիրական հասարակության անկումը Միջերկրական ծովի արևելյան շրջաններում:

Բյուզանդական կայսրությունը 4—5-րդ դդ.: Բյուզանդական կայսրությունը շարունակում էր Հռոմի արևելյան քաղաքականության ավանդույթները, Մինչև 7-րդ դարը Մերձավոր Արևելքում Բյուզանդիայի միակ հզոր քաղաքական հակառակորդը Սասանյան Պարսկաստանն էր: Նրանց միջև ընթացող երկարատև պատերազմներից և քաղաքական խարդավանքներից հետո, կողմերը 387 թ. երկու մասի բաժանեցին Մեծ Հայքի թագավորությունը, որի արևմտյան մասում կայսրությունը շուտով վերացրեց տեղական Արշակունիների իշխանությունը (389 թ.): Հայաստանը ևս ներգրավվեց Բյուզանդական արևելաքրիստոնեական աշխարհի ոլորտը: Այդ հանգամանքը, ի սկզբանե, սպառնում էր հայոց մշակույթի ինքնակա գոյությանը: Սկզբում Փոքր Հայքը, Առաջին և Երկրորդ Հայքերը մտնում էին Արևելյան երկրամասի՝ Պոնտոսի դիոցեզի մեջ, կազմելով կայսրության օրդանական մասը, իսկ 387 թ. հետո նվաճված Մեծ Հայքի արևմտյան գավառները, կայսրությանն էին ենթարկվում դաշնակցային հիմունքներով: Այս կացությունը շարունակվեց մինչև Հուստինիանոս կայսեր գահակալումը:

Երկրի վարչական կառավարման ասպարեզում էական փոփոխություններ տեղի չէին ունենում, Բյուզանդիան Բալկաններում բավական հաջող պաշտպանվում էր հոների, իսկ հարավում՝ լիբիական ցեղերի արշավանքներից: Կայսրության գավառական միատարրությունը ապահովելու խնդրում

հեղափոխական գեր կատարեցին Տիեզերական Եկեղեցական ժողովները, որոնց հիմնական նպատակն էր պայքարել ազանդավորական շարժումների դեմ: Սակայն Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.), Նիքեոսի (431 թ.) եկեղեցական ժողովներին հաջորդեց Փաղկեդոնի տիեզերա-
ժողովը (451 թ.), որը խոր սեպ խրեց երկաթնակների և միաբնակների՝ մի կողմից Հռոմի և Կոստանդնուպոլսի, մյուս կողմից՝ Մերձավոր Արև-
մուտքի քրիստոնյա ժողովուրդների մեջ: Երկրի մշակույթը դեռևս երկփեղկ-
ված էր. տիրապետող քրիստոնեականն էր, սակայն տարբեր ազանդների տեսքով ժամանակ առ ժամանակ զլուխ էր բարձրացնում հեթանոսու-
թյունը:

Բյուզանդիան Հուստինիանոսի դարաշրջանում: Հուստինիանոս 1-ին կայսեր (527—565 թ.) երկարատև թագավո-
րությունը ընթացավ անընդհատ պատերազմների մեջ թե՛ արևելքում, թե՛ արևմուտքում: Նրա օրոք Բյուզանդական պետութայունը հասավ իր հզորության գագաթնակետին: Այս ինքնակալի հակասական կերպարը իր երկերում մեզ է ավան-
դել հույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին: Ձգտելով վերա-
կանգնել Հռոմեական կայսրության երբեմնի փառքը, Հուս-
տինիանոսը դրան ձգտում էր հասնել իշխանությունը կենտ-
րոնացնելու միջոցով, որի և դրված էր նրա վարչական բարենորոգումները՝ հիմքում: Բյուզանդա-իրանական պատե-
րազմում պարսկական բանակները կանգնեցնելու հայկա-
կան դաշնակցային զորքերի անկարողությունը առիթ դար-
ձավ Մեծ Հայքի բյուզանդական գավառները մեկ պետի իշ-
խանության ներքո միավորելուն, որը կայսրության ամենա-
բարձր զինվորական հինգ պաշտոնյաներից մեկն էր և նստում էր Թեոդոսուպոլսում (Կարին): Երկրի արևելյան սահ-
մանների պաշտպանունակությունը բարձրացնելու միտու-
մով բյուզանդա-պարսկական սահմանի ողջ երկարությամբ
պաշտպանական ամրոցների մի հզոր համակարգ ստեղծվեց:

Հուստինիանոսի 535 թ. հրապարակված հրովարտակով խախտվեցին Հայաստանի ավատատեր ընտանիքների ժառանգական իրավունքները, որը և նախադեպ դարձավ նրանց քայքայման և սեփական հայրենիքից հոծ խմբերի արտագաղթի համար: Ըստ այդ իրավական փաստաթղթի, ավա-
տատիրոջ բոլոր ժառանգները թե՛ տղամարդ, թե՛ կին պետք է իրենց բաժինը ստանային: Այդ օրենքով, պետութային միջամտությամբ, փոշիաց-
վում էր Հայաստանում խոշոր ավատատիրական տնտեսութայունը:

Հռուստինիանոսի դարաշրջանում կայսրության բանակները ժամատակ տվեցին գրեթե ողջ Հյուսիսային Աֆրիկան, Իտալիան, Իսպանիան և Միջերկրական ծովը վերջին անգամ փակ շրջափառան դարձավ Բյուզանդիայի համար:

Հռուստինիանոսի բարձրագույն նպատակը՝ Հռոմեական կայսրության հզորության վերականգնումը և պատմության անվի նոր շրջադարձը՝ անհեռատեսության արդյունք էր: Նրա գործերից ամենահիշատակելին Հռոմեական իրավունքի կարգավորումն ու ամբողջացումն էր, որով և հավերժացրեց իր անունը սերունդների համար:

Բյուզանդա-պարսկական քաղաքական բախումը 7-րդ դարում: 6-րդ դարի երկրորդ կեսին հաճախադեպ դարձան սլավոնական ցեղերի և ավարների արշավանքները դեպի Բալկանյան թերակղզի: Նվաճողների մի մասը հետագայում վերջնականապես հաստատվեց այդ տարածքի վրա: Դարի վերջում Բյուզանդիան կորցրեց Միջերկրական ծովի՝ Բալկաններից և Կարթագենից արևմուտք ընկած, գրեթե բոլոր տարածքները:

Արևելքում կայսրության հիմնական հակառակորդը շարունակում էր մնալ Սասանյան Պարսկաստանը, որի դեմ մղվող պատերազմները փոփոխական հաջողություններով իրար էին հաջորդում: 572 թ. սկսված պատերազմը կարճատև դադարներով շարունակվեց մինչև արաբական արշավանքները, արյունաքամ անելով հակառակորդ կողմերին: Այդ պատերազմների առիթը դարձավ Կարմիր Վարդանի ղեկավարությամբ Հայոց նախարարների ապստամբությունը (572 թ.) Սասանյան Պարսկաստանի դեմ, որը թեև երկրում ունեւ իր քաղաքական և տնտեսական պատճառները, այնուամենայնիվ խրախուսվում էր բյուզանդական արքունիքի կողմից և ծառայում էր նրա շահերին: Այդ տարիներին հաճախադեպ դարձան Հայաստանի տարածքից բռնագաղթներն ու տեղափոխությունները:

Մուսլիկ կայսեր իշխանության տարիներին (582—602) հաջողությունը մի պահ ծաղուղի Բյուզանդական կայսրությանը նրա ժամանակահատվածը Պարսկաստանում դահ բարձրացավ նոսրով Բ հարվելը, որը Բյուզանդիային դիցել Հա-

շատանի նշանակալի հատվածը (591 թ.), Մի պահ պարսկաբյուզանդական սահմանն անցավ Սեանա լճով, Ազատ գետով և Վանա լճով։ Մորիկը Հուստինիանոսի ոգով նոր մասնատման ենթարկեց Հայաստանի տարածքը, որի վերջնական նպատակն էր ոչնչացնել երկրի նախարարական կարգը և Հայաստանը վարչականորեն ձուլել Կայսրությանը։ Դրանից էր բխում նաև այն քաղաքական ծրագիրը, որը նպատակ ուներ երկրից դուրս բերել Հայոց զինական ուժը և օգտագործել Թրակիայում (Բալկաններում) մղվող պատերազմներում։ Հայ ազնվականությունը 591 թ. ապստամբեց Բյուզանդական կայսրության դեմ, որն իր քաղաքական շահերի համար օգտագործեց Պարսկաստանը։

Մորիկի վարչական քաղաքականության հիմնական միտումը տարածքային մեծ միավորների ստեղծումն էր, որը և տանում էր երկրի կառավարման ապակենտրոնացում։ Եկեղեցական կյանքում պաշտոնական հալածանք սկսվեց Քաղկեդոնի ժողովը լրնգունող թեմերի նկատմամբ, Ավանում հաստատվեց քաղկեդոնականություն դավանող հայերի կաթողիկոսարան, ի հակակշիռ Պարսկական կողմում գտնվող Դվինի աթոռի, Երկրի տարբեր շրջաններում սկսեցին կրկին գլուխ բարձրացնել կենտրոնախույս ուժերը (Եգիպտոս) և ժողովրդական շարժումները, որոնց զսՀ դարձան Մորիկը և նրա հաջորդ Փոկասը (602—610 թթ.)։ Պարսիկներն անցան հակահարձակման և ներխուժեցին Եգիպտոս, Ասորիք, Կիլիկիա, իսկ 626 թ. հասան մինչև Բոսֆորի ափերը։

§ 8. ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 7-ԻՑ 15-ՐԴ ԴԱՐՆԵՐՈՒՄ

Հերակլ կայսեր կառավարումը և անարական արշավանքները։ Հերակլ կայսեր (610—641 թթ.) վարչական բարենորոգումները և հռանդուն արտաքին քաղաքականությունը հնարավորություն տվեցին 628 թ. լիակատար հաղթանակ տանել Պարսկաստանի նկատմամբ և վերանվաճել բոլոր արևելյան տարածքները։ Բյուզանդիային հաջողությունը ժպտաց նաև Բալկաններում, ուր երկիրը պատերազմում էր Սասանյանների դաշնակից Ավարական խաքանատի դեմ։ Ո՞րն էր էությունը նշված բարենորոգումների։ Հերակլ կայսրը հիմք դրեց բյուզանդական պետության բանակաթեմային

կառավարման համակարգին: Այդ բազմավարչական միա-
վորի և՛ բազմական, և՛ քաղաքացիական գործերը տնօրի-
նում էր սարատեզը: Զորքը պահվում էր բանակաթեմի մի-
ջոցներով: Զինվորների հիմնական մասը հողագործներ էին,
որոնք պատերազմներում նվաճողներից պետք է պաշտպա-
նեին վարձի փոխարեն իրենց տրված հողակտորը: Ռազ-
մավարչական ղեկավարման այս սկզբունքները իրենց կեն-
սունակութունը պահպանեցին մինչև 11-րդ դարի վերջը:

Կառուցվածքային այս փոփոխությունը բավական զոր-
ծուն գտնվեց, երբ 634 թ. Ասորիքում հայտնվեցին Արաբա-
կան խալիֆայության բանակները: Թեև Բյուզանդիան կորց-
րեց Ասորիքը, Պաղեստինը, Նիկիտոսը և ողջ Հյուսիսային
Աֆրիկան, արաբները ներխուժեցին Փոքր Ասիա և հասան
մինչև Կոստանդնուպոլիս, սակայն չխախտվեց կայսրության
պետական ամբողջականությունը: 7-րդ դարի վերջին Բյու-
զանդիան տարածվում էր միայն Բալկաններում և Փոքր
Ասիայում, սակայն աղգային կազմով այն ավելի միատարր
էր դարձել: Օգտվելով տարածքաշրջանում ստեղծված բարդ
իրադրությունից, Հայոց նախարար Թեոդորոս Ռշտունին
կարողացավ միավորել հայոց, աղվանից և վրաց ավատա-
տերերին և ստեղծեց մի իշխանապետություն, որը, խու-
սանավելով Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության
միջև, կարողացավ իր կիսանկախ վիճակը շարունակել
մինչև 8-րդ դարի սկիզբը և իր տարածական ամբողջակա-
նությունը չկորցրեց արաբական տիրապետության ներքո:
Այս շրջանում էր, որ բյուզանդական մշակույթը վերջնա-
կանապես զրկվեց հեթանոսական դադափարներից և ավանդ-
ներից սնվող դպրոցներից: Դա ուղղափառ քրիստոնեության
հաղթանակի դարաշրջանն էր:

Բյուզանդիան 8—9-րդ դարերում: 8-րդ դարը բյուզան-
դական պատմագրության մեջ անվանվում է «մութ տարի-
ներ», Դա վերաբերում է և՛ քաղաքական, և՛ մշակութային
պատմությանը: Նրկարատե պատերազմները և մերձավոր-
արևելյան ծաղկուն դավառների կորուստը ճգնաժամային
վիճակ ստեղծեցին կայսրության ներքին կյանքում:

Պատերազմներ սկսվեցին պաշտոնական եկեղեցու երկու թևերի՝ պատկերամարտերի և պատկերապաշտների միջև։ Այդ դարաշրջանում էր, որ Հռոմի պապուՆթյան դեմ զաղափարական պայքարում Բյուզանդական եկեղեցին զիջեց գրեթե ողջ Իտալիան։ Նշված երկու հոսանքների միջև դամաճարանական պայքարը փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչև 843 թ., երբ վերջնականապես հաղթանակի հասան պատկերապաշտները։

Լևոն Գ Իսավրացու (717—741 թթ.) օրոք ստեղծվեց բյուզանդական իրավունքում նոր փուլ ազդարարող «էկլոգա» հուշարձանը, որով պետք է կանոնավորվեր երկրի ներքին կյանքը և կարգավորվեր նրա ղեկավարումը։ Կայսրությունը հաջող պաշտպանական պատերազմներ էր մղում Արաբական խալիֆայության և Բուլղարական խաքանատի դեմ։ Շարունակվում էր Հայաստանից նախարարական տների որոշ ներկայացուցիչների հոսքը դեպի Բյուզանդական կայսրության տարածք, ուր հայազգի զինվորականների թիվը շարունակում էր աճել։ Գահին տիրում են նաև հայազգի տիրակալներ (օր. Լևոն 5-րդ Հայկազունը, որը փորձեց կառարեկագործել երկրի կենտրոնացված կառավարումը։

Կայսրության ղեկավարումն այնուհետև իր վրա վերցրեց մի այլ փոքրասիական հարստություն՝ Ամորիները (820—867 թթ.)։ Նրանց տիրապետության դարաշրջանում էր, որ Մեծ Հայքի տարածքից Բյուզանդիա ներմուծվեց պավլիկյան աղանդավորական շարժումը։ Այդ շարժումն էր, որից հետագայում Հայաստանում ծնունդ առավ Թոնդրակյանների աղանդը, իսկ բուն Բյուզանդիայում սերվեցին բողոմիլները։ Չնայած Ամորիական հարստության կայսրերի և նրանցից հետո իշխած ինքնակալների անխնա պայքարին, պավլիկյանության մնացորդները գոյատևեցին Բալկաններում մինչև 12-րդ դարի վերջը։

Մակեդոնական հարստությունը և կայսրությանն նոր հզորացումը։ 867 թ. Բյուզանդական գահին տիրացավ Բարսեղ 1-ը, որը հիմք դրեց Մակեդոնյան հարստության (866—1056 թթ.)։ Նա սերում էր Բալկանյան թերակղզում հաստատված հայկական ընտանիքից։ Բյուզանդիայի պատմության այս շրջանում Արաբական խալիֆաթը անկում էր ապրում։ Արևմուտքում կայսրությունը կարողացավ վերջնականապես ոչնչացնել Բուլղարական պետությունը (1018 թ.)։ Այս հարստության տիրապետության շրջանը նշանավորվեց նաև մշակութային վերելքով։

9—10-րդ դարերում էին ստեղծագործում ուղղափառ եկեղեցու պատ-
րիարքներ և նշանավոր մատենագիրներ Փոռը, Նիկողայոս Միստիկոսը,
Այդ ժամանակ ստեղծվեցին բյուզանդական իրավունքի նոր ժողովածու-
ներ Պրոխիրոնը և Բասիլիկոսը (Կայսերական գրքեր), Կայսրության
վարչական արարողակարգը հավերժացնող Կոստանդին 7-րդ Նիքաեանի
երկերը:

Այրարական լուծը թոթափած, Բագրատունիների հարըս-
տության կողմից վերականգնված Մեծ Հայքի թագավորու-
թյունը 10-րդ դարի վերջից աստիճանաբար կրկին ընկնում
էր Բյուզանդիայի ազդեցության ոլորտը և մաս սու մաս
նվաճվում նրա կողմից: Հայաստանի տարածքը ընդգրկված
էր Իբերիա, Վասպուրական, Միջագետք կատապանություն-
ների կազմում: 11-րդ դարի սկզբից մեծ թափ ստացավ Մեծ
Հայքի տարածքից նախարարական և թագավորական ըն-
տանիքների զինված շոկատների կազմավրածումը և գաղղը
դեպի Կապադոկիա և Հյուսիսային Ասորիք: Այս ժամանակ
սկսվեցին քայքայվել իրենց դարն լսարած բանակաթեմա-
յին բանակները: Այդ գործընթացին նոր թափ հաղորդեցին
սելջուկ-թյուրքական արշավանքները: 1071 թ. Մանազկերտի
ճակատամարտում պարտության մատնելով կայսր Ռոմա-
նոս Դիոգենեսի բանակին, սելջուկները վերջնականապես
հաստատվեցին Փոքր Ասիայում և հասան մինչև Կոստանդ-
նուպոլսի մատույցները: Այլևս Հայաստանը դուրս մնաց
Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքականության
ոլորտից: Բյուզանդիայի արևմտյան քաղաքականությանը
ևս մատնվեց անհաջողության:

Բուսլայի և Սիցիլիայի տարածքներ լիսեցին ներխուժել նորմաններ:
Բալկանների վրա հարձակվեցին պեչենեղները: 1054 թ. օրթոդոքս եկե-
ղեցին վերջնականապես բաժանվեց կաթոլիկ հռոմեականից, Սվրոպական
օլեոությունների և հատկապես Հռոմեական սրբազան կայսրության հետ
փոխհարաբերություններում հակասություններն ավելի խորացան: Բյու-
զանդական կայսրությունը կրկին հայտնվեց նոր բաշարացիական պա-
տերիարքների և տնտեսական ճգնաժամի ավերիչ ալիքի հորձառուտում:

Այնուամենայնիվ 11-րդ դարում ես կայսրության մշակութային կյան-
քը շարունակում էր ծնել նոր անուններ՝ Միքայել Փսելոս, Կեկավմենոս:

Բյուզանդական միասնական պետության վերջին հար-
յուրամակը: Կայսրությանը ճգնաժամային վիճակից դուրս

բերեց Կոմնենոսների հարստության (1081—1165) հիմնադիր Ալեքս 1-ին կայսրը։ Նշված դարաշրջանի կայսրերը ներքին քաղաքականության մեջ հիմնական շեշտը դնում էին զավառական ազնվականության թուլացման և թագավորական տան տարածքների մեծացման վրա։ Բյուզանդական բանակում մեծացավ վարձկանների թիվը, Կոմնենոսների կառավարման ժամանակաշրջանը համընկավ խաչակրաց արշավանքների կազմակերպման բուռն շրջանի հետ։ Բյուզանդիան կարողացավ օգտագործել այդ շարժումը Փոքր Ասիայում իր հակառակորդ Իկոնիայի սուլթանության դեմ, որին ժամանակավորապես կարողացավ հեռու պահել Միջերկրական և Սև ծովերի ափամերձ գոտուց, արշավանքներ ձեռնարկեց Ասորիք, Նգիպտոս, Իտալիա։ Նրկու անգամ իրեն ենթարկեց Կիլիկիայի Ռուբենյան հայկական իշխանությունը։

Սակայն այդ ձեռնարկումները չէին համապատասխանում երկրի իրական տնտեսական և ռազմական հզորությանը և նպատակ ունեին պահպանել Բյուզանդական կայսրության տարեցտարի նվազող միջազգային հեղինակությունը։

Նրկրի արենյան քաղաքականությունը, որն հիմնված էր նրբորեն տարվող սրածանիր, որ տիրեա սկզբունքի կիրառման վրա, ձախողվեց 1176 թ., երբ Իկոնիայի սուլթան Ղլիմ Արսլանը Միթիոկեֆալոնի ճակատամարտում պարտության մատնեց Մանուիլ 1-ին Կոմնենոսի բանակը։ Հռոմեական Սրբազան կայսրությունն ու նորմանները զուրա մղեցին Բյուզանդիային, իրենց մեջ բաժանեցին ողջ Իտալիան։ Բուլղարիայում վերսկսվեց 11-րդ դարում ընդհատված անկախության գործընթացը։

Բյուզանդական կայսրության կյանքում կրկին սկսվեց այլևս հաճախակի կրկնվող երկարատև ներքին և արտաքին քաղաքական լճացման ժամանակաշրջան։

12-րդ դարի վերջին իշխանության գլուխ անցած նոր՝ Անգելոսների հարստությունը չկարողացավ կանգնեցնել այդ գործընթացը, որը հյուծեց երկրի տնտեսությունը, և որի հետևանքով 1204 թ. Կոստանդնուպոլիսը հանձնվեց Չորրորդ խաչակրաց բանակների ողորմածությանը։ Գրանում քիչ դեռ լիազացին 12-րդ դարի ընթացքում խալախան քաղաքներին տրված առևտրական արտոնագրերը։ Մշակութային կյանքը ևս այս դարաշրջանում որոշ լճացում ապրեց, սակայն նաև ծնվեցին Բյուզանդական մատենագրության բազմաթիվ նոր գործիչներ, որոնցից հիշատակելի են

Բնոգոր Պրոգորոմոսը, Աննա Կոմնենեն, Հովհաննես Կիննամոսը, Միքայել և Նիկիտաս Խոնիատեսները:

Բյուզանդական կայսրության մասնատումը: 1204 թ. Հետո Բյուզանդական կայսրությունը փաստորեն մասնատվեց: Խաչակրաց շարժումը արշավանքի բանակները Ս. Սոֆիայի եկեղեցում գահ բարձրացրեցին իրենց ղեկավարներից մեկին՝ Ֆլանդրիական ազնվական Պաղտինին (Բալդուին) և հիմնադրեցին մի նոր խաչակրաց պետություն, որին ժամանակակից եվրոպական աղբյուրները, հետեւելով բյուզանդական տվանդուլթին, անվանում են Կոստանդնուպոլսի կամ Հոմակաան, իսկ մենք՝ Լատինական կայսրություն, որը գոյատևեց մինչև 1261 թ.: Այս պետությունը գոնե արտաքուստ հորձուժ էր պահպանել Կոստանդնուպոլսի արքունիքի տվանդները: Տիրապետող լատին ավագանին հակադրվում էր երկրի հիմնական բնակչությանը և բացի այդ այն միատարր չէր:

Բյուզանդիայի բալկանյան տարածք ներմուծվեցին եվրոպական ֆեոդալական հասարակություններին բնորոշ հողային և տնտեսական փոխհարաբերություններ, Երուսաղեմի և Անտիոքի խաչակրաց պետությունների նման այս պետությունը ևս ունեցավ իր սեփական իրավունքի հուշարձանը (Ռոմանիայի Աստիզներ), որով կարգավորվում էին երկրի ներքին փոխհարաբերությունները և հողային իրավունքը:

Լատինական կայսրությունը չդիմացավ իրեն պարտադրված երկարատև պատերազմներին և շուտով նրա միակ տիրույթը մնաց Կոստանդնուպոլիսը:

Այս դարաշրջանում բուլղարներն օգտագործեցին Բալկաններում ստեղծված անկայուն իրավիճակը և անկախություն ձեռք բերեցին, հավակնելով Թեսալիայի ողջ տարածքին: Պեչենեգները շարունակում էին ավարառել Դանուբից հարավ ընկած տարածքները: 13-րդ դարի սկզբին ձևավորվեցին Բյուզանդական կայսրության քաղաքական և մշակութային ավանդները շարունակող նոր պետություններ՝ Նիկիայի կայսրությունը, Էպիրոսի թագավորությունը և Տրապիզոնի կայսրությունը: Սրանցից առաջինին էր միճակված կրկին Կոստանդնուպոլսին տիրելու և երկիրը մի վերջին անգամ միավորելու փառքը:

Այդ պետութիւնը ձեւավորվեց փոքրասիական տարածքներում: Նիկիայի տիրակալ Թեոփոլ Ա կասկարիսը 1208 թ. կայսր օծվեց, Երկրի պաշտպանութիւնը հանձնելով սահմանապահ զորքերին և իրենց տիրապետութիւն տակ ունենալով Փոքր Ասիայի համեմատաբար արդավանդ հողատարածութիւնները, Նիկիայի կայսրերը շուտով կարողացան ամրապնդել սեփական իշխանութիւնը: Կասկարիս հարստութիւն կայսրերի ներքին քաղաքականութիւնը հիմնվում էր մանր սեփականատերերի և խոշոր ազնւականութիւն հաշվին տարեցտարի աճող պետական սեփականութիւն վրա, Մայրաքաղաք Նիկիան դարձավ բյուզանդական մշակույթի նոր կենտրոնը:

Կասկարիսներին փոխարինելու եկավ Պալեոլոգներ զահառահմը, որի առաջին ներկայացուցիչն՝ Միքայել 8-րդին հաջողվեց վերանվաճել Կոստանդնուպոլիսը: Կայսերական այս հարստութիւնն էլ վիճակված էր տեսնել Բյուզանդական կայսրութիւն վախճանը: Նոր հարստութիւն իշխանութիւն գլուխ անցնելը կարելի է բնութագրել որպէս երկրում խոշոր հողատիրութիւն նոր հաղթանակէ Բալկաններում ձեռնարկած էպիրոսի թագավորութիւնը ազգային կազմով միատարր լէր: Երկրի հյուսիսում գերակշռում էին ալբանները, միջին և մասամբ էլ հարավային Մակեդոնիայում՝ սլավոնները, հարավային էպիրոսում և Թեսալիայում՝ հույները: Այս տարածքներում էին գտնվում Բյուզանդական կայսրութիւն ամենախոշոր հողատերերի տիրույթները: Այս հանգամանքը ստիպում էր միմյանց հաջորդող կառավարող ընտանիքներին մյուսների հաշվին հզօրացնելու իրենց դիրքերը: էպիրոսի և Նիկիայի միջև 12-րդ դարի երկրորդ կեսին երկարատեւ պայքար սկսվեց Բալկանների համար, որում հաղթանակ տարան վերջինները: 12-րդ դարում իշխող Կոմնենոսների ընտանիքի ճյուղերից մեկը 1204 թ. հաստատվեց Տրապիզոնում և իր ինքնամիտփ գոյութիւնը շարունակեց մինչև 1461 թ., սեփականելով Մեծ Կոմնենոսներ խորատ տիրապետը:

Պալեոլոգների Ռարստութիւն պաշարը միասնական Բյուզանդիայի համար: Կայսրութիւն անկումը: 1261 թ. օգոստոսի 15-ին Միքայել 8-րդ Պալեոլոգոսը (1259—1282) Ռակե դարպասներով մտավ Կոստանդնուպոլիս: Թրթողութեւ կենդանու պատրիարքը ևս Նիկիայից տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, ուր երկրորդ անգամ կայսր օծեց Միքայել 8-ին: Միավորված կայսրութիւն տարածքը 12-րդ դարի վերջի հետ համեմատած խիստ կրճատվել էր: Բուլղարների և սերբերի ձեռքին էին Թրակիայի և Մակեդոնիայի հյուսիսային շրջանները, շարունակում էր իր գոյութիւնը էպիրոսի թագավորութիւնը: Կենտրոնական Հունաստանը և գրեթե ողջ Պելոպոննեսը մնում էին լատինների ձեռքում, Վենետիկը և Ճենովան տիրում էին էգեյան ծովի մի շարք կղզ-

զիններին: Փոքր Ասիայում օսմանյան թուրքերը նվաճել էին Ադալիայի և Պափլագոնիայի մերձափնյա տարածքները:

Այժմ բյուզանդական բանակը ձևավորվում էր հիմնականում վարձկաններից և իր կառուցվածքով նմանվում էր թուրքական ու մոնղոլական զինված ուժերին և ուներ շուրջ 20.000 զինվոր: Աճող ծախսերի համեմատ դատարկվում էր պետական դանձարկղը: Իսկ այն լցնող հարկատուների թիվը տարեցտարի նվազում էր, որովհետև մեծանում էր արտոնյալ պայմաններով հողին տեր դարձած խոշոր հողատերերի թիվը:

Լատինական կայսրության անկումն ավելի սրեց միջադարձին հակասությունները եվրոպական տերությունների և Բյուզանդիայի միջև, Կայսրության մեջ լայն թափ ստացավ կաթոլիկության տարածումը և միաբարական շարժումը: Մի քանի անգամ փորձ կատարվեց միության դաշն կնքել Հռոմի պապության հետ (1274 թ. Լիոն, 1439 թ. Ֆլորենցիա): Սակայն այդ միջոցառումները չօգնեցին պետության հզորացմանը:

14-րդ դարի ընթացքում Օսմանյան տերությունը ու միայն նվաճեց Փոքր Ասիան, այլև դարձավ Բալկանների լիիրավ տերը: Այնպես որ 1453 թ. մայիսի 29-ին Կոստանդնուպոլսի նվաճումը, շնայած բավական լավ կազմակերպված դիմադրությանը, խորհրդանշանական էր: 1461 թ. նույն ճակատագրին արժանացավ Բյուզանդական կայսրության քաղաքական անկախության վերջին մոհիկանը՝ Տրապիզոնի կայսրությունը: Բյուզանդական կայսրության վաղեմի տարածքների վրա և Արևմտյան Հայաստանում հաստատվեց հզոր Օսմանյան կայսրությունը:

ԱՂԵՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ (լույս ընծայեց Ա. Խոնդկարեան, Պարիս, 1948):

2. Ն. Աղոնց, Հայաստանը Հռոմեականության դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի (ռուսերենից թարգմանեցին Ա. Բ. Խոնդկարյան և է. Հ. Խոնդկարյան, Երևան, 1987), ռուսերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել Ս. Պետերբուրգում, 1908 թ., երկրորդ հրատարակությունը՝ 1971 թ. Երևանում:

3. Ա. Ա. Բազոյան, Բյուզանդիայի արևելյան բազաքականությունը և հիբիկյան Հայաստանը ժԲ դարի 30—70-ական թվականներին, Երևան, 1988:

4. Հ. Պելցեր, Համառոտություն Բիզանդական կայսրների պատմության (գերմաներենից թարգմանեց Մեդրեպ Վ. Տեր Մովսիսեան), Վազարշտպատ, 1901:

5. Հայ ժողովրդի պատմություն, հտ. 2, 3, 4:

6. Հ. Կ. Տեր Սահակեան, Հայ կայսերք Բիզանդիոնի, հտ. Ա-Բ, Վենետիկ, 1905:

7. Օտար ազրյուրները Հայաստանի և հայերի մասին. 3, 6, 10, 13, 15, Բյուզանդական ազրյուրներ, Ա. Պրոկոպիոս Կեսարացի (Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1967:

Բյուզանդական ազրյուրներ, Բ. Կոստանդին Միրանածին (Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1970:

Բյուզանդական ազրյուրներ, Գ. Հովհաննես Սկիրլիցես (Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1979:

Բյուզանդական ազրյուրներ, Դ. Քեոփանես Խոստովանոզ (Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1983:

Բյուզանդական ազրյուրներ, Ծ. Քեոփանեսի Շարունակոզ (Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1990:

8. В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982.

9. О. Р. Герни, Хетты, М., 1987.

10. Г. Г. Гиоргадзе, Очерки по социально-экономической истории Хеттского государства, Тбилиси, 1973.

11. М. А. Дандамаев, Политическая история Ахеменидской державы, М., 1985.

12. История Византии, т. I—III, М., 1967.

13. Культура Византии, т. I—II, 1984, 1989.

14. П. Левек, Эллинистический мир, М., 1989.

15. Луна, упавшая с неба. Древняя литература Малой Азии (пер., вступительная статья и комментарии Вяч. Вс. Иванова), М., 1977.

16. Дж. Маккуин, Хетты и их современники в Малой Азии, М., 1983.

17. А. Б. Ранович, Восточные провинции Римской империи в I—III вв., М.-Л., 1949.

18. А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950.

19. В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ер., 1971.

ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ
(ԵԳԻՊՏՈՍ, ՍԻՐԻԱ, ԼԻԲԱՆԱՆ, ԻՐԱԶ)

§ 1. ԱՐԱՔՆԵՐԸ 7—15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ասորիքից և Միջագետքից հարավ սփռված է հսկայական Արաքական թերակղզին՝ Արաբիան, որի տարածքը հիմնականում զբաղեցնում են անապատները, կիսաանապատները և տափաստանները։ Թերակղզու բնիկները՝ արաբները, ապրում էին առանձին ցեղերով և հնուց ի վեր զբաղվում քոչվոր անասնապահությամբ, հողագործությամբ, քարավանային առևտրով, արհեստներով։ Տարբեր ժամանակներում նրանք ունեցել են իրենց պետական կազմավորումները, որոնք բոլորն էլ ի վերջո ոչնչացել են՝ ըվերածվելով համարաբական պետության։

6—7-րդ դդ. սահմանագծին Արաբիան սոցիալ-քաղաքական ճգնաժամ էր ապրում։ Պետական և քաղաքական միասնության բացակայությունը հանգեցրել էր միջցեղային հարաբերությունների սրմանը, Համայնական ունեցվածքն աստիճանաբար կենտրոնանում էր ցեղային վերնախավի ձեռքում, որի հետևանքով էլ ավելի էին սրվում սոցիալական հակասությունները։ Խայտաբղետ էր Արաբիայի կրոնական նկարագիրը։ Տարածված էր բազմաստվածությունը, Յուրափանչյուր ցեղ ուներ իր հավատալիքներն ու կուռքերը։

Մուսամմադ մարգարեն և իսլամի ծագումը։ Արաքական ցեղերի մասնատվածությունը հնարավոր դարձավ հաղթահարել շնորհիվ նոր կրոնի՝ իսլամի, որի հիմնադիրն էր Մուհամմադը։ Վերջինս ծնվել է մոտ 570 թ. Մեքքայում։ Այն կարևոր առևտրական և պաշտամունքային կենտրոն էր Արևմտյան Արաբիայում՝ Հիջազում։ Այստեղ էր գտնվում Քաաբա հինավուրց հեթանոսական տաճարը։ Մեքքայում իշխող դիրք էր գրավում Կուրայշ ցեղը, որի Հաշիմյան տոհմից էլ սերում էր Մուհամմադը։

Ավանդույթի համաձայն, իսլամի աղաքա բաճվիրան ծանր մանկություն է ունեցել: Վաղ հասակում զրկվել է ծնողներից և գտնվել պաղի, այնուհետև հորեղբոր խնամքի տակ: Տակավին պատանյակ սկսել է ինքնուրույն կյանք վարել: Եղել է խաշնարած, հետո ծառայության մտնել հարուստ այրի խաղիչայի մոտ, որի հետ էլ շուտով ամուսնացել է: Մուհամմադը շփումներ է ունեցել տարբեր կրոնական ուղղությունների ներկայացուցիչների հետ, ինչը մեծապես նպաստել է նրա աստվածաբանական հայացքների և պատկերացումների ձևավորմանը:

Մուհամմադը սկսեց իսլամ քարոզել մոտ 610 թվականից: Իսլամի առանցքային գաղափարը միաստվածությունն է: Մուհամմադը հայրենակիցներին կոչ էր անում հավատալ և հնազանդվել միակ, ամենակարող, և հավերժական աստծուն՝ Ալլահին, որ ամեն շնչավորի և անշունչի արարիչն է: «Իսլամ» հենց նշանակում է հնազանդություն: Մուհամմադը անհավատներին զգուշացնում էր մոտալուտ Ահեղ դատաստանից, դժոխքում նրանց սպասվող արհամիրքներից, իսկ ճշմարիտ ուղու վրա գտնվողներին՝ հավատացյալներին, հրաշխավորում էր դրախտի վայելքները հանդերձալ կյանքում: Առաջին քարոզները պարունակում էին նաև արաբական իրականությունում առկա սոցիալական անարդարությունների քննադատություն: Մուհամմադը հայտարարում էր, որ ինքը Ալլահի մարգարեն ու առաքյալն է: «Զկա աստված, բացի Ալլահից, և Մուհամմադը նրա առաքյալն է» սահմանում է իսլամի հավատի բանաձևը: Ալլահն ընտրել է Մուհամմադին՝ վերջինիս միջոցով իր խոսքը մարդկանց հասցնելու և երկրի վրա արարների և հրեաների նախահայր Իբրահիմի (Աբրահամ) ճշմարիտ հավատը վերականգնելու նպատակով: Մարգարեն հավաստիացնում էր, թե հայտնություններ է ստանում ի վերուստ, որոնք և քարոզում է: Այդ հայտնությունները կազմում են իսլամի Սուրբ գիրքը՝ Ղուրանը, որ գրի է առնվել և վերջնական տեսքի բերվել միայն Մուհամմադի մահվանից հետո: Ղուրանում են շարադրված իսլամի էթոնադավանական, իրավական, քարոզագիտական դրույթներն ու պատվիրանները:

Կուրայշի վերնախավը թշնամարար տրամադրվեց դեպի նահապետ մարգարեն: Խուսափելով հալածանքներից՝ 622 թ. Մուհամմադն իր փոքրաթիվ համախոհներով տեղափոխվեց Հեջազի ՄԷդինա (Ճադիբ) քա-

դաքը: Այս իրադարձությունը, որ հայտնի է «հիշրած» անունով, վճարող նշանակություն ունեցավ իսլամի հակառակորդին: Մուսուլմանները, այսինքն՝ իսլամ դավանողները, իրենց թվականության հաշվարկը սկսում են հենց հիշրայի տարեթվից:

Մեդինայում ձևավորվեց հավատացյալների համայնքը, որը զինավճարում էր Մուհամմադը: Նա միաժամանակ կրոնական և քաղաքական առաջնորդ էր, գլխավոր դատավոր և զորավար: Նոր բնակավայրում մարդարեն շարունակեց իր քարոզները, որոնք ավելի գործնական բնույթ ստացան՝ ծառայելով համայնքի կազմակերպման, իսլամի դավանաբանության, ծիսակարգի, բարոյախոսության, իրավունքի խնդիրների մշակմանը: Մեդինայում ամրոցացավ իսլամի, որպես ինքնուրույն կրոնի ձևավորումը:

Մուսուլմանական համայնքը մի քանի տարի շարունակ պայքար էր մղում Մեքքայի դեմ՝ ձգտելով գերիշխանության հասնել Հիշազում:

630 թ. Մուհամմադն իր զինակիցներով, չհանդիպելով լուրջ դիմադրության, մուտք գործեց Մեքքա: Կուրայշ ցեղի անդամները կամովին իսլամ ընդունեցին: Քաաբան հուշակվեց իսլամի գլխավոր սրբավայր:

Մեքքայի դրավումը շեշտակիորեն բարձրացրեց Մուհամմադի հեղինակությունը: Շուտով նրան ենթարկվեց Արաբիայի մեծ մասը, Հպատակված ցեղերն ընդունում էին իսլամը և պարտավորվում հարկ վճարել: Այսպիսով, Մուհամմադին հաջողվեց միասնական հավատի ուժով միավորել գրեթե ողջ Արաբիան և դնել ապագա հզոր պետության հիմքերը:

Հայ մատենագրությունում իսլամի մասին: Մուսուլմանների հետ անմիջական շփումների, ինչպես նաև արևելաքրիստոնեական ավանդույթի ազդեցության շնորհիվ միջնադարյան Հայաստանում ձևավորվել են որոշակի պատկերացումներ իսլամի մասին, որոնք արտացոլվել են հայ մատենագիրների, մասնավորապես Սեբեոսի (7-րդ դ.), Ղևոնդի (8-րդ դ.), Թովմա Արծրունու (9-րդ դ.), Մովսես Կաղանկատվացու (10-րդ դ.), Մխիթար Անեցու (12—13-րդ դ.), Վարդան Արևելցու (13-րդ դ.), Գրիգոր Տաթևացու (14-րդ դ.) և այլոց երկերում: Ուշագրավ է, որ համաշխարհային պատմագրության մեջ Մուհամմադի մասին հնազույն դրավոր հիշատակությունը պատկանում է Սեբեոսին:

Հայ հեղինակները բանավիճում են Ղուրանի ծագման, Մուհամմադի մարգարե լինելու, իսլամի տարբեր դրույթների և պատմիքների, պաշ-

աւամուկքի, ծիսակարգի և այլ հարցերի շուրջ, նրանց պատկերացմամբ իսլամը ինքնուրույն կրոնական վարդապետութիւն չէ: Այն առաջացել է Մուհամմադի կողմից հուդայականութեան և քրիստոնեական աղանդների, կրոնական գաղափարների՝ աղավաղման հետևանքով: Այդ գաղափարներն Մուհամմադը ծանոթացել է իր կարծեցյալ ուսուցչի՝ աղանդավոր վանական Բահիրայի միջոցով: Հայ մատենագրութիւնը հետաքրքիր զրույցներ է պահպանել Մուհամմադի և Բահիրայի հանդիպումների մասին: Մուհամմադն ի սկզբանե քրիստոնեական աշխարհի կողմից ընկալվեց որպէս կեղծ մարգարե: Հենց այդ տեսակետից էլ ելնում են հայ մատենագիրները՝ նրա կերպարին անգրադառնալիս:

Խալիֆայության հիմնումը: Արաբական առաջին Գլխավորութիւնը ու իսլամի տարածումը: Մուհամմադը մահացավ 632 թ.՝ ոչ մի հրահանգ չթողնելով իր հաջորդի և համայնքի կառավարման հետագա ձևերի մասին, Թեժ վիճաբանութիւններից հետո համայնքի և նոր կազմավորվող պետութիւնի առաջնորդ ընտրվեց Աբու Բաքրը (632— 634)՝ Մուհամմադի աներն ու հավատարիմ զինակիցը:

Աբու Բաքրը հռչակեց Ալլահի առաքյալի փոխանորդ՝ խալիֆա: Հոգեւոր և աշխարհիկ գերագույն իշխանութիւնը կենտրոնացվեց խալիֆայի ձեռքում: Խալիֆան անհավատներին սրբազան պատերազմ՝ շիհադ էր հայտարարում, հետևում էր իսլամի օրենքների կատարմանը, ղեկավարում կրոնական ծեսերը և այլն:

Մուհամմադի մահվան բոթն Արաբիայի շատ ցեղերի դրդեց հրաժարվել իսլամից և Մեդինային հարկ վճարելուց: Սակայն Աբու Բաքրը կարողացավ ճնշել ցեղերի խռովութիւնը և վերամիավորել Արաբիան:

Արաբական պետութիւնը՝ խալիֆայութիւնը, վերջնականապէս ձևավորվեց և հզորացավ արաբքին նվաճումների շնորհիվ: Մուսուլման արաբների առաջին արշավանքները դեպի Բյուզանդիայի և Իրանի հարավային սահմանամերձ շրջաններն ընդամենը տեղի արաբական ցեղերի մեջ իսլամ տարածելու և ավար ձեռք բերելու նպատակ էին հետապնդում: Սակայն առաջին փայլուն հաջողութիւնները արաբներին մղեցին ավելի հանդուգն ձեռնարկումների:

Նրանց սրենթաց առաջխաղացմանը մեծապէս նպաստեց Բյուզանդիայում և Իրանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակը: Ծնթակա ժողովուրդների մեջ գնալով ուժեղանում էր դժգոհութիւնը հարկային կե-

զերիշ քաղաքականության և ռոտացուցիշ կրօնական հալածանքների նկատմամբ: Տեղական բնակչութունը խոսափում էր արաբների հետ ընդհարումներից և հեշտությամբ համաձայնում հարկատու դառնալ նրանց: Շատ քաղաքներ և ամրոցներ նվաճողներին հանձնվեցին առանց որևէ դիմադրության:

Արաբական արշավանքները դեպի Իրան սկսվեցին 633 թ. և առավել կազմակերպված բնույթ ստացան Օմար խալիֆայի (634—644) օրոք: 636 թ. սեպտեմբերին Կադիսիայի ճակատամարտում արաբները վճռական հաղթանակ տարան պարսիկների նկատմամբ: Մի քանի ամիս անց նրանք ներխուժեցին Տիգրոս և Կոզոպուտի մատնեցին այն: 642 թ. նահապենդի ճակատամարտում կրած պարտությունը ճակատագրական եղավ պարսիկների համար: Շուտով գրեթե ողջ Իրանը հայտնվեց խալիֆայության տիրապետության ներքո: 651 թ. դավադրաբար սպանվեց բոլորի կողմից լքված Սասանյան վերջին շահնշահ Հազկերտ 3-ը: Արաբական ջոկատներն արևելքում հասան մինչև Հնդկաստանի սահմանները, իսկ հյուսիս-արևելքում՝ Ամուդարյայի ափերը: Արաբական ջոկատները 634 թ. գարնանը ներխուժեցին Սիրիա (Ասորիք) և Պաղեստին:

635 թ. վեցամսյա պաշարումից հետո նրանց հանձնվեց Դամասկոսը: Վճռորոշ ճակատամարտը տեղի ունեցավ Հորդանանի արևելյան վտակ Ցարմուկի ափերին 636 թ. օգոստոսի 20-ին և ավարտվեց բյուզանդացիների ողբերգական պարտությամբ: 638 թ. նվաճողները մուտք գործեցին Երուսաղեմ, որով փառտորեն ավարտվեց Սիրիայի և Պաղեստինի դավթումը Բյուզանդիայից: 638 թ. արաբները ներթափանցեցին Եգիպտոս: Արգին 642 թ. նրանք հասել էին Իֆրիկիա՝ ժամանակակից Թունիս: 649 թ. նրանք Լեթարկվեց Կիպրոսը:

Սիրիայի և Վերին Միջագետքի նվաճումից հետո արաբները սկսեցին ասպատակել Հայաստանը: 641 թ. նրանք մտան Դվին, կոզոպուտեցին այն և, դերեմլարելով նրա բնակիչներին, վերադարձան Սիրիա: Սթափ գնահատելով իրավիճակը և ելնելով Հայաստանի ինքնուրույնության պահպանման շահերից, Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին հրաժարվեց բյուզանդական կողմնորոշումից և 652 թ. հաշտության պայմանագիր կնքեց խալիֆայության հետ, որի

շնորհիվ վերջինիս գերիշխանությունը Հայաստանում ձեռնարկեց ընդլայնվող ստացավ:

Նվաճումների հետևանքով հսկայական տարածքներ և տարբեր ժողովուրդներ հայտնվեցին մեկ պետության կազմում: Սկզբնական շրջանում արարները նվաճված երկրներում խուսափում էին միջամտել տեղական կառավարման և տնտեսության հետևյալի վեր գոյություն ունեցող կառուցվածքներին և բավարարվում էին միայն հարկեր գանձելով: Այդ երկրներում հողը թողնվեց նախկին տերերին, որոնք նոր պայմաններում պարտավոր էին հողահարկ՝ խարաջ հավաքել և այն վճարել խալիֆայության դանձատուն: Լքված ընդարձակ հողատարածությունները դարձան պետության անմիջական սեփականությունը: Խալիֆայության ոչ մուսուլմանական բնակչությունը պարտավոր էր բացի խարաջից նաև գլխահարկ՝ շիզիա վճարել:

Նվաճումները, խալիֆայության առաջխաղացումը, արաբական ցեղերի վերաբնակեցնելը նվաճված երկրներում նպաստավոր պայմաններ ստեղծեցին իսլամի տարածման համար: Խալիֆայությունն ընդհանրապես հանդուրժողական քաղաքականություն էր վարում այլ կրոնների նկատմամբ: Չնայած դրան, հպատակ ժողովուրդների զոլալի մասը, ելնելով քաղաքական, տնտեսական և այլ բնույթի նկատառումներից, աստիճանաբար իսլամ ընդունեց: Սկզբնական շրջանում նորընծա մուսուլմաններն իրավահավասար չէին արաբ մուսուլմաններին, թեև իսլամն ընդունելով ազատվում էին շիզիա վճարելուց և իրավական այլ սահմանափակումներից, որ ենթադրում էր զիմմի՝ հպատակ այլակրոնի կարգավիճակը:

Հայերը, հրեաները, ղպտիները, ասորիները, քրիստոնյա արաբների որոշակի հատվածները պահպանեցին իրենց դավանած կրոնները:

Օմայյան խալիֆայությունը (661—750): Արաբական սլետության վերելքն ուղեկցվում էր տարբեր ուժերի միջև խալիֆայությունում գերիշխանության հասնելու համար ծավալվող մրցակցությամբ: Երրորդ խալիֆան՝ Օսմանը (644—656) զուգահեռ իր քաղաքականությունից դժգոհ խմբավորումների բարձրացրած խռովությանը: Նրա հաջորդը՝ Ալին (656—661), որ Մուհամմադի հորեղբորորդին էր և փեսան, ստիպված էր հուսահատ պայքար մղել խալիֆայության ամ-

բողջականութիւնը պահպանելու համար: Ալիի կողմնակիցները, յայտնքն նրանք, ովքեր գտնում էին, որ խալիֆաբացառապես կարող է դառնալ Մուհամմադի ընտանիքից սերած իմամը՝ հոգևոր գերագույն առաջնորդը, կոչվեցին շիաներ: Շիան ծագեց որպես քաղաքական հոսանք, սակայն ուղղափառ խալամի՝ սուննիզմի հետ երկարատև մրցապայքարում այն ձեռք բերեց նաև կրօնական բովանդակութիւն: Ալիի գլխավոր հակառակորդը Սիրիայի կուսակալ Մուավիան էր՝ Կուրայշ ցեղի Օմայա տոհմից:

Սա հրաժարվել էր Ալիին օրինական խալիֆա ճանաչելուց և ապստամբել նրա դեմ: 661 թ. սպանվեց Ալին և իրական իշխանութիւնն անցավ Մուավիային, որը դեռևս 660 թ. խալիֆա էր հռչակվել նրուազեմում:

Մուավիայից սկսած խալիֆայության նկատմամբ իրավունքը դարձավ ժառանգական և անցավ Օմայաններին, որոնք մայրաքաղաքը Մեդինայից անդափոխեցին Դամասկոս:

Օմայանները շարունակեցին արաբական նվաճումները: 8-րդ դ. սկզբներին ավարտվեց Հյուսիսային Աֆրիկայի՝ Մաղրիբի հնազանդեցումը: 711 թ. արաբները Էսթրեմադուրին Պիրենեյան թերակղզի և գրավեցին նրա մեծ մասը՝ Անդալուսիան: Օմայանները մշտապես պատերազմում էին Բյուզանդիայի դեմ: Նրանց ջոկատները հաճախակի ասպատակում էին Փոքր Ասիան: Նույնիսկ Կոստանդնուպոլիսը գավթելու փորձեր արվեցին: 8-րդ դ. սկզբին արաբների տիրապետութիւնը հաստատվեց Մավերաննահրում՝ Ամուդարյա և Սիրդարյա գետերի միջև ընկած ընդարձակ երկրամասում:

Հայաստանը մինչև 7-րդ դ. վերջը կարողացավ պահպանել իր փաստացի անկախութիւնը: Սակայն 701 թ. Մուհամմադ իբն Մուվան զորավարն արշավեց Հայաստան և նվաճեց այն: Նա գրավեց նաև Վիրքը, Աղվանքը, Մերձկասպյան շրջանները, որոնք Հայաստանի հետ միասին կազմեցին Արմինիա նահանգը՝ Գվին կենտրոնով: Այն կառավարում էր խալիֆայի նշանակած արաբ ոստիկանը: Հայաստանի համար սկսվեց ավելի քան մեկ ու կես դար տևած արաբական տիրապետութիւն ժամանակաշրջանը: Յմայանները աստիճանաբար Հայաստանում իրենց վարած հարկային քաղաքականութիւնը: Ժամանակ առ ժամանակ նրանք փոր-

ձում էին իրականացնել նախարարական տոհմերի ողնշացման ծրագիրը: Ի պատասխան քաղաքական և տնտեսական ճնշման՝ 703, ապա 747—750 թթ. բռնկվեցին ապստամբություններ, որոնք պարտություն կրեցին: 8-րդ դ. 30-ական թթ., երբ խալիֆայության հյուսիսային տիրույթներին սպառնում էին խազարները, Օմայանները զգալիորեն մեղմացրին իրենց վերաբերմունքը Հայաստանի հանդեպ:

Օմայանների խալիֆայությունն իր հզորության գագաթնակետին հասավ Աբդ ալ-Մալիք (685—705) և Վալիդ I (705—715) խալիֆաների կառավարման տարիներին: Այն ընդարձակ ֆեոդալական կենտրոնացված պետություն էր՝ բաժանված փոխարքայությունների, որոնք կառավարում էին խալիֆայի նշանակած ամիրները: Պետության կենտրոնացմանը զգալիորեն նպաստեցին ալնպիսի միջոցառումները, ինչպիսիք էին ամբողջ խալիֆայությունում գործավարության լեզուն արաբերենը դարձնելը, միասնական դրամական համակարգի ստեղծումը, բարենորոգումների կիրառումը բանակում և այլն:

8-րդ դարի 40-ական թթ. Օմայական խալիֆայությունը քակոխեց անկման շրջանը:

Վերջին Օմայանների անհեռատես քաղաքականությունը քայքայման եզրին հասցրեց պետությունը: Թալանված էր գանձատունը, բարոյալքված բանակը: Քաղաքական և տնտեսական իրավիճակի վրա բացասաբար էր անդրադառնում Սիրիայի և Իրաքի արաբական ցեղախմբերի միջև անդլուժ հակամարտությունը: Մանր հարկերը ուժեղացնում էին ժողովրդի տարբեր խավերի դժգոհությունը: Օմայան վերջին խալիֆա Մովանին (744—750) չհաջողվեց շտկել դրությունը: Խորասանում ծագած շիիների ապստամբության ակերը հետզհետե կլանեց ողջ խալիֆայությունը: Աղքատամբները զրավեցին Սպահանը, Նահավենդը, Փուֆան, Դամասկոսը: Մերվանը փախավ Եգիպտոս, որտեղ էլ սպանվեց:

Աբբասյան խալիֆայությունը (750—1258): Օմայանների անկումից հետո, հենվելով շիիների շարժման վրա, խալիֆայությանը տիրեցին Աբբասյանները՝ Մուհամմադ մարգարեի հորեղբայր Աբբասի հետնորդները: Սրանք 763 թվականին մայրաքաղաքը տեղափոխեցին Բաղդադ: Աբբասյանների թռավել քաղաքական հզորության ժամանակաշրջ-

յանը 8-րդ դ. կեսերից մինչև 9-րդ դ. կեսերն էր նրանց օրոք աստիճանաբար ուժեղանում էր իրանական ազդեցությունը:

Ալ-Մանսուրի խալիֆայության տարիներին (754—775) պարսկական ազնվականության ներկայացուցիչները սկսեցին բարձր պետական պաշտոններ ստանալ: Այսպես, պարսկական ծագում ունեցող Բարմաթինների բնատեղիի անդամները զբաղեցնում էին վազիրի պաշտոնը, խալիֆա Հարուն առ-Ռաշիդը (786—809), մտահոգվելով Բարմաթինների աճող հեղինակությամբ, բնաշնչեց նրանց, որն առաջ բերեց պարսկական ազնվականության լուրջ դժգոհությունը:

Արբասյանները, մշտապես զբաղված լինելով խալիֆայության ներքին խնդիրներով, չշարունակեցին նախորդների նվաճողական քաղաքականությունը: Առաջին Արբասյանների օրոք նշանակալի զարգացում ապրեցին արհեստները, առևտուրը, արհեստական ոռոգման վրա հիմնված հողագործությունը, մշակույթը:

9-րդ դարի առաջին կեսին, հատկապես Մութասիմ խալիֆայի տարիներին (833—842), արքունիքում շահագնաց բարձրացավ թյուրք ռազմագերիներից կազմված զորագնդի նշանակությունը: Այն՝ սկզբնապես խալիֆայի հուսալի ու հավատարիմ հենարանն էր, սակայն շուտով թյուրքերն այնքան աշխուժացան, որ սկսեցին միջամտել պետության ներքին գործերին՝ ընդհուպ մինչև իրենց ձեռնտու խալիֆաներ նշանակելն ու այլոց տապալելը:

Մութավաթիլ խալիֆան (847—861) փորձեց վերջ դնել նրանց սանձարձակություններին, սակայն զոհ գնաց թյուրք զորահրամանատարների զավազրությունը: Նրա հաջորդներն ուղղակի խաղալիք էին թյուրքերի ձեռքում:

Արբասյանների վարած հարկային խիստ քաղաքականությունը, սոցիալական հակասությունների սրումը, հպատակ ժողովուրդների անկախության ձգտումը, խալիֆայության տարբեր անկյուններում հաճախակի ծագող գյուղացիական և քաղաքային խռովությունների ու ապստամբությունների, ժողովրդական ազատագրական շարժումների պատճառ դարձան:

Հաուկուպես նշանակալից էին Մավերաննահրում 776—783 թթ. Մուրանայի, Ատրպատականում 815—838 թթ. Բաբեթի, Հարավային Իրա-

քում 869—883 թթ. զինչերի՝ սեամորթ ստրուկների, մոտ 890—990 թթ. կարմատների ապստամբությունները, Աբրասյան խալիֆայության տիրապետության դեմ էին ուղղված 774—775 և 850—852 թթ. Հայաստանում տեղի ունեցած խռոթ ապստամբությունները:

Այդ ամենը հանգեցրեց Աբրասյան խալիֆաների քաղաքական իշխանության թուլացմանը և պետության տրոհմանը:

Կենտրոնախույս ուժերի աշխուժացման պայմաններում հաջողվեց պահպանել պետության տարածքային ամբողջականությունը, Դեռ 756 թ. խալիֆայությունից անջատվել էր Անդալուսիան, 8—10-րդ դդ. Մադրիբում, Եգիպտոսում, Արևելյան Իրանում, Խորասանում, Մավերաննահրում առաջացան լիովին անկախ պետություններ: 885 թ. Հայաստանում հաստատվեց Բագրատունիների թագավորությունը:

Բաղդադում, օգտվելով տիրող քաղաքական խառնաշփոթից, 945 թ. իրական իշխանությունն իրենց ձեռքը վերցրեցին Բուվայհիների պարսկական տոհմի անդամները, որոնք խալիֆայից ստացան իշխանաց իշխան՝ ամիր ալ-ումարա տիտղոսը: Այս ժամանակվանից սկսած Բաղդադի խալիֆան զուտ հոգևոր իշխանությամբ էր օժտված, 1055 թ. Բաղդադ մուտք գործեցին սելջուկները՝ Թուրքու բեկի առաջնորդությամբ: Վերջինս խալիֆայից ստացավ սուլթանի տիտղոսը: 1258 թ. Բաղդադը գրավեցին մոնղոլները՝ Հուլադու խանի գլխավորությամբ: Աբրասյան վերջին խալիֆա ալ Մուսթասիմը մահապատժի ենթարկվեց:

Ֆաթիմյան խալիֆայությունը Եգիպտոսում (969—1171): 10-րդ դարի սկզբներին շիա աղանդներից մեկի՝ իսմայիլականության ներկայացուցիչներին հաջողվեց Աֆրիկայում հիմնել իրենց պետությունը, որի գլուխ կանգնած խալիֆաները Ալիի և նրա կնոջ՝ Մուհամմադի դուստր Ֆաթիմայի ժառանգներն էին: Այստեղից էլ «Ֆաթիմյան» անվանումը: Ֆաթիմյաններն ու Աբրասյանները թշնամանք էին տածում միմյանց նկատմամբ և չէին ճանաչում մեկը մյուսի օրինականությունը:

Ֆաթիմյանների հզորացման համար մեծ նշանակություն ունեցավ 969 թ. Եգիպտոսի գրավումը, որն իրականացրեց Զաուհար զորավարը: Սա Եգիպտոսի մայրաքաղաք Ֆուստատի մոտ հիմնեց Կահիրեն, որը

գարձալ՝ Յաթիմյան խալիֆաների նստավայրը: 10-րդ դարի վերջին Յաթիմյան խալիֆայությունն ազդեցիկ և հզոր պետութուն էր, որի կազմի մեջ, բացի Եգիպտոսից, մտնում էին նաև Մաղրիբը, Հիշազը, Պաղեստինը, Սիրիայի մեծ մասը, Միշերկրահան ծովի մի քանի կղզիներ: Սակայն 11-րդ դարի կեսերին այն արդեն հայտնվել էր քայքայման եզրին: Յաթիմյանները կորցրել էին իրենց տիրույթների զգալի մասը:

Տնտեսական ճգնաժամը, երկարատև սովն ու համաճարակները, թյուրք և սեամորթ վարձկանների, պաշտոնյաների կամայականութունները, սելջուկների առաջխաղացումը Սիրիայում դժվար կացություն էին ստեղծել երկրում: Բարդ իրավիճակը հաջողվեց շտկել հայազգի զորավար Բադր ալ-Ջամալիին, որը 1073 թ. Մուսթանսիր խալիֆայի (1035—1094) խնդրանքով իր յոթհազարանոց հայկական բանակով Սիրիայից տեղափոխվեց Եգիպտոս և կարողացավ պատժիչ գործողութունների և վերափոխումների միջոցով այնտեղ կարգ ու կանոն հաստատել: Բադրին շնորհվեց վազիրի պաշտոնը և «ամիր ալ-ջուլուշի» (զորաց իշխան) տիտղոսը: Այդ ժամանակվանից խալիֆայությունում իրական իշխանութունը պատկանում էր վազիրին, որի պաշտոնում մեկ դար շարունակ, որոշ բացառություններով, նշանակվում էին հայեր, ինչպես ալ-Աֆդալը, Վահրամ Պահլավունին և այլք: Յաթիմյանների օրոք Եգիպտոսի հայկական գաղութը բարգավաճեց: Խուսափելով սելջուկների հարձակումներից՝ Եգիպտոս տեղափոխվեցին Սիրիայում և Պաղեստինում հաստատված հազարավոր հայեր: Բադրի վազիր դառնալուց հետո հայերը կազմում էին Յաթիմյան բանակի կորիզը, զբաղեցնում բարձր պաշտոններ: Եգիպտոսում գործում էին բազմաթիվ հայկական վանքեր և եկեղեցիներ: Հայերը զբաղվում էին առևտրով, այգեգործությամբ, արհեստներով, շինարարությամբ և այլն:

Արաբները և խաչակրաց արշավանքները: Յաթիմյանները ապկումը: 1096—1099 թթ. խաչակրաց առաջին արշավանքի նախօրեին, սելջուկները տիրացել էին գրեթե ողջ Սիրիային և Պաղեստինին: Խաչակիրները 1098 թ. գրավեցին Անտիոքը և Եդեսիան: Միևնույն ժամանակ Յաթիմյանները սելջուկներից հեռ վերցրեցին Երուսաղեմը: Նրանք

հույս ունեին դաշինքի մեջ մտնել խաչակիրների հետ՝ սելջուկներին Սիրիայից դուրս վտարելու համար, սակայն խաչակիրները լսել անգամ չկամեցան այդ մասին, իսկ 1099 թ. գրավեցին Երուսաղեմը։ Այնուհետև նրանք նվաճեցին Սիրիայի ամբողջ ծովագերքը։ Գրաված տարածքում կազմավորվեցին խաչակրաց շորս պետություններ։

12-րդ դարի կեսերին խաչակիրների դեմ պայքարի հիմնական ժանրոթյունն իր վրա էր վերցրել Մոսուլի կառավարիչ Իմադ ադ-Դին Զանգին, որը 1144 թ. գրավեց Եդեսիան։ Նրա որդին՝ Նուր ադ-Դինը խաչակիրների հաղվին զգալիորեն ընդլայնեց իր տիրույթները։ Քե՛ խաչակիրները, և թե՛ Նուր ադ-Դինը ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել Թուլոսած Ադիպոսի վրա։

1169 թ. Նուր ադ-Դինի զորավար Շիրքուհը հաղթող դուրս եկավ Եգիպտոսի համար տեական պայքարում։ Նա Ֆաթիմյան խալիֆայից ստացավ վազիրի պաշտոնը և դարձավ երկրի ինքնիշխան տերը՝ միաժամանակ սնալով Նուր ադ-Դինի հպատակը։ Շիրքուհից հետո վազիր դարձավ նրա եղբորորդին՝ Սալահ ադ-Դին իբն Այյուբը, որը շուտով Ֆաթիմյաններին վերջնականապես հեռացրեց իշխանությունից։

Այյուբյան սուլթանությունը Եգիպտոսում (1171—1250)։ Մամլուքների դերի ուժեղացումը և տիրապետությանն օգտատուումը Եգիպտոսում։ Սալահ ադ-Դինը ճանաչեց Աբբասյան խալիֆայի գերիշխանությունը և հռչակվեց Եգիպտոսի սուլթան։ Նրան հաջողվեց վերականգնել Եգիպտոսի հզորությունը։ 1174 թ. Սալահ ադ-Դինն իր սուլթանությանը միացրեց Վերին Միջագետքը և Սիրիայի մեծ մասը։ Այյուբյան սուլթանի հիմնական հակառակորդները խաչակիրներն էին, որոնց դեմ էլ նա հաջողությամբ պայքարեց։ 1187 թ. նրա զորքերը գրավեցին Երուսաղեմը և Արևմտյան Սիրիայի մի շարք քաղաքներ։ Սալահ ադ-Դինի հաջորդները նույնպես շարունակեցին պատերազմները խաչակիրների դեմ։

Այյուբյանների օրոք աստիճանաբար ուժեղացավ Թյուրքալեզու սարուկներից՝ մամլուքներից կազմված հատուկ զորամասերի ազդեցությունը Եգիպտոսի ներքին կյանքում։ Ի վերջո սրանք տապալեցին Այյուբյաններին և իրենց միջից

սուլթան ընտրեցին, Եգիպտոսում սկսվեց մամլուքյան տիրապետության ժամանակաշրջանը, Մամլուքները կործանեցին խաչակիրների մերձավորարևելյան վերջին հանգրվանները, կասեցրին մոնղոլների առաջխաղացումը Սիրիայում, Սկսած 1382 թվականից այստեղ իշխանությունն անցավ չերքեզական և հայկական ծագում ունեցող մամլուքներին: Սրանց պետությունը նկատելիորեն թուլացավ Լանկ Թեմուրի 1400 թ. Սիրիա կատարած արշավանքից հետո: Թեև Եգիպտոսը դերժ մնաց Թեմուրի ասպատակությունից, մամլուք սուլթաններն այլևս չկարողացան վերականգնել նրա վաղեմի փառքն ու հզորությունը:

Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ և նրա անկումը: Բարդ և բազմաբնույթ էին Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները արաբական երկրների հետ: Նա մերթ խաչակիրների հետ միասին հանդես էր գալիս արաբների դեմ, մերթ էլ՝ ճիշտ հակառակը, իսկ երբեմն էլ նախընտրում էր չեղոքությունը: Այսպես, եթե Բորոս Բ-ն (1145—1169) խաչակիրների դաշնակիցն էր ընդդեմ Նուր ադ-Դինի, իսկ իր կառավարության վերջում չեղոք քաղաքականություն էր վարում, ապա Մլեհը (1170—1175) սերտ կապեր էր հաստատել Զանգինների հետ, որոնց միջոցով հաղթանակներ տարավ խաչակիրների և բյուզանդացիների նկատմամբ: Հատկապես սրված էին հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի միջև: Արդեն Սալահ ադ-Դինը ձգտում էր նվաճել Կիլիկիան, նա 1193 թ. խոշոր արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկիա, սակայն այն խափանվեց՝ սուլթանի հանկարծամահ լինելու պատճառով: Հայերը մոնղոլների հետ դաշնակցած մասնակցեցին մամլուքների դեմ պատերազմներին: Մոնղոլների թուլացումից հետո մամլուքները սկսեցին անմիջականորեն սպառնալ Կիլիկյան Հայաստանին: Որոշ ժամանակ հայերին հաջողվում էր կասեցնել մամլուքների ոտնձգությունները իրենց պետության նկատմամբ: Սակայն, անընդմեջ պատերազմներն աստիճանաբար հյուծեցին նրանց ուժերը և 1375 թ. մամլուքները վերջնականապես կործանեցին Կիլիկիայի հայկական թագավորությունը:

Միջնադարյան արաբական մշակույթը: իսլամականության կազմավորման շնորհիվ արաբները, որ մինչ այդ համեմատաբար մեկուսացված վիճակում էին, ներգրավվեցին համաշխարհային մշակութային զարգացման գործընթացի մեջ: Կենտրոնացված պետության առաջացումը, իսլամի և արաբերեն լեզվի տարածումը պայմանավորեցին նոր, ինքնատիպ մշակույթի ստեղծումը, որին գործուն մասնակցություն ունեցան ոչ միայն արաբները, այլև հպատակ ժողովուրդները:

Արաբական մշակույթը զարթոնք ապրեց 8—10-րդ դարերում, գլխավորապես Իրաքում: Արբասյան իսլամականության թուլացումից հետո արաբական մշակույթի կարևորագույն կենտրոնը Եգիպտոսն էր: Միևնույն ժամանակ այն ժողովրդավարացեց նաև Անդալուսիայում: Տարբեր լեզուներից արաբերենի թարգմանվեցին անցյալի մեծ գիտնականների բազմաթիվ երկեր: Այդ թարգմանություններն արաբներին հաղորդակից դարձրին համաշխարհային մշակույթի ձեռքբերումներին և խթանեցին փիլիսոփայության, մաթեմատիկայի, աստղագիտության, մեխանիկայի, քիմիայի, բժշկագիտության զարգացումը: 9—11-րդ դարերում բուռն վերելք ապրեցին արաբական պատմագրությունն ու աշխարհագրությունը: Այդ և դրան հաջորդած ժամանակաշրջանի արաբալեզու պատմիչների (Բալազուրի, Յակուբի, ատ-Տարարի, Իբն ալ-Ասիր, ալ-Մակրիզի) երկերն անփոխարինելի աղբյուր են իսլամի ժաման, իսլամականության, նրա առանձին հատվածների ու ժողովուրդների պատմության համար: Արաբ աշխարհագրագետներն ու ճանապարհորդները կարևոր և հաճախ բացառիկ տեղեկություններ են հայտնում Արևելքի երկրների և ժողովուրդների մասին: Հատկապես ուշագրավ են Իբն Խորդադեբհի, ալ-Իստախրիի, Յակուտ ալ-Համավիի, Իբն Բատուտայի աշխատությունները: Արաբական միջնադարյան գրականության անգերազանցելի գոհարը Ղուրանն է, որի հիման վրա ձևավորվեց արաբական գրական լեզուն: Մինչիսլամյան ժողովրդական բանաստեղծության և բեդուինական պոեզիայի սկզբունքների հիման վրա զարգացավ արաբական գրականությունը, Հանդես եկան այնպիսի բա-

նաստեղծներ, ինչպիսիք էին Աբու Նուվասը, ալ-Մութա-
նաբբին, Աբու Ալա ալ- Մահարին: Արաբները մեծ հաջողու-
թյունների հասան նաև ճարտարապետության բնագավա-
ռում: Տարբեր ժամանակներում Բասրայում, Քուֆայում,
Դամասկոսում, Բաղդադում, Կահիրեում, Կորդովայում և
ալլուր կառուցվեցին հույակերտ մզկիթներ, դղյակներ և այլ
ճարտարապետական մեծարժեք հուշարձաններ:

12—13-րդ դդ. նվրդայում նկատելիորեն ուժեղացավ հետաքրքրու-
թյունը արաբական դիտական մտքի նվաճումների նկատմամբ: Թարգմա-
նությունների միջոցով նվրդացիները ծանոթացան արաբալեզու այնպիսի
հանրադիտակների աշխատություններին, ինչպիսիք էին ալ-Քինդին, ալ-
Ֆարաբին, Իբն Սինան, Իբն Ռուշդը և այլք:

Սկսած 8—9-րդ դդ. զգալիորեն աշխուժացան հայ-արաբական մշա-
կութային փոխհարաբերությունները, Հայտնի են հայ-արաբական փիլի-
սոփայական, գրական առնչությունների օրինակներ: 10—11-րդ դդ. արա-
բերենից հայերենի և թարգմանվել բժշկագիտական մի քանի աշխա-
տություններ: Ֆաթիմյան և Ալյուրյան Եդիպոսի ճարտարապետության
վրա զգալի ազդեցություն է ունեցել հայկական ճարտարապետությանը:
Արաբ պատմագիրներից շատերը արժեքավոր վկայություններ են պահ-
պանել հայերի և Հայաստանի պատմության մասին: Հայաստանի աշխար-
հագրության վերաբերյալ ուշագրավ են արաբ աշխարհագրագետների հա-
զորգումները: Իրենց հերթին հայ պատմիչները կարևոր տեղեկություններ
են հայտնում իսլամի ծագման, արաբական նվաճումների, խալիֆայության
պատմության մասին:

16-րդ դարում թուրքերի կողմից արաբական երկրների նվաճումը հան-
դեցրեց արաբական հարուստ մշակույթի անկմանը:

§ 2. ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (16—18-րդ դդ.)

Արաբական երկրների նվաճումը թուրքերի կողմից:
Ռազմատենչ Օսմանյան պետությունը, որ վարում էր նվա-
ճողական քաղաքականություն, 15-րդ դ. վերջերին և 16-րդ
դ. սկզբներին ընդհուպ մոտեցավ ասիական մայրցամաքի
արաբական երկրներին և հայտնվեց եգիպտական մամլուք-
ների տիրապետության տակ գտնվող Սիրիայի սահմանների
մոտ: Մամլուք սուլթան Քանսուհ ալ-Գուրին նախապատ-

րաստվում է դիմագրավել օսմանյան ագրեսիային և դաշինքի մեջ մտնում Սեֆյան Պարսկաստանի շահ Իսմայիլի հետ, որը թուրքերի ռիսկերիմ թշնամին էր: 1514 թ. սկսվեց թուրք-պարսկական պատերազմը: Պարսկաստանի մատնելով պարսկական բանակը, թուրքական զորքերը 1515 թ. գրավեցին Միջագետքը, Հյուսիսային Պարսկաստանը և Հայաստանի մի մասը:

Սուլթան Քանսուհի համար ստեղծվեց վտանգավոր վիճակ: Նա 1516 թ. գարնանը փորձեց հանդես գալ որպես միջնորդ թուրքերի և պարսիկների միջև, որի գաղտնի նպատակը, սակայն, պարսիկներին օգնելն էր: Բայց օսմանյան սուլթան Սելիմ 1-ին Յավուզը (Ահեղը) իր լրտեսների միջոցով խմբավ մամուլքների այդ գաղտնի մտադրության մասին: Եվ երբ Քանսուհի ներկայացուցիչը եկավ Սելիմի մոտ բանակցելու, ապա վերջինս սափրեց նրա մորուքը, նստեցրեց կաղ էջի վրա և հետ ուղարկեց իր տիրոջ մոտ, իսկ նրան ուղեկցող անձանց զլխատեց: Օսմանյան սուլթանը պատերազմ հայտարարեց Եգիպտոսին:

Թուրքական և մամուլքյան բանակների միջև զլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 1516 թ. օգոստոսի 24-ին՝ Հալեպից հյուսիս գտնվող Մարջ Դարբի մոտ: Հալեպի կառավարիչ խաիր բեյը, որը մամուլքների բանակի ձախ թևի հրամանատարն էր, դավաճանեց և իր զորքերով անցավ թուրքերի կողմը: Նույն կերպ վարվեց Համայի կառավարիչ Զիան Բիրդի ալ-Ղազալին:

Քանսուհը, որ շնայած իր 75-ամյա տարիքին կռվում էր քաջարար, զոհվեց մարտում: Այս բոլորը կանխորոշեց ճակատամարտի ելքը հօգուտ թուրքերի: Սուլթան Սելիմը մտավ Հալեպ և մի փոքր դադարից հետո, հոկտեմբերին շարժվեց Դամասկոսի վրա, գրավեց այն, իսկ այնուհետև ամբողջ Սիրիան, և այդ նվաճված տարածքները կցեց իր տիրույթներին:

Սակայն Սիրիան միայն առաջին քայլն էր: Դեռևս մնում էր շնվաճված Եգիպտոսը: Այստեղ Քանսուհի զոհվելուց հետո սուլթան էր հռչակվել Թուման բեյը: Օսմանյան սուլթան Սելիմ 1-ի զորքերը Եգիպտոս ներխուժեցին 1517 թ. հունվարին և նույն ամսվա 23-ին Կահիրեի մատույցներում տե-

դի ունեցավ գլխավոր ճակատամարտը նրանց բանակները միջև: Մամուլքների բանակը գլխովին ջախջախվեց, Թուճան բեյը կախաղան հանվեց:

Եգիպտոսի անկումից անմիջապես հետո Օսմանյան սուլթանին իր հպատակությունը հայտնեց Հիջազը՝ մուսուլմանական աշխարհի երկու կարևոր սրբակենտրոններ՝ Մեքքա և Մեդինա քաղաքներով: Շուտով օսմանյան տիրապետությունը տարածվեց ամբողջ Պաղեստինի, Հորդանանի և Լիբանանի վրա: Հերթը հասավ նաև Իրաքին, որը դեռևս 1508 թ. գրավվել էր Սեֆյան Պարսկաստանի կողմից: Թուրքական զորքերին հաջողվեց 1516—1538 թթ. ընթացքում քաջ առ քաջ պարսիկներին դուրս մղել Իրաքից և միացնել այն Օսմանյան կայսրությանը: 16-րդ դ. 30-ական թվականներին Թուրքերը հայտնվեցին նաև Նմինում:

Արաբական Արևելքում իրականացվող նվաճումներին դուրահեռաբար, Թուրքերը նվաճողական լայնածավալ գործողություններ ծավալեցին նաև Արաբական Արևմուտքում՝ Մադրիդում: Նրանք դրավեցին և Օսմանյան կայսրության մաս հռչակեցին Ալժիրը (1518 թ.), Թունիսը (1534 թ.) և Տրիպոլիտանիան (1551 թ.):

Այսպիսով, Սելիմ 1-ի (1512—1520 թթ.) և նրա որդու՝ Սուլեյման Կանունիի (Օրենսդիր) (1520—1566 թթ.) ռազմարշավների շնորհիվ մի վիթխարի տարածք, գրեթե ամբողջ արաբական աշխարհը ընկավ Թուրքական դաժան լծի տակ, որը տեևց չորս հարյուր տարի: Օսմանյան տիրապետությունից դուրս մնացին միայն Կենտրոնական Արաբիան՝ Նեջդը, Օմանը և Մարոկկոն:

Արաբական երկրների վարչատարածքային բաժանումը և կառավարման համակարգը: Նվաճումից հետո արաբական երկրները վերածվեցին Օսմանյան կայսրության ժայռագավառների, որոնք անվերապահորեն ենթակա էին ամենազոր սուլթանների կամքին: Նման քաղաքական իրավադուրկ կարգավիճակը կանխորոշեց արաբական տարածքների նոր վարչատարածքային բաժանումը և կառավարման համակարգը:

1525 թ. սուլթան Սուլեյման 1-ը հաստատեց «Նդիպտոսի օրենսգիրքը», ըստ որի Նդիպտոսը համարվում էր մի ամբողջական փաշայություն, որի գլուխ կանգնած էր օսմանլան սուլթանի կողմից նշանակվող փաշան՝ վալին։ Նրան ենթակա էին Նդիպտոսի տարածքում գործող բոլոր վարչական, քաղաքացիական և ռազմական մարմիններն ու պաշտոնյաները։

Սկզբնական շրջանում Նդիպտոսը բաժանվեց տասներկու սանջաքների՝ մադգերի։ Թուրքական սուլթանը հաշվի առնելով մամուլոքների ուժը և ցանկանալով սիրաշահել նրանց, սանջաքների կառավարիչներ՝ հաքիմներ նշանակեց մամուլք երեկի բնիկներին։ Նրանք թեև ենթակա էին Թուրքական փոխարքային՝ վալիին, սակայն իրականում մեծ իշխություն ունեին, փոքրիկ թագավորներ էին իրենց տիրույթներում և անշամ ունեին իրենց ռազմական ջոկատները։

Սիրիայի վարչատարածքային բաժանման հիմքում դրվեց վիլայեթի՝ Նահանգի սկզբունքը։ Սկզբնական շրջանում Սիրիան բաժանվեց երեք վիլայեթի՝ Դամասկոսի, Հալեպի և Տրեպոլիի, որոնք իրենց հերթին բաժանվեցին սանջաքների։ Դամասկոսի վիլայեթը բաղկացած էր տասը սանջաքներից, Հալեպի վիլայեթը՝ ինը սանջաքից, որոնք տեղադրված էին Հյուսիսային Սիրիայում, իսկ Տրեպոլիի վիլայեթը՝ հինգ սանջաքից։ Հետագայում որոշ փոփոխություններ տեղի ունեցան և 1660 թ. ձևավորվեց Սայդայի վիլայեթը։

Ինչ վերաբերում է Իրաքին, ապա այստեղ կազմավորվեցին երեք վիլայեթներ՝ Մոսուլի, Բազդադի և Բասրայի։ Իսկ Հիշազի կառավարիչը՝ շերիֆը, որն ավանդաբար սերում էր Հաշիմիների տոհմից և իր արմատներով հառնում Մուհամմադ մարգարեին, ուղղակի ենթարկվեց օսմանյան սուլթանին։

Մի փոքր աչք կարգավիճակ ստացավ Լիբանանը, որը բնակեցված էր քուրդների (քրիստոնյա) և դրուզ (մուսուլման) արարներով։ Նրա ֆեոդալ տառնորդները Շուֆի կմիր Ֆախր ադ-Դին ալ-Մաանի գլխավորությամբ Դամասկոսում ներկայացան Սելիմ Ահմեդին։ Ֆախր ադ-Դին 1-ը ծնկի գալով օսմանյան սուլթանի՝ աղե, համբուրեց գետինը, փառաբանեց նրան և իշ հպատակությունը հայտնեց։ Սուլթանը Լիբանանի ֆեոդալների ղեկավար՝ կմիր ճանաչեց Ֆախր ադ-Դինին և Մաանների գինաստիան 1516—1697 թթ. դարձավ կառավարող դինաստիա։ Լիբանանին տրվեց լիարժեք էմիրության կարգավիճակ։

Վալիները (փաշաները) իրենց ենթակայության տակ գտնվող տիրույթներում օգտվում էին անսահմանափակ իշխանությունից և պատասխանատու էին միայն սուլթանի

առջև: Նրանց, ինչպես նաև բեյերի ու հաջիմների պարտականությունների մեջ էին մտնում իրենց ենթակա նահանգներում և մարզերում կարգուկանոնի պահպանումը, ամեն տեսակի խռովությունների և հուզումների ճնշումը, ոստիկանական ֆունկցիաների իրականացումը, պատերազմների ժամանակ սուլթանական բանակին ղինվորներ տրամադրելը և այլն:

Բռնությունները, կամայականությունները, կաշառակերությունը, պաշտոնավաճառությունը և մարդու արժանապատվության լիակատար ոտնահարումը հանդիսանում էին օսմանյան վարչակարգի բնորոշ գծերը:

Արաբական երկրների սոցիալ-տնտեսական վիճակը: Թուրքերը դտնվում էին զարգացման անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա, քան նրանց կողմից նվաճված ժողովուրդները, այդ թվում և արաբները: Օսմանյան կայսրության հզորությունը խարսխվում էր նորանոր երկրներ գրավելու, նրանց բնակչությանն ահավոր կերպով շահագործելու, կողոպտելու և թալանելու վրա:

Օսմանյան տիրապետությունը ծանր անդադարձավ արաբների ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Հողատիրության և սոցիալական հարաբերությունների հին ձևերին ավելացան նորերը: Արաբական երկրներում հողի գերագույն սեփականատերը դարձավ սուլթանը: Սկսվեց կիրառվել հողային տիրապետության և օգտագործման երեք ձև. հողի մասնավոր տիրապետություն (մուլք), մուտուլմանական հողավորականության և մզկիթների հովանավորության տակ գտնվող հողատարածություններ (վակուֆ) և պետական (խաս կամ միրի):

Մուլք կատեգորիային պատկանող հողերը կարող էին գնվել և վաճառվել, և նրանցից պետությունը գանձում էր տասնորոգ հարկ՝ աշար: Խաս կամ միրի հողերի զգալի մասը գտնվում էր սուլթանի և նրա ընտանիքի անմիջական տնօրինության տակ: Սակայն այդ կատեգորիայի հողերի մեծ մասը ժամանակավորապես տրվում էր այս կամ այն պետական պաշտոնյային և ղինվորականին՝ իր ծառայության դիմաց: Հողօգտագործման այդ ձևը համեմատաբար լայն տարածում գտավ Սեփյակոսում, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում և Սիրիայում:

16—17-րդ դդ. սկսվեց կիրառվել իլթիզամի համակարգը, հատկապես Սեփյակոսում: Դրա էությունը կայանում էր նրանում, որ հարկերի գանձումը կապալով, վարձակալության

տրվում էր անհատին և դրանից ստացվող եկամուտը բա-
ժանվում էր զանձարանի և իլթիդամը ստացած անձի՝ մուլ-
թագեմի միջև:

Մուլթագեմները ֆելլահների հետ վարվում էին այնպես, ինչպես իրենց
էին ջանկանում, կարող էին նրանց ձերբակալել և բանտ նետել, ենթա-
րէկ մարմնական պատիժներ: Եղել են նաև մահապատժի դեպքեր: Ֆել-
լահներն կարող էին հեռանալ իրենց բնակատեղիներից միայն մուլթագեմի
թուղթովությամբ, իսկ եթե զաղտնի էին փախչում, ապա նրանց որոնում,
ձեռքառնում և հետ էին վերադարձնում՝ ենթարկելով դժան պատիժներին:

Սիրիայում և Լիբանանում համեմատաբար քիչ փոփո-
ւթյան ենթարկվեց ֆեոդալական համակարգը, որ ձևավոր-
վել էր մինչ օսմանյան նվաճումը: Այստեղ հողը հիմնակա-
նում արաբ հողատերերի ձեռքում էր, որոնք հարկ էին վճա-
րում սուլթանին և նրա ներկայացուցիչ վալիին:

Հյուսիսային Իրաքում, որ բնակեցված էր գլխավորապես
քրդերով, հողային հիմնական ֆոնդը կենտրոնացված էր
բեկերի ձեռքում:

Պատկերն այլ էր Հարավային Իրաքում, Այստեղ, ինչպես նաև Սիրիայի
որոշ մասերում և Պաղեստինում պահպանվել էին նահապետական հարա-
բերությունները և համայնքային հողօգտագործումը: Այսպիսին էր վիճակը
նաև Արաբիայում, Թուրքական իշխանություններն ամեն րան արեցին վե-
րացնելու հողի համայնական տիրապետությունը, Համայնքային հողերը
հայտարարվեցին պետական և գրանցվեցին տոհմական ավագանու անունով:
Համայնքի անդամները զրկվեցին հողերից, իսկ քոչվոր անասնապահ բեդ-
վիները՝ արտավայրերից:

Գյուղացիների հարստահարումը, անհամար և շատ ծանր
հարկերը, տնտեսական և արտատնտեսական հարկադրանքը,
սովորական դարձած սովը, ինչպես նաև բնական աղետ-
ները, այդ թվում և համաճարակները, հաճախակի պատե-
րազմները, միջֆեոդալական բախումները և այլն, փաստորեն
անկման հասցրին արաբական երկրների տնտեսությունը:
Գյուղացին, հիմնական արտադրողը, բայքայվեց:

Գյուղացիները լքում էին իրենց բնակավայրերը և փախչում քաղաք-
ներ: Այդ մասին է վկայում հետևյալ ցուան օրինակը: 17-րդ դ. Հալեպի
վիլայեթում կար 3200 գյուղ, իսկ 18-րդ դ. մնացել էր ընդամենը 400 գյուղ:
Նման վիճակ էր նաև Եգիպտոսում, Իրաքում և այլ վայրերում:

Շատ ծանր էր արաքական երկրներում ապրող քրիստոնյա բնակչության՝ ասորիների, հայերի, քրիստոնյա արարների վիճակը, որոնք տնտեսական հարստահարման հետ ենթարկվում էին նաև կրոնական հալածանքների։ Բոլոր քրիստոնյաները բացի ընդհանուր հարկերից վճարում էին նաև գլխահարկ՝ շիզլա։

Ստեղծված ծանր տնտեսական դրությունը 16—18-րդ դ. առանձնապես շէր նպաստում քաղաքների, արհեստների և առևտրի դարգացմանը։

Արաքահայ համայնքները 16—18-րդ դդ.։ Օսմանյան տիրապետության հաստատումը արաքական երկրներում բացասաբար անդրադարձավ դեռևս նախորդ դարերում ձևավորված հայ համայնքների ազդեցին, մշակութային, քաղաքական կյանքի և տնտեսական գործունեության վրա։ Այս բնագավառում վճռական նշանակություն ունեցավ երկու գործոն։

Առաջին, Օսմանյան կայսրությունում շեշտը դրված էր նվաճումների և դրանից ստացվող ավարի ու թալանի վրա։ Նրանում համապատասխան տնտեսական և քաղաքական պայմաններ չկային տնտեսական գործունեության խթանման, անհատի և նրա անձի, ունեցվածքի և գույքի ապահովության համար։ Իսկ քանի որ հայերը հիմնականում դրադվում էին արհեստներով, շինարարությամբ և առևտրով, ապա կայսրությունում տիրող մթնոլորտը բարենպաստ չէր նման գործունեության համար։

Երկրորդ, կրոնական-էթնիկական հարցը։ Օսմանյան կառավարողները հանդուրժող չէին քրիստոնյաների և ոչ թուրք ազգաբնակչության, այդ թվում և՛ հայերի նկատմամբ։ Այդ անհանդուրժողականությունը շատ հաճախ վերածվում էր հալածանքների և ընդունում ամենաալյանդակ ձևեր։

Այս գործոններն իրենց ազդեցությունն են ունեցել հայ համայնքների թուլացման գործում։

Առանձնապես ծանր պայմաններ ստեղծվեցին եզիպտահայ համայնքի համար, որը մի ժամանակ, մանավանդ Ֆաթիմյանների օրոք, մեծ կշիռ ուներ Եզիպտոսի պետական, քաղաքական և զինվորական կյանքում։

16—17-րդ դարերում եգիպտահայերի թիվը թուրքական կեղեքիչ և բարբարոս քաղաքականութիւնի հետեանքով խիստ նվազել էր: Սիմէոն Լեհացու վկայութեամբ 17-րդ դ. սկզբում Կահիրեում հաշվում էր ընդամենը 200 հայ տուն, Դրանք հիմնականում գաղթել էին Ստամբուլից, Դիարբեքրից, Հալեպից և այլ վայրերից, Նրանք ոսկերիչներ, զինագործներ, քարտաշներ և շինարարներ էին:

Նշված ժամանակներում հայկական ոչ մեծ համայնքներ կային Սիրիայի և Լիբանանի տարբեր վայրերում՝ Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում, Ջմմառում, Լաթաքիայում և այլն: Հատկապես պետք է նշել Հալեպի հայ համայնքը, որը նշանակալից աշխուժացում ապրեց 17-րդ դ., երբ Հալեպը դարձավ տարանցիկ առևտրի կարևոր կենտրոն, Հալեպում գործում էին դեռևս 15-րդ դ. կառուցված երկու հայկական եկեղեցի՝ ա. Աստվածածին և Քառասուն Մանկաց: Հալեպի հայ համայնքը համալրվում էր Հայաստանից, մասնավորապես Սասունից, Վանից, Բիթլիսից, Մուշից և այլ վայրերից գաղթածների հաշվին: Նրանք հիմնականում հողագործներ, արհեստավորներ և վաճառականներ էին:

Հիշատակութեան է արժանի Ջմմառի (Լիբանան) և նրա շրջակա գյուղերի հայ համայնքը: Ջմմառում 18-րդ դ. հիմնվեց մինչև օրս գործող հայկական վանք, որը դարձավ հայկական հոգևոր-մշակութային կյանքի երևելի կենտրոն: Հայկական համայնքներ ձևավորվել և գործում էին նաև Իրաքի տարածքում, մասնավորապես Բաղդադում և Բասրայում: Նրանք մի կողմից համալրվում էին Հայաստանի՝ զափանցի, ագուլիսցի, տիգրանակերտցի, սզիրթցի և այլ վայրերի տարադիրների, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի տարբեր վայրերից՝ Նոր Զուղայից, Քերմանշահից, Համադանից և այլ քաղաքներից գաղթածների հաշվին: Իրաքահայերը սոցիալական կազմի տեսակետից հիմնականում աշխատավորական դասին էին պատկանում, Կային նաև բժիշկներ, գրիչներ, ծաղկողներ և այլն:

Իրաքահայութիւնն ունեցել է առանձին եկեղեցական թիւմ, որն ուղղակիորեն ենթարկվեց էջմիածնի կաթողիկոսութեանը:

Իրաքահայ համայնքը որոշակի վերելք ապրեց 18-րդ դ. վերջերին, երբ զարգացան առևտրական կապերը Փոքր Ասիայի և Պարսից ծոցի ու նրա միջոցով ասիական մայրցամաքի տարբեր երկրների միջև: Սակայն դա ևս երկար չտևեց:

Հակաթուրքական ընդվզումները և ազատագրական ելույթները: Օսմանյան դաժան լուծը, բնակչության ահապոր հարստահարումը, արաբների և ոչ թուրք այլ ժողովուրդների իրավագուրկ վիճակը պարարտ հող էին հանդիսանում հակաթուրքական ելույթների համար: 16—18-րդ դդ. բազմաթիվ հակաթուրքական ելույթներ են տեղի ունեցել Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Եմենում և արաբական մյուս երկրներում: Եգիպտոսում աստիճանա-

բար ուժեղացաւ մամուլութեան դերը, որոնք ի վերջո դարձան Եղիպտոսի իրական կառավարողները:

Նա անհերքելի իրողութիւն դարձաւ 18-րդ դ. երկրորդ կեսին, երբ Ալի բեյը, ժադոմով արեալ ժամուր, 1767 թ. պարտութեան մատենեց իր հակառակորդներին, մտաւ Կահիրե և իրէն հռչակեց շէյխ ալ-բալադ (քաղաքի կառավարի): Նա դաժան հաշմեհարդար տեսաւ Կահիրեում շահմուդ թուրքական ենիերական բանակի հետ, իսկ 1769 թ., Եղիպտոսից արտաքսեց թուրքական փաշային, և Եղիպտոսը անկախ հռչակեց: Ալի բեյը նվաճեց Արարիան և Սիրիան: Նրա զորքերը իր փեսայի՝ Մուհամմադ Աբու ալ-Ջահարի գլխավորութեամբ 1770 թ. հուլիսին մտան Մեքքա, Սահայն Աբու ալ-Ջահարը դավաճանեց Ալի բեյին, իր 30 հազարանոց բանակը ուղղեց նրա դէմ և մտաւ Եղիպտոս: Եղիպտոսի փառապան կառավարիչ և շէյխ ալ-բալադ դարձաւ Աբու ալ-Ջահարը, որը Եղիպտոսը կառավարեց մինչև իր մահը՝ 1775 թ.: Նրա մահից հետո սաստիկ պայքար սկսվեց մամուլ բեյերի միջև, 1791 թ. իշխանութիւնն անցաւ Մուրադ և Իբրահիմ բեյերին, որոնք համատեղ կառավարում էին Եղիպտոսը մինչև 1798 թ.:

1798 թ. հուլիսի 1-ին ֆրանսիական զորքերը գնեցաւ Նապոլեոն Բոնապարտի հրամանատարութեամբ հայտնվեցին Ալեքսանդրիայում և սկսեցին Եղիպտոսի նվաճումը: Դիզայի շրջանում նրանք ջախջախեցին մամուլային բանակը և հուլիսի 24-ին մտան Կահիրե: Արարիան ուղղված իր դիմումի մէջ Նապոլեոնը նշում էր, որ ինքը Էկիլ է պաշտպանուհի նրանց մամուլ կառավարիչներին, բանի որ նրանք վատ մուսուլմաններ են: Նապոլեոնին հաջողվեց նվաճել Եղիպտոսը և վերացնել մամուլային իշխանութիւնը:

Եղիպտոսիների մեծամասնութիւնը լավ շնորհակց ֆրանսիացիներին, մանաւանդ այն բանից հետո, երբ Նապոլեոնը մտքից նոր ծանր հարկեր և զանազան սահմանափակումներ, ժողովուրդը սկսեց պայքարը նվաճողների դէմ: Ակտիվացրին իրենց զորեղութիւնները նաև անգլիական և թուրքական զորքերը, 1801 թ. ֆրանսիական զորքերը հարկադրված էին հեռանալ: Եղիպտոսը գլխավորին անգլիացիները: Օսմանյան զերիշխանութիւնը ձեռնադրեց վերականգնվեց:

Հակաթուրքական երկարատև համառ պայքար ծավալվեց իրանական, Բաքը Դուռը՝ Օսմանյան կառավարութիւնը, որ սկզբնական շրջանում ճանաչել էր իրաւանի ինքնավարութիւնը, հաշտ աչքով չէր նայում արաբական այդ երկրամասի դիրքերի ամրապնդմանը: Սուլթանը փորձեց իրանաւոր գնել իր ուղղակի կառավարման ներքո, սակայն հանդիպեց իրանացիների ուժեղ դիմադրութեանը՝ էմիր Ֆախր ադ-Դին 1-ի գլխավորութեամբ: 1544 թ. նա դավադրութեան զոհ դարձաւ և սպանվեց Դամասկոսի վալիի կողմից: Բայց պայքարը շարունակվեց, որը գլխավորեց Ֆախր ադ-Դինի որդի Քուրբումազը: Սակայն նա նույնպէս զոհվեց (1585 թ.) և էմիրութիւնն անցաւ նրա որդուն՝ Ֆախր ադ-Դին 2-ին, որի օրոք Մահմ-

ների զինաստիան հասավ իր հզորության գագաթնակետին, Նոր էմիրը շատ զգուշ, խելացի և հեռատես քաղաքական գործիչ էր։ Նա աստիճանաբար վերաշինեց բանդված երկիրը, ստեղծեց հզոր բանակ և կապեր հաստատեց եվրոպական երկրների հետ։ 1613 թ. տեղի ունեցավ Ֆախր ադ-Դին 2-ի առաջին ապստամբությունը օսմանյան տիրապետության դեմ, որը, սակայն, ավարտվեց պարտությամբ։ Ներումն ստանալով սուլթանից և վերահաստատվելով իր գահի վրա, Ֆախր ադ-Դին 2-ը, սակայն, չհրաժարվեց օսմանյան լուծը թոթափելու մտրից, որը հանգեցրեց լիբանանաթուրքական նոր զինված բանումների։ 1633 թ. սուլթան Մուրադ 4-ը պատերազմական գործողություններ սկսեց Ֆախր ադ-Դին 2-ի դեմ, որը տևեց երկու տարի։ 1635 թ. այն ավարտվեց թուրքերի հաղթանակով, լիբանանի իշխանապետությունը ջախջախվեց, իսկ նրա էմիր Ֆախր ադ-Դին 2-ը գերեվարվեց և մահապատժի ենթարկվեց։ Մասնների զինաստիան թուլացավ և էմիրությունն անցավ Շիհաբների զինաստիային, որոնք կիրանները կառավարեցին 1697—1841 թթ.։

Հակաթուրքական մշտական հուզումների և ելույթների ասպարեզ էր Սիրիան։ Այստեղ առաջին հակաթուրքական ելույթը տեղի ունեցավ Սելիմ 1-ին Յավուզի մահից անմիջապես հետո՝ 1520 թ.։ Դամասկոսի վալի Զան Բիրզի ալ-Ղազալին Դամասկոսի Օմայանների մղկիթում իրեն հըռչակեց անկախ և գերիշխան Մալիք ալ-Սըրաֆ (Ամենաազնիվ թագավոր) և իր անունով դրամ հատեց։ 1521 թ. հունվարի 27-ին սուլթան Սուլեյմանը ալ-Քաբանում՝ Դամասկոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, ջախջախեց նրա զորքերը, դաժանորեն պատժեց ապստամբներին, իսկ ալ-Ղազալին մահապատժի ենթարկեց։

Հետագայում ևս տեղի են ունենում հուզումներ և հակաթուրքական տարբեր ընդլծի ելույթներ, որոնց ալիքի վրա բարձրանում և ազդեցություն են ձեռք բերում սիրիական արաբական զանազան ընտանիքներ։ Դրանց մեջ հատկապես պետք է առանձնացնել ալ-Ազրմների ընտանիքը, որի ներկայացուցիչները 1724—1783 թթ. հանդիսայում էին Դամասկոսի վալիներ։ Նրանք, հատկապես Իսմայիլը և նրա որդի Ասադը, փորձում էին վարել ինքնուրույն քաղաքականություն, որի հետ չէին կառուցում օսմանյան կառավարողները։ Իսմայիլը ձեռքակալվեց և իր կյանքի վերջին օրերն անցկացրեց թուրքական զնդանում, իսկ նրա որդին՝ Ասադը, Բարձր Դուռն հրամանով խեղդամահ արվեց բազմիքում։

Երկարատև հակաթուրքական շարժում ծավալվել Հյուսիսային Պաղեստինում 17-րդ դ. վերջում, իր մեջ ներառնելով նաև Սիրիայի և կիրանների տարածքները։ Սկզբնական շրջանում այդ շարժումը զեկա-

վարում էր Զահիր ալ-Ռամարը, որը ստեղծեց մի կիսանկախ իշխանապետություն։ Նա իր տիրույթներին միացրեց Սաֆաղը, Նարուսը, Նազարեթը, իսկ ապա նաև Ակկան։ 1768 թ. Նարուսի մոտ տեղի ունեցավ արաբական և թուրքական զորքերի բախումը, որն ավարտվեց առաջինների հաղթանակով։ Այդ պահից սկսվեց արաբների բացահայտ ապստամբությունը, որը տևեց մի քանի տարի։ Սկզբնական շրջանում հաջողություն ուղեկցում էր ապստամբներին։ Նրանք կարողացան Նույնիսկ նոր տարածքներ և քաղաքներ ազատագրել, ինչպես Բելյուսը, որ ապստամբները գրավեցին 1773 թ. սեպտեմբերի 27-ին։ Բայց 1775 թ. տեղի ունեցավ բեկում և թուրքերին հաջողվեց գրավել ապստամբության մի շարք կարևոր կենտրոններ։ Այդ նույն օվսկանին դավադիրների ձեռքով Ակկայում սպանվեց ապստամբների ղեկավար Զահիր ալ-Ռամարը։ Բեն գրանից հետո մի քանի տարի ևս շարունակվեց պայքարը ալ-Ռամարի որդի Ալիի գլխավորությամբ, սակայն վերջինս նույնպես սպանվեց, իսկ ընդգրկությունը կորսվեց։

Այս գործողությունների ժամանակ մեծ դեր խաղաց Ալի բեյի նախկին մտմուր և թուրքերի հավատարիմ ծառա, ծագումով բոսնիացի Ահմադը, որն իր դամանությունների և բազում սպանությունների համար ստացել էր Զաղլար՝ Մաագործ մականունը։ Նա դարձավ Սալաայի, իսկ ապա նաև Դամասկոսի վալի և իրեն ենթարկեց նաև Տրիպոլիի վիլայեթը, այլ կերպ ասած նրա իշխանության ներքո էր գտնվում համարյա ամբողջ Սիրիան։ Այդ դաման և արյունոտ առևանգություններ անվար շարիք էր Սիրիայի, ինչպես նաև իրանյան և Պաղեստինի բնակչության համար, որը բաղմիջս ապստամբից, փորձելով տապալել նրան։ 1789 թ. խոշոր ապստամբություն տեղի ունեցավ կիրանանում։ Ապստամբները Զաղլարի տիրապետությունից ազատագրեցին Բելյուսը, Սալայան և Սուրը։ Ապստամբությունն ընդհատումներով շարունակվեց մինչև 1797 թ., մինչև Բեշիր 2-րդ Շիհարի էմիր գահնալը։ Զաղլարի և նրա թիկունքում կանգնած օսմանյան վարչակարգի դեմ ուժեղ ապստամբություն բռնկվեց Դամասկոսում 1798 թ.։ Օսմանյան սուլթանը հարկադրված եղավ Զաղլարին հեռացնել և Դամասկոսում նոր վալի նշանակել։

Անհանգիստ էր նաև Իրաքը։ Այստեղ տեղի ունեցան բազմաթիվ մեծ ու փոքր ապստամբություններ և հակաթուրքական ելույթներ։ Դրանից ուշադրավ է 1651 թ. ապստամբությունը Բասրայում, մունթաֆիկ ցեղային միության ապստամբությունը 1690 թ. և այլն։ Ծնշելով այս ապստամբությունները, թուրքական վալիները միամամանակ փորձում էին ամրապնդել իրենց դիրքերը և թուլացնել կախվածությունը Ստամբուլից։ Այդ առումով մեծ հաջողության հասան Բաղդադի վալի Հասան փաշան (1702—1724 թթ.) և նրա հետնորդները, հատկապես Սուլեյման Բուլուլը (1780—1802 թթ.), որը ծագումով վրացի կյուլեմեն (մամուլ) էր, Նա ստեղծեց իր բանակը, հարկեր և մաքսեր էր հավաքում և հաշվի չէր նստում Բաքոր Դռան հետ։

Հակաթուրքական շարժումները ծավալվեցին նաև Արաբիայում, հատ-

կապես Յմենում, 1565 թ. հմենցիները թուրքերին դուրս վճռեցին երկ-
րից: Երկու է, 1570 թ. թուրքական խոշոր բանակին հաջողվեց կրկին
մտնել Յմեն, սակայն հմենցիները երբեք չդադարեցին պայքարը:
Նրանց հարվածների տակ թուրքական կայազորները 1635—1642 թթ. հար-
կադրված էին հեռանալ Յմենից: Պայքարի մեջ մտան նաև Արևելյան
Արաբիայի ցեղերը, որոնք 17-րդ դ. 70-ական թվականներին արտաբե-
ցին թուրքերին և իրենց տիրապետությունը հաստատեցին ալ-Խասայի
վրա:

Ուլազրավ քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրոնական տեղաշա-
րժեր կատարվեցին Կենտրոնական Արաբիայում, որը, ինչպես նշվեց,
Օսմանյան կայսրության մեջ չէր մտնում: Այստեղ 18-րդ դ. սկզբներին
սկսեց աստիճանաբար հզորանալ Սաուդյան ընտանիքը, որը Նեշդի Դա-
բիա օազիսում հիմնեց ոչ մեծ էմիրություն: Այդ էմիրության հզորաց-
ման գործում մեծ դեր խաղաց էմիր Մուհամմադ իբն Սաուդը (1727—
1765 թթ.): Նա պաշտպանեց այդ ժամանակ մեծ տարածում գտած վա-
հաբիական կրոնաքաղաքական շարժումը: Այդ նոր ուսմունքի և հոսանքի
հիմնադիրն էր Մուհամմադ իբն ալ-Վահաբը (1703—1792 թ.), որի
անունով էլ կոչվում է շարժումը:

Նա պահանջում էր վերադառնալ մուսուլմանների սուրբ գրքին՝ Ղու-
րանին և նրա ուղղափառ ուղղությունը՝ սուննիզմին, մերժել այն բոլոր
նորամուծությունները, որ կատարվել են վաղնջական իսլամի՝ մեջ, Վահա-
բիզմը խստորեն հանդես էր գալիս հանուն միաստվածության և դեմ էր
ոչ միայն կուսալատությունը, այլև սրբերի պաշտամունքին: Այդ պատ-
ճառով էլ վահաբիների համարում են իսլամի պուրիտաններ, Վահաբիզմն
պարունակում է սոցիալական հավասարության և արդարության տարրեր:
Նա դեմ է պերճանքին, պահանջում է կառավարողներից արդարամիտ
լինել ժողովրդի նկատմամբ և պաշտպանում է այն թեզը, որ բոլոր մու-
սուլմանները եղբայրներ են:

Վահաբիզմն ուներ նաև հակաթուրքական ուղղվածություն: Նա դա-
տապարտում էր վատ մուսուլմաններին, որոնց մեջ մտնում էին առաջին
հերթին թուրքերը: Օսմանյան կայսրությունը համարվում էր քարատա-
վոր և քանմաքոր: Միաժամանակ նա դատապարտում էր օսմանյան
սուլթաններին այն բանի համար, որ նրանք ապօրինաբար յուրացրել էին
խալիֆների տիտղոսը:

Մուհամմադ իբն Սաուդը, ինչպես և նրա որդին՝ Աբդ ալ-Ազիզ Սաու-
դը (1765—1803 թթ.) վահաբիզմի դրոշի ներքո իրականացրին Նեշդի
միավորումը (1773 թ.): Հետագայում, մինչև 18-րդ դ. վերջերը Սաուդ-
յաններն իրենց ենթարկեցին ամբողջ Կենտրոնական Արաբիան, Խասան և
մի շարք հաղթանակներ տարան Մեքքայի շերիֆի նկատմամբ:

Այսպիսով, կարելի է ասել, որ հակաթուրքական ազատագրական
շարժումները զգալիորեն նպաստեցին արաբների ազգային ինքնագիտակ-
ցության բարձրացմանը և սասանեցին օսմանյան տիրապետության հիմ-
քերը արաբական աշխարհում:

§ 3. ՊԱՅՔԱՐ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼ-ՄԱՆ ՀԱՄԱՐ (19-րդ դ.—1918 թ.)

19-րդ դ. նշանակալի դեր խաղաց արաբների ազդային ինքնագիտակցության զարգացման և հակաօսմանյան պայքարի հետագա ծավալման պատմության մեջ:

Մուհամմադ Ալին և Եգիպտոսի ճգնաժամը: 19-րդ դ. սկզբում Եգիպտոսում խառնաշփոթ վիճակից օգտվեց թուրքական բանակի ալ-բանացի վարձկանների հրամանատար Մուհամմադ Ալին: Նա անցավ մամլուրների դեմ ապստամբած ժողովրդի կողմը և 1805 թ. մայիսին Եգիպտացի շեյխերի ժողովի կողմից հռչակվեց Եգիպտոսի փաշա, իսկ օսմանյան սուլթան Սելիմ 3-ը նրան ճանաչեց որպես ամբողջ Եգիպտոսի կառավարիչ:

Մուհամմադ Ալին ձգտում էր ստեղծել ուժեղ և անկախ Եգիպտոս, նա ձեռնամուխ եղավ բարեփոխումների իրականացմանը տնտեսության, պետական կառավարման, լուսավորության և ռազմական ասպարեզներում:

1808 թ. սկսվեցին իրականացվել հողային բարեփոխումներ: Բանագրավեցին մուլթազիմների կալվածքները, իսկ 1814 թ. ընդհանրապես վերացվեց իլթիզամի համակարգը: Դյուղացին սկսեց հարկն ամբողջությամբ վճարել պետությանը: 1829—1830 թթ. սկսվեց պետական և համայնական հողերի բաժանումը Մուհամմադ Ալիի ազդականներին, բարձրատեսիլ թաղաքացիական պաշտոնյաներին, ղինվորականներին և այլն: Բանագրավեցին նաև վակուֆային հողերը: Այս բոլորի շնորհիվ եկավորվեց նոր ֆեոդալական ավագանի, որը դարձավ Ալիի սոցիալական հենարանը:

Մուհամմադ Ալին զարկ տվեց նաև արդյունաբերությանը: Կառուցվեցին ձուլարաններ, տեքստիլ ֆաբրիկաներ, շաքարի գործարաններ, ռազմական գործարաններ:

Մեծ նշանակություն ունեցան Ալիի շինվարական բարենորոգումները: Նա ստեղծեց կառնեավոր բանակ և լճարձկանների փոխարեն բանակը համալրեց եգիպտացիներով, բացեց ղինվորական՝ հետևակային, հեծյալ և հրետանային դպրոցներ Եգիպտացիներին ապայական կադրեր պատրաստելու համար: Ալին ստեղծեց Եգիպտական ռազմական նավատորմ:

Բարենորոգումներ կատարվեցին նաև վառավարման համակարգում: Մամլուրների վարչականավարական համակարգը վերացվեց և փոխարինվեց կենտրոնացված պետական ադարատի կառավարումով: Հիմնվեցին մի շարք մինիստրություններ, ինչպես ֆինանսների, ղինվորական, առևտրի, ներքին, արտաքին գործերի և այլն:

Ուշագործյալն էն արժանի Ալիի կիրառած բարեփոխումները մշակույթի և լուսավորության բնագավառում: Առաջին անգամ Եգիպտոսում բացվեցին աշխարհիկ դպրոցներ, որտեղ սովորեցնում էին լեզուներ, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն և այլն: Շատ երիտասարդներ, այդ թվում և հայ, ուղարկվեցին սովորելու և մասնագիտանա-

լու Եկրոպայում, Բացվեցին նաև հիվանդանոցներ, 1822 թ. Եգիպտոսում հիմնվեց առաջին տպարանը, սկսեցին լույս տեսնել թերթեր, տպագրվել գրքեր և այլն:

Մուսամմադ Ալիի Գվաճումաները և եգիպտա-թուրքական պատերազմ-ները: Բարենորոգումներին զուգահեռ Մուհամմադ Ալին ձեռնամուխ եղավ արաբական երկրները իր տիրապետության տակ միավորելու լռնդ-րին: 1811—1818 թթ. եգիպտական զորքերը նվաճեցին ամբողջ Արա-բիան: 1820 թ. Մուհամմադ Ալին սկսեց Սուլթանի գրավումը: Մինչև 1823 թ. նա նվաճեց Արևելյան Սուլթանը, իսկ հետագայում նաև ամբողջ երկիրը:

1823 թ. Մուհամմադ Ալին սուլթան Մահմուդ 2-ի խնդրանքով պատե-րազմի մեջ մտավ հունական ապստամբների դեմ, Եգիպտական բանակը Մուհամմադ Ալիի որդի Իբրահիմ փաշայի ղլխավորությամբ 1824 թ. գրավեց Կրետե կղզին, 1825 թ. Մորեան, այնուհետև մտավ ցամաքային Հունաստան և 1827 թ. հունիսի 5-ին գրավեց Աթենքը: Սակայն եվրո-պական պետությունների ճնշման տակ Մուհամմադ Ալին 1828 թ. իր զոր-քերը դուրս բերեց Հունաստանից, բայց Կրետեն մնաց նրա տիրապետու-թյան տակ:

Դրանից հետո Եգիպտոսի կառավարիչը իր հայացքն ուղղեց դեպի Սիրիա և Պաղեստին, Մուհամմադ Ալին դիտակցում էր, որ առանց այդ երկրները գրավելու չին իրականանա Եգիպտոսը հզոր արաբական պե-տության լիբրանելու իր քաղաքական ծրագրերը: Ահա այս հողի վրա 1831 թ. պատերազմական զործողություններ սկսվեցին Եգիպտոսի և Թուրքիայի միջև: Եգիպտական բանակը Իբրահիմ փաշայի ղլխավորու-թյամբ մի շարք փայլուն հաղթանակներ տարավ թուրքական բանակի դեմ, գրավեց ամբողջ Սիրիան և Պաղեստինը և մտավ Անատոլիա, 1832 թ. դեկտեմբերի 21-ին Կոնիայի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամար-տը, որի ընթացքում եգիպտական 30 հազարանոց բանակը ղլխովին ջախ-ջախեց 60 հազարանոց թուրքական բանակը: Դրանից հետո սուլթանն այլևս անդուր էր դիմադրել Եգիպտոսին և ճանապարհը բաց էր Իբրահիմի առջև դեպի Ստամբուլ: Սակայն դարձյալ միջամտեցին եվրոպական տե-րությունները, որոնց մեջ հատկապես Ռուսաստանը բացահայտորեն հանդես եկավ Սամանյան կայսրության ամբողջականության պահպան-ման պաշտպանությամբ: Նրանց ճնշման տակ եգիպտական առաջնադա-ցումը կասեցվեց և 1833 թ. մայիսի 4-ին Քյուլիստայում հաշտությու-ն կնքվեց: Սուլթանը վերստին ճանաչեց Մուհամմադ Ալիի իրավունքները Եգիպտոսի, Սուլթանի, Արաբիայի և Կրետեի նկատմամբ և իր ֆիրմանով՝ հրամանագրով նրան նշանակեց Պաղեստինի, Սիրիայի և Կիլիկիայի կա-ռավարիչ: Դրա դիմաց Ալին իր զորքերը դուրս բերեց Անատոլիայից և կրկին ճանաչեց օսմանյան սուլթանի գերիշխանությունը:

Եգիպտոսը թեև մնաց վառարկական կախման մեջ սուլթանից, սակայն իրականում դարձավ հզոր պետություն, որը եղավ պահին կենսու-նակ ու զորավոր էր, քան բուն Թուրքիան:

Այդուհանգերձ, Մուհամմադ Ալին լիովին գոհ չէր պատերազմի արդյունքներից, քանի որ Եգիպտոսը պաշտոնապես չդարձավ անկախ պետություն և շնանալվեցին նրա ժառանգական իրավունքները իշխանության հարցում: Դժգոհ էր նաև օսմանյան սուլթանը ի տես Եգիպտոսի հզորացման: Եվ 1839 թ. սկսվեց եգիպտա-թուրքական երկրորդ պատերազմը և կրկին հաղթանակն ուղեկցում էր եգիպտական բանակներին, եվ դարձյալ միջառնեցին Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, ինչպես նաև Ավստրիան, Նրանց շահերին չէր համապատասխանում թույլ ու տկարացող Օսմանյան կայսրության փոխարեն տեսնել օրեցօր հզորացող Եգիպտոսին, Մուհամմադ Ալին գտնված էր տեղի տալ և ընդունել սուլթանի նոր պայմանները: Սուլթանի 1841 թ. հունիսի 1-ի հրովարտակով Մուհամմադ Ալին ճանաչվում էր միայն Եգիպտոսի և Սուդանի ժառանգական կառավարիչ: Մնացած բոլոր նվաճված տարածքները՝ Սիրիան, Պաղեստինը, Կիլիկիան և Կրետեն նա վերադարձրեց սուլթանին: Եգիպտոսը մնաց Օսմանյան տիրապետության տակ, իսկ Ալին՝ սուլթանի վասալ:

Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Իրաքը 19-րդ դդ. առաջին կեսին: Դարասկզբին քաղաքական խիստ անկայուն վիճակ ստեղծվեց Արաբական Արևելքի երկրներում: Դա հետևանք էր մի շարք հանգամանքների: Նախ և առաջ անգլո-ֆրանսիական մրցակցությունը Սիրիայում, Իրաքում և արաբական մյուս երկրներում տիրապետող դիրքերը նվաճելու համար: Երկրորդ, օսմանյան կենտրոնացված կառավարման համակարգի հետագա թուլացումը, որի հետևանքով արաբական նահանգների փաշաները գլուխ բարձրացրին և բացահայտ պայքար սկսեցին իշխանության համար: Այդ բնագավառում կրկին «փայլեց» Ակկայի փաշա Ահմադ Ջազզարը, որը ձգտում էր իրեն ենթարկել ամբողջ Սիրիան: Այդ նպատակով նա պատերազմի մեջ մտավ Դամասկոսի և Տրիպոլիի փաշաների հետ: Ակկայում, Դամասկոսում, Հալեպում միջֆեոդալական արյունալի երկպառակուսյունները դարձան սովորական, փաշաները արագորեն բարձրանում և նույն արագությամբ էլ գահավիժում էին: Նույն պատկերն էր նաև Իրաքում: Այս ընդհանուր քաոսի մեջ մի անկյուն կար, որտեղ լուրջ փորձ էր արվում կարգուկանոն հաստատել: Դա Լիբանանն էր, որտեղ էմիր Բեշիր 2-րդ Շիհաբը երկաթյա ձեռքով ճնշում էր ֆեոդալական ընտանիքների կենտրոնախույս նկրտումները: Ջազզարի մահից (1804 թ.) հետո Բեշիրը իր տիրույթներին միացրեց Ջուրջյը և Բեքաայի

հովիտը, ճանապարհներին հաստատեց ապահովութիւն և խրախուսեց առևտրի և տնտեսութիւն զարգացումը:

Երրորդ հանգամանքը վահաբիների արշավանքներն էին Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի գյուղերի ու քաղաքների վրա: Վահաբիները, ինչպես նշվել է, հանդես էին գալիս հանուն արաբական երկրների միավորման՝ իրենց դրոշի ներքո: 1801 թ. նրանք գրավեցին և կողոպուտի ենթարկեցին Քերբելան (Իրաքում), որը շիաների սրբակենտրոնն էր, 1803 թ. հայտնեցին Հալեպի մոտ, իսկ 1804 թ. արշավեցին Ազ-Ջուբայրի և Բասրայի վրա: Վահաբիները 1808—1810 թթ. իրենց վերահսկողութիւնը հաստատեցին Մաանից մինչև Հալեպ ընկած ամբողջ տարածութիւն և Հաուրանի վրա:

Զդիմանալով ստեղծված անտանելի պայմաններին և միջֆեոդալական արյունալի բախումներին, արաբ բնակչութիւնը շատ վաշտերում բարձրացրեց ապստամբութիւն դրոշը: 1820 թ. ապստամբվեցին Լիբանանի գյուղացիները: Բեշիր 2-ը 1822 թ. ամենայն դաժանութեամբ հաշվեհարդար տեսալ «խռովարարներին» հետ և ծանր հարված հասցրեց դրուզների ֆեոդալական ավագանուն:

1825 թ. խոշոր հուզումներ տեղի ունեցան Դամասկոսում և Երուսաղեմում, իսկ 1830 թ.՝ Նաբլուսում:

Ահա այս պայմաններում էր, որ Մուհամմադ Ալին 1831—1833 թթ. ընթացքում գրավեց Սիրիան, Պաղեստինը և Լիբանանը, որոնք Եգիպտոսի տիրապետութիւն տակ մնացին մինչև 1840 թ.: Դրանից հետո նրանք կրկին անցան օսմանյան ուղղակի կառավարման ներքո:

Լիբանանի իշխանապետութեան վերացումը: Բեշիր 2-րդը Լիբանանը կառավարեց մինչև 1840 թ.: Իշխանապետութիւնում և նրա շուրջ ստեղծված լարված վիճակը նրան ստիպեցին հեռանալ Լիբանանից: Օգտվելով գրանից, Լիբանան վերադարձան գրուզ ֆեոդալները, որոնք փորձեցին տիրանալ իրենց կալվածքներին և վերականգնել իրենց իրավունքները: Դրան դիմադրում էին մարոնի քրիստոնյա գյուղացիները, որոնք Բեշիր 2-ի օրոք բնակեցվել էին ապստամբված գրուզ ֆեոդալների հօդերում: Դրութիւնը բարդանում էր նրանով, որ Անգլիան պաշտպանում էր գրուզներին, իսկ Ֆրանսիան՝ մարոնիներին: 1841 թ. գրուզ ֆեոդալները ապստամբեցին էմիր Կասսմի դեմ: Լիբանանում սկսվեցին խժոժութիւններ և մարոնի-գրուզ բախումներ: Օրինականութիւնը հաստատելու պատրվակով

սուլթանը զորքեր մտցրեց Լիրանան և իշխանապետութիւնը վերածեց առ-
վորակիան նահանգի, որն ուղղակիորեն ենթարկւում էր Բարձր Դռանը:
Սակայն զա խաղաղութիւն չրեցեց Լիրանանին: Հակառակութիւնը մարո-
նիների և գրուզներին միջև հասավ իր բարձրակետին 1845 թ. հոկտեմբե-
րին: Բախումները նրանց միջև վերաճեցին իսկական կոտորածներին: Դոր-
ժին կրկին միշամտեցին թուրքական զորքերը: Եվ թեև Լիրանանը «խա-
ղաղեցվեց», սակայն դժգոհութիւնը, որ համակել էր ամբողջ Լիրանանը,
չվերացավ:

1859 թ. Փետրվանում (Հլուսիսային Լիրանան) բռնկվեց գյուղացիա-
կան ապստամբութիւն գյուղական դարբին Տանիու Շահինի գլխավո-
րութիւնով: Ապստամբներն ստեղծեցին իրենց իշխանութիւնը և դրավեցին
մարտի ֆեոդալներին պատկանող հողերը, իսկ նրանց տերերին արտաք-
սեցին: Ապստամբութիւնը տարածվեց նաև Կենտրոնական Լիրանանում և
Լաթակիայի շրջանում, ի պատասխան մարտի գյուղացիներին ելույթի,
գրուզ ֆեոդալները զինեցին գրուզ գյուղացիներին, Հեռեանքը եղավ այն,
որ 1860 թ. մայիսին սկսվեցին երկրորդ մարտի-գրուզ կոտորածները,
որոնք բնորոշեցին նաև Բելլուսի, Սալգաի, Ռաշայայի, Դեյր ալ-Կա-
մարի, Զահլի և այլ շրջաններ: 1860 թ. հուլիսին քրիստոնյա-մուսուլման
արյունալի բախումներ տեղի ունեցան Դամասկոսում: Կոտորվեցին տաս-
նյակ հազարավոր լիրանացիներ և սիրիացիներ:

Սիրիական քրիստոնյաներին «պաշտպանելու» պատրվակով Ֆրանսիայի
կայսր Նապոլեոն 3-ը 1860 թ. օգոստոսին իր զորքերը մտցրեց Բելլուսի,
թեև մինչ այդ թուրքական զորքերին «հաշտվել» էր դադարեցնել կոտո-
րածները: Իրականում նրա նպատակն էր Սիրիայում ամրապնդել ֆրան-
սիական ազդեցութիւնը: Բայց զա նրան չհաջողվեց: Անգլիայի և Ավստ-
րիայի ճնշման տակ ֆրանսիական զորքերը 1861 թ. հունիսի սկզբներին
հեռացան Սիրիայից:

Լիբանանի օրգանական կարգավիճակը: 1861 թ. հունիսի 9-ին Ստամ-
բուլում սուլթանը և եվրոպական տերութիւնները ստորագրեցին մի հա-
մաձայնագիր, որը ստացավ «Լիրանանի օրգանական կարգավիճակը»
անունը: Լեռնալիրանանը դառնում էր ինքնավար մարզ, որը կառավարում
էր Բարձր Դռան կողմից նշանակվող քրիստոնյա մովառառիֆը (փոխա-
նորդ-նահանգապետը): Նա անմիջականորեն ենթակա էր սուլթանին:
Մովառառիֆին կից ստեղծվեց 12 հոգուց բաղկացած Վարչական խոր-
հուրդ՝ Լրֆուական ներկայացուցիչ երկրի վեց հիմնական կրոնական՝
մարոնիների, գրուզների, սունիների, շիաների, ուղղափառների և հույն
կաթոլիկների համայնքներից: Վարչական խորհուրդը խորհրդակցական
մարմինն էր: Ինքնավար մարզն իրավունք ստացավ ունենալ իր ռադի-
կալնութիւնը, դատարանները և այլն, և պարտավոր էր ամենամյա տուրք
վճարել օսմանյան սուլթանին:

Լեռնալիրանանի առաջին մովառառիֆ նշանակվեց հայազգի Արթին
Կարապետ Դաուդյանը՝ Դաուդ փաշան, որը շատ խելամիտ ու հեռատես
պետական գործիչ էր: Նա վիթխարի գործ կատարեց Լեռնալիրանանում

խաղաղութիւն հաստատելու, գլուղներն ու ավանները շենացնելու, անվտանգութիւն հաստատելու համար:

Թանգիմաթի իրականացումը Սիրիայում և Իրաքում: Քայքայվող կայսրութիւնը փրկելու համար օսմանյան կառավարողները ստիպված էին կիրառել բարեփոխումներ, որոնք ստացան Թանգիմաթ անունը: Այդ էին պահանջում նաև կայսրութիւնում, այդ թվում և նրա արարական տարածքներում սաղմնավորված նոր՝ կապիտալիստական հարաբերութիւնների զարգացման շահերը:

Թանգիմաթը կիրառվեց երկու փուլով: Առաջին փուլը սկսվեց 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդի հրովարտակով, իսկ երկրորդ փուլը՝ 1856 թ.՝ եվրոպական տերութիւնների ճնշման տակ: Թանգիմաթի ծրագրով նախատեսվում էր կայսրութիւնում հաստատել լայն կառավարում, ազատ հովել հպատակների անձի, պատվի և գույքի անվտանգութիւն, սահմանել հարկերի գանձման և բաշխման արդարացի եղանակ, ղինվորական ծառայութեան զորակոչման արդարացի ձև և այլն: Այդ «բարիքներից» պետք է օգտվէին կայսրութեան բոլոր հպատակները՝ անկախ էթնիկական և կրօնական պատկանելութիւնից, այսինքն՝ ինչպես թուրքերը, այնպես էլ արաբները, հայերը, հույները, սլավոնները և այլն:

Իրականում այդպիսի շեղում և շատ բան մնաց Թըթի վրա:

Թանգիմաթը ուշացումով, դանդաղ և անհետեղականորեն կիրառվեց արաբական երկրներում: Նախ փոփոխութիւն կատարվեց Սիրիայի և Պաղեստինի վարչատարածքային բաժանման մեջ: 1841 թ. Սայդայի և Տրիպոլիի վիլայեթները միավորվեցին մեկ էյալեթի՝ փաշայութեան մեջ, որի կենտրոնը դարձավ Բեյրութը: Իսկ Պաղեստինը հիմնականում ընդգրկվեց Երուսաղեմի սանջաքի մեջ, որն ենթակա էր Բեյրութի փաշային: Էյալեթների փաշաները զրկվեցին ղինվորական և ֆինանսական իրավասութիւններից: Մտցվեց ֆինանսական նոր պաշտոն՝ զեֆտեղար: Սիրիայում և Պաղեստինում տեղակայվեց թուրքական հինգերորդ բանակը՝ Արաբստան Օրդուսին, որի շտաբ-կայանը գտնվում էր Դամասկոսում: Բանակը լրիվ անկախ էր փաշայից և ենթարկվում էր ղինվորական նախարարութեանը:

Այս փոփոխութիւններն, այդուհանգերձ, արմատական բնույթ չէին կրում և չվերացրին Սիրիայում և Պաղեստինում գոյութիւն ունեցող ֆեոդալական կարգը: Իրենք՝ ֆեոդալ-հողատերերը և շէյխերը խստորեն դիմադրում էին նորամուծութիւններին: Սակայն Սիրիա և Պաղեստինի գյուղացիութիւնը Թանգիմաթը ընկալեց որպէս ազատութիւն ձեռք բերելու հնարավորութիւն: Այդ հողի վրա տեղի ունեցան մի շարք հակաֆեոդալական ընդվզումներ, որոնցից առավել նշանակալիցը Հալեպի 1857 թ. և Հաուրանի 1852—1853 թթ. ապստամբութիւններն էին:

Ռարենդորգումներն ավելի դանդաղ էին կիրառվում Իրաքում: Փաստորեն այստեղ մինչև 1842 թ. ոչինչ չարվեց: 1842 թ. սկսած Իրաքում կատարվեցին որոշ աննշան տեղաշարժեր: 1848 թ. ղինվորական իշխանութիւնն անշատովեց քաղաքացիականից, ստեղծվեցին մի քանի

մասնագիտացված վարչութիւններ, ղերացվեց վարձակալման համակարգը և այլն, Բարենորոգումները Իրաքում մեծ ծավալ ստացան միայն այն բանից հետո, երբ Միգհատ փաշան 1869 թ. նշանակվեց Բաղդադի նահանգապետ և իրավունք ստացաւ իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ ռազմական և քաղաքացիական իշխանութիւնը: Նա դատական իշխանութիւնները անջատեց վարչականից, սահղծեց մոնիթրիզալ (քաղաքային) խորհուրդներ, բացեց դպրոցներ, թուլլաթեց թերթերի հրատարակում, բարեկարգեց անասաւարները և այլն: Նա միաժամանակ վճռական քայլերի դիմեց ստեղծարելու ցեղապետների և ֆեոդալների ինքնիշխանութիւնը և ենթարկելու նրանց օսմանյան կենտրոնական կառավարութիւնը: Ցեղապետներին և ֆեոդալական ավագանուն սիրաշահելու համար նա պետական հողերը բաժանեց նրանց և քայլեր ձեռնարկեց քուլժոր ցեղերին նստակիաց դարձնելու ուղղութիւնով: Այս բոլորի շնորհիւ ղգալիստոնն ամբողջովեց թուրքական տիրապետութիւնը Իրաքում:

Իսկ ընդհանուր առմամբ թանդիմաթը շուտեց արաբական երկրների սոցիալ-տնտեսական և հասարակական կառուցվածքում արմատական փոփոխութիւններ կատարելու յանգիրը:

Նույնպէ: 19-րդ դ. 40-ական թվականներէջ արաբական իրականութիւն մեջ ձեռնորդեց մի շարժում, որը ստացաւ աղգային-մշակութային Զարթնք՝ Նահդա անվանումը: Կինելով արաբների աղգային ինքնագիտակցութիւնն արտահայտման ձև, Նահդան երկու կարևոր նպատակներ էր հետապնդում: Առաջին, արաբների մոտ սեր արթնացնել իրենց պատմական հողերը-մշակութային արժեքների՝ լեզվի, գրականութիւնն, գիտութիւնն, պատմութիւնն հերոսական էջերի և հայրենիքի նկատմամբ: Երկրորդ, արաբական հոգարակայնութիւնը ծանոթացնել եվրոպական մշակութի և առաջադր հասարակական-քաղաքական մտքի հետ և օգտագործել այն պայքարելու արաբական իրականութիւն մեջ տիրապետող հետամնացութիւն, խաղաղամոլութիւնն, թուրքական բռնատիրութիւնն դեմ, նպաստել լուսավորութիւնն տարածմանը և այլն:

Նահդայական շարժման կարևոր կենտրոններն էին Եգիպտոսը և Սիրիան՝ Լիբանանով հանդերձ: Նրա երեւելի դեմքերն էին Բուտրուս ալ-Բուտտանին, Նասիֆ ալ-Յազիշին, Ամին Շմէյիլը, Միքայել Մշակական, Խալիլ ալ-Խուրին և ուրիշներ: Նրանց ջանքերով 1857 թ. Բելրութում հիմնվեց Արաբական դիտական ընկերութիւնը, բացվեցին արաբական աղգային դպրոցներ, հրատարակվեցին թերթեր («Ալ-Ջիննան», «Ալ-Ահրամ» և այլն), հիմնվեցին եգիպտական գրադարանը, Կահիրէի օպերան և այլն: Բուտրուս ալ-Բուտտանին դարձավ արաբական հանրագիտարանի հրատարակման նախաձեռնողն ու կազմակերպիչը:

Արաբական Նահդայի ձեռնորդման և զարգացման գործում նշանակալի է հայերի՝ Իսլանդի Աբգարիոսի, Հովհաննէս Վարդապետի, Ռզգալա Հասունի (Հասունյանի) մասնակցութիւնը: Առանձնապէս պետք է ընդգծել Ադիբ Իսհակի՝ Իսահակ Զուլմանյանի (1856—1885) դերը, որին արաբները համարում են Նահդայի ամենապայծառ աստղերից մեկը:

Եթե Նահապական շարժման մեջ սկզբնական շրջանում գերակշռող էին ազգային մակութային-լուսավորական միտումները, ապա 70-ական թվականներին վերջերին և 80-ական թվականներին առաջին պլանի վրա մղվեցին քաղաքական պայքարի և ազգային անկախության խնդիրները։ Հանուն ազատության և հավասարության քաջահայտորեն հանդես է գալիս Ադիբ Իսահլը, Էտեհլուլ, որ դա է բոլոր տեսակի հիվանդությունների բուժման դեղամիջոցը։ Իսկ Իբրահիմ Տաղիշին կոչ անելով ապստամբվել և առաջադնել թուրքական տառի լուծը, ընդգծում էր, որ «Վեհ Նախտակներին հասնում են սրով»։

Նահապական շարժումը եղավ այն գաղափարական հիմքը, որի վրա հետագայում բարձրացավ արաբական ազգային-ազատագրական հղորդարժումը։

Օրաբիի ապստամբությունը և Եգիպտոսի նվաճումը Անգլիայի կողմից։ Մուհամմադ Ալին վախճանվեց 1849 թ. և Նուրն փոխարինեց Նուր թոդը՝ Աբբաս փաշան (1849—1854), որն իր պապի հակապատկերն էր և դեմ էր ամեն տեսակի բարենորոգումներին։ Նա հրամարվեց Եգիպտոսի անկախության մտքից և մշտապես նշում էր օսմանյան սուլթանի վասալը լինելու հանգամանքը։

Աբբասի կառավարման տարիներին ուժեղացավ օտարերկրյա, հատկապես անգլիական կապիտալի ներթափանցումը Եգիպտոս, 1854 թ. Աբբաս փաշան սպանվեց իր թիկնապահների ձեռքով և հուլիսի 14-ին Եգիպտոսի կառավարիչ դարձավ Մուհամմադ Ալիի որդի Սաիդ փաշան (1854—1863)։ Նա այդ նույն թվականին Ֆրանսիայի հայտնի գործարար Ֆերդինանդ դը Լեսսեպսին տվեց Սուեզի ջրանցքի կառուցման կոնցեսիան։ Ջրանցքի կառուցումը սկսվեց 1859 թ. և ավարտվեց 1869 թ. նոյեմբերի 17-ին։ Ջրանցքի բացումը կատարվեց մեծ շուքով և տեղի ունեցան ճոխ հանդիսություններ։ Իսկ խալալացի մեծ կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդինայդ առիթով գրեց «Աիդա» օպերան։

Սաիդը ներքին քաղաքականության բնագավառում վերադարձավ բարենորոգումներին և ամեն կերպ խրախուսում էր արդյունաբերության և մշակույթի զարգացումը Այդ նույն քաղաքականությունը շարունակեց Սաիդին փոխարինած Իսմայիլը (1863—1879), որը 1867 թ. սկսեց կրել խեղձ՝ (տեր, հրամայող) տիտղոսը։ Նա պայքարում էր Եգիպտոսի անկախության համար, 1866 թ. Եգիպտոսում հիմնվեց ներկայացուցչական պալատ (Մեջլիս Նիյաբի), բաղկացած 75 դեպուտատներից, որը կոչված էր պառլամենտի դեր խաղալու Իսմայիլի կառավարման օրոք բացվեցին նոր դպրոցներ, սկսեցին լույս տեսնել թերթեր, կառուցվեցին նոր գործարաններ, երկաթուղիներ և այլն։ Սակայն այդ բոլորը դրամական մեծ ծիշոցներ էին պահանջում։ Խեղիվը ստիպված գիմեց հյլոսպական բանկիրներից վարկ վերցնելուն։ Այդ վարկերը տրվում էին շատ ծանր պայմաններով և 1876 թ. ապրիլի 8-ին Իսմայիլ փաշան տեղեկացրեց, որ Եգիպտոսն ի վիճակի չէ մարել իր տարտեքերը և սնանկ հայտարարվեց։ Դրանից ճարտկոթեն օգտվեցին Անգլիան և Ֆրանսիան, որոնք հսկողություն

սահմանեցին Եզրպոտոսի ֆինանսներէ, իսկ ապա նաև ամբողջ տնտեսութեան վրայ: Հետագայում, 1878 թ. ապրիլին ստեղծվեց խեղդիկ պարտքի միջազգային հանձնաժողով, որի մէջ մտնում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրիայի ներկայացուցիչները: Նրա պահանջով Իսթայիլը 1878 թ. օգոստոսի 28-ին ստեղծեց նոր կառավարություն, այսպես կոչված «Եվրոպական կարինետ», որի մէջ որպէս միեմատներ մտան վերահիշյալ շորս եվրոպական պետությունների ներկայացուցիչները: Վարչապետ դարձավ Եզրպոտոսի ազանավոր պետական գործիչ, հայազգի Նուրար Նուրարյանը: «Եվրոպական կարինետ» ստեղծումով խեղդիկ Իսթայիլը զրկվեց պետական գործերին անմիջականորեն մասնակցելու հնարավորությունից:

Երչապատված լինելով եվրոպացի միեմատներով, Նուրար Նուրարյանը մեծ հնարամտություն և նրբին զիմանագիտություն էր կիրառում Եզրպոտոսի ազգային շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Եվրոպական կարինետ» ստեղծումը ընդհանրապես լավ շրջադարձեց եզրպոտոսիների կողմից, մանավանդ այն բանից հետո, երբ խիստ ծանրացան գյուղացիներից, արհեստավորներից և վաճառականներից դանձվող հարկերը: Դժգոհությունը համակեց նաև զինվորականությանը: Այլ 1879 թ. մարտի 9-ին Նուրար Նուրարյանը հրաժարական տվեց: Մեկ ամիս անց՝ 1879 թ. ապրիլի 7-ին Իսթայիլը ցրեց «Եվրոպական կարինետ» և կազմեց նոր կառավարություն՝ կազմված եզրպոտոսիներից, որը գլխավորեց Ենրիք փաշան: Կառավարությունը կազմեց Սահմանադրություն, որը հավանության արժանացավ ներկայացուցիչների պալատի կողմից: Սակայն Իսթայիլը չհասցրեց այն ստորագրելու 1879 թ. հունիսի 19-ին Անգլիան և Ֆրանսիան պահանջեցին Իսթայիլից հրաժարվել խեղդիկ պահից և հետանալ երկրից: 1879 թ. հունիսի 25-ին օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ 2-ը հայտարարեց, որ Իսթայիլը զահեկեց է արվել, նոր խեղդիկ հռչակվեց նրա որդի Քեմալիկը, Թուլամբոթ մի անձնավորություն, որը խաղալիք էր անգլիացիների ձեռքում: Կառավարության ղեկավար նշանակվեց Ռիյադ փաշան, որը նույնպես անգլիացիների կամակատարն էր: Եզրպոտոսում հաստատվեց հետագիմական վարչակարգ: Եզրպոտոսը մտավ խոր քաղաքական ճգնաժամի մէջ:

Այսպիսի իրադրութեան մէջ ձեւավորվեցին եզրպոտական ընդդիմադիր ուժերը, որի մէջ մտնում էին ազգային բուրժուազիան, զինվորականությունը, հատկապես սպայական կազմը, մտավորականությունը, հոգեվորականությունը, ինչպես նաև հայրենասիրաբար տրամադրված կալվածատերերը: 1881 թ. հիմնվեց Ազգային կուսակցությունը՝ Հիզր Կալվաթան: Զինվորականների մէջ առանձնապես աշքի էր ընկնում զեդապետ Ահմադ Օրարին, որի շուրջը համախմբվեցին ընդդիմադիր ուժերը, առաջ քաշելով «Եզրպոտոսը եզրպոտացիների համար» լոզունգը: Նրանց նպատակն էր Եզրպոտոսի քաղաքական անկախութեան նվաճումը:

1881 թ. սեպտեմբերի 9-ին Կահիրեում տեղի ունեցավ եզրպոտական բանակի զինված ելույթը: Ահմադ Օրարին և վաթանիստ-սպանները պա-

հանքեցիկն կառավարութեան հրաժարականը, սահմանադրութեան ընդունումը, բանակի թվական կազմի ավելացում և այլն: Խեղիվը հարկադրոված էր սովորարեւել վաթանխոտների այս պահանջները: Կազմվեց ազգային կառավարութիւն Մահմուդ Սամիի գլխավորութիւնով, իսկ Ահմադ Օրաբին դարձավ զինվորական մինիստր: Սամի-Օրաբի կառավարութիւնը ձեռնամուխ եղավ վաթանխոտների ծրագրի իրականացմանը: Երկրում լայն շարժում սկսվեց ի պաշտպանութիւն վաթանխոտների և Ահմադ Օրաբիի: Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ վայրերում տեղի էին ունենում հակաանգլիական ցույցեր: 1882 թ. հուլիսի 11-ին անգլիական ռազմական նախաորումը ուժակոծեց Ալեքսանդրիան և զբաղեց այն: Ալեքսանդրիա փախան խեղիվ Թեվֆիկը և Անգլիայի համախոհները: Խեղիվը պահանջեց, որ Օրաբին չլիմադրի անգլիացիներին,՝ սակայն վերջինս մերժեց: Ապրտամբութիւնը զենկավարելու համար ստեղծվեց Արաւական ժողով, որը զահենկեց արեց Թեվֆիկին, իսկ Օրաբին նշանակեց գլխավոր հրամանատար:

Արեւո միջրան գրավելուց հետո, անգլիացիները հարձակվեցին Կահիրէի վրա: 1882 թ. սեպտեմբերի 11-ին Խել ալ-Քարիրի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որն ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 14-ին նրանք մտան Կահիրէ: Ապստամբութեան զենկավարները, այդ ի վրէ և Օռաբին ձերբակալվեցին և կանգնեցին դատարանի առաջ: Օրաբին և նրա մերձավոր զինակիցները դատապարտվեցին մահուան, որն այնուհետև փախաւ ինկեց զմէ հ բանտարկութեան, Սեպտեմբերի ընթացքում անգլիացիներն ավարտեցին ամբողջ Եգիպտոսի զբաղումը և նոյն ամսվա 24-ին խեղիվ Թեվֆիկը վերադարձավ Կահիրէ: Սակայն Եգիպտոսի փաստական կառավարիչը դարձավ անգլիական հուպատոս մայոր Բերինգը՝ լորդ Կլամբլը, ուն այս պաշտոնը զբաղեցրեց մինչև 1907 թ.: Ձևականորեն Անգլիան պահպանեց Եգիպտոսի կարգավիճակը, այսինքն նա չհամաձայնեց ընտելի պէն: Եգիպտոսը նախկինի պէս կազմում էր Օսմանյան կայսրութեան բաղկացուցիչ մասը: Իրականում նա վերաւել սեպիական զաղութի:

§ 8. ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԱՔԴՈՒՎ ՀԱՄԻՂ 2-ՐԴԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

1876 թ. Արդու Համիդ 2-ի սուլթանական զահ բարձրանալուց հետո Օսմանյան կայսրութիւնում հաստատվեց արտակարգ դաժան վարակարգ, որը ստացավ զուլում անունը, իսկ ինքը՝ Արդու Համիդ 2-ը, իր բազում շարագործութիւնների, ոչ թուրք ժողովուրդների արյունը թափելու համար կոչվեց Կարմիր կամ Արյունոտ սուլթան: Սուլթանը մշտական վախ տածելով արաբների ազատագրական ձգտումների հանդեպ, անխնա ճնշում էր նման միտումների ամենափոքր գրասորումն անգամ, զնդան նետում արաբ ազատախոհներին: Խիստ հալածանքի էր ենթարկվում արաբական լեզուն, պաշտոնական հիմնարկներում, գաղաարաններում, բանակում,

գարդնենրում և մշակույթի բոլոր ոլորտներում տիրապետող էր թուրքերենը։ Թերթերը, գրականությունը, կնթակա էին խառնազույն գրաքննության։

Ստեղծված հեղձուցիչ մթնոլորտից խիստ նեղվում էր երիտասարդ և տակավին թույլ արարական բուրժուազիան և ազգային մտավորականությունը. որք բեկ երևում, բայց այնուամենայնիվ, պայքարի մեջ մտավ գույումի վարչակարգի դեմ։ Արարական երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում և Իրաքում ստեղծվեցին զանազան զազտնի միություններ։ Առաջին զազտնի արարական քաղաքական միությունը հիմնվեց 1875 թ. Սիրիայում։ Նրա կողմից 1880 թ. գեկտեմբերի 31-ին տարածված թուրքիկներին մեկում շարագրված էին միության հիմնական խնդիրները. անկախություն տալ Սիրիային և Լիբանանին, արաբներին ճանաչել պաշտոնական լեզու, վերացնել գրաքննությունը և այլն։ 90-ական թվականներին մեծ եռանդով էր զործում մեկ այլ զազտնի միություն՝ Արաբ ազգի իրավունքների պաշտպանության կոմիտե։ Նման միություններ էին զործում նաև Գամալիսում, Բելլուսում, Բաղդադում, Բասրայում, ինչպես նաև վտարանդի արաբների շրջանում։ Վերջիններից պետք է նշել Նյու-Յորքում 1900 թ. ձևավորված Նրիտանորդ Սիրիա և 1904 թ. Փարիզում կազմակերպված Արաբական հայրենիքի լիգա քնկերությունները։ Արաբական հայրենիքի լիգայի հիմնադիրն էր Նաջիր Ազուրին, որն առաջ քաշեց ռաբարական երկրները՝ արաբներին լուղունդը, Նաջիր Ազուրին գտնում էր, որ գույումի լծից ազատագրվելու համար պետք է միավորվեն և միասնական ճակատով հանդես գան արաբները, քրդերը, հայերը, հույները և մյուս ոչ թուրք ժողովուրդները։ Նա մեծ համակրանքով էր վերաբերվում արևմտահայերի ազատագրական պայքարին և բարձր դնահատում այն բարոյական աջակցությունը, որ հայերը ցուցաբերում էին արաբների ազատագրական ձգտումների նկատմամբ։ Հայտնի հայ հասարակական գործիչ Մինաս Չերազին 1905 թ. գրված իր մի նամակում Նաջիր Ազուրին շնորհակալություն հայտնելով հայերին այն խանդավառության համար, որով նրանք դիմավորեցին արաբների հայրենիքի զարթոնքը, ընդգծում է. «Թաշարար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արաբներին թուրքական պետության դեմ, մյուս կուսակցություններից առաջ հայերը միակամ են ցույց տվեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը... Պետք է ճանաչենք և հասկանանք իրար և պետք է միանանք հարձակվելու համար ընդհանուր թշնամու դեմ... Հայերն արդեն միացել են մեզ»։

Այս շրջանում տեղի ունեցան բազմաթիվ զինված ելույթներ։ Բավական է նշել, որ երեք անգամ՝ 1886, 1896 և 1906 թթ. ապառամեցին Ջերբլ Դրուզի (Սիրիա) գյուղացիները։ 1895 թ. հոգի ելան Հալեպի, իսկ 1903 թ. Բելլուսի բնակիչները, գլխավորապես արհեստավորները և վաճառականները։ Թուրքերը արյան մեջ խնդդեցին այդ ելույթները։ 90-ական թվականներին, ուշքի դալով Օրաբիի ապստամբության ճնշումից, զգալի աշխուժություն նկատվեց նաև Սղիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում։ Դրանում շատ մեծ էր Մուստաֆա Փամիլի դերը։ Նա հանդես էր գալիս անգլիական տիրապետության դեմ, պայքարում Սղիպտոսի անկախության

համար և ձգտում էր դրան հասնել օգտագործելով անգլո-ֆրանսիական հակասովորյունները և պրուպագանդելով ազգային զաղափարները, 1907 թ. նա հիմնեց «Հիզլ ալ-Վաթան» կուսակցությունը: 20-րդ դ. սկզբին Եգիպտոսում ձևավորվեցին նաև այլ քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև առաջին բանվորական արհմիությունները: Եգիպտոսի տարբեր վայրերում տեղի էին ունենում բախումներ տեղական բնակչության և անգլիացիների միջև: Այսպես, օրինակ, 1906 թ. հունիսի 13-ին Նեղոսի հետաքերտում գտնվող Դենշավայի գյուղացիները դիմադրեցին անգլիական սպաների խժոժություններին, որի ժամանակ վիրավորվեցին մի քանի գյուղացիներ:

Արաբական երկրներում մեծ դժգոհություն էր հարուցում եվրոպական կապիտալի դիրքերի հետագա ուժեղացումը, 20-րդ դ. սկզբներին Ֆրանսիան իր ձեռքում էր կենտրոնացրել Սիրիայում և Լիբանանում մետաքսի արտահանությունը: Իսկ անգլիական կապիտալը իր հիմնական գործունեությունը Եգիպտոսից հետո կենտրոնացրել էր Իրաքում, որը գյուղատնտեսական հումք և մթերքներ էր մատակարարում Անգլիային, Իր գործունեությունն աշխուժացրեց նաև Գերմանիան, որը Մերձավոր և Միջին Արևելք թափանցելու համար որպես հզոր լծակ օգտագործեց Բեռլին—Բոսֆոր—Բաղդադ—Բասրա երկաթուղագծի շինարարությունը:

Արաբական երկրների դիֆուզիոնը երիտաւրֆական ճեղքախլությունն Բանդեպ: 1908 թ. հուլիսի 3-ին Թուրքիայում տեղի ունեցած հեղափոխությունը, որ իրագործեցին երիտասարդ թուրքերը, և 1876 թ. սահմանադրության վերականգնումը զոհունակությամբ ընդունեցին արաբները: Նրանք հույս ունեին, որ Օսմանյան կայսրությունում կհաստատվի ազատություն, կվերանա ազգային ճնշումը և արաբները հնարավորություն կունենան հասնել իրենց ազգային երազանքների իրագործմանը: Ելնելով դրանից, արաբական ազգային գործիչները կանգնեցին երիտթուրքերի հետ համագործակցելու և նրանց աջակցելու տեսակետի վրա: Այդ տրամադրությունների արտահայտիչը հանդիսացավ «Արաբա-օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը, որը հիմնվեց արաբների կողմից Ստամբուլում 1908 թ. սեպտեմբերի 2-ին: Կազմակերպությունը չէր դնում արաբների անկախության, անգամ ինքնավարության հարցը: Նա ընդունեց երիտթուրքերի տեսակետը օսմանյան ազգի մասին, ընդգծելով, որ արաբները լոկ այդ ազգի միլլեթներից մեկն են: Կազմակերպության ղեկավար Սադիկ ալ-Աղլամը և նրա զինակիցները բավարարվեցին միայն արաբների իրավահավասարության, արաբական լեզվով կրթություն ստանալու և արաբական սովորույթների պահպանման պահանջներով:

Սակայն շատ շուտով երիտթուրքերը, ամրապնդելով իրենց իշխանությունը, բացահայտեցին իրենց իսկական հետադիմական էությունը, այդ թվում և ազգային հարցում: Նրանք կանգնեցին սուլթանների վարած պան-օսմանիզմի և բռնի թուրքացման քաղաքականության վրա, հալածանքներ սանձադնեցին ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, անգամ սկսեցին կիրառել շարժերի քաղաքականություն, ինչպես դա տրվեց Ազանայի հա-

յության հետ 1909 թ. երևութուրքները 1909 թ. ապրիլին փակեցին «Առա-
բա-ժամանյան» եղբայրութիւնն՝ կազմակերպութիւնը, ապա նաև արա-
բական ազգային դպրոցները, իսկոտ սահմանափակեցին արաբական լիզ-
մի գործառնութիւն շրջանակները:

Երևութուրքների քաղաքականութիւնն փոփոխութիւնը սթափեցրեց արա-
բական ազգային գործիչներին, որոնք համագործակցութիւնից անցան
ընդդիմութիւն, Ստեղծվեցին մի շարք արաբական գաղաւթի կազմակեր-
պութիւններ: Անդունանդները, արաբական քաղաքական առաջնորդները
շինանդներին արաբների անկախութիւնն նմանապէս տեսնեցին վրա և հան-
գեւ էին դալին Օսմանյան կայսրութիւնն ապակենտրոնացման պահանջով:
Այդ տեսակետն էր պաշտպանում ազդեցիկ Օսմանյան վարչական ապա-
կենտրոնացման կուսակցութիւնը, որը հիմնվեց 1912 թ. դեկտեմբերին:
Նրա կարևոր ծրագրային պահանջները հետևում էին հետեւյալին. արաբա-
կան վիլայեթները դարձնել ինքնավար մարզեր իրենց կառավարութիւն-
ներով և մարզային ժողովներով, արաբների լայն մասնակցութիւն կայս-
րութիւնն կառավարութիւնը և պետական ուլլ մարմիններին, արաբներին
պարտադիր ուսուցում արաբական դպրոցներում և այլն:

Այս կազմակերպութիւնն իր մասնաճյուղերն ունեւ Սիրիայի, Պա-
ղեստինի և Բարսի տարբեր քաղաքներում:

Օսմանյան կայսրութիւնն ապակենտրոնացման և արաբական մարզերի
ինքնավարութիւնն պահանջը համայնութիւնն արժանացավ արաբական
առաջին կոնգրեսի կողմից, որը գումարվեց 1913 թ. հունիսի 18—23-ը
Փարիզում: Հատկանշական է, որ Կոնգրեսն իր ընդունած որոշման մեջ
պաշտպան կանգնեց հայերի պայքարին, նշելով, որ նրանք նույնպէս ունեն
ինքնավարութիւնն իրավունք՝ կայսրութիւնն ապակենտրոնացման հիմքի
վրա:

Սակայն շուտով արաբական քաղաքական գործիչները համոզվեցին,
որ հետադարձ չէ երևութուրքների հետ համաձայնութիւնն գալ ինքնավա-
րութիւնն և արաբների այլ ազգային պահանջների բավարարման հար-
ցում: Եվ նրանք ավելի ու ավելի են հակվում դիմում ապաքարի մտքին:
Այդ տեսակետի վրա կանգնեց ներկայացի սպա Ազիզ Ալի ալ-Մուրթի
կողմից 1913 թ. հոկտեմբերին հիմնած «Ալ-Ահդ» «Պատգամ» շաղաւթի
կազմակերպութիւնը, որն իր բաժանմունքներն ունեւ Դամասկոսում,
Բաղդադում, Հալեպում, Մուսուլում և այլ քաղաքներում: Նա գտնում էր,
որ թուրքական լուսը հնարավոր է և պետք է ապաւելել դիմում ապաքամ-
ութիւնն ուղիով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին
այս գիծը որդեգրեց արաբական կազմակերպութիւնների ճնշող մեծա-
մասնութիւնը:

Արաբական երկրները առաջին համաշխարհային պատերազմի տա-
րիներին՝ 1914 թ. հոկտեմբերի 29-ին Օսմանյան կայսրութիւնը մտավ
պատերազմի մեջ ընդդիմ Անտանտի, Ինքնարարար պատերազմի մեջ
ներքաշվեցին արաբական երկրները: Պատերազմը սկսվելուց հետո արաբ-
ների առջն կանգնեց Նրա հանդեպ հիթթորաշկու հարցը: Արաբները,

ներանց ազգային-քաղաքական առաջնորդների և կազմակերպությունների ճնշող մեծամասնությունն արտահայտվեց հզորատ ատելի թուրքական լծից ազատվելու և քաղաքական անկախության: Նրանք գտնում էին, որ այդ հարցում կարող են համագործակցել Անգլիայի և Ֆրանսիայի հետ և նրանցից ստանալ համապատասխան օգնություն: Եվ նրբ օսմանյան առաջնորդ Անտանտին հայտարարեց շիհադ՝ սրբազան պատերազմ, ապա այն լպաշտպանվեց արարների կողմից: Զորահոլմած շատ-արար ղինվորներ լքում էին թուրքական բանակը, բազմաթիվ էին զենքերը, նրբ նրանք կամավոր գերի էին հանձնվում անգլիացիներին և ֆրանսիացիներին: Շատ վայրերում, մանավանդ Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում ծայր առավ պարտիզանական պայքար ընդդեմ թուրքների:

1914 թ. նոյեմբերի 2-ին Անգլիան Եգիպտոսում մտցրեց ռազմական դրույուն, իսկ ղեկտեմբերի 18-ին հայտարարեց Եգիպտոսի անշատումն Օսմանյան կայսրությունից և նրա վրա իր հովանավորության (պրոտեկտորատի) հաստատումը: Եգիպտոսում մտցվեց անգլիական ղլխավոր կոմիսարի պաշտոնը: Դեկտեմբերի 19-ին անգլիական իշխանությունները գահընկեց արեցին խեզիվ Աբրահա 2-րդ Հիլմիին, որը շէր ցանկանում ենթարկվել նրանց, և նրա փոխարեն սուլթանի տիտղոսով Եգիպտոսի սկահաւորը նշանակեցին Հուսեյն Քամիլին: Պատերազմի ժամանակ անգլիական բանակի կարիքների համար բռնագրավվում էին պարենը, գյուղատնտեսական հումքը, արդյունաբերական ապրանքները և այլն, Ճաւնյակ հազարավոր եգիպտացիներ հարկադրաբար ներգրավվում էին աշապես կողմնակաշխատանքային կորպուսների մեջ, որոնք կատարում էին ամենատաթանակիւր աշխատանքները՝ փորում խրամատներ, կառուցում ամրոցներ, ճանապարհներ և այլն:

Պատերազմական գործողությունները Եգիպտոսում հիմնականում ընթացան Սուեզի ջրանցքի գոտում: 1915 թ. փետրվարի 3-ին թուրքական 4-րդ բանակը Զեմալ փաշայի հրամանատարությամբ և ղեկնացիների աշակցությամբ հարձակում սկսեց Սուեզի ջրանցքի գոտում, բայց չհասավ ոչ մի հաջողության: Ահհաջողությամբ ավարտվեցին 1916 թ. Սուեզը գրավելու նրկու փորձերը ևս: Թուրքները պարտություն կրեցին նաև Սինայի ռազմաճակատում: Այդ ռազմական գործողությունների, մանավանդ Սուեզի ջրանցքի պաշտպանության ժամանակ, ղոհվեցին տասնյակ հազարավոր եգիպտացիներ:

Անգլիային հաջողվեց դուրս մղել թուրքերին և Եգիպտոսը պահել իր իշխանության տակ:

1914 թ. նոյեմբերին պատերազմական գործողություններ սկսվեցին իրաքյան ճակատում: Մինչև նոյեմբերի 22-ը անգլիական ղորքերը գրավեցին Յառն և Բասրան, ապա ամրողջ հարավային և կենտրոնական Իրաքը: 1915 թ. ամռանը անգլիական ղորքերը շարժվեցին Բաղդադի վրա, սակայն Կուտ ալ-Ամարայի մոտ անհաջողության մատնվեցին և ղեկտեմբերին ընկան շրջապատման մեջ: 1916 թ. ապրիլին նրանք գնեցին Բառնահենդի հրամանատարությամբ անձնատուր եղան թուրքերին, Անգ-

լինեցին՝ որոշման համաձայն գործողությանը վերականգնել հաջորդ տարին և 1917 թ. մարտի 11-ին գններով Մոզի գործերը մասն Բաղդադ, Հետա-հետում նրանք դրավել են ամբողջ Իրաքը:

Պատերազմի հենց սկզբում արտակարգ ծանր, անտանելի վիճակ տեսնվեց Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Սուլթանը վերաց-րեց Լիոնալիբանանի ինքնավարությունը (վերջին մոթապոստիքը նույնպես հայ էր՝ Հովհաննես Գուլամշյան): Սիրիայում տեղի տեսողներն էր Ջեմալ փաշան: Նրա հրամանով բռնադատվեց պարսիկները, անասունները, խաղաղ բնակչությունը բռնի բռնում էր հազարավոր շինարարությունների վրա աշ-խատելու: Սիրիայում և Լիբանանում զղաշվում էր անհրաժեշտ խիստ պակաս, ապա սկսվեց սով և տասնյակ հազարավոր մարդիկ սովամահ եղան: Արաբները բռնի դարակոչի էին ենթարկվում բանակ, որտեղ տե-րապետող էր արհամարհանը արաբների նկատմամբ: Արաբները խու-սափում էին գլխավորական փառալուսյունից և ամեն ինչ անում էին ձա-խողելու թուրքերի գլխավորական ծրագրերը:

Սիրիայում և Լիբանանում մեծ արձագանք գտավ Ապակենտրոնացման կոստակցություն կոչը պատրաստվել ապստամբություն թուրքական լծից ազատագրվելու համար: Թուրքերն անցան դաժան հալածանքների և պատ-միչ միջոցառումների կիրառման: Ջեմալ փաշայի հրամանով ձերբակալ-վեցին Սիրիայի և Լիբանանի աղագլխի Լեռնի գործիչները, որոնց մի մասը կախազան հանվեց 1915 թ. օգոստոսին Բեյրութի Բուրջի հրապա-րակում, իսկ մի մասն էլ՝ 1916 թ. մայիսի 6-ին Դամասկոսում և Բեյ-րութում: Տասնյակ հազարավոր մարդիկ, ամբողջ բնակիչներ բռնի տեղահան արվեցին և բռնեցին հատուկ ճամբարներ, անգամ Անատոլիայի խորքերը, իսկ նրանց գույքը բռնագրավվեց: Այդ բնագավառում թուրքա-կան գործիչներն օգտագործում էին այն փորձը, որ նրանք ձեռք էին բե-րել հայերի բռնի տեղահանման ժամանակ:

Արաբական ապստամբությունը և բուրժական տիրապետության կո-ծանդան: Այդուհանգերդ թուրքերին չհաջողվեց կանխել արաբական ապս-տամբությունը, որի կենտրոնը դարձավ Հիշազը: Այն գլխավորեց Մեք-քայի շերիֆ Հուսեյն իրն Ալի ալ-Հաշիմին: Նրա և Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար Մակ-Մահոնի միջև 1915 թ. հոկտեմբերի 24-ին կնք-վեց դադարի համաձայնագիր, ըստ որի Անգլիան պարտավորվում էր աջակցել արաբական ապստամբությանը և պատերազմից հետո ճանաչել արաբական անկախ թագավորությունը:

Սակայն դա շտապարեց, որ Անգլիայի ներկայացուցիչ Մարք Սայքսը և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոն 1916 թ. մայիսին կնքեն մեկ այլ դադարի համաձայնագիր: Ըստ Սայքս-Պիկոյի համաձայնագրի, Անգ-լիայի տիրապետության տակ էին անցնելու Իրաքը և Պաղեստինը, իսկ Ֆրանսիայի՝ Սիրիան և Լիբանանը:

Արաբական ապստամբությունը սկսվեց 1916 թ. հունիսի 5-ին, Այդ օրը Հուսեյնի որդիներ Ալի և Ֆեյսալ Մեդինայի մոտ Հուսեյնի անունից հռչակեցին արաբների անկախությունը: Ապստամբներն ստեղծեցին երկր

բանակ՝ Հուսեյնի որդիներ Ալիի, Ֆեյսալի և Աբդալլահի հրամանատարությամբ Ապստամբությունը, բացի հիշազդիներից մասնակցում էին նաև սիրիացիները, լիբանանցիները, իրաքցիները, պաղեստինցիները, հորդանանցիները և այլն, Համագործակցելով անգլիական զորքերի հետ, նրանք ջախջախել հարվածներ էին հասցնում թուրքական բանակին, որը 1916 թ. երկրորդ կեսից արաբական բոլոր ռազմաճակատներում անցավ պաշտպանության, Թուրքերին վաղելով Հիշազից, արաբական զորքերը 1917 թ. սկզբներին մտան Պաղեստին, որի ազատագրումը ամբողջացավ մինչև նույն տարվա վերջը:

Դրանից հետո անգլիական և արաբական զորքերը ձեռնամուխ եղան Սիրիայի ազատագրմանը, Այդ տեսակետից կարևոր էր Արարայի (Նաբլուսի մոտ) ճակատամարտը, որը տեղի ունեցավ 1918 թ. սեպտեմբերի 19-ին, Այստեղ առաջին անգամ կոիվներին մասնակցեց Արևելյան կամ Հայկական լեզեոնը, որը ստեղծվել էր դեռևս 1916 թ. նոյեմբերին Ֆրանսիական կառավարության հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա: Լեզեոնում, որի հիմնական կորիզը հայերն էին, ընդգրկված էին նաև սիրիացիները: Արարայի ճակատամարտում հայ և սիրիացի զինվորները ավելի քան 12 ժամ քաջաբար մարտնչում էին թուրքական զորքերի դեմ, որոնք չդիմացան և փախուստի դիմեցին:

1918 թ. սեպտեմբերի 30-ին Ֆեյսալի զորքերը մտան Դամասկոս, Թուրքական դրոշը վայր նետվեց և Դամասկոսի վրա ծածանվեց Հուսեյն թագավորի Արաբական ազատագրության եռագույն դրոշը: Հոկտեմբերի 8-ին ազատագրվեց Բեյրութը, իսկ այնուհետև Հոմսը և Համան: 1918 թ. հոկտեմբերի 25-ին Հայկաից հարավ նաև Բաժանի մոտ տեղի ունեցած ըստ էության վերջին ճակատամարտում արաբական զորքերը ջախջախեցին թուրքերին և ազատագրեցին Հալիպը: Դա ռեանշ էր 1516 թ. Մարջ Դարիթում կրած պարտության դիմաց:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարով Թուրքիան իրեն պարտված ճանաչեց և պարտավորվեց Անգլիային և Ֆրանսիային հանձնել Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Իրաքում, Հիշազում, Ասիրում և Նմենում գտնվող իր կայազորները:

Արաբների վրա Օսմանյան շորս հարյուր տարի տևած դաժան տիրապետությունը կործանվեց: Սկսվեց նրանց պատմության նոր փուլը:

Արաբների վերաբերմունքը ճայ բռնագաղթվածների հանդեպ: Օսմանյան կառավարողները 1915 թ. իրականացնելով հայերի ցեղասպանությունը և կոտորելով հայերի մեծ մասին, մնացած մասին բռնի տեղահան արեցին և քեցին արաբական անապատները: Նրանք հավատացած էին, որ տարագիր և անպաշտպան հայերը կուլ կզեն անապատի ավազուտներին և որպես քրիստոնյաներ կհանդիպեն մուսուլման արաբների թշնամական վերաբերմունքին: Սակայն նրանց սպասումները շարդարացան: Հայերի նկատմամբ երիտթուրքերի ռեռագործությունները խստորեն դատապարտեց մուսուլմանական աշխարհի գլխավոր սրբակենտրոնի՝ Մեքքայի շերիֆ Հուսեյնը Դա մեծ արձագանք գտավ արաբական աշխար-

Հում: Արարենք, որոնք իրենք էին տառապում թուրքական բարբարոսական լծից և ասում թուրքերին, մեծ կարեկցանքով էին վերաբերվում իրենց երկրի քաղաքներով և գյուղերով անցնող հայ գաղթականների քաղաքականներին: Նրանցից շատերը հաճախ իրենց կյանքը վտանգի ենթարկելով, փորձում էին օգնել անպաշտպան, սոված և ուժասպառ հայ կանանց, ծերերին և երեխաներին, նրանց տալիս ուտելիք և շուր: Բազմաթիվ հայ որս մանուկներ ապաստան դառն արարների տնիքում և հրամայով փրկվեցին անխուսափելի մահից: Նդիպտական խեղդիվ հրամայով ապաստան արվեց մուսալեուցի հայ հերոսներին, որոնք ֆրանսիական նավերով տեղափոխվեցին Նդիպտոս: Քիչ չէին այն դեպքերը, երբ արար պաշտոնյաները ստանալով Թալեաթի հրամանը հայերին ոչնչացնելու մասին, հրաժարվում էին կատարել այն և դրա համար հաճախ հատուցում իրենց սեփական կյանքով: Այդպես վարվեց Դիյր աղ-Ջուրի կառավարիչ Ալի Սուադը, որը ոչ միայն հրաժարվեց սպանել իր շրջանում հայտնված հայերին, այլև հալածից մոտ հազար հայ որս մանուկներ, նրանց համար կառուցեց ժամանակավոր կացարան և հողաց նրանց կարիքները: Դրա համար նա հեռացվեց իր պաշտոնից և ապա ամբողջորեն սպանվեց: Նույն կերպ վարվեցին Մոսուլի արար զեկավարները: Մոսուլի նահանգապետը, ստանալով երիտթուրքերի զեկավարության հրամանը հայերին ոչնչացնելու մասին, հրաժարեց քաղաքի արար երեխաների խորհրդակցություն: Նրանք վճռականորեն մերժեցին թուրքական կառավարության պահանջը, ընդգծելով, որ ժրենց խնդը թույլ չի տա, որ արար ժողովրդի ձեռքը թաթախվի հայերի արյան մեջ: Նման դեպքերը եղանի չէին:

Շնորհիվ արարների անպաշտպանության տառնյակ հաղարավոր փախուստական հայեր փրկվեցին անխուսափելի մահից և բնակություն հաստատեցին Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Հորդանանում և Նդիպտոսում: Արարական երկրներում բնակվող հայերի թիվը հասնում է մոտ կես միլիոնի: Նրանք իրենց արժանի ավանդն ունեն հյուրընկալ երկրների տնտեսության և մշակույթի զարգացման, համընդհանուր առաջընթացի գործում:

ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալլոյանեան Ա.— Արարական Միացեալ Հանրապետութեան Նդիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960.
2. Իրն ալ-Ասիր— Թարգմ., առաջարանը և ծանոթագր. Ա. Տեր-Ղեանդյանի, Երևան, 1981.
3. Կիլվեթեան Ռ.— Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1930.
4. Հովնանէիսյան Ն. Հ., Սաբոյան Հ. Ս.— Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975.
5. Հովնանէիսյան Ն. Հ.— Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում, Երևան, 1967.

6. Հովհաննիսյան Ն. Հ.— Հայ-արաբական պատմամշակութային հարաբերությունները— «Խորհրդային Հայաստան», 1984, նո. 12.
7. Հովհաննիսյան Ն. Հ.— Սուլթան Աբդուլ Համիդ 2-ի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության զննահատմամբ, Պատմաբանասիրական հանդես, 1987, նո. 1.
8. Հովհաննիսյան Ն. Հ.— Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսաբանությունը արաբական պատմագրության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1989, նո. 1.
9. Ղևոնդ, Պատմաբյուռ: Թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982.
10. Մատթեոս Ուռնայեցի: Ժամանակագրություն: Թարգմ., ներած. և ծանոթագր. Հր. Բարթիկյանի, Երևան, 1973:
11. Մելիք-Բախչյան Ս. Տ.— Հայաստանը 7—9-րդ դարերում, Երևան, 1998.
12. Մրցրեան Գ.— Ականաւոր Հայեր եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947:
13. Նալբանդյան Հ.— Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965.
14. Նալբադյան Ն. Հ.— Կիբանանը 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1985.
15. Նալբադյան Ն. Հ.— Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, 1982.
16. Ал-Джабартин Абд ар-Рахман — Египет в период экспедиции Бонапарта (1798—1801), М., 1962.
17. Ал-Шафин А., Развитие национально-освободительного движения в Египте (1882—1956), М., 1961.
18. Базили К. М.— Сирия и Палестина под турецким правительством, М., 1962.
19. Бартольд В. В.— Халиф и султан. Сочинения, т. VI, М., 1966.
20. Беляев Е. А.— Арабы, ислам и Арабский Халифат в раннее средневековье, М., 1966.
21. Большаков О. Г.— История Халифата. Ислам в Аравии (570—633), М., 1989.
22. Валерс Ж.— Крестьяне Сирии и Ливана, М., 1962.
23. Васильев А. М.— Пуритане ислама? М., 1967.
24. Гибб Х. А. Р.— Арабская литература, пер. с англ., М., 1960.
25. Иванов Н. А.— Османское завоевание арабских стран (1516—1574), М., 1984.
26. Колесников А. И.— Завоевание Ирана арабами (Иран при «справедливых халифах»), М., 1982.
27. Коран. Пер. и коммент. И. Ю. Крачковского, М., 1966.
28. Лазарев М. С.— Крушение турецкого господства на Арабском Востоке (1914—1918), М., 1960.
29. Левин З. И.— Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972.

30. Луцкий В. Б. — Новая история арабских стран, М., 1966
31. Массэ А. — Ислам. Очерки истории, пер. с франц., М., 1982.
32. Мец А. — Мусульманский Ренессанс, пер. с немец., М., 1966.
33. Микаелян Г. Г. — История армянского киликийского государства, Ереван, 1952.
34. «Объединенная Арабская Республика», М., 1968.
35. Оганесян Н. О. — Национально-освободительное движение в Ираке, Ереван, 1976.
36. Панова В. Ф., Вахтин Ю. Б. — Жизнь Мухаммеда, М., 1991.
37. Папченко М. Т. — Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860—1861 гг., М., 1966.
38. Пиотровский М. Б. — Коранические сказания, М., 1991.
39. Ротштейн Ф. А. — Захват и закабаление Египта, М., 1959.
40. Саид А. — Восстания арабов в XX в., М., 1964.
41. Семенова Л. А. — Из истории средневековой Сирии. Сельджукский период, М., 1990.
42. Семенова Л. А. — Из истории фатимидского Египта, М., 1974.
43. Смилянская И. М. — Крестьянское движение в Ливане в первой половине XIX в., М., 1965.
44. «Современная Сирия», М., 1974.
45. «Страны Аравии», М., 1964.
46. Тер-Гевондян А. Н. — Армения и Арабский Халифат, Е., 1977.
47. Тума Э. — Национально-освободительное движение и проблема Арабского Востока, М., 1977.

Գլուխ չորրորդ

ԹՈՒՐԶԻԱ

§ 1. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ

(18—19-ՐԴ ԴԴ.)

Թուրքական ցեղերի ներթափանցումը Անդրկովկաս և Փոքր Ասիա, Կոնիայի սելջուկյան սուլթանությունը:

Թուրքերի նախահայրենիքը կենտրոնական Ասիան է, որտեղ նրանք հիմնականում վարում էին բուլվորական կյանք և մերթ ընդ մերթ ասպատակում Չինաստանի հյու-

սխալին շրջանները և Միշին Ասիան, 9—10-րդ դարերում նրանք արդեն հիմնականում տեղափոխվել էին Միշին Ասիա, որտեղից էլ 10-րդ դարից սկսած սկսեցին հոծ զանգվածներով շարժվել դեպի Փոքր Ասիա։ Եվ այստեղ, Հայաստանից և Բյուզանդիայից գրաված տարածքներում, 11-րդ դարում հիմնվում է Բյուրքական առաջին՝ սելջուկների պետությունը։

Սելջուկյան թուրքերի առաջին արշավանքը Հայաստան տեղի ունեցավ 1015—1021 թթ. սուլթան Չաղրը Բեյի օրոք։ Սա ավելի շուտ հետախուղական նպատակներ հետապնդող մի արշավանք էր։

Վերջինս, շարժվելով Մավերանահրից, Խորասանի և Ատրպատականի վրայով, ներխուժեց Վասպուրական, ապա շարժվելով հյուսիս, ասպատակեց Նախիչևանը, և հարուստ ավարով ու բազմաթիվ ռազմագերիներով վերադարձավ Միշին Ասիա։

1028 թ. թուրքմենական Բալխան, Շրաք և Նավեբյեյե ցեղերը, հետապնդվելով Մեծ սելջուկների պետության առաջնորդ Մահմուդ Ղադենելիի և նրա որդու՝ Մենուզ Բեյի կողմից, շարժվեցին դեպի արևմուտք և կրկին Ատրպատականի վրայով մի շարք արշավանքներ կազմակերպեցին Բյուզանդիային ենթակա հայկական հողերի դեմ։ 1038—1043 թթ. նրանք ասպատակեցին Վասպուրականը, ավելի ուշ հարձակվեցին Բջին Բերդի վրա, ռակայն Բազրատունյաց թագավոր Գադիկը ջախջախեց նրանց։ Այնուհետև հարձակվելով շրջակա հայկական բնակավայրերի վրա, թուրքմենները մեծ քանակությամբ ավարով ու ռազմագերիներով վերադարձան Ռեյ։

1043 թ., երբ Մեծ սելջուկների պետության հիմնադիր սուլթան Թուղրուլը սկսեց իր արշավանքները դեպի Հայաստան և Փոքր Ասիա, բյուզանդական կայսր Վասիլ 2-ի հայահալած քաղաքականության և սահմանամերձ շրջանների հայ ազգաբնակչության տեղահանման հետևանքով սելջուկները համեմատաբար հեշտությամբ ներթափանցեցին երկրամաս։

Սելջուկյան նվաճումները իրականացվում էին երեք ուղղությամբ։ Զորավար Իբրահիմ Տրնալը Համադանի և Սպահանի վրայով շարժվելով հասավ մինչև Տիգրիս գետի ափերը։ Այդ նույն ժամանակ սուլթան Թուղրուլի որդիներից Փութավըջը Արաքսն անցնելով ներխուժեց Արևելյան Հայաստան և Վրաստան, իսկ արքայազներ Հասանը և Յակուսին, շարժվելով Կասպից ծովի արևմտյան ափերով, նվաճում էին Առանի առածը, որի ազգաբնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից

և վրացիներից, որոնց վրա իշխում էին Եիբլանշահերը և Շադդադյանները:

1043 թ. Բասենի դաշտավայրում Կապետրու (Հասանկալա) բերդի մոտ տեղի ունեցավ արյունալի ճակատամարտ Քութալմըշի և բյուզանդական զորքերի միջև, որն ավարտվեց բյուզանդացիների պարտությամբ:

1054 թ. սուլթան Թուղրուլը անձամբ գլխավորեց դեպի Հայաստան արշավող բանակը: Սա արդեն ավարտության նպատակ հետապնդող մի արշավանք չէր, այլ երկրամասի ծրագրավորված նվաճման սկիզբը: Սելջուկյան առաջապահ ջոկատները հյուսիսում հասան մինչև Տրապիզոն, իսկ արևմուտքում՝ Մելիտենն (Մալաթիա): 1059-ին նրանք գրավեցին հայաբնակ Սեբաստիան:

1063-ին Մեծ սելջուկների պետության սուլթան դարձավ Ալի Լևանդը: 1064-ին նա Ասորպատականի վրայով շարժվեց դեպի հյուսիս և անցնելով Արաքսը, մտավ Նախիջևան: Ապա առանց լուրջ դիմադրության հանդիպելու նա նվաճեց Լոռին, Քարթլին և Զափախքը, հետո վերադարձավ դեպի Արաքս և շրջապատեց Անին: Երկարատև պաշարումից հետո քաղաքը պաշտպանող Սմբատ Բագրատունին և վրաց իշխան Գեորգի Բակուրիանին ստիպված եղան բերդը հանձնել թըշնամուն: Լսելով Անիի անկման մասին, Կարսի Գագիկ թագավորը շապակեց իր հնազանդությունը հայտնել Ալի Լևանդին և այսպիսով, իր ենթակայության տակ գտնվող Կարսը, Անին և Լալը (Ալավերդին) փրկեց սելջուկյան նվաճումից:

Թափանցելով Փոքր Ասիա, սելջուկները կենտրոնական Անատոլիայում ստեղծեցին իրենց պետությունը՝ Կոնիա կենտրոնով, որը պատմության մեջ հայտնի է Կոնիայի կամ Իկոնիայի սուլթանություն անունով: Այն գոյատևեց մինչև 14-րդ դարի սկիզբը և մեծ դեր խաղաց Առաջավոր Ասիայի թրթաքման գործում:

Օսմանյան պետության ստեղծումը և նվաճողական պատերազմները: 1243 թ. մոնղոլական արշավանքի հետևանքով փոքրասիական սելջուկյան պետությունը քայքայվեց, և նրա նախկին տարածքում առաջացան մի շարք կիսաանկախ իշխանություններ՝ Բելլիքներ, որոնցից մեկին բախտ էր ընկնելու դառնալ ապագա Օսմանյան կայսրու-

Բյան կորիզը: Դա Անատոլիայի հյուսիս-արևմուտքում գրտնըվող Թուրքական մի փոքր իշխանություն էր՝ Սյուլյուք կենտրոնով, որի տիրակալը խորասանից այստեղ տեղափոխված Թուրքմենական ցեղերից մեկի առաջնորդ էր՝ Թուղրուլն էր: Հենց սրա որդու՝ Օսմանի օրոք սելջուկյան սուլթանությունը վերջնականապես կործանվեց, 1299 թ. Օսմանն իրեն հռչակեց անկախ սուլթան: Ըստ ավանդության, նորընծա պետությունը նրա անունով կոչվեց Օսմանյան պետություն, իսկ հպատակները՝ օսմանցիներ (օսմանլը):

Նրա հաջորդի՝ Օրհան բեյի օրոք (1326—1359) օսմանյան Բեյլիքն ընդարձակեց իր սահմանները դեպի արևմուտք: 1326 թ. Օրհանը բյուզանդացիներից նվաճեց Բրուսան և այնտեղ հիմնեց իր մայրաքաղաքը:

1330 թ. նրա զորքերը գրավեցին Նիկեան, 1337-ին՝ Նիկոմեդիան, իսկ 1352-ին անցան Դարդանեկի նեղուցը և հայտնվեցին Եվրոպայում:

Օրհանի որդին՝ Մուրադ 1-ը արգեն իրեն պաշտոնապես սուլթան (թագավոր) հռչակեց: Նրա իշխանության օրոք (1359—1389) օսմանցիները շարունակեցին նվաճողական պատերազմները քե՛ր արևելքում, քե՛ր արևմուտքում, Փոքր Ասիայում նրանք իրենց ենթարկեցին անատոլիական բնիկների մի մասը, իսկ Եվրոպայում՝ Բալկանյան թերակղզին, 1365 թ. Մուրադ 1-ը իր մայրաքաղաքը տեղափոխեց Ադրիանապոլիս (Եդիրնե), ապա գրավեց բուլղարական և սերբական մի շարք քաղաքներ: 1389 թ.՝ Կոսովոյի ճակատամարտում սերբ Միլոշը սպանեց սուլթան Մուրադ 1-ին:

Սուլթան Բայազիդ 1-ի օրոք (1389—1402) Թուրքական նվաճումները Բալկաններում շարունակվեցին: Թուրքական լծի տակ ընկան ամբողջ Բուլղարիան, Վալախիան (ներկայիս Ռումինիան), Թեսալիան և լիակատար շրջափակման մեջ ընկավ Բյուզանդիայի վերջին հենակետը՝ Կոստանդնուպոլիսը:

Պոլսի գրավումը և դրա համալրարհային հետևանքները: 15-րդ դարի սկզբին Թուրքերի հաղթարշավը ընդհատվեց մոնղոլական բռնակալ Թեմուրի կամ Լանկ Թեմուրի (կաղ Թեմուր) արշավանքի հետևանքով: Վերջինս 1402 թ. չախչախեց օսմանյան բանակը Անգորայի (ներկայիս Անկարայի) մոտ, գերի վերցրեց սուլթան Բայազիդին, ապա վերադարձավ Միջին Ասիա: Քայքայված Թուրքական պե-

սուբյուներ վերամիավորվեց և հասավ նախկին հաղորդյան միայն սուլթան Մուրադ 2-ի (1421—1451) և նրա որդու՝ Մեհմեդ 2-ի օրոք (1451—1481)։

1453 թ. զարնանը վերջինս երկու հարյուր հազարանոց բանակով ցամաքից և ծովից շրջապատեց Կ. Պոլիսը և մայիսի 29-ին գրոհով գրավեց այն։ Այս հաղթանակի համար նա ստացավ «Փաթիհ» (նվաճող) մականունը։ Այսպիսով, դադարեց գոյություն ունենալուց Բյուզանդական կայսրությունը։ Դա վճռական նշանակություն ունեցավ թե՛ Արևելյան Նվրոպայի, թե՛ Մերձավոր Արևելքի երկրների հետագա ճակատագրի համար։ Կ. Պոլիսը խոշորագույն առևտրական կենտրոն էր և գտնվում էր ցամաքային և ծովային հաղորդակցման ուղիների կենտրոնում։ Բացի այդ, նա ուներ հսկայական ռազմավարական նշանակություն։ Բյուզանդական կայսրության կործանման հետ վերանում էր նաև վերջին քրիստոնյա պետությունը ասիական մայրցամաքում, իսկ պետականությունը կորցրած հայ ժողովուրդը կտրվում էր քրիստոնյա աշխարհից և վերածվում քրիստոնեության մի կղզյակի իսլամի ծովի մեջ։ Այսուհետ Նվրոպայի ճանապարհը բաց էր թուրքերի համար։

Մեհմեդ 2-ի ղեկավարած օսմանյան բանակները նվաճեցին Աթենքի դքսությունը (1458), իրենց ենթարկեցին Սերբիան (1459) և Մորեան (1460), վերջ տվեցին Սև ծովի ափերին իր գոյությունը պահպանած հունական Տրապիզոնյան կայսրությանը (1461)։ 1475 թ. թուրքական սուլթանի ղերիշխանությունը տարածվեց Ղրիմի վրա։ Վալախիան և Մոլդովան նույնպես ընկան թուրքական լծի տակ։ Թուրքական սպառնալիքը անմիջականորեն կախվեց Իտալիայի վրա։

Մեհմեդ 2-ի օրոք թուրքերը վերջ տվեցին նաև Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող Ադ-կոյունլուներին (բառացիորեն՝ սալտակ ուխտարների) և Կիլիկիայում իշխող Կարաման-օղլուների թուրքմենական իշխանություններին և վերջնականապես տիրելով ամբողջ Փոքր Ասիային, անմիջական սահմանակից դարձան Պարսկաստանին։ Այսպիսով, օսմանցիների պետությունը վերածվեց մի հսկայական

բաղմաղդ կայսրութեան, որի սահմանները արեւելքում հասնում էին Պարսկաստան, արեւմուտքում՝ կենտրոնական Եվրոպա, հյուսիսում՝ հարավային ռուսական տափաստանները, իսկ հարավում՝ արաբական երկրները:

Օսմանյան կայսրությունը իր հզորության գագաթնակետին (16—17-րդ դդ.): 16-րդ դարը համարվում է Օսմանյան կայսրության հզորության գագաթնակետը: Սուլթան Սելիմ I Յավուզը (Ահեղ) (1514—1520) մի շարք հաջող արշավանքներ կատարեց արեւելքում, Հասնելով պարսկական սահմանները, նա շարժվեց դեպի հարավ և կարճ ժամանակում կայսրութեանը միացրեց Մոսուլը, Սիրիան, Պաղեստինը և ապա՝ մամլուքների իշխանության տակ գտնվող Եգիպտոսը (1517): Նվաճելով այն՝ սուլթանը ստանձնեց մուսուլմանական աշխարհի հոգևոր առաջնորդի՝ խալիֆի տիտղոսը: Այսուհետ թուրքական սուլթանները վերածվեցին ողջ մուսուլմանական աշխարհի հոգևոր առաջնորդի:

Հաջորդ սուլթանի՝ Սուլեյման 1-ի օրոք (1520—1566), որը հայտնի է Կանունի (Օրենսդիր) մականունով, շարունակվեցին նվաճումները թե՛ արեւելքում, թե՛ արեւմուտքում: 1526 թ. Մոհաչի դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտից հետո թուրքերի տիրապետության տակ ընկավ նախ հարավային, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև կենտրոնական Հունգարիան: 1529 թ. նրանք առաջին անգամ շրջապատեցին Վիեննան, բայց նվաճել չկարողացան: Վիեննան դարձավ այն անառիկ ամրոցը, որը կանգնեցրեց թուրքերի հաղթարշավը Եվրոպայում:

Սուլեյման Կանունիի օրոք օսմանցիները նվաճեցին նաև Հռոդոսը և էգեյան ու Հոնական ծովերի համարյա բոլոր կղզիները, իսկ 1534-ին՝ Բելգրադը: Աֆրիկայում սուլթանի ենթակայության տակ անցան Տրիպոլին և Ալժիրը:

Միաժամանակ շարունակվում էին նվաճողական պատերազմները արեւելքում: 1534 թ. Սուլեյման 1-ի զորքերը Ներխուժեցին Միջագետք, նվաճելով Բաղդադը, Քերբելան և Նաջաֆը, իսկ 1546-ին հասան մինչև Եմեն, ավարտելով Արաբական թերակղզու նվաճումը: 1555 թ. Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև կնքվեց հաշտության պայ-

մանադիր, որի համաձայն Արևմտյան Հայաստանն ու Վրաստանի մի մասը անցան Թուրքիային:

Թուրք-իրանական պատերազմները (16—17-րդ դդ. առաջին կես): Սկսած 16-րդ դ. առաջին տասնամյակներից մինչև 17-րդ դ. 30-ական թթ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև անհաշտ պայքար էր ծավալվել Արևմտյան Հայաստանին, Անդրկովկասին ու Միջագետքին տիրանալու համար: Ռազմական գործողությունները ընդհատումներով շարունակվեցին մոտ մեկուկես դար: Այս ընթացքում կողմերը փոփոխական հաջողություններով իրարից խլում էին նշված տարածքները: Այսպես, Վրաստանը, Արևելյան Հայաստանն ու Ատրպատականը՝ Թավրիզ կենտրոնով մի քանի անգամ անցան Թուրքերի ձեռքը, բայց նրանք այս տարածքներում ամրանալ չկարողացան: Թուրք-իրանական պատերազմները հատկապես աղետալի հետևանքներ ունեցան հայ աղգաբնակչության համար, որի հայրենիքում էին հիմնականում տեղի ունենում ռազմական գործողությունները: Ելնելով ռազմավարական նկատառումներից, մերթ Թուրքերը, մերթ իրանցիները ամայացնում էին հայկական բնակավայրերը և բռնի տեղահանության ենթարկում բնակչությանը: Կողմերից յուրաքանչյուրը աշխատում էր իր կողմը գրավել մահմեդական քրդերին՝ նրանց ռազմական ուժն օգտագործելու համար: Հենց այս շրջանում էլ Թուրքական սուլթանների նախաձեռնությամբ սկսվեց քրդերի զանդվածային ներթափանցումը Արևմտյան Հայաստան, հատկապես բռնագաղթների հետևանքով ամայացած գավառները: Այս կանխամտածված քաղաքականությունը հանգեցրեց Արևմտյան Հայաստանի էթնիկական կազմի զգալի փոփոխմանը:

Թուրք-իրանական պատերազմները ավարտվեցին 1639 թ. Կասր շիրինի պայմանագրով, որի համաձայն Թուրք-իրանական սահմանը ստացավ մոտավորապես այն տեսքը, ինչ գոյություն ունի այսօր: Ամբողջ Արևմտյան Հայաստանը, Արևմտյան Վրաստանի մի մասը և հյուսիսային Միջագետքը անցան Թուրքիային, իսկ Անդրկովկասը՝ Արևելյան Հայաստանով մնաց Իրանի կազմում:

Սոցիալական հակասությունների սրումը, ջալադիների շարժումը և կայսրության ճգնաժամի սկիզբը: Ինչո՞ւ էն բացատրվում թուրքերի համեմատաբար հեշտ հաջողությունները և այն, որ նրանց հաջողվեց կարճ ժամանակամիջոցում ստեղծել մի աշխարհակալական կայսրություն երեք մայրցամաքների վրա: Առաջին պատճառը ռազմական թույլ դիմագրությունն էր, որի հիմնական մեղքը ընկնում է անհեռատես քաղաքականություն վարող բյուզանդական արքայի վրա: Նրա վարած հայահալած քաղաքականության և հայ նախարարաց տների ու եկեղեցու նկատմամբ կիրառած բռնությունների հետևանքով կայսրության արևելյան սահմանները փաստորեն անպաշտպան էին մնացել: Քիչ զեր շխաղացին նաև հակասությունները եվրոպական պետությունների միջև:

Այդուհանդերձ, թուրքերի հաջողության հիմնական գաղտնիքը նրանց ռազմական հզորության մեջ էր: Թե՛ սելջուկների, թե՛ օսմանցիների ստեղծած ռազմաֆեոդալական համակարգը ավելի կենսունակ էր, քան ֆեոդալական երկպառակությունների հետևանքով թուլացած և տրոհված եվրոպական պետությունները և Բյուզանդական կայսրությունը: Տափաստանային «դեմոկրատիայի» ավանդույթները ժառանգած թուրքական հասարակարգը ստեղծվել և ապրում էր միայն հողային նոր ձեռքբերումների, նվաճված տարածքների թալանի և կողոպուտի հաշվին: Քանի դեռ արտաքին նվաճումները շարունակվում էին, կենսունակ էր նաև օսմանյան համակարգը: Այդ ռազմական հզորության կորիզը կազմում էին հպատակ քրիստոնյա ազգաբնակչության երեխաների բռնի մահմեդականացման միջոցով ստեղծված ենիշերիների զորագունդը, թեթև և շարժունակ հծեւլազորը՝ սիփահիները, և արշավանքների ժամանակ բանակին հետևող անկանոն աշխարհազորը:

16-րդ դ. վերջից, երբ դադարեցին արտաքին նվաճումները և, բնականաբար, սահմանափակվեցին ավարի և կողոպուտի միջոցով հարստանալու հնարավորությունները, օսմանյան կայսրության իշխող վերնախավը իր ուշադրությունն ուղղեց երկրի ներսը: Այդ պահից սկսած կարևոր

նշանակութիւնն է ստանում հողի տնտեսական շահագործումը և ակտիվ պայքար է ծավալվում մայրաքաղաքի փաշաների և մինչ այդ գավառներում հողի փաստական տիրակալը հանդիսացող սիփահիներին միջև: Օգտագործելով նաև ժողովրդական զանգվածների դժգոհութիւնը, գավառական ավագանուն հաշտվում է կառավարութիւնն դեմ հանել ապստամբների հոծ բանակներ: Կազմված լինելով հիմնականում ապադասակարգայնացած տարրերից, շատ շուտով այս խմբերը վերածվում են բացահայտ թալանով և ավարառութիւնով զբաղվող ավագակախմբերի և պատուհաս են դառնում հատկապես հայ ազգաբնակչութիւնն գլխին: 16-րդ դ. վերջին ծագած և մի քանի տասնամյակ տևած այս շարժումը, շարժման գլխավորողներից մեկի անունով պատմութիւնն մեջ մտավ որպէս Շալալիների շարժում: Այն, ի վերջո, դաժանորեն ճնշվեց, սակայն ցույց տվեց, որ նախկին ռազմաֆեոդալական համակարգն իրեն արդեն սպառել է, և կայսրութիւնը գոյատևելու համար կարիք է զգում արմատական բարենորոգումների:

Օսմանյան կայսրւոյան քայքայման սկիզբը և առաջին ռուս-թուրքական պատերազմները, Առաջին անգամ թուրքերը ընդհարվեցին ռուսական բանակի հետ 1569 թ., երբ թուրք-թաթարական միացյալ զորքերը հյուսիսային Կովկասի վրայով արշավեցին Աստրախան, սակայն Աստրախանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսները տոնեցին հաղթանակը թուրքերի նկատմամբ:

Հետագա հարյուրամյակի ընթացքում ռուս-թուրքական հարարերութիւնները համեմատաբար խաղաղ էին և սահմանափակվում էին դեպքայինութիւնների փոխանակումով: Սակայն ռուսական արքունիքի դեպի հարավային տարածքներ ձգտումը դեմ էր առնում թուրքերի և նրանց դաշնակից Ղրիմի թաթարների դիմադրութիւնը և ի վերջո այդ առճակատումը բերելու էր արյունալի ընդհարումների:

17-րդ դ. վերջերին եվրոպայում միացյալ ճակատ ստեղծվեց թուրքերի դեմ, «Սրբազան դաշինք» անունը ստացած այս ճակատի մեջ մտան Ավստրիան, Հնչաստանն ու Վենետիկը, իսկ հետագայում նրանց միացավ նաև Ռուսաստանը: Այն մի շարք ճակատամարտերում պարտութիւն մատնեց թուրքական բանակին: 1696 թ. Պետրոս 1-ը գրավեց Ազովը, սկիզբ դնելով ռուսական նվաճումներին Սև ծովի առափնյա շրջաններում: 1699 թ. Կարլովիցում և 1700 թ. Կ. Պոլսում կնքվեցին երկու հաշտութիւն պայմանագրեր, որոնք փաստորեն սկիզբ դրեցին Օսմանյան կայսրութիւն տարածքների բաժանմանը: Հունգարիան և Տրանսիլվանիան անցան Ավստ-

րիային, Ալեքսիեյա Ուկրաինայի հարավային մասը՝ Լեհաստանին, Մորեան և Դալմացիայի մի շարք ամրոցներ՝ Վենետիկին, Ազովը՝ Ռուսաստանին։

18-րդ դ. սկզբին Պրուսի ճակատամարտում թուրքերը պարտության մատնեցին Պետրոս 1-ին և ետ խլեցին Ազովը, սակայն արգեն 1735--1739 թթ. Ավստրիայի և Ռուսաստանի դեմ մղած պատերազմում թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին և 1739 թ. Բելգրադի հաշտության պայմանագրով վերջնականապես կորցրին Ազովը։

Ուկրալայում թուրքերի գերիշխանությանը ամենալուրջ հարվածը հասցրեց 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի ընթացքում ռուսական զորքերը Սովորոկի գլխավորությամբ մի շարք փայլուն հաղթանակներ տարան։ 1770-ին ռուսական նավատորմը մտավ Միշերկրական ծով և Չեսմայի ծովածոցում կործանեց թուրքական ծովային ուժերը։ 1774-ին կնքված Քյուլուք-կայնարչիի հաշտության պայմանագիրը փաստորեն անդամահատեց Օսմանյան կայսրությունը։ Ղրիմը թուրքիայից տնկախ հռչակվեց և շուտ լանցած՝ 1783-ին, Նկատերինա Զ-ը այն միացրեց Ռուսաստանին։ Սև ծովը և նեղուցները բացվեցին ռուսական առևտրական նավատորմի առաջ։ Ռուսաստանը դարձավ Մոլդովայի և Վալախիայի իշխանների, ինչպես նաև թուրքիայի ուղղափառ աղգարնակչության հովանավորը։ Այսուհետև եվրոպական դիվանագիտության օրակարգի գլխավոր հարցն է դառնում թուրքական ժառանգության բաժանումը, որը ծնունդ տվեց հայտնի Արևելյան հարցին։

1787 թ. հակառուսական կոալիցիա ստեղծելու ձգտող Անգլիայի ղեկգնացած թուրքիան նորից պատերազմի մեջ ներգաղթեց Ռուսաստանի դեմ։ Ետևով Ավստրիան միացավ Ռուսաստանին։ 1792 թ. Ցասսիի հաշտության պայմանագրով թուրքիան կորցրեց Բուդի և Դնեստրի միջև ընկած հողերը և ճանաչեց Ղրիմի միացումը Ռուսաստանին։

Օսմանյան կայսրությանը նոր ջրբանույժ։ 1789 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը և նրան հաջորդած դեպքերը Ուկրալայում առժամանակ շեղեցին մեծ տերությունների ուշադրությունը թուրքիայից։ 19-րդ դ. սկիզբը նշանավորվեց կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ուժեղացմամբ։ Դարասկզբին հուժկու ապստամբություն ծագեց Սերբիայում, որը դաժանորեն ճնշվեց։ 20-ական թթ. ապստամբության դրոշ բարձրացրին հուլիները, որոնք եվրոպական դիվանագիտության միջամտության շնորհիվ նախապես ինքնավարություն, իսկ 1830-ին՝ անկախություն։ Պարբերական ապստամբությունների ալիքը սկսեց ընցել ամբողջ բալկանները։ Այս շարժմանը օրենկտիվորեն նպաստում էր Ռուսաստանի վարած ժողովրդապաշտական քաղաքականությունը, որն ամեն կերպ աջակցում էր հատկապես թուրքական ելույթներին։

Մասամբ այս աշակցության, մասամբ էլ ֆրանսիական դիվանագիտության դրդմամբ, Օսմանյան կայսրությունը 1806 թ. նոր պատերազմ հայտարարեց Ռուսաստանին ու Անգլիային։ Անգլիայի հետ մարտերը կրում էին պասսիվ բնույթ և նեղություն լպատճառեցին թուրքերին։ Ընդ-

Հակառակը, ռուսական ճակատում թուրքերի կորուստները հակառակն էին: 1812 թ. կնքված Բուխարեստի հաշտության պայմանագրով ռուս-թուրքական սահմանը արդեն անցնում էր Պրուտ գետով: Թուրքիան ստիպված եղավ ճանաչել Ռուսաստանի հովանավորության իրավունքը մերձդանուբյան իշխանությունների վրա և ինքնավարություն խոստացավ սերբերին, որոնք իրենց հայրենիքը լիովին մաքրել էին թուրքերից: Սակայն նապոլեոնի արշավանքի ժամանակ Ռուսաստանի անկլ վիճակից օգտվող թուրքերը վերագրավեցին Սերբիան և դաժան հաշվհարդար տեսան սպառնալիքների հետ:

Թուրքերի համար ավելի ազնալի հետևանքներ ունեցավ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ռուսական զորքերը Եվրոպայում հասան մինչև Ադրիանապոլիս, իսկ Ասիական մասում՝ մինչև Էրզրում: 1829 թ. սեպտեմբերի 14-ին Ադրիանապոլսում կնքվեց հաշտության պայմանագիր, որը ամրացնում էր Ռուսաստանի դիրքերը Սև ծովում և Բալկաններում, Սերբիային շնորհում ինքնավարություն, Մոլդովային և Վալախիային ավելի մոտեցնում աղատությանը, իսկ Հունաստանին պարգևում նախ ինքնավարություն, ապա նաև՝ անկախություն:

Ղրիմի պատերազմը (1853—1856 թթ.): 19-րդ դ. կեսերին Օսմանյան կայսրությունը վաղուց արդեն կորցրել էր իր երբեմնի հզորությունը և զերմարդկային ճիգեր էր թափում համընդհանուր ճգնաժամից դուրս դալու և գիվանդիտական խաղերի օգնությամբ իր գոյությունը երկարանդու համար: 1848 թ. հեղափոխությունները տակնուվրա էին արել եվրոպան և հերթական անգամ շեղել մեծ տերությունների ուշադրությունը Արևելյան հարցից: Առիթից փորձեց օգտվել Ռուսաստանը: Օգտվելով այն հանգամանքից, որ սուլթանը հրամարվեց ճանաչել ռուսական ցարի հովանավորությունը «Սրբազան վայրերի» (Նրուսաղեմի) և կայսրության ուղղափառ հպատակների վրա, 1853 թ. աշնանը ռուսական զորքը ներխուժեց Մոլդովա և Վալախիա, իսկ ծովակալ Նախիմովը Սինոպի նավահանգստում ոչնչացրեց թուրքական նավատորմը: Սակայն գործին միշտ մոտեցին Ֆրանսիան և Անգլիան, որոնք Թուրքիայի կողմում պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին:

1854-ի աշնանը ռուսական զորքը թողնեց մերձդանուբյան իշխանությունները, և բաշմական գործողությունները տեղափոխվեցին Ղրիմ: 1855 թ. մարտի 30-ին Ռուսաստանը ստիպված եղավ ստորագրել Փարիզի հաշտության պայմանագիրը: Այս պայմանագրով Ռուսաստանը կորցրեց հարավային Բևսարաբիան, զրկվեց Սև ծովում ռազմական նավատուրմ և ամրոցներ ունենալու իրավունքից, իսկ Օսմանյան կայսրության տարածքային ամրոցչությունը միջազգային երաշխիք ստացավ: 1859—1861 թթ. Բևսարական, Բևսարական «հովանավորությունից» աշտոված Մեղդովան և Վալախիան միանալով ստեղծեցին մի նոր պետություն՝ Ռումինիան, իսկ 1867-ին Սերբիայի տարածքից հեռացավ վերջին թուրքական կայսրորդը:

Առաջին բարեփոխարյունների փորձերը: Ինքնակաշնորհ անվանվող անհաջողությունները բոլոր ճակատներում, ազգային ազատագրական շարժումների հզորացումը երկրի ներսում և համընդհանուր դժգոհությունը գոյություն ունեցող կարգերից ստիպեցին թուրքական իշխող վերնախավին դրույթունը փրկել որոշ զիջումների միջոցով: Բարեփոխությունների առաջին փորձերը կապված են սուլթան Սելիմ 3-ի անվան հետ (1789—1807): Դրանք հիմնականում նպատակ էին հետապնդում ստեղծել եվրոպական տիպի բանակ, վերականգնել թիմարային համակարգի նախկին հզորությունը, կարգավորել հարկային համակարգը և այլն: Սակայն այս քաղաքականությունը հանդիպեց հետադիմական ուժերի, հատկապես կղերականության և ենիլչերիների հուժեղ դիմադրությանը, 1807 թ. պալատական հեղաշրջման հետևանքով սուլթան Սելիմը և նրա ակտիվ գործակից Մուստաֆա փաշա Բայրակզարը, որը զբաղեցնում էր մեծ վեզիրի պաշտոնը, խեղդամահ արվեցին: Գահ բարձրացավ զեռաթի սուլթան Մահմուդ Երկրորդը (1808—1839): Զգալով իր նախորդի սխալը, նա որոշեց զնալ այլ ճանապարհով: Մահմուդ 2-ի իշխանության առաջին տասնամյակները նշանավորվեցին կենտրոնախույս ֆեոդալների և ազգային-ազատագրական շարժումների դեմ մղած անհաշտ պայքարով, պայքար, որի վերջնական նպատակը իշխանության խիստ կենտրոնացումն էր: Մինչև 1822 թ. նրան հաջողվեց ունեցնել ինքնիշխանության ձգտող զերերենիների մեծ մասը և համեմատաբար կայունացնել ներքաղաքական դրույթունը: 1826 թ. նրա կարգադրությամբ Կ. Պոլսում ֆիզիկապես ունչացվեց ենիլչերիների կորպուսը և եվրոպական տիպի բանակի հիմքը դրվեց: 30-ական թթ. նորից նրա կարգադրությամբ թուրքական կանոնավոր բանակը արշավանք սկսեց Արևմտյան Հայաստանում և Հյուսիսային Միջագետքում բարեփոխությունների դեմ ըմբոստացած քուրդ զերերենիների դեմ և վերջ տվեց քրդական կիսաանկախ իշխանություններին:

1831 թ. սուլթանի վարած կենտրոնացման քաղաքականության դեմ ըմբոստացավ Եգիպտոսի Մեհմեդ Ալի փաշան, որի որդու՝ Իբրահիմ փաշայի գլխավորած բանակը անցավ Տափրուսյան լեռները, կենտրոնական Անատոլիայում ջախջախեց թուրքական բանակը և ընդհուպ մոտեցավ Ստամբուլին: Ընկալապես բերումով թուրքական դահլիճ վերջնական կործանումից փրկեցին ռուսական սվինները: Սուլթանի խեղդանքով Մարմարա ծովի հարավային ափ դուրս եկած ռուսական դուռը կանգնեցրեց Իբրահիմ փաշայի առաջնադասումը, և զինադադար կնքվեց: Թուրքական պալատին հաջողվեց հնազանդեցնել ըմբոստ փաշային միայն 10 տարի անց՝ 1841 թ., այն էլ անզլիական և ռուսական սվինների օգնությամբ:

Թանգիմարյան բարեփոխարյունները և դրանց հետևանքները: (1839—1876 թթ.): 1839 թ. նոյեմբերի 3-ին դահ բարձրացած Աբդուլ Մեջիդը հրապարակեց մի ֆերման (հրովարտակ), որով սկիզբ էր դրվում օսմանյան հասարակության վերակառուցմանը, Հրովարտակը բաղկացած էր երեք հիմնական կետերից. 1) ապահովել կայսրության բոլոր հպա-

տակները կշանքի, սյառվի և դուշի անձնամխելութունը՝ անկախ ազգութունից և կրոնական պատկանելութունից, 2) հարկերի բաշխման և դանձման կարգավորում, պետական եկամուտների դանձման իրավունքի աճուրդով վաճառման վերացում, 3) զինակոշիկ կարգավորում և զինվորական ծառայության որոշակի ժամկետի սահմանում (մինչ այդ նման ժամկետ չկար):

Վերացվում էին բոլոր նախկին ֆեոդալական ինստիտուտները, հուշ պետական սեփականությունը իր տեղը զիջում էր մասնավորին, ստեղծվում էին կառավարման ներկայացուցչական (Ֆեկուլդ և ձևական) կառույցներ և այլն:

Սակայն բարենորոգումները հենց սկզբից հանդիպեցին թե՛ իշխող խավերի, թե՛ մահմեդական բնակչության դժգոհությանը, քանի որ առաջիններից զրկում էր նախկին արտոնություններից, իսկ երկրորդներին՝ քրիստոնյաների նկատմամբ ունեցած առավելություններից: Ամենահումկու գիմադրություն նոր քաղաքականությանը ցուցաբերեցին քուրդ ֆեոդալները, որոնք զրկվում էին հայ ազգաբնակչությանը կեղեքելու և կոդալալու իրավունքից: 1843 և 1846 թթ. պատրվակ բռնելով, որ Թիարի և Թխոմի գավառների ասորիները հրաժարվեցին միանալ իրեն, քրդական զորքը համարյա բնաջնջեց այդ շրջանների ասորիներին: Միայն Եվրոպայի ճնշման տակ սուլթանը ղազարեց կոդմակի գիտորդի դերում հանդես գալուց և պատմիչ շոկատներ ուղարկեց քրդերի դեմ, որոնք ոչ միայն ջախջախեցին ապստամբներին, այլև քաղութայնդ արեցին շատ քրդական գյուղեր և տեղահանեցին բնակչությանը:

1839—1856 թթ. բարեփոխությունների նախաձեռնողը թուրքական վերնախավն էր: Ի տարբերություն դրան, Փարիզի 1856 թ. հաշտության պայմանագրից հետո, հուլակված թանդիմաբլան երկրորդ հրովարտակի նախաձեռնողը Եվրոպան էր, և այն հիմնականում վերաբերում էր ազգային փոքրամասնությունների իրավունքներին: Ոչ թուրք ժողովուրդների օրինական իրավունքները պաշտպանելու պատրվակով կայսրության ներքին գործերին միջամտելու իրավունք ձեռք բերած Մեծ տերությունները խիստ սրեցին ազգամիջյան թշնամությունը երկրի ներսում: Հանդես գալով կայսրության ամբողջականության պահպանման օգտին, նրանք միաժամանակ բարձրացնում էին հպատակ ժողովուրդների իրավունքների հարցը, զրանով իսկ ուժեղացնում ազգամիջյան լարվածությունը: Այդ խոչ պոտեռառով հենց արտաքին ճնշումը թուլանում էր, թուրքական կառավարությունը շարունակում էր հալածանքները քրիստոնյա ազգաբնակչության դեմ: Երբ 1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում ձևականորեն սահմանադրություն հռչակվեց, իսկ մեծ տերությունները կորցրին իրենց հետաքրքրությունը կայսրության քրիստոնյա հպատակների նկատմամբ, թուրքական կառավարությունը վերջնականապես հրաժարվեց թանդիմաբլան քաղաքականությունից և որոշեց լուծել ազգային հարցը բռնի ուժի միջոցով:

Սահմանադրական շարժումը Թուրքիայում: Սահմանադրական շարժումը Թուրքիայում սկիզբ առավ 1860-ական թվականներին:

1865 թ. հունիսին կայսրության մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում, հիմնվեց «Նոր օսմանների ընկերությունը», ընդհատակյա մի կազմակերպություն, որն իր շարքերում ուներ մոտ 250 անդամ, բաժանված յուրաքանչյուրը յոթ հոգուց բաղկացած մանր խմբերի: Հիշյալ ընկերության ղեկավարներն ու գաղափարախոսները թուրք երիտասարդ մտավորականության ներկայացուցիչներ էին (գրողներ Նամըք Քեմալը, Իբրահիմ Շինասին, հրապարակախոսներ Ջիյա-բեյը, Ալի Սուլավին և այլն), իսկ նրա կազմում ընդգրկված էին մի շարք խոշոր քաղաքական ու զինվորական պաշտոնյաներ, այդ թվում՝ թուրքական առաջին սահմանադրության «հայր» Ահմեդ Միդհատ փաշան: Հիշյալ ընկերությունը նպատակ էր դնում, քննադատելով կառավարությանը թանգրիմյան բարեփոխությունների ձախողման համար, հասնել դրանց կիրառմանը կյանքում: Սակայն, մի քանի տարի անց, 1867 թ. զարնանը «Նոր օսմանների» ղեկավարները, հալածվելով իշխանությունների կողմից, ստիպված էին հեռանալ երկրից և իրենց գործունեությունը ծավալել Նվրոպայում, հրատարակելով թերթեր Լոնդոնում ու Ժնևում, որոնցից մեկը՝ «Հյուրերիքը» («Ազատություն») դարձավ «Նոր օսմանների ընկերության» պաշտոնաթերթը: Թերթը պրոպագանդում էր Օսմանյան կայսրությունը սահմանադրական միապետության վերածելու գաղափարը, հանդես գալիս պատգամավորների պալատի հրավիրման պահանջով, «Նոր օսմանները» գտնում էին, որ ազատամիտ սահմանադրական գաղափարները կարելի է համատեղել Ղուրանի ու շարիաթի նորմերի հետ, մի բան, որը հիմք հանդիսացավ համախաղամականության (պանիսլամիզմի) գաղափարախոսության: Այդ գաղափարները տարածելու բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1875—76 թթ., երբ կայսրությունում սրվեց տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, բռնկվեցին հակաթուրքական դուռապաշտական ապստամբություններ Բոսնիայում և Հերցեգովինայում ու նոր հուժկու ապստամբություն Բուլղարիայում:

Արևելյան ճգնաժամի սրումը: Կայսրության կեղեքված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքը և մեծ տեքությունների բացահայտ շմիջամտության սպառնալիքը սահմանադրության կողմնակիցներին մղեցին առավել վճռական քայլերի, որոնք պատկվեցին սուլթան Աբդուլ Ազիզի գահազրկումով 1876 թ. մայիսի 30-ին: Նրան փոխարինած Մուրադ 5-ը, սակայն, հրաժարվեց հուլիսի սահմանադրություն՝ բավարարվելով արստրյալ «Նոր օսմաններին» ներում շնորհելով: Միևնույն ժամանակ դրությունը լրջանում էր: Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ էին հայտարարել Թուրքիային: Բուլղար ժողովուրդը, շնայած 1875 թ. հերոսական ապստամբության պարտությանը, շարունակում էր իր պայքարը: Ահա այս լարված իրադրության մեջ հիվանդ սուլթան Մուրադ 5-ին

փոխարինեց նենդ ու դաժան Արդուլ Համիդ 2-րդը, որը ներքուստ դեմ լինելով սահմանադրական շարժմանը, ստիպված էր համաձայնվել Սահմանադրության հռչակմանը՝ 1876 թ. դեկտեմբերի 23-ին ընդունված օսմանյան առաջին սահմանադրությունը թեև անշտան շափով էր սահմանափակում սուլթանի իշխանությունը, այնուհանդերձ, պառլամենտական միապետության վարչակարգը խոշոր մի քայլ էր նրկրի առաջագիմություն ճանապարհին: Եվ պատահական չէր, որ սահմանադրության հեղինակը՝ Միդհատ փաշան, խոստագույնս պատմվեց, աքսորվեց և խեղդամահ արվեց սուլթանի մարդկանց ձեռքով: Սուլթանը 1878 թ. փետրվարին ցրեց օսմանյան պառլամենտը անորոշ ժամանակով, վերստին ամբաստնելով իր միահեծան և արյունոտ տիրապետությունը: Արդուլ Համիդի այս քայլին նպաստեց նաև ստեղծված պատերազմական իրավիճակը: Արևելյան ճգնաժամը հանգեցրեց պատերազմի ցարական Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Ռազմական գործողությունները ծավալվում էին Բալկանյան և Կովկասյան ճակատներում: Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը ապրիլի 12-ին անցնում են հարձակման նրեք ուղղությամբ՝ Ալեքսանդրապոլ—Կարս, Իզդիր—Բայազետ և Ախալցխա—Արդահան, Կովկասյան 60 հազարանոց կորպուսը, որի հրամանատարն էր հայազգի գեներալ Լորիս—Մելիքովը, գլխավոր հարվածը հասցնելու էր կենտրոնից՝ Ալեքսանդրապոլ—Կարս ուղղությամբ: Գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ գործող Երևանյան ջոկատը շարժվելու էր ձախ թևով՝ դեպի Ալաշկերտի հովիտը, իսկ գեներալ Դենիլ ջոկատը Ախալքալաք—Արդահան ղծով: Ապրիլի 27-ին Երևանյան ջոկատը հայ աշխարհազորայինների հետ միասին Իզդիրից շարժվում է դեպի Բայազետ և գրավում քաղաքը, իսկ Երկու հարվածային ջոկատներ հայ կամավորների հետ միասին մտնում են Կազվիան՝ աղ ու հացով դիմավորվելով տեղի հայ բնակչության կողմից: 1877 թ. աշնանը նոր թափով ծավալված կոնիկների ընթացքում ռուսական զորքերը գեներալ Հովհաննես Լազարևի ղեկավարությամբ Ելմբերի 18-ին գրավեցին 30 հազարանոց կայազոր և 300 հրանոթ ունեցող Կարսի բերդը, իսկ 1878 թ. հունվարին կնքված զինադադարից հետո՝ փետրվարի 20-ին ռուսական զորքերին անցավ էրզրումը (Կարին): Բալկաններում ռուսական զորքերն անցան Դանուբ գետը, մտան Բուլղարիա և հունիսին գրավեցին Շիպկայի լեռնանցքը, իսկ դեկտեմբերի 10-ին՝ Պլինան: Այս հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ հետագա ռազմական գործողությունների ընթացքի վրա: 1878 թ. հունվարի 4-ին ռուսական զորքերը գրավեցին Սոֆիան, ապա՝ Պլովդիվը, Ադրիանապոլիսը և ընդհուպ մտանցան Կոստանդնուպոլիսին: Եվրոպական մեծ տերությունները և առաջին հերթին Ռուսաստանի գլխավոր ախոյանը՝ Անգլիան, չէին կարող հանդուրժել Թուրքական մայրաքաղաքի, ուրեմն և նեղուցների գրավումը ռուսական զորքերի կողմից: Հունվարի 28-ին րբիտանական կառավա-

բությունը որոշում ընդունեց մարտանավեր ուղարկել Բոսֆոր, Չկամ-
նալով ընդհարվել Անգլիայի հետ, Ռուսաստանը, շնայած Թուրքիային
հասցրած ջախջախիչ հարվածներին, համաձայնվեց ապագա հաշտության
պայմանները ներկայացնել մեծ տերությունների ցննարկմանը:

Ստան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը: 1878 թ. հունվարի
31-ին Թուրքերը ստորագրեցին զինադադար, իսկ մարտի 3-ին կնքվեց
Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը, որի համաձայն
Թուրքարիան հայտարարվում էր ինքնավար իշխանություն՝ Թուրքիայից
վասալական կախման մեջ, Թուրքական զորքերը դուրս էին բերվում Բուլ-
ղարիայից, իսկ ռուսական զորքերը մնալու էին այնտեղ երկու տարի:
Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան դառնում էին լրիվ անկախ պետու-
թյուններ՝ նոր տարածքային ձեռքբերումներով, Բոսնիան և Հերցեգովին-
նան ստանում էին ինքնավարություն, Ռուսաստանին էին անցնում Բե-
սարաբիայի մի մասը, Բաթումը, Կարսը, Արդահանը և Բայազետը: Թուր-
քիան պարտավորվում էր վճարել 310 մլն ռուբլի ռազմատուգանք և բա-
րենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում: Այդ մասին Սան-
Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում ասվում էր. «Նկատի առնելով,
որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաս-
տանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ
տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների
բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն,
Թարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մար-
զերի տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ
և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու շերքեզներից»:
Արևմտահայության շահերից մասնակիորեն բխող այս հոդվածը, սա-
կայն, շկիրառվեց կյանքում, որովհետև եվրոպական տերությունները,
հատկապես Անգլիան ու Ավստրիան, հանդես եկան Սան-Ստեֆանոյի ողջ
պայմանագիրը վերանայելու վճռական պահանջով, Անգլիան նույնիսկ
սպառնաց ռազմական ուժ զործադրել Թուրքիայի ամբողջականությունը
պաշտպանելու համար: Ռուսաստանը ստիպված էր համաձայնվելու մի-
ջադպարին կոնֆերանսի գումարմանը, որը տեղի ունեցավ Բեռլինում
1878 թ. հունիսի 13-ից մինչև հուլիսի 13-ը, պատկվելով նոր պայմա-
նագրի ստորագրումով: Բեռլինի պայմանագրով, որը փոխարինեց Սան-
Ստեֆանոյի ողա-թուրքական պայմանագիրը, Ռուսաստանը զրկվում էր
զենքի շնորհիվ ձեռք բերված իր տարածքային նվաճումներից, Մասնա-
վորապես, նա ստիպված էր Թուրքիային ետ վերադարձնել Ալաշկերտի
հովիտն ու Բայազետը, մինչդեռ Թուրքիայի «պաշտպանները»՝ Անգլիան
ու Ավստրիան, համապատասխանորեն ստանում էին, առանց մի կրակոց
արձակելու, Կիպրոս կղզին և Բոսնիան ու Հերցեգովինան: Այնուհետև,
Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց Բեռլինի
դաշնագրի 61-րդ հոդվածով, որն արգեն իրական ոչ մի երաշխիք չէր
պարունակում հայկական վիլայեթներում կարգ ու կանոն հաստատելու
և հայ աղգաբնակչությանը ջարդերից ու բռնություններից զերծ պահելու

դործում, Առավել բարենպաստ հետեանքներ ունեցալ ռուս-թուրքական պատերազմը բալկանյան ժողովուրդների համար, որոնց, ի վերջո, հաշտվեց թոթափել բազմազարդան օսմանյան լուծը:

Հայկական հարցը 1860—90—ական քվականներին: Բեռլինի կոնգրեսից հետո Հայկական հարցը փաստորեն թողնվեց ճակատագրի քմահաճույթին, ինչից և չհապաղեց օգտվել սուլթան Աբդուլ Համիդը:

Թուրքական կառավարությունը սկսեց նրանից, որ «Հայաստան» բառը փոխարինեց «Թուրքիստանով» կամ «Անատոլիայով», 1860-ի օգոստոսի 30-ի հրամանով պաշտոնական փաստաթղթերում արգելվում էր օգտագործել «Հայաստան» բառը: Սուլթանական կառավարությունը ջանք չէր խնայում հայերով բնակեցված հողերի զանգվածային զավթումների ճանապարհով արևմտահայ աշխատավոր գյուղացիությանը տնտեսապես բայրախելու և հարազատ վայրերը լքել տալու համար: Մյուս կողմից, կառավարությունը մշտապես թշնամանք էր սերմանում հայերի, թուրքերի, քրդերի ու շերքեզների միջև, թույլ չտալով նրանց միավորվել օսմանյան լծի դեմ մղվող պայքարում: Այս պայմաններում հայերը, ինչպես և կայսրության բոլոր քրիստոնյաները, զրկված լինելով զենք կրելու իրավունքից, ենթարկվում էին պարբերական հարձակումների զինված մահմեդականների կողմից:

Այդ նույն շրջանում թուրք կառավարողները անցկացնում էին հայ ժողովրդի պատմամշակութային օջախները ունչացնելու, հայկական մշակութի զարգացումը խափանելու քաղաքականություն: Կառավարությունը հսկողություն էր սահմանել հայկական լուսավորչական հիմնարկների, մատենավորապես դպրոցների վրա, փակել այն դպրոցները, որոնք բացվել էին առանց սուլթանի ֆիրմանի (հրամանի): Հայկական բոլոր եկեղեցիները հիմնավորապես խուլարկվել էին ոստիկանության կողմից՝ զենք դռնելու նպատակով, փակվել էին նաև մի շարք հայկական թերթեր, թատրոններ, հասարակական կազմակերպություններ, հրատարակչություններ և այլն: Արգելվել էին Հայաստանի պատմության դասավանդումը, ժողովները, դասախոսությունները և այլն:

1880-ի հունիսի 11-ին և սեպտեմբերի 7-ին եվրոպական վեց տերությունների՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, Բարձր Դռանը զիմեցին հուշագրերով, որոնցում նշվում էր, որ եթե Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումները չանցկացվեն, ապա իրենք ստիպված կլինեն միջամտել հայերի օգտին: Ի պատասխան, սուլթանական կառավարությունը հայտարարեց, որ ինքն արդեն մշակել է բարենորոգումների նախագիծ և շուտով այն կգործադրվի: Այդ հավաստիացումները, սակայն, բացահայտ կեղծիք էին և նպատակ ունեին հանգստացնել եվրոպական հառարակական կարծիքը:

Այսպիսով, արևմտահայ ազգային ազատագրական շարժումը սկսեց ծավալվել և թափ առնել այն բանից հետո, երբ հայերը սեփական դառը փորձով համոզվեցին, որ տերությունների միջամտությունը Հայկական հարցում նպատակ չի հետապնդում Հայաստանը ազատագրելու թուրքական

լծից, Հիմնականում դրանով է բացատրվում հայ իրականության մեջ ազգային քաղաքական կուսակցությունների երևան գալը, որոնք նպատակ էին հետապնդում հասնել ազգային ինքնավարության Արևմտյան Հայաստանում՝ հայ ազգը համախմբելու և հեռանկարում հայկական պետականությունը վերականգնելու նպատակով, սուլթանական կառավարությունը Հայկական հարցը «փակելու» համար ձեռնամուխ է լինում իր քարոզարարական քաղաքականության մշակմանը։ Օսմանյան կառավարողների ծրագրերը առավել որոշակի շարադրել է թուրք հայտնի պետական գործիչ Քյամիլ փաշան, որն Արդու Համիդի օրոք երկար տարիներ զբաղեցնում էր մեծ վեզիրի պաշտոնը։ Քյամիլ փաշայի կառավարության կողմից մշակված հայ ժողովրդի ոչնչացման ծրագրերը սկսեց իրականացվել 1890-ական թվականներին, երբ սուլթան Արդու Համիդը ձեռնամուխ եղավ զանգվածային մի շարք շարժերի Արևմտյան Հայաստանում և այլուր, այդ նպատակին ծառայեցնելով իր անունը կրող քրդական «Համիդի» հեծելազորային գնդերը։ Թեև մի շարք վայրերում (Ջնթուն, Սասուն, Վան և այլն) հայերը մղում էին ինքնապաշտպանական կռիվներ, սակայն ուժերը խիստ անհավասար էին։

Համիդյան շարժերը լայն արձագանք գտան եվրոպական հասարակայնության մեջ, ինչպես նաև Ռուսաստանում, 1896-ին Մոսկվայում լույս տեսավ «Հայերի դրությունը Թուրքիայում տեղությունների 1895-ի միջամտությունից առաջ» գիրքը, որտեղ տպագրված էին թուրքական զանգվածային զատապարտող արտասահմանյան դիտնականների, հրապարակասենների ու հասարակական գործիչների հոդվածներն ու ճառերը։ Գիտության ու մշակույթի գործիչների ջանքերով 1897-ին Մոսկվայում լույս տեսավ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» խորագրերը կրող մեծածավալ ժողովածուն։

Արևմտյան Հայաստանում ու Կոստանդնուպոլսում տեղի ունեցած շարժերը լայն արձագանք գտան Ֆրանսիական հասարակայնության մեջ։ Մի շարք քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ ու գրողներ, Ֆրանսիական պառլամենտի անդամներ հանդես եկան ու դատապարտեցին «կարմիր սուլթան» Արդու Համիդի բարբարոսական արարքները, նշեց նրանցից մի քանիսի անունները։ Անատոլ Ֆրանս, Ֆրանսիա զբ Պրեսանս, Պիեռ Կիյար, Վիկտոր Բերար, Ժան Ժոսես, Դենի Կոշեն, Ալբեր Վանդալ և այլն։

1894—1896 թթ. հայկական կոտորածները Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում լայն արձագանք գտան նաև Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլ երկրներում։

Երիտթուրքական շարժումը։ Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի վերջին քառորդում գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր վիճակում։ Արտաքին պարտքը հասել էր այնպիսի չափերի, որ սուլթանը ստիպված համաձայնվեց տեղեկ Օսմանյան պարտքի վարչություն, որով օտարերկրյա հսկողություն սահմանվեց երկրի տնտեսության ու գրամտկան

Համակարգի վրա: Հենվելով խոշոր աշխատատեղերի ու մահմեդական բարձր հողերում համառոտության վրա, Թուրքիայի առաջին սահմանադրական միապետը՝ Աբդուլ Համիդը, հաստատել էր «զուլումի» անասելի ռեժիմ՝ վաճառակելով «կաբաթի» (այսինքն՝ արյունոտ) սուլթանն սահմանումը:

Աբդուլ Համիդի դեմ կազմակերպված պայքարի առաջին փորձը վերաբերում է 1889 թվականին, երբ Կոստանդնուպոլսի ռազմաթշկական ուսումնարանի մի խումբ ուսանողներ ստեղծում են զադետի խմբակ, որը նպատակ էր դնում տապալել բռնակալությունը: Հիշյալ խմբակը, որի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր ծագումով ալբանացի Իբրահիմ Տեմուլին, կապեր է հաստատում ուսանողական այլ խմբերի հետ, փորձելով հիմնել այնպիսի իրենց բռնիները:

Ընդդիմադիր շարժում է ծայր առնում նաև արտասահմանում՝ Արևմտյան Եվրոպայում, հիմնականում Ֆրանսիայում ու Շվեյցարիայում, որի զադափարախոսն էր 1889-ին Փարիզ տեղափոխված Ահմեդ Ռիզա բեյը: Բուն Թուրքիայում 1894 թվականին տապալվում է առաջին թուրքիկները «Միություն և առաջադիմություն» ընկերության անունից, որը կայսրության բոլոր ժողովուրդներին կոչ էր անում համատեղ պայքարի հենել բռնատիրական վարչակարգի դեմ: Նորից հետևեցին հալածանքներ, ձերբակալություններ, որոնցից խուսափելու համար հիշյալ ընկերության անդամների մեծ մասը ստիպված էր հեռանալ երկրից և իր գործունեությունը ծավալել Փարիզում, համախմբվելով Ահմեդ Ռիզայի հիմնած «Մեշլիկեթ» («Քենարկում») թերթի շուրջը: Հիշյալ թերթի առաջին համարում, որը լույս տեսավ 1895 թ. դեկտեմբերի 3-ին, տապալված էր «Միություն և առաջադիմություն» ընկերության ծրագրային փաստաթուղթը, որի հիմնական դրույթներն էին. կայսրության անբաժանելիություն, օտար պետությունների լճիշամտություն նրա ներքին գործերին, երկրի առաջադիմությանը ուղղված բարենորոգումներ և կայսրության բոլոր հայատնականի հավասարություն՝ անկախ նրանց դավանանքից ու ազգությունից: Այս դրույթները պրոպագանդվում էին երիտասարդ թուրքերի (ինչպես անվանում էին Եվրոպայում «Միություն և առաջադիմություն» ընկերության անդամներին) պարբերական հրատարակություններում, որոնցում դերիշխում էր այն զադափարը, որ սահմանադրական բարեփոխություններն անհրաժեշտ են որպես միջոց՝ Օսմանյան կայսրության փլուզումը կանխելու և այն մեծ տերությունների միջև բաժան-բաժան անելուց խուսափելու համար:

1896 թ. ամռանը երիտթուրքերի Ստամբուլում գործող խումբը պետական հեղաշրջման փորձ կատարեց, սակայն զավադիրները ձերբակալվեցին և աքսորվեցին, բայց նրանցից շատերին հաջողվեց փախչել Ֆրանսիա, 1902 թ. փետրվարի 4—9-ը Փարիզում կայացավ երիտթուրքերի առաջին համագումարը, որին մասնակցում էին 60—70 պատգամավորներ, այդ թվում թուրքեր, հայեր, հույներ, արաբներ, ալբանացիներ, չերքեզներ, քրդեր, հրեաներ: Համագումարում ի հայտ եկան ու բախվեցին երկու իրարամերժ մոտեցումներ՝ Ահմեդ Ռիզա բեյինը և իշխան Մահմեդ

Սարահնդդիները։ Առաջինը բացառում էր օտար պետությունների միջամտության օգտագործումը Վաշինգտոնական բարեփոխություններն առաջ տանելու նպատակով, իսկ երկրորդը գտնում էր, որ տերությունները կարող են անշահախնդիր օգնություն ցույց տալ Քուրդիային այդ հարցում։

Երիտթուրքերի առաջին համագումարն, այդպիսով, շահագրեց շարժման միասնությանը, Հնդունված որոշման մեջ արտացոլվեցին Սարահնդդիների հայացքները վարչական կառավարման ապակենտրոնացման վերաբերյալ, որոնք ձևավորվեցին նրա կողմից հիմնած «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» մեջ, Իսկ Ահմեդ Ռեզայի խումբը կազմակերպչորեն համախմբվեց «Առաջադիմության և միասնության ընկերության» մեջ և 1902 թ. համագումարից հետո հիշյալ երկու կազմակերպությունները գործում էին իրենց ինքնուրույն քաղաքական ծրագրերով, ստեղծեցին իրենց մամուլի օրգանները, Ինչ վերաբերում է երիտթուրքերի սոցիալական կազմին, հիմնականում դա երիտասարդ թուրք զինվորականության ու պաշտոնյաների խավն էր, որին հաբեւ էին նաև սուլթանական կարգերից զոգոհ ֆեոդալական բյուրոկրատիայի ներկայացուցիչները։ Եվ հենց Արզուլ Համիդին տապալելու ձգտումն էր, որ իրար մոտեցրեց Օսմանյան կայսրության տարբեր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, 1906 թ. «Առաջադիմության և միասնության ընկերությունը» Քուրդիայում տարածեց մի կոչ բռնակալական կարգերի դեմ պայքարի նպատակով կայսրության բոլոր հպատակների համատեղ գործողությունների վերաբերյալ։ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը 1907 թ. Վիեննայում գումարած իր 4-րդ համագումարում որոշում ընդունեց հրավիրել սուլթանական կարգերից զոգոհ տարրերի մի համաժողով՝ քննարկելու համար նրանց ջանքերի միավորման հարցը։ Կուսակցության պաշտոնաթերթի՝ «Դրոշակի» խմբագրությունը դիմեց Ահմեդ Ռեզա բեյին ու Սարահնդդիներին այդ հարցով, որը դրական ընթացք ստացավ. 1907 թ. դեկտեմբերի 27-ին Փարիզում հրավիրվեց Քուրդիայի ընդդիմադիր կուսակցությունների ու խմբերի 2-րդ համագումարը, որն ընդունեց հատուկ «Գեկլարացիա»՝ ֆեոդալական-միապետական կարգերի դեմ հանդես եկող բոլոր կազմակերպությունների համատեղ գործողությունների ծրագիր։ Այս փաստաթուղթը, խարազանելով հանդերձ անձամբ սուլթան Արզուլ Համիդ 2-ին, չէր տալիս նրա տապալումից հետո ստեղծվելիք պետական ու քաղաքական կառուցվածքի բնութագրումը, սահմանափակվելով սահմանադրությունը վերականգնելու ու պառլամենտ հրավիրելու ընդհանուր պահանջով։ Չէր տրվում երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակի վերլուծությունը, չէին ընտադատվում ավատական-միահեծան վարչակարգի արատները։ «Գեկլարացիան», սակայն, կոչ էր անում համընդհանուր ազատամարտության՝ ընդդեմ տիրապետող սեփմի։

ներառաւական հեղաշրջումը: Երիտթուրքերի 2-րդ համագումարը խթանեց կայսրութեան տարրեր շրջաններում առկա հեղափոխական խմորումները, որոնք առավել կազմակերպված բնույթ էին կրում Բալկաններում և առաջին հերթին Մակեդոնիայում, ուր խտացված ձևով իրենց արտացոլումն էին գտել ողջ կայսրութեանը բնորոշ սոցիալական ու ազգային հակասությունները: Հենց այստեղ էլ 1908 թ. հունիսին սկիզբ առան այն իրադարձությունները, որոնք հանգեցրին երիտթուրքական հեղաշրջմանը, Հուլիսին Մակեդոնիայում բռնկվեց զինված ապստամբություն, որը գլխավորեցին երիտթուրքական կուսակցությանը հարող զինվորականները, մասնավորապես Ռեսնե քաղաքի կայազորի սպա Ահմեդ Նիյազի-բեյը, որին սատարեց Մոնաստիր քաղաքի երիտթուրքական կենտրոնը: Մեծ նշանակություն ունեցավ այն, որ ապստամբներին միացավ Մակեդոնիայի ոչ թուրք ազգաբնակչությունը:

1908 թ. հուլիսի 23-ին ապստամբ շոկատները և նրանց միացած զինվորական միավորումները գրավեցին և իրենց ձեռքը վերցրեցին իշխանությունը Մակեդոնիայի բոլոր վարչական կենտրոններում՝ Սալոնիկում, Մոնաստիրում, Ուսթյուրում և այլ քաղաքներում: Հաջորդ օրը՝ հուլիսի 24-ին, Արգոլ Համիդը, վախենալով, որ մակեդոնական բանակը կարող է շարժվել դեպի Ստամբուլ, հրամանագիր արձակեց 1876 թ. սահմանադրությունը վերականգնելու և պատգամավորների պալատը հրավիրելու մասին, որը և բավարարեց երիտթուրքերի պահանջները, որովհետև նրանք չէին ցանկանում, որ հեղափոխական շարժումը ծավալվի: Խիստ սահմանափակ էր նրա սոցիալական հենքը, հիմնականում դա զինվորականությունն էր ու մատավորական խավը: Ժողովրդական լայն զանգվածները հեռու մնացին այդ շարժումից: Հատկանշական է, որ 1908 թ. իշխանությունը հեղաշրջումից հետո երիտթուրքերը չէին շտապում իրենց ձեռքը վերցնել իշխանությունը ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառում՝ ողջ ուշադրությունը դարձնելով կազմակերպչական աշխատանքին, հիմնելով իրենց կուսակցության մասնաճյուղերը կայսրության գրեթե բոլոր խոշոր քաղաքներում: Սակայն նրանք պարագրեցին, որ կառավարությունը վերացնի սուլթանական գաղտնի ոստիկանությունը: Պաշտոնազուրկ արվեստի և նույնիսկ ձերբակալվեցին պալատական վերնախավի բազմաթիվ ներկայացուցիչներ, ներում չնորժվեց հեղափոխական շարժման մասնակիցներին:

1908 թ. նոյեմբերին տեղի ունեցան պատգամավորների պալատի ընտրությունները, որոնք հաղթանակ բերեցին երիտթուրքական կուսակցությանը: Նոյեմբերի 15-ին բացված թուրքական մեջլիսի պատգամավորների պալատում երիտթուրքերը գրադեցրին 150 տեղ (230-ից): Պալատի նախագահ ընտրվեց Ահմեդ Ռիզա բեյը: Ընդդիմադիր «Ահրար» (Մեղադրանք) կուսակցությունը, որն արտահայտում էր հետագիծ-ալատատերերի ու միջնորդ-առևտրական բուրժուազիայի շահերը, տակավին նոր էր կազմավորվել և չէր ուղղացավ լուրջ մրցակից դառնալ երիտթուրքերին: Մինչդեռ Արգոլ Համիդը պատրաստվում էր հաջվահարգարի՝ հենվելով

խաղարամիտ հետադիմական ուժերի վրա, նրա տրամադրութեան տակ էր իր անձնական զվարդիան՝ շուրջ 20 հազար հոգուց բաղկացած դիվիզիա, որը և նա օգտագործեց 1909 թ. ապրիլի 13-ին հակահեղափոխական խռովությունը կազմակերպելու։ Երիտթուրքական ղեկավարները և պատգամավորներին շատերը դիմեցին փախուստի՝ կենտրոնանալով Սալոնիկում։ Այստեղ նրանք հանեցին շուրջ 100-հազարանոց «գործողության բանակը», որը շարժվեց դեպի մայրաքաղաք՝ հաղթահարելով սուլթանին հավատարիմ խռովարար ուժերի դիմադրությունը։ 1909 թ. ապրիլի 26-ին Կ. Պոլսի ամբողջությամբ վերցվեց հիշյալ բանակի հսկողության տակ, հայտարարվեց ռազմական դրություն, Ապրիլի 27-ին մեջլիսի՝ պատգամավորների պալատի ու սենատի համատեղ նիստում Աբդուլ Համիդը դաժնեկեց արվեց, և զահ բարձրացվեց կամազուրկ սուլթան Մեհմեդ Ռեշադ 5-ը, որը մինչև Օսմանյան կայսրության անկումը (1918) ոչ մի դեր չխաղաց պետության կառավարման մեջ։ Իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը։

Հաստատելով իրենց տիրապետությունը, երիտթուրքերը շատ շուտով մոռացան իրենց խռտումները՝ բավարարվելով կիսատ-պոստ բարենորոգումներով։ Երիտթուրքերը չլուծեցին «Նազարալին, «Ն բանվորական, և «Ն էլ ազգային հարցը, նրանց միահեծան տիրապետության տարիներին երկրի հպատակ ժողովուրդների վիճակը է՛լ ավելի վատթարացավ, Հատկանշական է, որ երիտթուրքերի տիրապետության առաջին իսկ օրերին տեղի ունեցան հայերի զանգվածային շարժեր Կիլիկիայի մի շարք վայրերում (Ադանա, Թարսուս, Քիլիս, Սիս, Մարաշ և այլն), որոնք խլեցին մոտ 30 հազար մարդկային կյանք։

Երիտթուրքական ղեկավարները չէին էլ թաքցնում, որ իրենց ազգային քաղաքականությունն ի վերջո ուղղված էր կայսրության հպատակ բոլոր ժողովուրդներին աստիճանական ձուլմանը՝ օսմանցիության քողի տակ։ Այսպես, կուսակցության պարագլուխ Թալանթ բեյը 1910 թ. օգոստոսին Սալոնիկում կայացած գաղտնի խորհրդակցության ժամանակ հայտարարել էր, որ «չնայած սահմանադրությամբ ընդունված հավասարությանը մահմեդականների ու գավուրների (քրիստոնյաների— հեղ.) միջև, կյանքում դա անիրականալի իդեալ է... Զի կարող անգամ խոսք լինել հավասարության մասին այնքան ժամանակ, քանի դեռ մենք չենք հասել հաղորդության կայսրությունը օսմանացնելու խնդրում»։

Բալկանյան պատերազմները։ Օսմանցիության գաղափարը, սակայն, իր սնանկությունը ի հայտ բերեց Բալկանյան պատերազմների ժամանակ։ 1912 թ. հոկտեմբերի 18-ին սկսվեց Բալկանյան 1-ին պատերազմը Օսմանյան կայսրության և Բալկանյան պետությունների խմբավորման միջև (Բուլղարիա, Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա)։ Պատերազմն ավարտվեց նախկինում օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդների հաղթանակով։ 1913 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված հաշտությամբ Թուրքիան կորցնում էր եվրոպական իր բոլոր տիրույթները, բացառությամբ Ստամբուլի և Արևելյան Թրակիայի մի փոքր մասի։ Հաղթանակած

պատասխաններն միշտ ծագած վեճերը, սահայն, հանգեցրին Բալկանյան 2-րդ պատերազմի (1913 թ. հունիսի 29-ից օգոստոսի 10-ը), որից օգտւելով, Երիտթուրքերը եւ վերագարձրին Ռուլարիային անցած Ադրիանապոլիսը:

Քուրժիան I համաշխարհային պատերազմի տարիներին: Բալկանյան պատերազմները, մասնավորապէս I-ին պատերազմում Թուրքիայի կրած պարտութիւնը նպաստեցին այն բանին, որ Հայկական հարցը վերստին արժարժի և դառնա միշտագային դիվանագիտութեան քննարկման առարկա:

Իսկ կայսրութեան ներքին կյանքում տեղի ունեցած փոփոխութիւնն այն էր, որ Երիտթուրքերը դաժան հաշիվահար դար տեսան իրենց քաղաքական հակառակորդներին հետ, Օգտագործելով համաձայնողականների (իթիլաֆիստների) կողմից մեծ վեղիւր Մահմուդ Շեվքեթ փաշայի սպանութիւնը 1913 թ. հունիսին, Երիտթուրք ղեկավարները արգելեցին քաղաքական բոլոր կուսակցութիւնները, որոնց գործիչները, մոտ 300 հոգի, աքսորվեցին Սինոպի ամրոցը: 1913 թ. վերջից իշխանութիւնն ամբողջութեամբ կենտրոնացվեց Երիտթուրքական «Եռյակի»՝ ռազմական միւնիստր Էնվերի, ներքին գործերի մինիստր Բալաթի և ժողային մինիստր Զեմալի ձեռքում:

Զհռնելով իրենց նպատակին հպատակ ժողովուրդների օսմանացման քաղաքականութեան մեջ, Երիտթուրքերը շուտով որդեգրեցին պանթուրքիզմը՝ համաթրքութեան ծայրահեղ հետադիմական գաղափարախոսութիւնը, որն իր սուր ծայրով ուղղված էր Ռուսական կայսրութեան դեմ, քանի որ հենց նրա տարածքում էր բնակվում թուրքալեզու ցեղերի ու ժողովուրդների գերակշռող մասը՝ ադրբեջանցիներ, ուզբեկներ, թաթարներ, 'թուրքմեններ, բաշկիրներ, ղաղախներ, կիբգիզներ և այլն: Պանթուրքիստներն, այսպիսով, նպատակ էին դնում թուրք-օսմանների մեջ արթնացնել մոլի ազգայնական զգացումներ՝ նրանց ոգեշնչելով թուրքալեզու ժողովուրդներին օսմանյան Թուրքիայի գերիշխանութեան ներքո համախմբելու հեռանկարով: Վերահաս համաշխարհային պատերազմը հնարավորութիւն էր ընձեռում Երիտթուրքական ղեկավարներին գործողութեան մեջ դնելու իրենց զառանցական ծրագրերը՝ հանդես գալով Ռուսաստանին հակամարտ տերութիւնների՝ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կողմում: Այդ ծրագիրը, սակայն, ձախողվեց Կովկասյան ռազմաճակատում 1914—16 թթ. թուրքական զորքերի կրած խայտառակ պարտութիւններից հետո: 1914 թ. հոկտեմբերի 29-ին, երբ Ռուսաստանը, ի պատասխան սեփական նախահանգիստների ռմբակոծութեան, պատերազմ հայտարարեց Թուրքիային, վերջինիս բանակը 1914—15 թթ. ձմռանը Սարիզամիշի տակ գլխովին ջախջախվեց՝ տալով 70 հազ. սպանված ու վիրավոր, Հետագա ամիսներին ռուսական զորքերը գրավեցին էրզրումը, Վանը, Տրապիզոնը և այլ քաղաքներ: Արեւմտյան Հայաստանի մեծ մասն անցավ ռուսական տիրապետութեան տակ:

Պատերազմական իրադրությունը երկաթուղային կառավարությունն օգտագործեց Հայկական հարցը թուրքավարի լուծելու նպատակով, այսինքն՝ իսպառ բնաշնչելով արևմտահայությանը։ Նախ, տմարդի կերպով ոչնչացվեցին բանակ զորակոչված հայ տղամարդիկ, որոնց մինչ այդ զինաթափել էին և ընդգրկել աշխատանքային գումարտակներում։ Այնուհետև գլխատվեց ազգի ծաղիկը, ապրիլի 24-ին հավաքեցին արևմտահայության բոլոր հոգևոր առաջնորդներին, մտավորականության երեկի ներկայացուցիչներին, այդ թվում պառլամենտի հայ պատգամավորներին։ Մի գիշերվա ընթացքում Կ. Պոլսում ձերբակալվեցին մեծատաղանդ բանաստեղծներ ու գրողներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն (Ատոմ Ցար-ճանյան), Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սեակը, Ռուբեն Ջարդարյանը, Սեմբատ Բյուրատը և ուրիշներ, հարյուրավոր փաստաբաններ, բժիշկներ, գերատաններ, լրագրողներ, երաժիշտներ, մոտ 250 հոգի։ Հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասը, աքսորի ճամփաներին ականատես դառնալով իր ժողովրդի դեմ գործադրվող դադանություններին, խելագարվեց։

Այնուհետև կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայության բռնագաղթին՝ նախապես լավ մշակված պլանի համաձայն։

1915 թ. մայիսի 14(27)-ին հրապարակվեց օրենք «Տեղահանությունների մասին», որով բռնի աքսոր քշվեց Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու Անատոլիայի գրեթե ողջ հայ ազգաբնակչությունը, 1,5 մլն. մարդ, մեծ մասը կանայք, ծերեր ու երեխաներ, որոնցից մեկ միլիոնից ավելին ոչնչացվեց բռնագաղթի ճամփաներին և համակենտրոնացման ճամբարներում 1915—1916 թթ.։ Տասնյակ հազարավոր հայ կանայք ու երեխաներ բռնի կերպով իսլամացվեցին։ Ոչնչացվեցին հայ բազմադարյան մշակույթի գանձերը, 2.300-ից ավելի եկեղեցիներ, վանքեր, հարյուրավոր ձեռագրեր, հնատիպ գրականության բացառիկ նմուշներ և շատ ուրիշ արժեքներ։ Ամայացավ հայ ժողովրդի հազարամյա բնօրրանը՝ Արևմտյան Հայաստանը։ Տեղի ունեցավ 20-րդ դարի առաջին զանգվածային ցեղապանությունը։

Մեծ եղեռնի մասին խոսելիս միշտ պետք է հիշել այդ ողբերգության հերոսական էջերը, այն անհավասար, հեղահատ դիմադրությունը, որ հայոց քաշերը ցույց տվեցին շարժարարներին մի շարք վայրերում՝ Վան, Շատախ, Շապին-Կարահիսար, Մուշ, Սասուն, Ուրֆա, Մուսա լեռ և այլն։ Հիշել նաև այն մարդասերներին, ովքեր իրենց բողոքի ձայնը բարձրացրին՝ երկաթուղային կառավարության կողմից կիրառված ցեղասպանության դեմ։ Անատոլ Ֆրանսն ու Ժակ դը Մորգանը Ֆրանսիայում, Կիքոլն ու Վալերի Բրյուսովը՝ Ռուսաստանում, Առնոլդ Քոչերին ու Զիյա Քալանը՝ Անգլիայում, Ցոհաննես Լեպոխտը, Ցոզեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում, Հ. Ա. Գիբոնսն ու դեսպան Հենրի Մորգենթաուսը՝ ԱՄՆ-ում և շատ ուրիշներ։ Մի քանի հումանիտներ հանդես եկան թուրք հանցագործ «եռյակին»՝ ձեմերին, Քալեաթին ու Զեմալին պատերազմի ավարտից հետո միջազգային դատարանին հանձնելու պահանջ-

շովի Այգ պահանջը, ինչպես և դաշնակից երեք տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի 1915 թ. մայիսի 11(24)-ի համատեղ հայտարարությունը հայկական շարդերի համար երկտեղորդ զեկավարների պատասխանատվության մասին, լիականացովէց։ Անտանտի տերությունները, շախշախելով Քուրթիային և ստիպելով նրան 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրել Մուգրոսի պայմանագիրը լիակատար անձնատուրության մասին, հետամուտ շեղան հայոց ցեղասպանության հըլ-խաղոր պատասխանատուներին օրենթի ուժով պատժելու խնդրին։ Նրանցից յուրաքանչյուրը փորձեց շլեղու գտնել Օսմանյան կայսրության փլուզումից հետո իշխանության դուխ անցած քեմալական զեկավարության հետ՝ 1921—23 թթ. կեքելով հայ ժողովրդի իրավունքները ոռեհարող Մոսկվայի, Անկարայի և Լոզանի պայմանագրերը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԿ

1. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1982,
2. Հայկական Սովետական Հանրադիտարան, հ. 6, Երևան, 1980,
3. Հայաստանը միշաղգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում։ Կաղմեցին Զ. Ս. Կիրակոսյանը և Ռ. Գ. Սահակյանը, Երևան, 1972,
4. Ռուրեն Սահակյան. Ցեղասպանության պատմությունից։ Երևան, 1990,
5. История дипломатии, Т. II, Под ред. акад. В. П. Потемкина. М.-Л., 1945.
6. Ю. А. Петросян, Младотурецкое движение. М., 1971.
7. В. И. Шпилькова, Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977.
8. Ա. Հաղարյան, Ս. Յ. Օրեղովա, Ցու. Ա. Պետրոսյան. Քուրթիայի պատմության ուրվագծեր։ Երևան, 1986,
9. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու։ Կաղմ. Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991,
10. А. Д. Новичев. История Турции, т. I—IV, Л., 1963—1978.
11. А. Ф. Миллер. Краткая история Турции, М., 1948.
12. Османская империя, М., 1986.

ՎՐԱՍՏԱՆ

§ 1. ՎՐԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՑՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՅ ՄԻՆՉԵՎ
Մ.Թ. 4-ՐԴ ԴԱՐԸ

Աշխարհագրական դիրքը: Հայաստանի հյուսիսային հարևան «աշխարհ Վիրք»-ը՝ Վրաստանը [վրացերեն՝ Սաքարթվելո, այսինքն՝ քարթվեղների (վրացիների) երկիր], մեծ Կովկասի կենտրոնական և արևմտյան, Փոքր Կովկասի հյուսիսային լեռնալանջերին, Կուր և Ռիոն գետերի իջվածքներում ընկած երկիր է: Դարերի ընթացքում Վրաստանի բնական սահմաններն են եղել՝ հյուսիսում Մեծ Կովկասի Գլխավոր (Ջրբաժան) լեռնաշղթան, արևմուտքում՝ Սև ծովը: հարավում Վիրքը սահմանակից էր Հայաստանին, արևելքում՝ Ադվանքին: Երկրի աշխարհագրական դիրքը բացառիկ նպատակներ պայմաններ էր ապահովում տնտեսական զարգացման համար: Միաժամանակ, Ասիայի և Եվրոպայի սահմանագծում, տեղորոշված լինելը Վրաստանը խոցելի էր դարձնում թշնամիների ներխուժումների և քուլտուրների տեղաշարժերի ժամանակ:

Քարթվելական ցեղերը: Լեզվաբանական ընդունված տեսության համաձայն, վրացերենը և նրան ազգակից քարթվելական լեզուները [մեգրելերենը, ճաներենը (երկուսը ընդհանուր անվամբ կոչվում են զաներեն), սվաներենը], կազմում են իրերա-կովկասյան լեզվաընտանիքի քարթվելական խումբը:

Ընթացում է, որ քարթվելական լեզուներով խոսող ժամանակակից վրացիները, մեգրելները, լազերը, սվանները, հնագույն ժամանակներում մեկ լեզվական ընդհանրություն են ներկայացրել: Մոտավորապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակում տեղի է ունեցել սվաներների առանձնացումը, ապա, թերևս մ.թ.ա. 1-ին հազարամյակում, լեզվական ընդհանրության տրոհումը շարունակվել է վրացերենի ու զաներենի միմյանցից հեռացումով:

Վրացական ցեղերից սվանները հնագույն ժամանակներում զբաղեցնում էին այժմյան Արևմտյան Վրաստանի ոչ

միայն լեռնային դռերն (Մվանիթ), այլև հարթավայրային շրջանները։ Նրանցից հարավ բնակվում էին մեգրեղները (էդրիսցիները), իսկ այնուհետև՝ ճանները։ Առավել ընդարձակ տարածք էին բնակեցնում քարթական ցեղերը, որոնց և վիճակված էր գլխավորել վրաց ժողովրդի էթնիկական համախմբումը։ Քարթերը տարածված էին ներկայիս Արևմտյան Վրաստանի հարավային (ժամանակակից Գուրիա և Աճարա) և արևելյան (Իմերեթ) շրջաններում, Քարթլիի միջնաշխարհում, ինչպես նաև Հարավային Վրաստանում (Մեսխեթ, Սամցխե)։

Լեզվական ընդհանրության ժամանակաշրջանի վրացական ցեղերը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում դեռևս ապրում էին նախնադարյան համայնական կարգերի պայմաններում։

Մ.թ.ա. 11—8-րդ դարերում հին հույները ծանոթ էին Այա երկրի բնակիչներին ու մշակույթին։ Ենթադրվում է, թե այդպես է կոչվել կոլխերի (սովորաբար, այսպես են անվանում արևմտավրացական ցեղերին) երկիրն ու մշակույթը, որոնք և արտացոլում են գտել Արգոնավորդների մասին հայանի առասպելում։ Մ.թ.ա. 8-րդ դարի կեսերին Ուրարտու-Յիլանիլի արքա Սարգուրի 2-րդը երկու արշավանք ձեռնարկեց դեպի կոլխերի երկիր և գրավեց նրա հարավային շրջանները։

Այդ ժամանակաշրջանում վրացական ցեղերի հնագույն միավորում ներկայացնող Կոլխան թերևս սկսել էր թևակոխել վաղ դասակարգային հասարակության փուլը։ Ուրարտական արձանագրություններից երևում է, որ այդ միավորման մեջ մտնում էին նաև այնպիսի «երկրներ», որոնք շարունակում էին ապրել նախնադարյան համայնական հասարակարգի պայմաններում։ Մ.թ.ա. 8-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հարավային տափաստաններից և Հյուսիսային Կովկասից դեպի հարավ տեղաշարժված կիմմերները հաստատվեցին Փոքր Ասիայի արևելյան մասում՝ Կոպպոնիսիայում (այստեղից էլ այդ երկրի հայերեն անվանումը՝ Գամիթ), իսկ կիմմերական ցեղերից թրերները, ինչպես ենթադրվում է, բնակվեցին Թոնղրում (վրացերեն՝ Թրիալիթի)։ Հավանաբար, կիմմերները Ուրարտական պետությանը պարտության մատնելու նախօրյակին մ.թ.ա. 8-րդ դարի վերջին քառորդում կործանել էին իրենց արշավանքների ուղու վրա ընկած Կոլխան։

Պարսիկները, դեռևս Կոլոբոսի օրոք, մ.թ.ա. 6-րդ դարի կեսերին, իրենց հնթարկելով Հայաստանը, տիրացան նաև Սև ծովի հարավ-արևելյան առափնյա հատվածին։ Ավելի հյուսիս ընկած շրջաններում ապրող քարվելական ցեղերը չմտան Աքեմենյան Պարսկաստանի սահմանների մեջ։ Մ.թ.ա. 6-րդ դարում Կոլխայի հյուսիսային շրջաններում կազմավորվեց Կողքիսի թագավորությունը, որը դարձավ Կոլխայի քաղաքական ժառանգորդը։

Այդ նոր պետական միավորման առավել զարգացած շրջանները գտնվում էին Ռիոն գետի ստորին և միջին հոսանքում։ Կոլխերի բնակավայրերը ձգվում էին Ռիոն գետի ավազանից գեպի հարավ և ընդգրկում Ճորոխ գետից հարավ գտնվող շրջանները։ Պարսիկները, նախապես Աքեմենյանների տերության 19-րդ սատրապության մեջ մտցնելով հարավում բնակվող վրացական ցեղերին, մ.թ.ա. 6-րդ դարի վերջում— 5-րդ դարի առաջին կեսին կոլխերին և պարտադրեցին որոշակի պարտավորություններ ստանձնել։ Հինգ տարին մեկ անգամ կոլխերը պետք է խորհրդանշական թվով ստրուկներ (100 տղա և 100 աղջիկ) ուղարկեին պարսկական արքունիք և օժանդակ զորք տրամադրեին Աքեմենյան արքաներին արշավանքների միջոցին։

Հունական բնակավայրերը Դեռևս մ.թ.ա. 8-րդ դարից Սև ծովի ափին բնակություն սկսեցին հաստատել հույները։ Սև ծովի հարավային ափի հռչական բնակավայրերից (Սինոպ, Ամիսոս-Սամսուն, Տրապիզոն, Կոտիորա-Օրգու, Կերասունտ) բացի, 6-րդ դարում հունական քաղաքներ առաջացան նաև ներկայիս Վրաստանի առափնյա գոտում, Հատկապես նշանավոր էին Փասիսը (Փոթի), Դիոսկուրիան (Սուխումի), Պիտիուստը (Պիցունդա), Գիենոսը (Օչամչիրե)։ Հույները տեղական բնակչության վերնախավին մատակարարում էին գլխավորապես պերճանքի առարկաներ։ Կողքիսից արտահանվում էին ստրուկներ, անտառանյութ, մետաղյա առարկաներ։ Հունական գաղութները նշանակալիորեն նպաստեցին անտիկ աշխարհի և Սև ծովի առափնյա գոտու բնակչության միջև տնտեսական ու մշակութային կապերի սերտացմանը։

Նրբի ներքին շրջաններում ևս գոյություն ունեին հունական ազդեցությունը կրող քաղաքային տիպի տեղական առևտրական-արհեստագոր-

ծական կենտրոններ: Գրանք, հաշվանարար, գերազանցապես գտնվում էին Թիսն (Հնում՝ Փառխա) գետի հովտում, քանի որ այդ գոտին երկրի գլխավոր առևտրական դարկերակն էր:

Կողքիսի թագավորությունը վաղ դասակարգային պետություն էր: Եթե նրա առավել զարգացած շրջաններում գոյություն ունին ընդգծված սոցիալական տարբերություններ հասարակության զանազան շերտերի միջև, ապա լեռնային տարածքներում տիրապետող էին մեռած նախնադարյան-համայնական հարաբերությունները: Անմիջական արտադրողների բացարձակ մեծամասնությունը Կողքիսում կազմում էին ոչ թե ստրուկները, այլ ազատ համայնականները:

Քարթլիի թագավորության կազմավորումը: Կողքիսի թագավորությունը արևմտավրացական ցեղերի միավորում էր: Մ.թ.ա. 6—4-րդ դարերում արևելավրացական ցեղերի համախմբումը և պետական կազմավորումների ստեղծումը դանդաղեց Անդրկովկասում Աքեմենյան տերության քաղաքական գերիշխանության տարածման հետևանքով: Պարսկական աշխարհակալ պետության կազմի մեջ մտցվեցին Հայաստանը, Արևելյան Վրաստանի հարթավայրային մասը և, ինչպես տեսանք, Կոլխայի հարավային շրջանները: Արևելյան Վրաստանի հյուսիսային լեռնային հատվածում բնակվող քարթվեական ցեղերը, հավանաբար, կիսաանկախ վիճակում էին: Այդ ժամանակաշրջանում արևելավրացական ցեղերի շրջանում կարևոր դեր սկսեցին խաղալ մեսիները: Մեսիական միավորումները, որոնք ծանր հարվածներ էին ստացել կիմմերների արշավանքների ընթացքում, Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան շրջաններից տեղաշարժվեցին դեպի Հարավային ու Արևելյան Վրաստան: Նրանց տարարնակեցման հետևանքով Արևելյան Վրաստանում առաջացած մեսիական կղզյակներից մեկը դարձավ արևելավրացական պետական կազմավորման՝ Իբերիայի (Քարթլիի) կենտրոն Մցխեթը:

Սկզբնապես Իբերիա (այսպես էին կոչում այդ պետական միավորումը օտարները) կամ Քարթլի (երկրի վրացական ինքնանվանումն է) անվանումները բազաքական և աշխարհադրական հասկացություններ էին և հետագայում միայն էթնիկական անվանման հիմք դարձան: Արևելյան Վրաստանի կենտրոնական մասի՝ Քարթլիի քաղաքական ազդեցության ընդարձակման հետևանքով «քարթվելի» («Քարթլիի բնակիչ») տերմինը

հետզհետե աւարածվեց վրացալեզու բուր ցեղերի վրա և վերածվեց էթ-
նիկական անվանման, 10-րդ դարում, վրաց մատենագիր Գեորգի Մեր-
չալեի բացատրությամբ, Քարթլի հասկացությունը նշում էր այն ողջ տա-
րածքը, որտեղ վրացերէնով էր կատարվում ժամասացությունը, այսինքն՝
«քարթվելի» տերմինը ձեռք էր բերել նաև լեզվական ու դավանական
պատկանելության ցուցիչի լրացուցիչ նրանգ: Այստեղից էլ ժողովում է,
Քարթլիի փառաբան ներկրի նոր անվանումը՝ Սաքարթվելո՝ քարթվելների
երկիր:

Իրերիս անվանման հայերեն տարբերակն է Վիգբը, որը, մեղանում
տարածված ժողովրդական ստուգաբանությամբ, մխալմամբ բացատրում
են որպես «վերինների երկիր»:

Քարթլիի թագավորության կազմավորումը տեղի է ունեցել տարբեր
էթնոքաղաքական ուժերի միջև ընթացող համառ պայքարի պայմաննե-
րում: Ենթադրվում է, որ մ.թ.ա. 4—3-րդ դարերի սահմանագծում այդ
իրադարձություններին մասնակցել են նախկինում Աքեմենյան Պարսկաս-
տանի տիրապետությանը ենթակա վրացական միավորումները և Փոքր
Ասիայի հելլենիստական կաղծավորումները, Մցխեթի տիրակալները,
Սիլեկյանները: «Քարթլիս ցեղոյերան»՝ Վրաստանի պատմության միջ-
նադարյան ձևնարկը, Քարթլիի թագավորության հիմնադիր է համարում
Փառնավազին: Ուշագրավ է, որ նրա հիմնադրած հարստությանը ծանոթ
է եղել նաև 5-րդ դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը, որը այդ տոհմի
անդամներին «Փառավազյաններ» է կոչում:

Քարթլիի արքաները ծավալուն շինարարական աշխա-
տանքներ կատարեցին Կուր և Արազլի գետերի միախառնման
վաչրում գտնվող Մցխեթում, որը դարձավ թագավորության
մայրաքաղաք: Մցխեթի բարգավաճմանը նպաստեց նրա
բարենպաստ աշխարհագրական և ռազմավարական դիրքը:
Այստեղ էին հատվում Արևելյան Վրաստանը հարևան եր-
կրների հետ կապող շոքո կարևոր մայրուղիներ: Մցխեթով
էր անցնում Հնդկաստանը Սև ծովի առափնյա քաղաքների
հետ կապող միջազգային տարանցիկ առևտրական ճանա-
պարհը:

Մայրաքաղաքի տարածքում կառուցվեցին նաև պաշտպանական հա-
մակարգեր, այդ թվում Արմազցիսիս (Արմոստիկե) և Զադնե ամրոցները,
ինչպես նաև պաշտամունքային կառույցներ:

Մ.թ.ա. 3-րդ դարը համարվում է Քարթլիի թագավորության հզորու-
թյան ժամանակաշրջան: Թերևս դարավերջում Քարթլիի արքաներին հա-
ջողվեց գրավել Պարիսպոսի (Պարխար) լեռների ստորոտի հողերը, Խոր-
ձենեն և Դոդարենեն, ու այդ երեք երկրամասերը, որոնք ամբողջ 3-րդ

զարի ընթացքում մտնում էին Երվանդունիների թագավորության մեջ, Հայաստանից անցան Վրաստանին:

Քաղաքական իրադրությունը Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում շրջադարձային սիտիուացիաներ կրեց մ.թ.ա. 2-րդ դարի սկզբում, երբ Սելևկյանների պետությունը ենթարկվեց հռոմեացիների ներխուժմանը և ծանր պարտություն կրեց մ.թ.ա. 190 թվականին Մազենեսիայի Հակաստամարում: Օգտվելով հարմար իրադրությունից, անկախություն ձեռք բերեցին Մեծ Հայքի, Սոփիի, Փոքր Հայքի և Կոմմազենեի թագավորությունները: Սելևկյանների գերիշխանությունից ազատվեց մ.թ.ա. 247 թվականին հիմնադրված Պարթևական պետությունը: Մեծ Հայքի թագավոր Արտաշես 1-ինը (մ.թ.ա. 189—մոտ. 160 թ.թ.) միշտ քաջազանքներ ձեռնարկեց դեպի հյուսիս և Հայաստանի հետ վերամիավորեց Պարսպարեսի ստորոտում գտնվող Գողթնական, ինչպես նաև Գոգարենն (Գուգարք), Խորձենն (Խորձյան) դավառները: Մեծ Հայքի թագավորության ճնշումը հյուսիսում շարունակվում էր շուրջ մեկ հարյուրամյակ, մինչև մ.թ.ա. 1-ին դարի 60-ական թվականները: «Քարթլիս ցխովրերան» բավականաչափ հանդամանորեն է պատմում այդ ժամանակաշրջանում Քարթլիի թագավորության կրած պարտությունների և հայոց թագավորի որդի Արշակի՝ Քարթլիի թագավոր հռչակվելու մասին: Մ.թ.ա. 2-րդ—1-ին դարերում Մեծ Հայքի և Քարթլիի թագավորությունների շահերը այնուամենայնիվ հաճախ զուգահեռվում էին: Մասնավորապես երկու պետությունները համատեղ էին հանդես գալիս արտաքին քաղաքականության երկու կարևորագույն խնդիրները լուծելու: Մեծ Հայքը և Քարթլին միասնաբար էին պայքարում Պարթևական պետության, իսկ այնուհետև նաև Հռոմի նվաճողական քաղաքականության դեմ:

Մ.թ.ա. 1-ին դարի սկզբում Քարթլիի թագավորությունը միացավ այն դաշինքին, որ կնքել էին Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորը և Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծը: Վրացական օժանդակ գործառնալիքը Տիգրան Մեծի բանակի կազմում մասնակցում էին Լուկուլլոսի հռոմեական զորքերի դեմ պատերազմական գործողություններին: Մ.թ.ա. 66 թվականին հռոմեական բանակի ղեկավարությունը ստանձնեց Պոմպեոսը, Պարսություն մատնելով Միհրդատ Պոնտացուն և Հայաստանի համար ծանր պայմաններով հաշտության կնքելով Տիգրան Մեծի հետ, Պոմպեոսը 65 թվականի դարնանը ներխուժեց Իբերիա: Արտաշես (Արտազ) թագավորի ղեկավարած վրացական բանակը պարտություն կրեց և իբերները ստիպված եղան Պոմպեոսի հետ հաշտություն կնքել: Իբերիան ևս հայտարարվեց Հռոմի ժաշխակից և

բարեկամ», թագավորի որդիները պատանդ տարվեցին, սակայն թագավորական իշխանությունը Իբերիայում շոշնչացվեց: Արևելքում կարևոր հաղթանակներ տարած Պոմպեոսը Իբերիայից շարժվեց Կողքիս, որը մ.թ.ա. 3-րդ դարից սկսած նշանակալից շափով ենթարկվել էր Իբերիայի քաղաքական ազդեցությանը: Կողքիսի թագավորությունը մ.թ.ա. 2-րդ—1-ին դարերում ակնհայտ ճգնաժամ էր ապրում և դյուրությամբ գրավվեց Պոմպեոսի կողմից: Մ.թ.ա. 1-ին դարում բավականաչափ հզորացած Իբերիան մասնակցում էր այն պայքարին, որ Հայաստանում և ընդհանրապես Արևելքում միմյանց դեմ մղում էին Հռոմը և Պարթևստանը:

34 թ. Պարթևստանի թագավոր Արտավան 3-րդը Հայաստանում դահլիճացրեց իր որդի Արշակին, Հռոմեացիները պարթևների դեմ պայքարում օգտագործեցին Մեծ Հայքի զահի նկատմամբ Արտաշեսյանների ազգակից Փառնավազյանների հավակնությունները: Վրացիները իրենց կողմը դրավեցին ալաններին, հյուսիսկովկասյան լեռնականներին և ներխուժեցին Հայաստան: 37 թ. պարթևների և հռոմեացիների միջև կնքված հաշտության պայմանագրով Մեծ Հայքը Իբերիային զիջեց Գոգերձական կուսակալությունը, հայոց թագավոր ճանաչվեց վրաց արքա Փարսմանի եղբայր Միհրդատը: Այնուամենայնիվ, Իբերիայի հետագա հզորացումը չէր նախատեսվում հռոմեացիների արևելյան քաղաքականության մեջ: 51 թ. նրանք միմյանց դեմ դուրս բերեցին Միհրդատին և Փարսմանի որդի Հուգամիդզին: Հաղթանակ տարած Հուգամիդզը կարճ ժամանակով միայն պահպանեց իշխանությունը Հայաստանում: 2-րդ դ. Իբերիայում թագավորում էին Հուգամիդզի որդի Փարսման 2-րդը և նրա սերունդները: Իբերիայի քաղաքական կացությունը կայուն էր մնում նաև 3-րդ դարում: 298 թ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև կնքված Մծբինի պայմանագրով Իբերիայի թագավորը համարվում էր Հռոմի «բարեկամ» և իր տիրակալության հաստատումը պետք է ստանար հռոմեացիներից:

§ 2. ՎՐԱՍՏԱՆԸ ՎԱՂ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

4—6-րդ դարերում կարևորագույն տեղաշարժեր տեղի ունեցան Քարթլիի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Տնտեսական հիմքեր ստեղծվեցին վաղ ավատատիրական հարաբերությունների սաղմնավորման համար:

Նախկինում միասնական ազատ համայնականների զանգվածից (էրի-ժողովուրդ) առանձնացան անմիջական արտադրողները՝ մշակողները (շի-

նականներ) կամ մտփոխներ (գեղջուկներ) և վերնախավք՝ աղետունները (աղատանի)։ Կենտրոնական կառավարումը գլխավորում էր թագավորը (մեփե)։ Նա նշանակում էր հազարապետին (գլխավորում էր պալատի պաշտպանությունը ապահովող հազար հրդուց բազկացած զորամասը և միաժամանակ արքունի տնտեսության կառավարին էր՝ էզոսմոզուարի), այտիախններին (րդեշխ), որոնք կառավարում էին խոշոր վարչական միավորները՝ խեխները (ձոր, փոր) և էրիսթավներին (իշխաններին, բառացի՝ ժողովրդի գլխավորներին)։

Շրջադարձային փոփոխություն կատարվեց երկրի դադարաբաշխական և մշակութային կյանքում։ Միրիան Թագավորի օրոք քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց Քարթլիում։ Այսպիսով, անդրկովկասյան երկրները՝ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը, դառնալով Արևելյան Հռոմեական կայսրությանը՝ Բյուզանդիային դավանակից պետություններ, վերածվում էին Բյուզանդիայի բնական դաշնակիցների՝ զրադաշտականության պատվար Սասանյան Իրանի դեմ պայքարում։

Համապատասխանաբար պարսիկները՝ Բյուզանդիայի դավանական և մշակութային ազդեցությունը Անդրկովկասում թուլացնելու նպատակով, Բազկեղոսի 4-րդ ժողովից (451 թվական) հետո, ամեն կերպ հովանավորում էին միաբնակությունը (հակաքաղկեդոնականությունը) Հայաստանում, Քարթլիում և Աղվանքում, Իր հերթին, Բյուզանդիան ձգտում էր կայսրությունում պաշտոնապես ճանաչված երկարեակ (քաղկեդոնական) եկեղեցուն ննթարկել դավանական առումով միասնական, միաբնակ հայոց, վրաց և աղվանից եկեղեցիները։ Բյուզանդացիները մասամբ իրենց նպատակին հասան 607 թվականին, երբ հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո վրաց հոգևորականությունը Կիրիոն կաթողիկոսի գլխավորությամբ առանձնացավ և հաշեց բյուզանդական (ուղղափառ) եկեղեցուն։

Մեծ Հայքի և Քարթլիի արտաքին քաղաքական դրությունը խիստ ծանրացավ Շապուհ 2-րդի (309—379) երկարատև կառավարման ժամանակաշրջանում, երբ Սասանյան Իրանը եռանդուն կերպով աշխատում էր վերանայել Մծրիսի հաշտության պայմանագիրը և Անդրկովկասի ժողովուրդներին պարտադրել զրադաշտական կրոնը։ Հայաստանը ավերելուց հետո Շապուհը 368 թվականին ներխուժեց Քարթլի և, հա-

լածելով երկրից հոռմեացիների նշանակած Սաուրմազ Թա-
գավորին, զահ բարձրացրեց պարսիկների կողմնակից Վա-
րազ-Բակուրին: 371 թվականին պարսիկները ճանաչեցին
նաև երկրից արտաքսված Սաուրմագի իրավունքները: Նա
ստացավ Քարթլիի այն մասը, որը գտնվում էր Կուր գետի
ձախափնյակում, ընդգրկելով Մցխեթ մայրաքաղաքը: Այս-
պիսով, Մեծ Հայքի առաջին բաժանման (387 թ.) նախօրերին
Քարթլին ևս բաժանվեց Բյուզանդիայի և Իրանի միջև: Քարթ-
լիի հարավային մասն ընկավ Իրանի քաղաքական և մշա-
կութային ազդեցության ներքո, իսկ երկրի հյուսիսային
հատվածը սերտորեն կապվեց Բյուզանդիայի և արևմտա-
վրացական Թագավորության հետ:

Վարազ-Բակուրը և նրա ժառանգները կառավարում էին Քարթլիում
պարսիկների կողմից նշանակված պիտիախշի (Գուդարաց բղջի) վե-
րահանգության ներքո: Պիտիախշին պատկանող ներքին Քարթլիում առա-
վել զգալի էր պարսկական ազդեցությունը, նրա վրա փաստորեն չէր տա-
րածվում վրաց արքաների իշխանությունը: Սասանյանների և ներքին
Քարթլիի պիտիախշների փոխհարաբերությունները հատկապես սերտ
դարձան, երբ հայ նախարարների հետ բազմաթիվ թեկնով կապված Ար-
շուա պիտիախշի (Աշուշա բղջի) որդի Վարսքենը (Վազգեն) 467 թվա-
նանին դրադաշտականություն ընդունեց Տիգրանում և վերադարձավ հայ-
բնիկ: Նրա հետ միաժամանակ Տիգրան կանչված Քարթլիի Թագավոր
Վախտանգ Գորգասալը մնաց Իրանում և հարկադրված էր մասնակցել
դեպի Կասպից ծովից արևելք ընկած շրջանները ձեռնարկված պարսկական
արշավանքներին, ուստի Վարսքենը գործունեության ազատություն ստա-
ցավ Քարթլիում: Նրա վարած բռնի կրոնափոխության քաղաքականության
զոհերից մեկը դարձավ կինը՝ հայոց սպարապետ Վարդան Մոմիկոնյանի
դուստր Ծուշանիկը: Ծուտով Վարսքենը սպանվեց Քարթլիի արքա Վախ-
տանգ Գորգասալի (այդ մականունը նա ստացել էր զայլի գլխի պատ-
կերով սաղավարտ ունենալու համար) հրամանով, և այդ իրադարձույու-
նը շարժառիթ դարձավ պարսկական տիրապետության դեմ ուղղված հայ-
վրացական 480-ական թ.թ. ապստամբության համար: Վախտանգ Թա-
գավորը հույս ուներ օգնություն ստանալ Հյուսիսային Կովկասից պարս-
կական սահմաններին սպառնացող հեծերից, ինչպես նաև Անդրկովկասի
բախտակից ժողովուրդներից: Իրական օժանդակություն ցույց տվեցին
միայն հայերը, որոնք մինչ այդ պարտության էին մատնել թշնամուն

1 Այդ իրադարձություններն են ընկած հայերեն և վրացերեն զանա-
զան խմբագրություններով հայտնի «Ծուշանիկի վկայարանության» հիմքում:

Ակոռիի և ներսահապատի ճակատամարտերում, Հայոց բանակը սպարա-
պետ Վահան Մամիկոնյանի և մարզպան Սահակ Բագրատունու ղեկա-
վարությամբ շարժվեց ղեպի Հյուսիս, Աղվանքից Քարթլի ներխուժած
սլավոնական զորքերին դեմ հանդիման, Լեռներից ղեպի Կուրի հովիտ իջավ
Վախտանգ Գորգասալի բանակը և դաշնակիցները, այլևս չսպասելով հո-
ների աջնությունը, ճակատամարտ տվեցին Ճարմանալի (Ճարմանայն)
դաշտում, Ճակատամարտի սկզբում բացահայտվեց հայ-վրացական ալա-
պանու՝ պարսիկների հետ զործարքի մեջ մտնելու մտադրությունը։ Մաս-
նավորապես, վրաց խոշոր ազնաւորները ցանկանում էին Հայաստանի
օրինակով Քարթլիում ևս վերացնել թագավորական իշխանությունը և
դառնալ լիիրավ տեր երկրում։ Հայ-վրացական ալապանու ղազաճաճական
զործունեություն հետևանքով դաշնակիցները ծանր պարտություն կրեցին։
Հայոց բանակը վերադարձավ հայրենիք և հաջողությամբ շարունակեց
պայքարը պարսիկների դեմ, իսկ Վախտանգ Գորգասալը ապաստան գտավ
Արեւմտյան Վրաստանում, որտեղ և սպանվեց 502 թվականին, իր քաղաքա-
կան հակառակորդների կազմակերպած ղազազորության հետեւանքով։

Վախտանգ թագավորը վրաց պատմությունն առավել նշանավոր զեմ-
քերից է։ Նրա անվան հետ են կապված բազմաթիվ շինարարական ձեռ-
նարկումներ, այդ թվում Տփլիսի բնդարձակումը և մայրաքաղաք դառ-
նալու համար նախադրյալների ստեղծումը։ Իր գետի հովտում չա կա-
ռուցեց Ուշարմա բերդաքաղաքը, նոր եպիսկոպոսական աթոռներ հաստատեց
տարբեր վայրերում։

Վախտանգ Գորգասալի մահից հետո պարսիկները ձեռնամուխ եղան
Քարթլիի վերջնական հնազանդեցմանը և թագավորական իշխանության
վերացմանը։ Պարսկական քաղաքականությունը որոշ ժամանակով հա-
մապատասխանում էր նաև վրաց ալապանու՝ մեծ ազնաւորների շահերին,
որոնք կամենում էին ժառանգական դարձնել պետական խոշոր պաշ-
տոնները։ 523 թվականին Քարթլի թագավոր Գուրգենը, ապավինելով
բյուզանդացիների խոստումներին, ապստամբեց պարսիկների դէմ։ Օժան-
դակություն շատանալով ո՛չ զրսից և ո՛չ էլ յուրայիններից, նա ստիպ-
ված էր ապաստան գտնել Արեւմտյան Վրաստանում։ Այսպիսով, Քարթլիում
վերացվեց թագավորական իշխանությունը, և երկիրը կառավարում էին
պարսիկ մարզպանները։ Քարթլիի խոշոր քաղաքներում և կարևոր ամ-
րոցներում հաստատվեցին պարսկական կայազորներ։ Տեղական բնակ-
չությունը պարտադրվեց հարկ վճարել և ռազմական ծառայություն կատա-
րել հօգուտ պարսիկների։

Պարսկական տիրապետությունը համաժողովրդական
դժգոհություն էր առաջ բերել Քարթլիում, ուստի 572 թվա-
կանին, երբ Հայաստանում վերստին ապստամբություն
սկսվեց պարսիկների դեմ Վարդան (Կարմիր Վարդան) Մա-
միկոնյանի ղեկավարությամբ, այդ շարժմանը հարեցին նաև

վրացիները: Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը կայսրության շահերին ծառայեցրեցին բյուզանդացիները, որոնք պարսիկների դեմ շուրջ քսանամյա պատերազմներից հետո, 591 թվականին հաշտության նոր պայմանագիր կնքեցին պարսիկների հետ: Այդ համաձայնությամբ, երկրորդ անգամ բաժանվեցին Հայաստանն ու Արևելյան Վրաստանը: Բյուզանդացիներին անցավ Քարթլիի մեծ մասը, բայց պարսիկները պահպանեցին իրենց իշխանությունը Ներքին Քարթլիում և Տփլիսում: Այդ ժամանակ էլ, ընդառաջելով վրաց ազնաուրների ցանկությանը, բյուզանդացիները Քարթլիում հաստատեցին էրիսթավարի (բառացի՝ ժողովրդապետի) պաշտոնը: Բյուզանդացիների կողմից նշանակվող այդ պաշտոնյան ղեկավարում էր կառավարման համակարգը, բայց զրկված էր էրիսթավներին՝ իշխաններին ժառանգական իշխանությունից հեռացնելու հնարավորությունից և փաստորեն պետք է դառնար ազնաուրների կամակատարը: Սոցիալ-քաղաքական այս կարևոր տեղաշարժը արտացոլում էր այն առաջընթացը, որ ապրել էր Քարթլին ավատատիրական հարաբերությունների հաստատման ու ամրապնդման ուղիով ընթանալիս:

Մ.թ.ա. 1-ին—2-րդ դարերում կորեոր տեղաշարժեր տեղի ունեցան արևմտավրացական ցեղերի քաղաքական կյանքում: Հռոմեացիները էգրիսիում վարում էին, միասնական պետության ստեղծումը կանխելու նպատակով, առանձին ցեղային միությունների առաջնորդներին (սրանք մեծարվում էին Երասիլան—«թագավոր» բարձրագույն տիտղոսով) հզորացնելու քաղաքականություն: Այդ ցեղային առաջնորդների շրջանում առավելությունն աստիճանաբար անցավ լազերի տիրակալներին: Լազական թագավորության (Լազիկայի) գահակալները իրենց համարում էին Կողքիս արքաների ժառանգորդներ: 4—5-րդ դարերում Լազիկայի թագավորները ստորակայական կախվածության մեջ էին բյուզանդական կայսրերից: Լազերին էր հանձնարարված Լազիկայից Հյուսիսային Կովկասում ող առևտրական ուղիների պաշտպանությունը: Լազիկային տիրանալու ծրագրեր էին մշակում Սասանյանները, Իրանը, ելնելով իր տնտեսական շահերից, մտադիր էր ելք ձևոք բերել դեպի Սև ծով Լազիկայի տարածքում և ապահովել Միջին Ասիայից հեղու և Արևմուտք տանող առևտրական կարևորագույն ուղու անխափան գործառությունը: Պարսկա-բյուզանդական հակամարտությունում Լազիկայի դիրքորոշումը զգալի չափով պայմանավորված էր լազերի զավաճական պատկանելությամբ: Քրիստոնեացի-

Յուսմը քաղականապես ազդեցություն էր ձեռք բերել Լադիկայում դեռևս 4-րդ դարում, ընդ որում նրա առաջնումը գործուն աշակցություն էր ստանում բյուզանդացիների կողմից: Լադիկայի տիրակալ Մալեն, պարսիկների հետ սերտ հարաբերություններ հաստատելու անհաշիվ փորձից հետո, քրիստոնեություն ընդունեց 525 թ. և թագավոր հաստատվեց: Այսպիսով, քրիստոնեությունը պետական կրոնի նշանակություն ձեռք բերեց Լադիկայում:

Եռստով սկսված պարսկա-բյուզանդական պատերազմում Լադիկայի թագավորությունը փորձեց օգտագործել արենթ-արևմուտք առևտրական ուղիների նկատմամբ վերահսկողություն հաստատելու առումով երկրի առանցքային դիրքը և անկախություն ձեռք բերել: 542—555 թվականներին տեղի ունեցած պատերազմի ընթացքում լադերը գաշնակցում էին մեթ պարսիկների, մեթ բյուզանդացիների հետ, բայց հաջողության չհասան: 562 թվականին հաշտության պայմանագիր կնքվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, որի համաձայն Սասանյանները հրաժարվում էին Լադիկայի նկատմամբ իրենց հավակնություններից: Լադիկան շարունակում էր ենթարկվել բյուզանդացիների գերիշխանությանը: Երկիրը աստիճանաբար կորցնում էր ինքնուրույնության մնացորդները: 7-րդ դարի վերջում Լադիկայում օրասիլեսիս փոխարեն երկիրը կառավարում էր բյուզանդական կառավարիչը, որը կուրադազատի տիտղոս էր կրում: 7-րդ դարի առաջին կեսում, հատկապես Հերակլ կայսեր (610—641) արշավանքներից հետո, Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունը մեծացավ նաև Քարթլիում, որտեղ շարունակում էր կառավարել բյուզանդացիների գաշնակից էրիսմթավարը:

Քաղաքական իրադրությունը ամբողջ Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում և Վրաստանում շրջադարձային փոփոխություններ կրեց արաբների արշավանքների հետևանքով: Արաբական նվաճումների առաջին ալիքի ավարտից հետո, Վրաստանում ևս հաստատվելու նպատակով խալիֆայությունը 7-րդ դարի երկրորդ կեսում հենակետեր ստեղծեց այնտեղ: Արաբների գործողությունները մասամբ դուրացնում էին վրացիները, որոնք միաժամանակ պայքար էին մղում նաև բյուզանդացիների ու խաղարների դեմ, ուստի երբեմն դիմում էին արաբների օգնությանը: Օրինակ, 697 թվականին Արևմտյան Վրաստանի կառավարիչը ապստամբեց բյուզանդացիների դեմ և իր երկիր հրավիրեց արաբներին: Եթե արաբները, այնուամենայնիվ, չհաստատվեցին

էրբիսում, ապա 8-րդ դարում նրանք իրենց հսկողութեանը ենթարկեցին Քարթլին: Արևելյան Վրաստանը, Հայաստանի և Աղվանքի հետ միասին, մտավ Արմինիա նահանգի կազմի մեջ: Քարթլիում կառավարումը իրականացնում էր արաբ ամիրան (սատրպանը), որն ուներ ռազմական, վարչական, դատական բարձրագույն իշխանություն: Նրան էր ենթարկվում Քարթլիի էրիսմթավարը, որը հավաքում էր պիտական հարկերը և առաջնորդում վրացիներից հավաքվող զորքը: Տեղական բնակչության համար չափազանց ծանր էր արաբների հարկային լուծը:

Հատկապես անտանելի էին հնչուն դրամով վճարվող չիդյաթը (գլխահարկ) և խարաջը (հողահարկ): Արաբական տիրապետությունը առավել ծանր դարձավ 750 թվականին Աբբասյանների հարստության գահ բարձրանալուց հետո, երբ խալիֆայության մայրաքաղաք դարձավ Բաղդադը: Բայց և այնպես, արաբական տիրապետությունը ի վիճակի չեղավ կասեցնել երկրի տնտեսական առաջընթացը, հատկապես խալիֆայության 9-րդ դարում սկսված թուլացման պայմաններում: Միաժամանակ, կարևոր սոցիալ-քաղաքական վերափոխումներ տեղի ունեցան վաղ ավատատիրական Վրաստանում: Մոտավորապես 8-րդ դարի 40—50-ական թվականներին, Արշիլ էրիսմթավարի օրոք, երկրի տարածքի շուրջ կեսը բաժանվեց էրիսմթավաներին, որոնք այսուհետև իրենց էրիսմթավություններին (իշխանություններին) տիրում էին ոչ թե որոշակի ժամանակի ընթացքում, այլ վերածվել էին ժառանգական սեփականության իրավունքով իրենց տիրած տեղերում իշխող տիրակալների: Սոցիալական կայքի առաջացան ավատատերերի դասակարգի զանազան խավերի միջև: Եռշոր ու հզոր հողատերը՝ «մամաուփալին» (սհայր տերը) համարվում էր պահած ազդեցիկ և սենյորից հողային տարածք ստացած ազնվականի՝ «շվիլի» (սորդու) հովանավորն ու պաշտպանը: Այսպիսով, կազմավորվում էր գերակա-ստորակայական (սյուզերեն-վասալային) հարաբերությունների վրա խորոխված ավատատիրական աստիճանակարգությունը: Ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով Քարթլիում, ինչպես նաև վրացական այլ երկրամասերում, 8-րդ դարում առաջացան խոշոր իշխանություններ, որոնք այսուհետև համառ պայքար էին ծավալելու առաջնություն ձեռք բերելու և ողջ Վրաստանը իրենց գլխավորությամբ միավորելու նպատակով:

Արաբներից անկախանալու առաջին փորձերը ձեռնարկողներից էր Իոր և Ալազան զեմեթի հովիտներում ընկած Կախեթի իշխանությունը: Արաբների հետ ռազմական բախումներում հաճախ հաղթանակ տանելով՝ Կախեթի իշխա-

ներ 8-րդ դարի վերջում փաստորեն լիակատար ինքնուրույնություն էր հասել: Արևելյան Վրաստանում առաջացած հզոր պետական կազմավորումներից էր Հերեթի իշխանությունը: Այդ երկրամասը, որն արևելքից սահմանակից էր Կախեթին և հնագույն ժամանակներում բնակեցված էր աղվանական ցեղերով, Կախեթի մշտական մրցակիցն էր արական տիրապետության ժամանակաշրջանում:

8-րդ դարի վերջում բացառիկ բարենպաստ պայմաններում էր գտնվում Արևմտյան Վրաստանը: Արաբների իշխանությունը այստեղ երկարատև չեղավ և ի վիճակի չէր կսեցնել երկրամասի տնտեսական առաջընթացը: Մյուս կողմից, աստիճանաբար անվանական էր դառնում բյուզանդացիների գերիշխանությունը:

Այսպիսով, էդրիսը առավել հիմնավոր նախապայմաններ ուներ ոչ Վրաստանը միավորելու համար: Արևմտյան Վրաստանում քաղաքական առաջնությունը նվաճեցին Ափսաղթի տիրակալները: 8-րդ դարի 80-ական թվականներին Լևոն 2-րդը «Ափսաղաց թագավոր» հռչակվեց, իսկ նրա հաջորդները, համավրացական շահերի արտահայտիչներ դառնալով, եռանդուն զործունեություն ծավալեցին թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան Վրաստանը իրենց իշխանության ներքո վերստին ի մի բերելու համար:

Վրաց պետականության վերականգնման կենտրոններից մեկը դարձավ նաև Տայք-Կղարչքը, որտեղ 8-րդ դարի վերջին քառորդում հաստատվեց Հայաստանից տեղափոխված Բագրատունիների մի ճյուղը:

Հայ-վրացական խառը րնակչություն ունեցող Տայքը և Կղարչքը, Մեծ Հայքի թագավորության երբեմնի մասերը, բյուզանդական իշխանությունների կողմից խրախուսվող քաղկեզոնականացման պայմաններում հետզհետե վերածվում էին գերազանցապես երկրորդայնություն դավանող և աստիճանաբար վրացականացող տարածքների, Աշոտ Բագրատունին նորոգեց արաբների ավերած Արտանուշ բերդաքաղաքը և դարձրեց իր նստոցը: Սերա կապեր հաստատելով բյուզանդացիների հետ, նա կայսրից ստացավ կուրապաղատի տիտղոս և դարձավ վերջինիս դաշնակիցը արաբների դեմ պայքարում:

9—10-րդ դարերում տեղական իշխանության վերածվեց նաև Տփլիսի արաբական ամիրայությունը, որի տիրակալները չէին Լևոնի Թարկվում խալիֆին և բազմազան հարաբերու-

թյունների մեջ էին հարևան վրացական ու հայկական իշխանությունների հետ:

Վրացական իշխանությունների միջև առաջնության համար ընթացող պայքարը սրվեց 9-րդ դարի սկզբում: Գլխավոր հակառակորդներն էին Կախեթի իշխանները, Տայք-Կղարջքի Բագրատունիները, Ափսազքի թագավորները, Այդբախումներին հաճախ միջամտում էին հայոց իշխանները, մասնավորապես Շիրակի Բագրատունիները: 10-րդ դարի վերջում հակառակորդների շրջանում բացահայտ առավելությունը պատկանում էր Տայքի Դավիթ կուրապաղատին, որը բյուզանդացիներից ընդարձակ տարածքներ էր ստացել հարևան հայկական գավառներում: Նա էլ գլխավորեց Վրաստանի միավորման գործը, օժանդակելով միացյալ վրացական պետության գահի հանձնմանը իր որդեգիր և ազգական Բագրատ Բագրատունուն: Վերջինս Ափսազաց թագավոր Թեոդոսի քրոջ որդին էր և համարվում էր Արևմտյան Վրաստանի ապագա տիրակալ: Բագրատի հայրը՝ Դուրգենը, Տայքի հյուսիսային մասի տիրակալն էր և որդուն պետք է ժառանգություն թողներ այսպես կոչված «վրաց թագավորությունը»: Դառնալով նաև Դավիթ Կուրապաղատի ժառանգորդ, Բագրատ Բագրատունին հնարավորություն էր ձեռք բերում իր իշխանության ներքո միավորել վրացական երկրամասերի մեծ մասը: 975 թվականին Բագրատը թագավոր հռչակվեց Քարթլիում, իսկ երեք տարի անց նաև Ափսազքում: Այսպիսով, հիմք դրվեց միացյալ թագավորության ստեղծմանը:

§ 8. ՎՐԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՅԱՆ ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բագրատ 3-րդը (975—1014) իր թագավորության սկզբում հետևողական պայքար մղեց Քարթլիի աղետուրների դեմ, որոնք լեին ցանկանում հնազանդվել նորընտիր արքային, Առանձնապես համառորեն էր դիմագրում Քոնդքի տիրակալ Ռատ Բազվաշը: Ի վերջո, նա ևս ստիպված եղավ հպատակվել և Կղեկարի բերդով հանգերձ թագավորին հանձնել Քոնդքը: Բագրատ 3-րդի տիրույթները նկատելիորեն ընդարձակվեցին 1008 թվականին, երբ հոր մահից հետո նրան տեցան Հյուսիսային Տայքը (այդ նահանգի հիմնական մասին Դավիթ Կուրապաղատի կտակի համաձայն 1001 թվականին տիրացել էր Բյուզանդիան), Սամցխեն և Զավուխքը:

Հաշարդ տարիների ընթացքում թագավորության կազմի մեջ մտցվեցին
Կախեթը և Հևրեթը:

11-րդ դարի առաջին կեսում վրացական թագավորության
հետագա հզորացման գլխավոր հակառակորդ դարձավ Բյու-
զանդիան, որը խրախուսում էր թագավորական իշխանության
դեմ ուղղված խռշոր ավատատերերի գործունեությունը, իսկ
անհրաժեշտության դեպքում չէր խուսափում նաև պատե-
րադմական գործողություններ ծավալելուց:

Գեորգի 1-ինը (1014—1027) այդպես էլ չկարողացավ գրավել Տաթրի
բյուզանդական մասը, 1021—1022 թվականներին Բյուզանդական կայս-
րությունը պարտության մատնեց Վրաստանին և ստիպեց ծանր պայ-
մաններով հաշտության պայմանագիր ստորագրել: Թագաժառանգ Բագ-
րատը 3 տարով պատանդ տրվեց բյուզանդացիներին, Բագրատ 4-րդի
(1027—1072) կառավարման սկզբում, երբ թագավորը դեռևս մանկահա-
սակ էր, գլխավոր վտանգը նրան սպառնում էր Կղզեկարի հզոր էրիսթավ
կիպարիտից, որը վայելում էր բյուզանդացիների հովանավորությունը:
Բյուզանդացիները Բագրատ 4-րդի դեմ դուրս բերեցին նաև նրա խորթ
նորայր Դեմետրիին:

Նրկարատե պայքարը վրաց թագավորների և բյուզան-
դացիների միջև դադարեց միայն սելջուկ-թյուրքերից սպառ-
նալից վտանգի սաստկացման պայմաններում:

Սելջուկ-թյուրքերը Հայաստան և Վրաստան կատարած հետախուզա-
կան արշավանքներից հետո Ալի-Արսլան (1063—1072) սուլթանի օրոք
ես երկու անգամ Գերխուժեցին այդ երկրները: Սկզբից նրանք մտան Զա-
վախք և գրավեցին Ախալքալաքը: Ահաբեկված քնակչությունը ապաստան
գտավ Քարթլիում: 1068 թվականին սելջուկյան սուլթանը դարձյալ ավե-
րեց Վրաստանը և բազմաթիվ ամրոցներ հանձնեց Գանձակի ամիրա Փառ-
լունին, որը Բագրատ 4-րդի թշնամին էր:

1071 թվականին Մանազկերտի ճակատամարտում բյու-
զանդացիներին ջախջախելուց և 1074 թվականի պայմա-
նագրով Բյուզանդիայի արևելյան պրովինցիաների մեծ մա-
սը գրավելուց հետո, թյուրքերը անելանելի վիճակի մեջ
դրեցին Բագրատ 4-րդի որդի Գեորգի 2-ին (1072—1089):
Թագավորը հարկադրված էր անձամբ ուղևորվել Մելիք-շահ
սուլթանի նստավայրը՝ ընդունել սելջուկ-թյուրքերի գերիշ-

խանությունը և ամենամյա հարկ վճարելու պարտավորու-
թյուն ստանձնելու Թշնամուց բացի, թագավորին անելանելի
վիճակի մեջ էին դնել անհնազանդ իշխանները, որոնք, օգտը-
վելով իրադարձությունների ընթացքից, նորանոր պահանջ-
ներ էին ներկայացնում Գեորգի 2-րդին: Այսպիսին էր իրադ-
րությունը Վրաստանում, երբ 1089 թվականին, հավանա-
բար արքունիքի հայրենասեր ուժերի կազմակերպած սյա-
լատական հեղաշրջման հետևանքով, գահ բարձրացավ իշ-
խանությունից տակավին երիտասարդ հասակում հեռացված
Գեորգի 2-րդի տասնվեցամյա որդին՝ Դավիթ 4-րդ Շինա-
բարը: Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար նոր
գահակալը պետք է լուծեր ներքին կյանքում իր առջև ծա-
ռացած անհետաձգելի հարցերը և ապա ձեռնամուխ լիներ
պետական անկախության վերականգմանը և ավարտին
հասցնեի Վրաստանի վերամիավորումը:

Դավիթ Շինաբարի թագավորության սկզբում նրա տիրույթները սահ-
մանփահելում էին միայն Արևմտյան Վրաստանով, քանի որ Կախեթը և
Հերեթը առանձին թագավորություն էին կազմել, իսկ Փարթևում տիրում
էին թյուրքերը: Ուստի, զոռա թույլ թագավորը իր վերանորոգիչ զոր-
ծունեությունը սկսեց ներքին կյանքի կարգավորմամբ, ուշադիր հետևելով
նաև արտաքին աշխարհում կատարվող փոփոխություններին, որոնք բա-
րենպաստ հող էին նախապատրաստում նրա նպատակների իրականացման
համար:

Ի տարբերություն հոր, Դավիթ 4-րդը վճռական և ան-
զիջում պայքար սկսեց մեծատոհմիկ ազնառյուների դեմ:
Թագավորական իշխանության վարած այս նոր քաղաքա-
կանության շնորհիվ ձեռք բերվեց ներքին միասնություն,
որը Դավիթ Շինաբարի հետագա հաջողությունների կարևոր
նախապայմաններից մեկը դարձավ:

Շուտով հօգուտ Վրաստանի սկսեց փոխվել նաև արտա-
քին իրադրությունը: Նախ՝ անկման ու քայքայման ուղին
բռնեց անվերջ պատերազմներից ու ներքին խռովություննե-
րից թուլացած սելջուկյան սլետությունը: Հետևաբար, Դա-
վիթ 4-րդը պետք է պայքար մղեր զգալիորեն թուլացած
հակառակորդի դեմ: Ապա՝ 1096 թվականին սկսված խա-

չակրած առաջին և բշավանքը նշանակալիորեն փոխեց իրադրությունը Արևելքում։ Սելջուկ-թուրքերը հարկադրված էին մեծ ուշադրություն նվիրել խաչակիրների դեմ պայքարին և այդ զգալի ուժեր էր խլում նրանցից։ Բացի այդ, նոր հիմնադրված խաչակրաց պետությունների դեմ անընդհատ կռիվները ստիպում էին թյուրքերին մարտնչել տարբեր ճակատներում և զրկում էին նրանց Վրաստանի դեմ ամբողջ ուժով պայքարելու հնարավորությունից։

Օգտվելով ստեղծված նպաստավոր իրադրությունից, Դավիթ 4-րդը 1099 թվականին դադարեցրեց այն հարկի վճարումը, որը ստանձնել էր Գեորգի 2-րդը և բացարձակ պայքարի անցավ թյուրքերի դեմ։ Առաջին խոշոր հաջողությունը Սամշվիլիդե բերդաքաղաքի գրավումն էր 1110 թվականին, ապա Ռուսթավի ազատագրումը հինգ տարի հետո։ Սակայն ամբողջ Քարթլիի և Տիֆլիսի գրավումը հետաձգվեց մինչև 20-ական թվականները։ Դավիթ Շինարարի առաջխաղացման երկրորդ կարևոր ուղղությունը արևելքն էր, ուր գեոռն դոյատևում էր Հերեթ-Կախեթի թագավորությունը։ 1103 թվականին Կախեթը և Հերեթը վերստին մտան Վրաստանի սահմանները, իսկ 1117 թվականին ավարտվեց ողջ Արևմտյան Վրաստանի վերամիավորումը։ Շարունակելով առաջխաղացումը, վրացական զորքերը հաջորդ տարիներին Դավիթ 4-րդի տերության կազմի մեջ մտցրեցին Շիրվանը։ 12-րդ դարի առաջին քառորդում Վրաստանի սահմանները զգալիորեն ընդարձակվեցին նաև արևմուտքում և հյուսիսում։ Հարավում վրացական բանակը գրավեց Լոռե-Տաշիրի (Ձորագետի) Կյուրիկյանների հայկական թագավորությունը և սահմանակից մի շարք բերդեր, ինչպես նաև հաստատվեց Անիում (1124 թվական), թեև որոշ ժամանակ անց հարկադրված էր թողնել Բագրատունիների երբեմնի մայրաքաղաքը։

1121 թվականին Դիդգորի ճակատամարտում Դավիթ Շինարարը վճռական պարտության մատնեց մահմեդականների միացյալ բանակին և հաջորդ տարում ազատագրեց Տիֆլիսը, ավարտին հասցնելով Վրաստանի վերամիավորումը։ Վրացական թագավորությունը Դավիթ Շինարարի օրոք ընդ-

գրկում էր Անդրկովկասի մեծ մասը և դարձել էր Մերձավոր Արևելքի ամենահզոր պետություններից մեկը:

Արտաքին քաղաքական այս մեծ հաջողությունները պայմանավորված էին Դավիթ 4-րդի իրականացրած պետական բարեփոխումներով:

Այսպես, թագավորական իշխանության շահերը պահանջում էին պետությանը ենթարկել եկեղեցին և այն ևս ի սպաս դնել կենտրոնական իշխանության ամրապնդմանը: 1103 թվականին թագավորի շանքերով հրավիրված Ռուխ-Ուրբնիսի եկեղեցական ժողովը ընդունեց մի շարք այնպիսի որոշումներ, որոնց հետևանքով վրաց եկեղեցին ստիպված էր ենթարկվել պետության վերահսկողությանը: Հզալի բարեփոխումներ մտքով էին պետական նապարատում, նա միավորեց մինչ այդ առանձին-առանձին գոյություն ունեցող ճշդագիտի (Արևմտյան Վրաստանում գտնվող Ճղոնդիդի եպիսկոպոսի) և մծիգնորարթուխուցիսի (արքունի գրասենյակի պետի) պաշտոնները և նոր պաշտոնյան՝ ճղոնդիդի-մծիգնարարթուխուցեսը դարձավ առաջին դեմքը արքունիքում: Միաժամանակ, թագավորը նրա միջոցով կարող էր վերահսկել և միջամտել եկեղեցական գործերին: Այդ պաշտոնյայի զվարավորությամբ թագավորը ստեղծեց հատուկ դատական ատյան, որին և հանձնվեցին կարևոր դատական գործերը: Ռազմական ասպարեզում ամենակարևոր միջոցառումը դարձավ մշտական զորքի ստեղծումը: Դավիթ Շինարարը Վրաստան հրավիրեց մշտական բնակչության համար 45 հազար ղվիչադական ընտանիք, որոնցից հավաքագրվում էր թագավորական ընտիր զորաբանակ:

Այսպիսով, Վրաստանը կարճ ժամանակամիջոցում դարձավ քաղաքականապես և տնտեսապես բարգավաճ պետություն և ստանձնեց Անդրկովկասի ժողովուրդներին համախմբող ուժի դերը:

Բագրատ 4-րդի և Դավիթ Շինարարի կառավարման ժամանակաշրջանում հատկապես սերտ և ընդգրկուն դարձան հայ-վրացական դարավոր առնչությունները:

Անիի թագավորության անկումից հետո Վրաստանում էին ռազմական ծառայության մտնում հայ զորականները, հյուսիս էին տեղափոխվում հայ վաճառականներն ու արհեստավորները: Բնակչության այս խավերի նկատմամբ Դավիթ Շինարարը առանձնահատուկ հոգածություն ցուցաբերեց և նրանց մեծ մասին բնակեցրեց Գորի քաղաքում:

Աւրտացան մշակութային փոխշփումները 12-րդ դարում Գալիթ Շինարարի կրտսեր ժամանակակիցներից մեկը հայերեն թարգմանեց «Փարթիս» ցիտովերտան, Հյուսիս-արեւելյան Հայաստանի բնակչութունը ողորդութամբ էր բնորոշում վրաց արքաների գործունեությունը և Լուսնդուն մասնակցություն էր բերում թուրքերի դեմ ուղղված մարտական գործողություններին։ Ի դեմս վրաց արքաների, հայ բնակչությունը տեսնում էր հայ Բագրատունիների օրինական ժառանգորդների, Այսպիսով, հայ-վրացական դինակցությունը զաղափարախոսական հիմնավորում էր ստանում։

Գալիթ Շինարարի մահից հետո, Դեմետրե 1-ինի (1125—1156) օրոք վրացական թագավորությունը ի վիճակի չեղավ շարունակել հարձակողական քաղաքականությունը՝ մահմեդական ամիրայությունների համառ զիմադրության և ներքաղաքական սուր պայքարի պատճառով։

Գևորգի 3-րդի (1156—1184) կառավարման ժամանակաշրջանում երկու անգամ, 1161 և 1174 թվականներին, ժամանակավորապես գրավվեց Սնին։ Բաղավորական իշխանությունը ուժերի մեծ լարումով կարողացավ հաղթահարել ներքին ճգնաժամը և 1176—1177 թվականներին ճնշել ամիրապետալար (գլխավոր գորահրամանատր) Իվանն Օրբելու գլխավորած ավատատիրական խոշոր ապստամբությունը։

Այնուամենայնիվ, 12-րդ դարի վերջում վրաստանը թեւակոխեց արտաքին քաղաքական խոշոր հաջողությունների, տնտեսական առաջընթացի, մշակութային վերելքի («Ռուսթավիլու դարաշրջան») փուլ, որը կապվում է Թամար թագուհու (1184—1207/1210) անվան հետ։ Վրացական թագավորության նոր վերելքին նպաստեցին երկու կարևոր գործոնները՝ նախ՝ թուլացան վրաստանին հարևան մահմեդական քաղաքական կազմավորումները, բարենպաստ քաղաքական իրադրություն առաջացավ հատկապես Հայաստանում հարձակման անցնելու համար։ Ապա՝ Թամար թագուհին կարողացավ հաղթահարել դեռևս հոր օրոք սկզբնավորված ներքաղաքական սուր ճգնաժամը։ Ծնշելով ավատատերերի տարբեր խմբավորումների հիւլյթներն ու զինված ապստամբությունները (երկիցս դրանք գլխավորում էր Թամարի առաջին ամուսինը՝ Յուրի Բոգոլյուբսկին, որին վրաստանում Գեորգի Ռուս էին անվանում), արքունիքը նաև

որոշ զիջումների դիմեց: Այսուհետև մահմեդականներից դրավժած տարածքները ժառանգական տիրակալություն պայմանով անցնում են Քամարի զորահրամանատարներին, որոնց շրջանում բացառիկ դիրք գրավեցին հայ իշխանները՝ Սարգիս Մեծը, նրա որդիներ Զաքարեն և Իվանեն:

Վրացական թագավորության արտաքին քաղաքականությունը ընդգծված հարձակողական բնույթ ընդունեց: Զաքարյան իշխանները ընդարձակ տարածքներ ազատագրեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և արևելյան գավառներում, սակայն չկարողացան արտաքսել թշնամուն Հարավային Հայաստանից: Վրաստանի արտաքին քաղաքական կացությունը ամրապնդելու առումով մեծ դեր կատարեցին երկու կարևոր հաղթանակները, 1195 թվականին Քամարի զորավարները և երկրորդ ամուսինը՝ օս թագավորապն Դավիթ Սոսլանը, պարտության մատնեցին Շամքորի ճակատամարտում Գանձակի աթաբեկին: Յոթ տարի անց, 1202 թվականին, Բասենում ջախջախվեց Իկոնիայի սուլթան Ռուք ադ-Դինի հսկայական բանակը: 13-րդ դարի սկզբին, 4-րդ խաչակրաց արշավանքի ժամանակ Կոստանդնուպոլիսը ավերվելուց հետո, Քամար թագուհու օժանդակությամբ հիմնադրվեց Տրապիզոնի կայսրությունը, որի տիրակալները ազդակցական կապեր ունեին վրաց Բագրատունիների հետ:

Քամար թագուհու կառավարման վերջին տարիներին վրացական պետությունից ստորակայական կախվածության մեջ էին գտնվում մի քանի մահմեդական կազմավորումներ: Վրաստանը համարվում էր Մերձավոր Արևելքի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը:

Վրաստանի համար անսպասելի և դաժան պատմական փորձությունների շղթա սկսվեց 13-րդ դարի 20—30-ական թվականներին: 1220—1221 թվականներին Զեքեի և Սուբադայի գլխավորած մոնղոլական հետախուզական արշավանքը, որին զոհ գնաց Գեորգի-Լաշա թագավորը, միայն սկիզբն էր նոր արհավիրքների: Այնուհետև, յոթ տարի շարունակ (1225—1231 թվականներ) Վրաստանը ենթարկվեց մոնղոլների կողմից հայրենիքից հալածված խորեզմշահ Զալալ ադ-

Դինի զորքերի ասպատակութիւններին: Ետեղմցիներն ար-
շավանքները ոչ միայն թուլացրեցին վրացական թագավո-
րութիւնը տնտեսական ու ռազմական առումով, այլև, խո-
րացնելով ներքաղաքական ճգնաժամը, նպաստեցին խոշոր
ավատատերերի անշատողական ձգտումների գրգռմանը:

1236 թվականին մոնղոլները, առանց նկատելի դիմա-
դրութիւն հանդիպելու, գրավեցին ողջ Արևելյան Վրաստա-
նը: Վրաց իշխանները մեկը մյուսի հետևից հնազանդվեցին
նվաճողներին և նրանց հանձնեցին իրենց տիրույթները:
Մոնղոլները Վրաստանը բաժանեցին թումանների, որոնցից
յուրաքանչյուրը տարտավոր էր նվաճողներին տրամադրել
10 հազարանոց օժանդակ զորք՝ հեռավոր տարածքներ ձեռ-
նարկած արշավանքների ժամանակ: Կառավարման հին հա-
մակարգը պահպանեց իր գոյութիւնը, վրաց իշխանների
մեծ մասը շարունակում էր տիրել սեփական տիրույթներին:
Թագավորական իշխանութիւնը թուլացնելու նպատակով
մոնղոլները վրացական Շահր հանձնեցին միաժամանակ
Թամար թագուհու երկու թոռներին՝ Գեորգի-Լաշաժի որդի
Ուլու (Ավաղ) և Ռուսուդանի որդի Նարին (Կրասեր) Դավիթ-
ներին, հիմք դնելով Վրաստանի հետագա երկատմանը:
Թնակչութիւնը ենթարկվում էր մոնղոլների հարկային լծին,
որը հատկապես ծանրացավ 1254 թվականին անցկացված
աշխարհագրից հետո: 1256 թվականին, երբ Վրաստանը
մացվեց Զինգիզ-խանի ժառանգներից Հուլաղու խանի ստեղ-
ծած պետութիւն՝ իլխանութիւն սահմանների մեջ, բնակ-
չութիւն վիճակը է՛լ ավելի վատթարացավ:

Դեռևս 1247 թվականին վրաց իշխանները հավաքվեցին
Կախտաթավի կոչված վայրում և որոշեցին ապստամբել
մոնղոլների դեմ: Հավաքի մասնակիցները չհասցրեցին ուժեր
գումարել և վճռական զործողութիւնների դիմել: 1259 թվա-
կանին վրաց և հայ իշխանները երկրորդ անգամ ապստամ-
բեցին: Մոնղոլական պատժիչ զորաշուկաւի հետ բախումից
հետո ապստամբութիւնը նախաձեռնող Դավիթ Նարինը
անցավ Արևմտյան Վրաստան, իսկ Ուլու Դավիթը ամրացավ
Մամջիստում, որի տիրակալ Մարգիս Ջաղելին հավատարիմ
էր մնացել վրաց արքային: Ի վերջո, ապստամբների այս

խումբը ևս տեղափոխվեց Արևմտյան Վրաստան և հարկա-
վաճած եղավ վերստին հնազանդվել մոնղոլներին:

Հարցն այն է, որ Ուլու Դավիթի աստամբելու ընթացքում մոնղոլները
իրենց ստեղծած վարչական միավորի՝ Գյուրջիստանի վիլայեթի կառավա-
րումը հանձնել էին այս վաճառական Շնորհավորին, որը հայտնի է վրա-
ցական աղբյուրներում Շադին անունով: Ուստի վրաց արքան ստիպված
էր մեկնել Պարտա, որտեղ իլխանի նստոցն էր, բացատրություն տալու
Հուլաղուի առջև Ուլու Դավիթը, այնուամենայնիվ, վերստացավ իր տի-
րույթները Արևելյան Վրաստանում, իսկ Դավիթ Նարինը մնաց երկրի
արևմտյան մասում:

Մոնղոլները դաժան հաշվեհարդար տեսան ապստամբու-
թյան մասնակիցների հետ: Մահապատժի ենթարկվեցին նաև
հայ իշխանները՝ Վրաց թագավորության ամիրսպասալար,
Ջաքարե ամիրսպասալարի թոռ Ջաքարե Ջաքարյանը և իսա-
չենի տիրակալ Հասան Ջալալը: Ավերածությունների են-
թարկվեցին բազմաթիվ վրացական ու հայկական երկրա-
մասեր:

Ուլու Դավիթի որդու՝ Դեմետրե 2-րդի (1270—1289) կառավարման
օրոք Արևելյան Վրաստանում և Գյուրջիստանի վիլայեթի կազմի մեջ
մտնող Հյուսիս-արևելյան Հայաստանում փաստական իշխանությունը
պատկանում էր Մահկանաբերդցիների հայկական իշխանական տան ան-
դամներ Սադունին և նրա որդի Էսթյու Բուդային: Թագավորական իշխա-
նությունը առավել ևս կորցրեց իրական հզորությունը Դեմետրե 2-րդի
որդիների օրոք, երբ Ղազան իլխանը իրար դեմ էր դուրս բերում նգրայր-
ներին և զահակական պայքար բորբոքում երկրում:

Մոնղոլական տիրապետության հետևանքները խիստ
ծանր էին: Վրաստանը տնտեսական խոր անկում էր ապրում,
թուլացնել էր թագավորական իշխանությունը, միացյալ թա-
գավորությունը տրոհվել էր առանձին մասերի: 13-րդ դարի
վերջում Վրաստանի տարածքում առաջացել էին փաստորեն
միմյանցից անկախ և տարբեր քաղաքական կացության մեջ
գտնվող երեք պետական կազմավորումներ (Արևելյան Վրաս-
տանի թագավորություն, Արևմտյան Վրաստանի թագավո-
րություն, Սամցխեի իշխանապետություն), որոնց միավորումը
վիճակված էր իրականացնել Դեորդի 5-րդ Պայծառ (1314—
1346) արքային:

1316 Բվականին Օլաֆ իշխանը մահացավ և նրան փոխարինեց տակու-
վին պատանի Աբու Սալիբը: Վերջինս վերանայեց իշխանության հարկային
քաղաքականությունը՝ մասնավորապես սահմանափակելով ձեռնավորների
ապօրինի հարկապահանջությունը: Այդ առումով եղանակոր է Անիում Թո-
ղած նրա պարսկերեն հրովարտակը, ուր խոսվում է քաղաքային տնտե-
սության անկման և ընդլայնված հարկադրական գաղթի մասին: Նույն
իրավիճակն էր և բուն Վրաստանի բաշաքներում: Օգտվելով Չոփան-Նոյինի
հետ ունեցած իր փոխադարձ վստահությունից, Գեորգի Պայծառը Հորդա
ղեաց և ճանաչվեց որպես ամենայն Վրաստանի տիրակալ, որին պետք է
ենթարկվին վրաց բոլոր իշխանները (մթավարները), այդ թվում և իր
եղբոր՝ Գալթի ժառանգները, ինչպես նաև Սամցխեի, Հերեթի ու Սոմխի-
թի տերերը: Երկրի վարչական ու տնտեսական ամբողջությունը վերա-
կանդնելուն մեծապես խանդարում էր Քաթլիի լեռնային շրջաններից կա-
տարվող հրոսակությունը, որի հետևանքով երկրագործությունը նվազել էր,
ընդլայնված նշանակալի մասը կոտորվել կամ փախստական (բզանո)
դարձել: Գեորգի Թագավորը կարճ ժամանակամիջոցում կարողացավ վերջ
դնել միջհամայնքային բաշքուկին, արգելակել լեռնաբնակ օսերի տեղա-
շարժը դեպի դաշտային գոտի, կրճատել իշխանության ձեռնավորների ու
զինվորականության թիվը:

1329 Բվականին նա արշավեց Արևմտյան Վրաստան,
տիրացավ Քութայիսին, իսկ մի քանի տարի անց՝ 1334-ին
իրեն ենթարկեց նաև Սամցխեի իշխանապետությունը: Աս-
տիճանաբար հնարավոր դարձավ վերականգնել Վրաստանի
հղորդության շրջանի պետական-վարչական կառուցվածքը:
Առևտրի աշխուժացումը, երկրագործության բնականոն ըն-
թացքը և երկրի ամբողջականության հաստատումը նպաստե-
ցին Վրաստանի միջազգային կուսերի ամրացմանը:

Պատահական չէ, որ Հոսի բաղնի հրահանգով կաթոլիկ քարոզիչների
արևելյան կենտրոնը Զմյառեիայից փոխադրվեց Տփլիս, իսկ Նզդատոսի
սուրբանը արտոնեց վրաց ուխտավորների երթևեկը Պաղեստին, նախկին
տիրոջը վերադարձնելով Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքը:

Գեորգի Պայծառի օրոք Վրաստանի տնտեսական ու քա-
ղաքական առաջադիմության գլխավոր վկայություններից է
«Գեորգյան» կոչվող արձաթն լեարձեք դրամի հատումն ու
շրջանառությունը: Գեորգիի Լվանճումները պահպանվեցին
նրա հաջորդի՝ Բագրատ 5-րդ Թագավորի օրոք ևս (1360—
1393):

Վրացական միացյալ թագավորության տրոհումը: Անդրկովկասում և հարևան պետական կազմավորումներում իրադրության շեշտակի փոփոխություն տեղի ունեցավ 14-րդ դարի 80—90-ական թվականներին սկսած, երբ Ատրպատականը նվաճելուց հետո Հայաստան և Վրաստան հասան Լանկ-թեմուրի հորդաները: 1386—1403 թվականներին նա ութ անգամ արշավեց Վրաստան՝ ավերածություններ, կոտորած ու գերեվարություն բերելով: Երկրի վիճակը բարդացավ և նրանով, որ նրա վարչական կազմից հանվեցին Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառները, այդ թվում և Կոռեն: Թաթար-մոնղոլ ու թուրքմեն վաշկատուն ցիղերի իրար հաջորդող ավարառությունները քայքայեցին երկրի տնտեսությունը, թուլացրին կենտրոնական իշխանության ազդեցությունը, նպաստեցին միջավատատիրական հանգամարտությունների դարձմանը:

1412 թվականին Վրաստանի գահը ժառանգած Ալեքսանդր 1-ինը ծայր առած քայքայմանը ընդդիմանալու մի շարք փորձեր կատարեց. Հյուսիսային Հայաստանից ու Արցախից հազարավոր ընտանիքներ տեղափոխեց վրաց ամայացած քաղաքներ ու գյուղեր, շինարարությունը սատարելու համար հատուկ հարկ սահմանեց և, ի վերջո, ետ նվաճեց որոշ գավառներ (Կոռեն): Սակայն էական քարենորոգումների հասնել չհաջողվեց, և կացությունից հիասթափված թագավորը արևդարձյուն ընտրեց ու 1442 թվականին վաղ քաշվեց: Վրաստանի տնտեսական թուլացմանը հաջորդեց քանակի փաստական կազմալուծումը, սաթավադոների (սենյորիա-իշխանապետությունների) վերջնական ձևավորումը և սոցիալական հակասությունների շեշտակի սրումը: Շուտով Վրաստանը վերածվեց մի քանի ինքնակա միավորների՝ Բեդյանների տերություն, Սամցխեի սթաբեկություն, Փարսլիի և Կախեթի թագավորություններ:

Ալեքսանդր Արքայազնը (Բագրատ 5-րդի որդին) տիրացավ Իմերեթին [Լիխի լեռնաշղթայից այն կողմ (արևմուտք) ընկած Վրաստանին], որով հռչակեցավ վրացական մի երրորդ թագավորություն, և երկիրը բաժան-բաժան եղավ: Փաստորեն խզվեց երկրի տնտեսական ու մշակութային ամբողջականությունը, որն իր հերթին առաջ բերեց արտաքին հարաբերությունների ու կազմալուծումների ընդգծված հակասականություն: Եթե Փարսլին տակավին փորձում էր պահպանել կամ նույնիսկ սերտացնել հարաբերությունները Եվրոպայի հետ (հակաթուրքական հիմքի վրա), Կախեթն այլևս ստիպված էր նոր դաշնակիցներ որոնել: 1491 թվականին Կախեթից բանադնեցին մեկնեցին Ռուսաստան, որով և սկսվում է վրաց-ռուսական դիվանդոսական առնչակցությունը:

§ 4. ՎՐԱՍՏԱՆԸ 16—18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

16-րդ դարում շարունակվեց իշխանապետությունների մանրատումն ու միջավատատիրական պայքարը: Այժմ հնչումուրույնության էին ձգտում նաև թագավորական իշխանության կողմից տեղում նշանակված կառավարիչները՝ ժառանգական դարձնելով պաշտոնեությունն առիթով ստացած տիրույթները:

Այսպես ձևավորվեցին սաթավադոները, որոնցից առավել զորեղներն էին Փասնի, Արազդի, Մուխրանի տիրոջ, Ամիրխիվարի, Ցիցխանի, Բարաթյան և այլ թավադություններ: Միաժամանակ փոխիփոխ հաղթանակներով շարունակվում էր Քարթլիի և Կախեթի թագավորությունների պայքարը, արտաքին թշնամու պատճառած ավերածություններին ավելացնելով նորերը: Քարթլիի թագավոր Դավիթը (1505—1525) ստիպված եղավ ռազմավարչական նոր քաղաքականություն կիրառել՝ իր թագավորության տարածքը բաժանելով չորս միավորի՝ սադրոշո: Նման միջոցառումները նպաստեցին Կախեթի տնտեսական ու քաղաքական ամրապնդմանը: Նրա նորահաստատ մայրաքաղաք Դրեմին շուտով դարձավ առևտրի ու մշակույթի նշանակալի կենտրոն: Առանձնապես մեծացավ հայ բնակչության՝ քաղաքային արհեստավորների ու առևտրով զբաղվողների թիվը: Այդ են վկայում ինչպես այլ երկրներից ժամանած ճանապարհորդների գրառումները, այնպես էլ քաղաքատեղում պահպանված շուրջ մեկ տասնյակի հասնող հայոց պաշտամունքային կառույցները: Նրկրի միավորման փորձեր էր կատարում նաև Արևմտյան Վրաստանի թագավոր Բագրատը, սակայն տեղի թավադների և մանավանդ Օսմանյան կայսրության հակազդեցությունը ստիպեց նրան հեռ կանգնել:

Արտաքին հարարերությունները նպաստավոր չէին. Շիրվանն ու Շաքին կղլբաշներին էին պատկանում, որոնք վտանգի նոր օջախ էին դարձել Արևելյան Վրաստանի համար: Սահմանամերձ շրջաններում ստվարանում էր թուրքալիզու քոչվոր բնակչության թիվը: Դեպի հարավ էին շարժվում Դաղստանի խաշնարածները: Ապահով չէր նաև կենտրոնական Կովկասին սահմանակից տարածքը, մանավանդ օսերին հարող մասը: Հարավից եկող վտանգը հատկապես սաստկացավ 1555 թվականի թուրք-իրանական հաշտության կնքումով: Սամցխեն, Քարթլին ու Կախեթը՝ Իրանի ազդեցության ոլորտ ճանաչվեցին, իսկ Սամցխեի մի մասն ու Իմերեթի թագավորությունը՝ Թուրքիայի: Շահ-Թամազը հարձակումներից մեկի ժամանակ շուրջ 30 000 զինվոր տարավ: 1569 թվա-

կանին կզլրաշները պարտության մատնեցին Քարթլիի Սիմոն թագավորին, ապա և նրան փոխարինելին նրա մահմեղականություն ընդունած եղբորով՝ Դաութ-խանով։ Վերջինս Իրանին տարեկան վճարում էր 20 000 դուկատ (ոսկեդրամ)։

Բուրքական առաջխաղացումը տեղի ունեցավ աստիճանաբար. նախ համակիրների ու դավանակիցների շրջան ստեղծվեցին Սամցխեի արևմտյան հատվածում, Ափխազքում ու Զիքեթում, ապա անցան հարձակման։ Արտաքին թըշնամու դեմ մեկտեղված վրացական զորքերը, հակառակ անձնուրացության, պարտվեցին։ Սամցխեի աթաբեկը ապավինեց կզլրաշների օգնությանը, սակայն էական արդյունքի չհասավ, իսկ վերսկսված թուրք-իրանական կռիվները, Հայաստանի հետ միաժամանակ պատերազմական թատերաբեմի վերածեցին Վրաստանի տարածքը։ Գերությունից ազատված Սիմոն թագավորը կազմակերպեց հակաթուրքական ճակատ, բայց իրողությունն այն էր, որ 1590 թվականին Ստամբուլում կնքված հաշտության մեջ Անդրկովկասը ճանաչվեց Օսմանյան գերիշխանության տարածք։

1599 թվականին Քարթլիի բնակչությունը ըմբոստացավ թուրք բռնատիրության դեմ, նույնիսկ հաջողվեց գրավել Գորիի ամրոցը, սակայն սուլթանի ցուցումով Վրաստան պաշտարշավի էլած Զաֆար փաշան կոտորեց ղեմադրությունը և գերի առավ Սիմոնին։ Շուտով թուրքերը տիրացան Սամցխե-Մխխիթին և ձեռնամուխ եղան վարչական նոր միավորի՝ «Գյուրջխտանի վիլայեթի» լիվաների բաժանմանն ու հարկացուցակների (զավ-լարների) կազմմանը։ Տեղական ավատատերերը կամ մահմեղականություն ընդունեցին կամ զրկվեցին իրենց տիրույթներից։ Սամցխեի նվաճումը ակնհայտորեն հեշտացրեց թուրքերի առաջխաղացումը դեպի Անարաւ։

1602 թվականից սկսած պարսից Շահ-Աբասը արշավանքի պատրաստություն էր տեսնում։ 1614-ին նա արշավեց Վրաստան, ամայեցնելով երկիրը։ Բնակչության շուրջ $\frac{2}{3}$ -ը բռնագաղթվեց Պարսկաստան, Գրեմին ու Բազարը (Ձեգամ) ավերակների վերածվեցին։ Վրաց ժողովուրդը հարկադրված եղավ ոտքի ելնել և Գեորգի Սահակաձեի ղլխավորությամբ ընդդիմանալ թուրք ու կզլրաշ հրոսակներին, սակայն ուժերն անհավասար էին, և 1625 թվականին հուլիսին կայացած Մարաղայի ճակատամարտում վրացիները պարտություն կրե-

Երևի Շահը տանջամահ արեց Քեթևան թագուհուն, իսկ Սահակաձեի որդուն զխատեց: Մեծատոհմիկ աղնվականու-
թյան բանսարկություն հետևանքով միմյանց թշնամացան
Քարթլ-Կախեթի թագավոր ճանաչված Թեյմուրազն ու Տփխիսի
կառավարիչ (մոուրավ) Սահակաձեն: Վերջինս պարտվեց ու
հարկադրված լքեց երկիրը:

Հաշտություն չկայացավ Քարթլի վալի (տեղապահ), ապա թագավոր
Ռոստոմի (1632—1658) և Թեյմուրազի միջև, որի հետևանքով վրացական
ուժերը շլատվում էին, սակայն Ռոստոմի շրջահայաց քաղաքականության
շնորհիվ Քարթլին բավական խաղաղ շինարարության շրջան ապրեց: Հիմ-
նքվեցին նոր քաղաքներ (Դորիի Ախալցխալը, Ախալգորին), կառուցվե-
ցին կամուրջներ (այդ թվում մինչև այժմ գործող Եկոտրած կամուրջը):
Կախեթը, սակայն, կրկին ասպատակության էր ենթարկվում, ուստի Թեյ-
մուրազը 1658 թվականին փորձեց Ռուսաստան ուղևորվելով՝ օգնություն
ապահովել: Խոստումները դորձնական արդյունք չունեցան: Ձեռնունայն
վերադարձած թագավորը կյանքն աժարտեց Պարսկաստանի բանտում
(1663 թվական): Քարթլիում Ռոստոմին փոխարինեց Վախտանգ 5-րդ
Շահնավազը (1658—1676), իսկ վերջինիս՝ նրա որդի Դեորդի 11-րդը
(1676—1688): Իրադրությունը էական փոփոխություն չկրեց ոչ Դեորդիի,
ոչ էլ նրան հաջորդած Հերակլ 1-ինի օրոք (1688—1703):

Արևմտյան Վրաստանում եղած վարչական կազմավորում-
ներից 17-րդ դարում բավականաչափ զորեղ գտնվեց Օդիշի
իշխանությունը, որը պայմանավորված էր Լևան Դադիանիի
(1611—1657) ճկուն քաղաքականությամբ: Երկրագործության
մեջ տեղի ունեցած կարևոր նորամուծությունը եգիպտացորե-
նի (սխմինդր) արմատավորումն էր, առևտրում իշխում էր
պարզ ապրանքափոխանակությունը: Ամբողջ դարի ընթաց-
քում չէր դադարում մարդավաճառությունը: Նույնիսկ օտար-
ներին տրվելիք հարկերի մեջ կար պատանդներով ու աղջիկ-
ներով վճարվող տուրք: Այս պարագան բուռն բողոք էր առաջ
բերում բնակչության, մանավանդ արհեստավորների ու հոգե-
ւորականության շրջանում: Ընդունված գործընթացը շարու-
նակվում էր և իր մեջ ներառում նաև քաղաքային արհեստա-
վորությանն ու առևտրականներին: Գեղջիկական բնակչության
համեմատաբար արտոնյալ խավն էին կազմում ազատները
(թարխանները): Հարկային համակարգը հիմնականում ան-
փոփոխ էր՝ բնամթերքով (ղալա, կովուխ), դրամով (սաուրի),

ծառայական պարտույթով: Հարկերի շահերը վարչական կազմավորումներում տարբեր էին: Ճորտի բողոքի հիմնական ձևը դարձյալ փախուստն էր, սակայն 30 տարվա ընթացքում նա ենթակա էր վերադարձման ճորտատիրոջը: Ճորտատերերի էին թագավորները, եկեղեցիներ, թավադներն ու ադնալականները: 17-րդ դարի ավարտին լայն շահեր ընդունեց կաթոլիկոսյան քարոզը, որի դեմ ըմբոստացան քաղաքների բնակիչները, մանավանդ Տփլիսի ու Դորիի հայությունը:

18-րդ դարի առաջին երկու տասնամյակում վրաց քաղաքական անցուցարձի հիմնական կենտրոնը Քարթլին էր, ուր թագավորական տեղապահ էր կարգվել Վախտանգ 6-րդը (1703—1711): Նրա կազմած «պահապան զորքը» ոստիկանական ծառայություն էր իրականացնում, իսկ Եվրոպա ուղարկված Սուլթան-Սաբա Օրբելիանին փորձում էր արտաքին օգնություն ապահովել: Թագավորության շրջանում (1716—1724) Վախտանգը քաղաքական մի քանի կարևոր ձեռնարկում կատարեց, որոնց թվում էր Արցախի մեկիջների հետ համատեղ Պետրոս 1-ինի կողմասյան արշավանքին ղեկավարողառաջումը, ինչպես նաև Քասնի էրիսթավների պառակտողական գործողությունների կանխումը: Կախեթի ու Իմերեթի կառավարիչների զորական ուժերը Քարթլիի հետ համատեղելու նրա ջանքերը ապարդյուն մնացին, որովհետև Թուրքերը գրավել էին Փոթին և դեպի կենտրոնական զավառներ էին շարժվում, իսկ Տփլիսում նստած կղզաշենքը հսկողության տակ էին պահում Վախտանգի ձեռնարկումները: Ի վերջո՝ 1723 թվականին Կախեթի Կոստանդին թագավորի և դադստանցիների ձեռքով ավերված Տփլիսը շուտով ընկավ Թուրքերի ձեռքը, իսկ Վախտանգը հարկադրված եղավ իր ընտանիքով ու սպասավորներով ապաստան գտնել Մոսկվայում: Մինչև 1735 թվական տևած օսմանյան լուծը քաղաքական ու տնտեսական ծանր հետևանքներ ունեցավ: Նրանց փոխարինեցին դարձյալ պարսիկները, որոնք 1741 թվականին Թուրքերի օրինակով հարկացուցակներ կազմեցին: Մասամբ իրադրությունը փոխվեց նրանով, որ 1744 թվականին շահը Քարթլիի թագավոր կարգեց Հերակլ 2-րդին, իսկ Կախեթի թագավոր՝ նրա հորը՝ Թեյմուրազ 2-րդին: Այս երկու թագավորությունների միջև տեղանքորեն շարունակվող թշնամանքն ու անմիաբանությունը վերջ գտան: Հոր ու որդու առաջին խնդիրներից մեկը Քարթլ-Կախեթի հարևանությամբ կազմավորված մահմեդական խանությունների պարբերական հարձակումների սպառնումն էր: 1749—1750 թթ. ինչպես նաև հետագա տասնամյակներին ձեռնարկած և մասամբ հաջողությամբ ավարտված պատասխան հարվածների շնորհիվ Երևանի, Գանձակի ու Նախճավանի խանությունները ընկրկեցին և տեղ-տեղ նույնիսկ հարկատու դարձան: Նրանց տնտեսական կարողությունը թուլացնելու և Վրաստանի բնավեր դարձած տարածքները կենդանացնելու համար նա շարունակեց Գանձակի ու Երևանի խանություններին հարյուրավոր հայ ընտանիքներ իր երկիր տեղափոխելու նախորդների քաղաքա-

կանությունը: Դարի կեսերին գրեթե բնագրկվեց լոռնն, որի բնակիչները լեզգիների (դադստանաբնակ ցեղերի ընդհանրական անունն է) կոտորածից փրկվելու համար տեղահան եղան և այսուայնտեղ ապաստանեցին: Ավելի դուրեղ թշնամիների՝ թուրքերի ու կղզրաշների շարունակական սպառնալիքի դեմն առնելու համար Բեյմուրազը 1761 թվականին Պետերբուրգ մեկնեց՝ օղնություն ապահովելու: Խոստումներ ու խորհրդանշական ձեռնարկումներ եղան, բայց Ածղուրի ու Ասպինձայի ճակատամարտերը ցույց տվեցին, որ ուսումական կայսրութունը մտադիր չէ Վրաստանն ազատագրելու համար: Այստեղազմական լայն գործողութիւններ ձեռնարկելու շոր մահից հետո (1762 թվական) Քարթլի ու Կախեթի թագավորութիւնները միավորած Հերակլը սեփական կարողութիւններին ապավինելու լուրջ քայլերի դիմեց: Նա կտարեց ընդդիմադիր թավաղների ու էրիսթավների ռազմականութիւնը (Արագվի էրիսթավութիւն), կանխեց Պատառ արքայազնի կազմակերպած դավադրութիւնը, վերացրեց Ղազախի (պատմական Գագի) խանութիւնը, այն վերածելով մուրավոյան (կառավարչութիւն), հաշտութիւն ու համաձայնութիւն եկավ Իմերեթի թագավոր Սողոմոնի հետ՝ միմյանց նեցուկ կանգնելու, մանաւանդ օսմանյան վտանգի պահին, երկուսով սատարեցին Ափխազքում սկսված հակաօսմանյան ելույթները և այլն: Վրաստանի տընտնական ու էթնիկական զարթոնքին նպաստեցին գերեզմանաւոյան ու կաթոլիկական քարոզչութիւն դեմ ծավալված պայքարը, քաղաքներում արհեստավորների ու առևտրականների համաքարութիւնների (հղբայրութիւնների) արտոնումը և, ի վերջո, արտաքին հարաբերութիւնների մասնակի կարգավորումը (վրաց-ուսումական բանակցութիւնների սերտացում, հայ-վրացական միացյալ թագավորութիւն ստեղծելու համար հեղհահայ դադուքի հետ կապերի հաստատում, զգուշավոր հաշտութիւն Ղարաբաղի խանութիւն հետ եւ այլն): Պակաս կարեոր չէր նաև երկրի հյուսիս տանող ճանապարհների բացումը, որով սերտացավ առևտուրը Մոսկովայի, Աստրախանի, Ղզլարի և այլ վաճառաշահ կենտրոնների հետ: Առանձնակի ակտիվութիւն էր տիրում հայ առևտրականների շրջանում: Ալավերդու (Լավարի) և Ախթալայի հանքերն օգտագործելու համար Հերակլը Անատոլիայից հարյուրավոր հույն արհեստավորների ընտանիքներ բերեց այստեղ: Բանակը սնելու համար մասնավոր հարկ սահմանվեց՝ «սուրսաթի» (պարեն), Դադստանի ավարառուների դեմ պայքարելու համար՝ «սալեկո» (լեկերին ընդդիմանալու հարկ): Վրաստանի միացումը Ռուսաստանին: Հերակլի բախտորոշ քայլերից մեկը Ռուսաստանի հետ 1783 թվականի հուլիսի 24-ին Գեորգիեւսկ ամրոցում «ՏՏրակտատի» (հովանավորութիւն ու օղնութիւն ակտի) ստորագրումն էր, որով Վրաստանը թուրք-իրանական հարձակումներից զերծ մնալու հույս էր ձեռք բերում, իսկ ինքը դառնում էր Ռուսաստանի շահերի արտահայտիչը: Անդրկովկասում ու Մերձավոր Արևելքում: Այս փաստը մեծապես զայրացնում էր Անդրկովկասի մահմեդական կազմավորումներին և հակառակը՝ ոգևորում կովկասահայութիւնը: Հայ-ուսումական դաշնագրերի նախագծեր էին պատրաստել նաև հայերը՝ Հովսէփ Արղութիւնի և Շահամիր Շահամիրյանի գլխավորութիւնով: Սակայն զեպերն այլ ընթացք ստացան:

Աղա-Մահմէդ խանի 1795 թվականի սեպտեմբերյան արշավանքը տական-
 վրա արեւելք երկիրն ու ծրագրերը: Շուրջ 20 000-ի հասնող Տփլիսի (Քրի-
 լիսի) բնակչութիւնը (գերազանցապէս հայեր) կոտորվեց կամ մազապուրծ
 լեզով, իսկ առանց բանակի մնացած թագավորը հաղթվելու անձը փրկեց
 Անանուրում: Եկատերինա 2-րդի (1796), ապա և Հերակլի մահը (1798)
 Վրաստանը կանգնեցրին դժվար կացութեան առաջ: Հորը փոխարինած Գեոր-
 ցի 12-րդ թագավորը (1798—1800) ներքաշվեց զահակալական կոիվների
 մեջ և նրա մահից 20 օր հետո (1801 թվականի հունվարի 18-ին) Պապէ
 Լաշաբէ հրապարակած հայտագրով (մանիֆէստ) Վրաստանը հայտարար-
 ւելից ուստաց կայսրութեան գաւառ: Շուրջ 1000-ամյա գոյութիւնից հետո
 վերացավ Բագրատունյաց վրացական ճյուղի հարստութիւնը, և հարյու-
 ռամյակների մաքառումով իր պետականութիւնը պահած վրաց ժողովուրդը
 զրկվեց ինքնիշխան ապրելու հնարավորութիւնից: Ռուսական տիրապե-
 տութեան հաստատումը իր հետ բերեց Վրաստանի վարչական կառուցվածքի
 վերածնունդ, իրավական խորթ նորմերի հաստատում, ինքնակաթողկու-
 թեան վերացում, արտոնյալ խափերի իրավադրկում և այլն, ուստի շուտով
 սկիզբ առան այս ու այն տեղ բռնկվող խռովութիւնները, ապստամբու-
 թիւնները (1804, 1812, 1819—1820, 1832 թվականներ): Եվ այնուամենայ-
 նիմ, այդ միացման շնորհիվ վերջ տրվեց Արևմտյան Վրաստանում գոյա-
 տեւող իշխանապետութիւնների միջև տեղի ունեցող կոիվներին, երկրի
 տարբեր հատվածների անշատվածութիւնը միմյանցից վերացավ, ուստի
 բանակի օգնութեամբ վրաց ժողովուրդը կարողացավ հայրենի գիրկ վերա-
 դարձնել Թուրքիայի կողմից զրավված տարածքները (Սամցխե, Զաւխաթ,
 Փոթի և այլն): Պակաս արդյունավետ չէր նաև ուսական տնտեսական հա-
 մակարդի մեջ Վրաստանի ձեռք բերած զարգացման հնարավորութիւնը:
 Այս իրողութիւնը առավել նկատելի դարձավ 1826—1829 թվականների
 ուսու-պարսկական և ուսու-թուրքական պատերազմներից հետո, երբ արեւել-
 յան բռնակալութիւնների տիրապետութիւնից ազատագրվեց Արևելյան
 Հայաստանը: Ռուսական կառավարչութեան, ապա և փոխարքայութեան
 նստոց ծառայող Քրիլիսին փաստորեն զարձակ սղջ Անդրկովկասի կենտրոն
 իր տնտեսական ու կրթական ինտիտուտներով, բազմազգի բնակչութեան
 (մանավանդ հայ) ներհոսքով: Գաղութային քաղաքականութիւնը, մանա-
 վանդ 1840 թվականի վարչական փոփոխութիւններից հետո, երբ զան-
 առնվեցին Անդրկովկասում դարեր շարունակ գոյութիւն ունեցող էթնիկա-
 կան սահմանները, հարկային քաղաքականութեան սաստկացման պարա-
 գայում, բնականորեն հանգեցրեց բողոքի ու ազատագրական պայքարի
 անհրաժեշտութեան գաղափարին: Դրա շոշափելի դրսևորումներից մեկը
 Գուրիայի 1841 թվականի ապստամբութիւնն էր: Անկախականական խափ-
 րին սիրաշահելու համար ցարիզմը որոշ ընդառաջումներ արեց. ճանաչեց
 նրա սոսմիկութիւնը և 1849 թվականին հիմնված «Անդրկովկասյան բան-
 կից» օգտվելու իրավունք արտոնեց: Միաժամանակ քաղաքներում ստեղծ-
 վեցին արդյունաբերական ձեռնարկութիւններ, ընդլայնվեցին առևտրական

կապերը Աստիճանաբար քայքայվեցին ճորտատիրության տնտեսական հիմքերը, բուրժուական բարեփոխումների հող նախապատրաստվեց:

§ 5. ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ճորտատիրության վերացմանը նպաստակամ դաված 1861 թվականի բարեփոխությունը Ռուսաստանի ժայռագավառներում, այդ թվում և Վրաստանում, առաջ բերեց քաղաքական, սոցիալական ու տնտեսական կյանքի այլաթմալում՝ բայց նաև՝ միջդասային ու դասակարգային պայքարի սրում: 1864—1871 թվականների միջոցին Վրաստանում վերջնականապես արմատավորվեցին նոր՝ կապիտալիստական արտադրական հարաբերությունները, ավանդական պետական-վարչական կառուցվածքները վերակազմավորվեցին, որի հետևանքով վրաց ազնվականության ժառանգները կորցրին իրենց նախկին ազդեցությունը: Ռուսաստանի գաղութատիրական քաղաքականությանը դիմակայելու անհրաժեշտությունը խթան ծառայեց ազգային-ազատագրական գաղափարների ձևավորմանը:

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը, որին վրաց ժողովուրդը նշանակալի մասնակցություն բերեց, ավարտվեց թուրքական բռնակալության տիրապետության տակ գտնվող վրացական գավառների՝ Անարայի, Շավշիի ու Կղարքի ազատագրումով և Րաթումի մարզի էականափոխումով: Բնականաբար, երկրի այս ամբողջականացումը նպաստավորեցավ ուժացման ճանապարհին կանգնած մահմեդականություն դավանող գտնիքիները մայր ժողովրդի գիրկը վերադարձնելու համար: Վրաց մտփորկանության տկնառու ներկայացուցիչները՝ Ի. Ճավճավաձեն (1837—1907), Ա. Սերեթելին (1840—1915), Ն. Նիկոլաձեն (1842—1928), Գ. Սերեթելին (1840—1900) և այլք, որոնք հայտնի են «Թերթի ջուր խմածներ» (թերթգալեուկ) անունով, նշանակալի ջանքեր գործադրեցին ազգային ինքնադիտակցության արթնացման, ազատագրական պայքարի կազմակերպման գործում:

Տարածքային ու էթնիկական առումով բաղկանալի ամբողջական վրաստանը Ռուսաստանի կազմում մասնակից դարձավ կայսրությունում տեղի ունեցող քաղաքական կյանքին, մանավանդ այստեղ ծավալվող հեղափոխական շարժումներին: Ի տարբերություն Հայաստանի արևմտյան հատվածի իրադրության, Վրաստանում ազգային կուսակցությունների կազմավորման անհրաժեշտություն չառաջացավ, ուստի տեղում գործում էին Ռուսաստանի հեղափոխական կազմավորումների անդրկովկասյան ջոկատները:

1917 թվականի փետրվարյան հեղափոխությունից հետո, ի թիվս այլ ժողովուրդների, Վրաստանը շահագրգռված էր առաջին աշխարհամարտի հաղթական ավարտով, սակայն վերահռոգեցին հեղափոխությունը կանխեց հաղթանակի ակնկալությունը: Անդրկովկասը փաստորեն անկա-

խացավ Ռուսաստանից: Ստեղծված իրավիճակում Անդրկովկասի սեյմը չկարողացավ գլխավորել տարէթնիկ այդ կառույցը, որովհետեւ տարբեր ու իրարամերձ էին ազգային զարգացման շահերն ու հեռանկարները: Թուրքիայի հետ մեծ խնդիրներ լուծեցող և գերմանացիների հովանավորութիւնն ապահոված վրաց մենշեիկ գործիչները, կովկասյան թաթարների՝ ազգրեջանցիների համաձայնութեամբ լուծարքի ենթարկեցին սեյմը և 1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանը անկախ դեմոկրատական հանրապետութիւն հայտարարեցին: Սակայն ազգային պետականութեան վերականգնման այս փաստը չհամատեղվեց բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքականութեան հետ: 1921 թվականի փետրվարի 25-ին Ռուսաստանը շեղյալ հայտարարեց Վրաստանի հետ ունեցած պայմանագիրը և ոչ առանց վրաց բոլշևիկների օժանդակութեան տապալեց շուրջ երկու տարի գոյատեւած դեմոկրատական կառավարութիւնը:

§ 6. ՎՐԱՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ, ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վրաց դարձի ստույգ թվականը հայտնի չէ: Կողմնակի տրվելալների հիմամբ այն տեղի է ունեցել 330—337 թվականների միջակայքում: Արեւմտյան Վրաստանում քրիստոնեութիւնը տարածվում էր բյուզանդական ճանապարհով (դարձը շարունակվում էր մինչև 6-րդ դարի կեսերը), արեւլյանում՝ Քարթլի և Կախեթ, Հայաստանի միջնորդումով: Վերջին պարագայի հետեւանքով վրաց եկեղեցին ընդունում ու մեծարում էր Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը: Սկզբնապես վրաց եկեղեցու գլուխ էր ճանաչվում եպիսկոպոսապետը (եղել է նաև Հոր Հայ անունով մեկը), իսկ 5-րդ դարի վերջին քառորդում Վախտանգ Գորգասալի օրոք հաստատվեց կաթողիկոսութեան ինստիտուտը, որ ինքնակայութեան (ավտոկեֆալիա) դրսևորում էր: Վիճակավոր եպիսկոպոսները ենթարկվում էին կաթողիկոսին: Մինչև 7-րդ դարի առաջին տասնամյակը վրաց եկեղեցին հայկականի հետ նույնադավան էր՝ միաբնակ, ընդունում էր հայոց կաթողիկոսի՝ հավասարների մեջ առաջինը լինելու հանգամանքը, մասնակցում վանական խնդիրներ քննելու համար հրավիրված հայոց ժողովներին (Դվինի ժողով): Կիրիոն կաթողիկոսի օրոք վրաց եկեղեցին հարեց երկաբնակութեան (քաղկեդոնականութեան) և բաժանվեց հայոց եկեղեցուց: Սա փաստորեն եկեղեցու ազգայնացում էր՝ ինքնութեան

պահպանութեան և մշակութային զարգացման առումով պատեհ հետևանքներով:

Հետազոտում՝ 11—13-րդ դարերում հայ-վրացական նույնադասակարգային հաստատու ժողովուրդները (Վրացիայի և Լոռիի ժողովներ), բայց արդ-յունք չտվեցին: Վրաստանի միավարչալ թագավորության շրջանում (11-րդ դարից սկսած) Արեմտյան Վրաստանը ևս Մցխեթի կաթողիկոսի հովանու տակ էր, սակայն մոնղոլական տիրապետության օրոք թագավորական իշխանության Լրկատումը բերեց նաև այսպես կոչված Անխազքի կաթողիկոսական աթոռի հաստատման (Գելաթ մայրավանք):

Ռուսաստանին միանալուց հետո վրաց կաթողիկոսությունը լուծարքի ենթարկվեց, փոխարինվելով տեղապահությամբ: Այն վերականգնվեց 1917 թվականին:

Վրաց եկեղեցին, թագավորական իշխանության անկախու-թյան պարագայում, գրեթե բացառապես հոգևոր խնդիրնե-րով էր զբաղվում՝ սլայքարելով հունադասակարգայինը սպառ-նացող բոլոր քարոզչությունների դեմ՝ ներառյալ հայոց դա-վանած միաբնակչությունը: Այնուամենայնիվ, քաղաքական հանդամանքների բերումով նա շկարողացավ կանխել լազերի, տիխազների մի մասի, աճարացիների, մեսիսերի ու ջավախ-ների և արևելյան Կախեթի բնակչության մի հատվածի (Ին-գիլո) մահմեդականացումը: 14-րդ դարից հետո Վրաստա-նում քարոզչություն ծավալեց կաթոլիկությունը, որին հե-տևեցին մի շարք վրացական համայնքներ:

Գիր և գրչութուն: Վրաց գրի և գրչության ակզբնավորման ժամանակի և հանդամանքների վերաբերյալ ազդային սկզբը-նադրյուրները ստույգիլի տեղեկություններ չեն հաղորդում:

Փառնավազ թագավորի ժամանակներին (մ.թ.ա. 3-րդ դար) վերագրե-լու ախնդությունը մատենագրություն է թափանցել 11-րդ դարում և հա-վատարության երաշխիք չունի: Հնագրական վերլուծության հիմամբ վար-կած է առաջադրվել, թե վրաց այբուբենը սերում է փյունիկյանից՝ մ.թ.ա. 7-րդ դար կամ արամեական գրի Արմաղում (Մցխեթ) դարձած վա-րատեսակից՝ մ.թ.ա. 2—3-րդ դարեր: Այս վարկածները, սակայն, հա-կառակ ազդային ցանկալիության, չեն հաստատվում որևէ աներկրա կրթ-վանով: Հնագիտական պեղումները նույնպես 5-րդ դարից առաջ վրաց գրի ու գրչության որևէ իրական նմուշ չեն բացահայտել:

Ըստ հայոց պատմիչ Կորյունի տեղեկության, վրաց այբու-բենի ստեղծումը հաջորդել է հայոց դրերի գյուտին՝ Մեսրոպ

Մաշտոցի հոգադողութեամբ, վրաց թարգմանիչ Ջաղալի օժանդակութեամբ ու ձեռքով:

Աւաղեմիկոսներ Կ. Կեկելիձեն և Ա. Շանիձեն հայոց, վրաց և ազղանից այբուբենները համարում են նույն աղբյուրից, միեւնույն սկզբունքով և համաժամանակյա աւաղեմիկոս իրողութիւններ, ասել է՝ ընդունում են Կորյունի վկայութիւնը:

Վրաց գիրը դարգացման ու փոփոխութեան երեք շրջան է ապրել. 5—10-րդ դարերում գործածական է եղել ասոմթաւ-րուլին (երկաթագիր, գլխագիր), ապա՝ նուսխուրին (գրչա-գրային, բոլորգիր)՝ 10—16-րդ դարեր, իսկ վերջինիս դուզ-ընթաց ու մինչև այսօր՝ մխեղբուլին (գլինվորական», ճա-ղաքացիական»): Հայերենի համեմատութեամբ հին վրացե-րենը պակաս փոփոխութիւններ է կրել, բայց գրեթե հիմնո-ւլին փոխակերպւել է գիրը, թեև դիտարկելի է նրա զարգաց-ման ընթացքը:

Վրացերենին հատուկ է հնչյունի և հնչույթի (գրի) լիակատար համա-պատասխանութիւն հնում և այսօր: Գլխագրի (մեծատառի) գործածութե-ւնը նոր վրացերենին հատուկ չէ: Վրաց գրութեան պահպանված հնագույն նմուշները 5—7-րդ դարերից են (Բոլնիսի վիմագիր, Երուսաղեմյան ար-ձանագրութիւններ, կրկնագիր պատասխիկներ): Հնագույն, ամբողջական և թվական կրող ձեռագիրը 864 թվականին է գրված («Սինայի ձառքետր»):

Գրութեան լսողոր կենտրոններ կային թե երկրի ներսում (Մցխեթ, Գելաթ, Շատրեբդ, Խանձթա և այլն), թե քրիստոնյա Արեւելքի կարեւորագույն մայրավանքերում (Երուսաղեմ, Աթոս, Սինա, Անտիոք): Վրաց ժողովուրդը ժառանգել է պատկա-ռելի քանակութեան, հնութեան ու նշանակութեան գրչագիր մատյաններ, որոնց հիմնական մասը պահվում է Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (Քրիլիսի):

Մատենագրութիւն: Իբրև վարդապետութիւն քրիստո-նեութեան ընդունումը թելադրում էր Սուրբ Գրքի, մանավանդ նրա նոր կտակարանային բաժնի թարգմանութիւն, ուստի 5-րդ դարում սկզբնավորված վրաց մատենագրութեան անդ-րանիկ հուշարձանները թարգմանական երկեր պիտի լինին: Դատելով լեզվական-բառազանձային իրողութիւններից, 5 —

8-րդ դարերի թարգմանությունները կատարվել են գերագույն-
ցապես հայերեն խմբագրությունների միջնորդավորմամբ,
հետագայում համեմատվելով ու սրբագրվելով ըստ հունական
նախօրինակների: Անդրանիկ թարգմանությունների թվին է
պատկանում Սաղմոսարանը, ապա և վարքեր ու վկայաբա-
նություններ, ճառեր ու մեկնություններ: Կան երկեր, որոնք
այսօր անվել են միայն վրացերեն թարգմանություններով:

Հայոց եկեղեցուց բաժանվելուց հետո թարգմանության հիմնական աղբյուր է դառնում հունարենը, մասամբ նաև արաբերենը: Անմիջականորեն աղբյուրներից եկող թարգմանություններ դեռ չեն բացահայտված:

Վրաց մատենագրության պատմության առաջին շրջանը, մինչև 8-րդ դարը ներառյալ, ինքնուրույն երկերով հարուստ չէ: Այն ներկայանում է վրացառանում հանուն քրիստոնեական հավատքի նահատակված աշխարհի-
ների՝ հայուհի Շուշանիկ, Կարսիկ Եվստաֆեոս, արար Արո վկայաբանու-
թյուններով: Շուշանիկի վկայաբանության վրացերեն և հայերեն խմբագրու-
թյունների միջև կան որոշակի տարբերություններ, որոնք բացատրվում են
ազգային միջավայրով ու ավանդույթներով: Նախապես, անշուշտ, եղել է մեկ
ընդհանրական խմբագրություն: Հաջորդ պարբերաշրջանում՝ 9—13-րդ
դարեր, վրացական վարքերը ամօլի ընդգրկում դարձան, ձևոր բերելով
նշանակալի պատմագրական արժեք (Գրիգոր Խանձթեցու վարք, Գորգոնի
վկայաբանություն, Ասորի հայրերի վարքեր և այլն): Առանձնակի կարևո-
րություն ունի «Քարթլիի դարձը», որ սուրբ Նունի (Նինոյի) վարքի ըն-
դարձակ մի տարբերակ է՝ 9-րդ դարից ոչ վաղ ստեղծված:

11-րդ դարից սկսած վրաց մատենագրությունը հարստա-
նում է պատմագրական երկերով (Ջուանշեր, Սմբատ Դավթա-
սրդի, Լեոնտի Մրովելի և այլք), որոնք հետագայում (12-րդ
դարում) ամփոփվում են մեկ ժողովածուի մեջ և կրում
«Քարթլիս ցխովրեբա» (Վրաստանի պատմություն) խորա-
դիրը: 13-րդ դարում ստեղծվում են Թամար թագուհու երկու
պատմությունները, 14-րդ դարում՝ վրաց անանուն ժառո-
նակագրությունը: 18-րդ դարի առաջին տասնամյակում
Վախատանց 6-րդ թաղավորի շանքերով կազմված «կրթյալ
արանց» հանձնաժողովը կազմում ու լրացնում է «Քարթլի
ցխովրեբայի» նոր շարքը, որ ի տարբերություն նախորդ ժո-
ղովածուի, կոչվում է «Նոր Քարթլիս ցխովրեբա»:

10—11-րդ դարերից սկսած հուժկու զարգացում է ապրում
վրաց օրհներգությունը (շարականներ): Հատկապես նշանա-
վոր է Միքայել Մոզրեթիլու կազմած շարականացը:

Այդ նույն դարերում Աթոսի Իվերոն վանքում բեզմնավոր թարգմանա-
կան գործունեություն են ծավալում Ծգվթիմե և Գեորգի Աթոսցիները (Սուրբ-
աբեղիները), նոր որակ ու ընթացք հաղորդելով վրաց մատենագրությանը:

12-րդ դարում ապրած բանաստեղծներ Չախրուխաձեի և
Շավթելու բերթությունները հող են նախապատրաստում Շոթա
Ռուսթավելու «Ընձենավոր» ասքի ստեղծմանը, որ հիրավի
միջնադարյան եզակի գեղարվեստական ստեղծագործություն
է՝ մանավանդ իր ասպետական սյուժեով ու կրոնական ան-
կանխակալությամբ: 14—16-րդ դարերը անկման շրջան են,
«հետեակ» մի քանի հեղինակների գործերով ներկայացված:
Վրաց սագային մատենագրության զարթոնքն սկսվում է
17-րդ հարից: Այս շրջանում են գրվում Թեյմուրազ 1-ինի,
Արշիլի, Բեպիկի և մյուսների շափաբերականները, բարաոնու-
թյուններն ու արեւելյան քերթություններին նմանակող պոեմ-
ները:

Մատենագրության պատմության 18-րդ դարի խոշորագույն դեմքերն են
Ս. Ս. Օրբելիանին, Վախուշտին և Անտոն 1-ինը: Բանաստեղծներ Ալեքսանդր
և Գրիգոր Օրբելյանների, Դավիթ Գուրամիշվիլու և Նիկողոզ Բարաթաշվիլու
գեղարվեստական ժառանգությամբ սկսվում է վրաց գրականության վեր-
ընթացի նոր շրջան, որ այլևս մատենագրություն չէ՝ բառիս նեղ ու միջ-
նադարյան խմատով, այլ գրականություն:

ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քարթլիս ցխովրեբա, համահավաք տեքստ Ս. Ղաուխիշվիլու հրա-
տարակության, հ. 1, Թբիլիսի, 1955, հ. 2, Թբ., 1959, հ. 4, Թբ., 1973
(վրացերեն):

2. Ժամանակագրություններ (Քրոնիկներ) կազմեց Բ. Ժորդանիա, հ. 1,
Թբ., 1892, հ. 2, Թբ., 1897, հ. 3, Թբ., 1967 (վրացերեն):

3. Դիվան վրաց վիմագրության, հ. 1, Արեւելյան և հարավային Վրաս-
տան, կազմ. Ն. Շոշիաշվիլի, Թբ., 1980, հ. 2, Արեւմտյան Վրաստանի վի-
մագրեր, կազմ. Վ. Սիտգավա, Թբ., 1980:

4. Վրաց իրավունքի հուշարձաններ, կազմ. Ի. Դուլիձե, հ. 1—8, Թբ.,
1985—1985 (վրացերեն):

5. Լեոն Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայկ. և
մասին, հ. Ա, Երևան, 1934, Հ. Բ, Եր., 1936, Հ. Գ, Եր., 1955:

1. Չավաֆիշվիլի Ի. Վրաց ժողովրդի պատմություն, տեղ նրա Աշխատություններ տասներկու հատորով, հ. 1—4, Թբ., 1979—1986 թթ. (վրացերեն):
2. Վրաստանի պատմության ակնարկներ, հ. 1—5, Թբ., 1970—1975 (վրացերեն):
3. Քերենեիշվիլի Ն. Վրաստանի պատմության հարցեր, հ. 1—9, Թբ., 1964—1979 (վր.):
4. Մարգարյան Հ. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժԲ դարի պատմության մի րանի հարցեր, Եր., 1980:
5. Մարտիրոսյան Վ. Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Եր., 1971:
6. Զորանյան Վ. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Եր., 1981:
7. Կեկելիձե Կ. Վրաց գրականության պատմություն, հ. 1, Թբ., 1960, հ. 2, Թբ., 1958 (վրացերեն):
8. Կեկելիձե Կ. Դրվագներ վրաց գրականության պատմությունից, հ. 1—14, Թբ., 1956—1966 (վրացերեն):
9. Կեկելիձե Կ., Բաբամիձե Ա. Վրաց հին գրականության պատմություն, Թբ., 1987, (վրացերեն):
10. Մենարդի Լ. Վրաց հին մատենագրության օջախներ, հ. 1, Թբ., 1962, հ. 2, Թբ., 1980 (վրացերեն):
11. Սրալյան Ի. Աշխատություններ, հ. 1—4, Թբ., 1975—1985 (վրաց.):
12. Սրալյան Ի. Վրաց և հայկական գրական հարաբերությունները 9—10-րդ դարերում, Թբ., 1944 (վրաց.):
13. Չավադյան Մ. Ուրվագներ հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմության, Եր., 1959:
14. Ամիրանշվիլի Շ. Վրաց արվեստի պատմություն, Թբ., 1960 (վրաց.):
15. Очерки истории Грузии, т. I, Тб., 1989, т. II, Тб., 1988.
16. Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети), Ер., 1985, (Тбилиси), Ер., 1988.
17. Мурадян П. М., Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ер., 1966.
18. Беридзе В., Грузинская архитектура, Тб., 1967.

Գլուխ վեցերորդ

ԱՂՎԱՆՔ

§ 1. ԱՂՎԱՆՔԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՐՋԱՆԻՑ ՄԻՆՁԵՎ Մ. Թ. Ց-ՐԴ ԴԱՐԸ

Աղուանք (Աղվանք տերմինը: «Հայք», «Վիրք» և նման կազմության այլ տերմինների նմանողությամբ Աղուանք— Աղվանք հասկացությունը միա-
ժամանակ նշանակում է և՛ բնակչության վայրը (երկիր), և՛ բնակչության
էթնիկական անունը (աղվաններ):

Հույները աղվանների երկիրը կոչում էին Ալրանիա, իսկ բնակիչներին՝
ալրանոյ (ալրաններ), պարսկական աղբյուրներում այն հայտնի է Առան
անունով, որից և սկիզբ են առնում վրացական Ռան-ն ու արաբական
Ար-Ռանը:

5-րդ դարում Մովսես Խորենացին Հայկ նահապետի ժառանգորդներից
Սիսակի Աղու (նշանակում է մեղմ, համեղ, անուշ), մականվան հետ էր
կապում Աղու-անքը, որ անշուշտ հետաքրքիր է, բայց ոչ հավաստի:

Գիտական գրականության մեջ փորձ է արվել հունարեն Ալրանիա-ն
մականերել կենտական alp (լեռ, սար) բառից: Հետաքրքրությունից զուրկ
չէ նաև նորերս առաջադրված ստուգաբանական մեկ այլ փորձ, ըստ որի
Աղուանք տերմինի հիմքը կովկասյան լեզուներում պահպանված hal (haibi)
ցեղանունն է: Այս պարագայում բացատրելի է դառնում Հեթում պատմիչի
հիշատակած հալոյէն, տերմինը, որ անշուշտ աղվաններին ու աղվաներենին
է վերաբերում:

Աղվանական ցեղերն ու ցնդային միությունները:

«Աղվանական ցեղերի» արտահայտության տակ հասկացվում են Աղ-
վանքի տարածքում ապրած, Աղվանք քաղաքական ու էթնիկական հանրու-
թյունը կազմող ցեղային միավորները: Հույն պատմիչ-աշխարագիր
Ստրաբոնի երկում ասվում է, որ Աղվանից թագավորությունը բաղկացած
է 26 ցեղից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր արքային ու լեզուն
(Ստրաբոն, 11, 4, 6): Հունական և հայկական մատենագրության մեջ
ավանդված տեղեկությունները, ինչպես նաև պատմական Աղվանքի տա-
րածքում մինչև մեր օրերը գոյատևած էթնիկ կազմավորումները, թույլ են
տալիս ճանաչել մեկ տասնյակից ավելի ցեղեր, որոնք, հարկավ, մաս են
կազմել «Աղվանական ցեղային միության»: Հերոդոտից սկսած (5-րդ դ.
մ. թ. ա.) հունական աղբյուրները հաճախ են հիշատակում կասպեից:
Հայոց մատենագիրները ևս նրանց դիտեն կասպի անունով: Անտիկ ու հայ-
կական աղբյուրներում հիշատակվող լփնի, ճիզը, զգաւաբ, խրսան, ճնճաւ-
տակ, քալասպաբ և մի քանի այլ ցեղեր զբաղեցնում էին Կովկասյան լեռ-
ներից հարող շրջանը: Համեմատաբար նշանակալի դանդաղած պիտի ներ-

կայացանքին զարգացալիքները: Երազարացիները զաշտո արտահայտուելով իւր որդեկան անդամուն այդ մասին է վկայում: Ստորաբոնի Թված ցեղերից են, անշուշտ, նաև զինկերը և լինկերը, որոնց հետնորդները պիտի լինեն մասամբ իրենց հետմենի էթնիկ տալածքում ապրող լեզգիները: Պատմաւորն Աղվաների ու Կտխանի սահմանադժուտ պիտի բնակվեն են անունը կրող ցեղերը, որի պատճառով էլ վրացական աղբյուրները հաճախ գործածում են ենեւելս երկրանունը:

Աղվանների ուղղակի հետնորդներից են ուղի—ուտիները, որոնք ապրում էին Ուտիքի հարևանությամբ և մինչև 1933—1939 թվականների բռնադատվելու ժամկի էին Վարդաշենում, Կուտկաշենում և Նիշում: Աղվանական ցեղերի հետնորդներից են այսօր մահմեդականություն ընդունած և իրենց պաշտոնական ինքնությունը կորցրած էթնիկ մի թանի կղզյականք, որոնք միայն իրենց բնակավայրի անունով են կոչվում՝ ճինալուզցիներ, լիշեր, կրիզներ և այլն:

Այսպիսով «աղվանական ցեղերից» ոչ մեկը աղբյուրներից հայտնի աղվան էթնանունը չի պահպանել, հետևաբար ստույգ է գիտական այն գրառվքը, թե այդ անվան տակ տարբեր ցեղերի հավաքականություն է հասկացվել: Դասելով ուտիներին ավյալներից, աղվանական ցեղերի լեզուն կովկասյան լեզվաընտանիքին է պատկանել, մասնավորապես՝ այդ ընտանիքի լեզգիական խմբին:

Աղվանքի տարածքը: Մ. թ. ա. 1-ին դարից մինչև մ. թ. 5-րդ դարի կեսերը Աղվանքը սահմանակից է եղել արեւելքում՝ Կասպից ծովին, հարավում՝ Հայաստանին (Մեծ Հայքին) Կուր գետով, արևմուտքում՝ Վիրքին և հյուսիսում՝ Սարմատիային:

7-րդ դարի հայկական «Աշխարհացոյցի» բնորոշմամբ՝ Աղվանից Թագավորության բռնած այս տարածքը կոչվում է «Բուն Աղվանք»: Հունահռոմեական անտիկ և վաղ-միջնադարյան հայկական աղբյուրները հետաքննելով իրենց ժամանակները, Մասնավորապես՝ Պտղոմեոսը, Պլինիոս Ավագը, Ստրաբոնը, Պլուտարքոսը և 5—7-րդ դ. հայկական աղբյուրները՝ Կորյուն, Ագաթանգեղոս, Խորենացի, Փավստոս, Նղիշե, «Աշխարհացոյց» տարբեր աղբյուրներով վկայագրում են, որ Մեծ Հայքի և Աղվանքի սահմանը Կուր գետն է: Այդ նշանակում է, թե Հայոց Ուտիք, Արցախ և Փայտական Լահուտները մինչև 428 թ. Աղվանից Թագավորության կազմ չեն ընդգրկվել: Հետևաբար աղբյուրական պատմագրության մեջ արմատավորված այն վարկածը, թե Աղվանից Թագավորության հարավային սահմանն անցնում էր Արաքս գետով՝ պարզապես կեղծիք է, որի նպատակը հայոց Ուտիք և Արցախ նահանգները յուրացնելն է: Հունարակերտ (Խունան) ամրությունն ուստի Հայոց, Վրաց և Աղվանից սահմանները հատվում էին: Ըստ Պլինիոսի,

Ավագի տեղեկության՝ Վերքի և Աղզանքի սահմանն անցնում էր Ալագան գետով:

Աղվանքի սահմանները էական փոփոխության ենթարկվեցին 5-րդ դարում, երբ 428 թ. հայոց թագավորության վերացումից հետո Ուտիքը միացվեց Աղվանական թագավորությանը: Սակայն 462 թ. լուծարքի ենթարկվեց նաև վերջինս, բուն Աղվանքին միացվեցին հայոց Արցախ և Փայտակարան նահանգները, և այս բոլորը միասնաբար կազմեցին Պարսկաստանին ենթակա Աղվանական մարզպանություն: Ուրեմն՝ նոր կազմավորված վարչական միավորը պահպանում էր վերացված թագավորության անունը, բայց այլևս միանգամայն այլ էր թե՛ իր ընդարձակված սահմաններով, թե՛ էթնիկական կազմով: Պատմագրության մեջ ընդունված է մարզպանական Աղվանքը կոչել նաև Աղվաճք, որի կազմում հայկական տարածքներն ու հայ բնակչությունը փաստորեն գերակշռում էին:

Աղվանից պետության կազմավորումը

Աղվանները պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա. 331 թ. պարսից արքա Դարեհ 3-ի և Ալեքսանդր Մակեդոնացու միջև Գավգամելայի մոտ տեղի ունեցած ճակատամարտին պարսից զորքի կազմում իրենց լատնակցության կապակցությամբ: Այդ փաստը, որը արձանագրված է հույն պատմիչ Արրիանոսի մոտ, վկայում է, որ աղվանների նրկիրը այդ ժամանակ գտնվելիս է նոյն Արեմենյանների տիրապետության ներքո: Դրանից հետո՝ նշվ. մ. թ. ա. 1-ին դար աղվանների մասին գրավոր տեղեկություններ չկան:

Աղվանից պետությունը կազմավորվել է 26 տարաբնույթ եղբրի միավորումից՝ մ. թ. ա. 1-ին դարի սկզբներին: Իր հարևանների համեմատությամբ Աղվանքում պետականության ուշ ծաղման փաստը պայմանավորված էր երկրի աշխարհադրական կտրտվածությամբ, առանձին շրջանների միջև թույլ տնտեսական կապերով, տարբեր տնտեսական ու

մշակութային զարգացում ունեցող ցեղերի միմյանց հետ ոչ սերտ հաղորդակցութեամբ:

Աղվանից պետութեան մայրաքաղաքն էր Ավթարանի բեր- քառատ հովտում գտնվող Կապաղակը:

Աղվանից պետութեան փոխհարաբերությունները Հռոմի և հարևան երկրների հետ

Աղվանից պետությունը իր կազմավորման առաջին իսկ շրջանից հարկադրված էր պայքարի մեջ մտնել Հռոմեական կայսրութեան հետ:

Մ. թ. ա. 69 թ. Հայաստանի վրա հռոմեական զորավար Լուկուլլոսի հարձակմամբ սկսվում է հայ-հռոմեական պա- տերազմը: Բշնամուն դիմադրավելու համար Տիգրան Մեծը օժանդակ զորքեր է բերում հարևան երկրներից, այդ թվում և Աղվանքից: Հայոց թագավորի բանակի կազմում գրավելով կարևոր ռազմական դիրքեր, աղվանացիները մասնակցում են 69 թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտը պաշարումից աղաահելու համար մղվող կռիվին: Դա պատմության մեջ նրանց առաջին բախումն էր հռոմեացիների հետ, որը, շուտով վե- րաճելու էր պետութեան ինքնուրույնության ու անկախության համար մղվող ծանր պատերազմի:

Մ. թ. ա. 66 թ. Արևելքում հռոմեական զորքերի զլխավոր զորահրամանատար Լուկուլլոսին փոխարինում է Գնեոս Պոմ- պեոսը: Շարունակելով պատերազմը, նա հաղթում է Հայաս- տանին, հարկ և ռազմատուգանք վճարելու պայմանով հաշ- տություն կնքում նրա հետ և ամբողջ ուշադրությունը բեկուռ է դնում Կողքիս փախչող Պոնտոսի թագավոր Միհրդատ Նվպա- տորին ջախջախելուն: Հետապնդման ճանապարհին, վերա- հաս 66—65 թթ. ձմեռը անցկացնելու նպատակով, նա իր ամբողջ բանակը բաժանում է երեք մասի և, կենտրոնացնե- րով հրեք տարրեր տեղերում, մնում է ձմեռելու Կուր գետի աջ ափին գտնվող Աղվանքին մերձակա տաք ու կերառատ «Անտհոտական» կոչվող վայրում: Լսելով այդ մասին և վախե- նալով հռոմեացիների Աղվանք ներխուժումից, աղվանից թա- գավոր Օրոյսեսը շտապում է կանխել նրանց: Օգտվելով

«Սատուռնալիս» անվամբ տոնախմբութեամբ նրանց դրագ-
մածութիւնից, նա ևս իր բանակը բաժանում է երեք մասի և
փորձում նախքան հռոմեացիների ուշքի գալը և բանակների
միավորելը շեշտակի հարձակմամբ նրանց ջախջախել առան-
ձին-առանձին: Սակայն անհաջող: Նա երեք տեղերում էլ
պարտութիւն է կրում և հետ քաշվում: Բանակցութիւններ
ոկսելով Պոմպեոսի հետ, Օրոյսեսը հռոմեացիների Աղվանք
շմռնելու պայմանով հաշտութիւն է կնքում նրա հետ: Բայց
հռոմեացիները վրեժխնդրութեամբ լցված՝ Կողքիսից հետ-
դարձի ճանապարհին, մ. թ. ա. 65 թ., գաղտագողի հարձակ-
վում են Աղվանքի վրա: Անակնկալի եկած և շփոթված աղ-
վանցիները, որոնք հաշտութեան պայմանագրով հանդուա-
ցած չէին սպասում թշնամուն, Բագավորի եղբայր Կոսիսի
գլխավորութեամբ դուրս են գալիս դաշնադանցների դեմ:
Ալազան գետի ձախ ափին տեղի է ունենում մի ճակատա-
մարտ, որը վերջանում է Կոսիսի սպանութեամբ և հռոմեացի-
ների հաղթանակով: Հմտորեն օգտագործելով տեղանքը, խո-
րամանկութեամբ թաքցնելով իրենց թշական գերակշռությու-
նը, Պոմպեոսը ծուղակի մեջ է գցում Օրոյսեսին և լիակատար
հաղթանակ տանում: Այս հաղթանակից հետո նա առաջ է
շարժվում դեպի երկրի խորքը և կանգ առնում՝ միայն տեղի
տալով Օրոյսեսի հաշտութիւն կնքելու խնդրանքների ու նիւր-
ների առջև: Հաշտութիւնը նրանց միջև կնքվում է մ. թ. ա.
65 թ.:

Աղվանքը նվաճված էր: Այն հայտարարվում է «Հռոմի
բարեկամ ու դաշնակից»: Հռոմեական տիրապետութիւնը
Աղվանքում, սակայն, կայուն չէր: Այն Մեծ Հայքի հետ հաճախ
էր ապստամբում, և Հռոմը հարկադրված էր կրկին ու կրկին
ուզալի ուժեր կենտրոնացնել վերանվաճման համար: Պոմպեո-
սի հեռանալուց հետո շատ շանցած՝ Աղվանքը Մեծ Հայքի
հետ կազմում է մի ընդհանուր խմբավորում և ոչ միայն թո-
րափում հռոմեական լուծը, այլև մասնակցում հայոց Արտա-
շատի 2-րդ թագավորի դեպի Հռոմի միջազեղման տիրույթ-
ներ կատարած արշավանքին ու դրանց գրավմանը: Վերջին
պարագան հարկադրում է Հռոմին մ. թ. ա. 37 թ. հատուկ մի
արշավանք կազմակերպել դեպի Արեւիլը և մոտ քառորդ դար-

յա անկախությունից հետո կրկին հնազանդեցնել Հայաստանը ու նրա դաշնակից Աղվանքը:

Հռոմի տիրապետությունը Աղվանքում այս անգամ ավելի կայուն ու երկարատև էր, քան առաջին դեպքում: Այստեղ իշխում էին Հռոմի դրածո թագավորները, որոնք, իրենց ճակատագրին հնազանդ՝ մասնակցում էին Հռոմի նվաճողական քաղաքականությանը: Այդ ժամանակաշրջանում ուժեղացած Պարթևական թագավորությունը լուրջ հարված էր հասցնում Հռոմի գերիշխանությանը Առաջավոր Ասիայում և բախում, երկուսի միջև դարձնում անխուսափելի: Սակայն հռոմեական կայսր Տիրերիոս Կլավդիոսը պարթևների դեմ կոխը սկսում է ոչ թե սեփական ուժերով, այլ դիվանագիտորեն նրանց դեմ հանած Աղվանքի ու Վիրքի հրահրումով: Պարթևական պետությունն ու հանուն Հռոմի շահերի նրանց դեմ դուրս եկած աղվանա-իրերական կողմի միջև պատերազմը տեղի է ունենում պարթևների համար շահազանց անբարենպաստ պայմաններում և վերջանում նրանց լիակատար պարտությամբ:

Հաջողությամբ ավարտելով պատերազմը պարթևների հետ, Հռոմը հավատարիմ իր «բաժանիք և տիրիք» քաղաքականությանը, այժմ միմյանց դեմ է հանում դաշնակիցներին: Ունենալով հռոմեացիների համաձայնությունն ու խրախուսանքը, վրաց Փարսաման թագավորը հարձակվում է երեկվա իր դաշնակցի վրա և նրանից կատարված տարածքային նվաճումների շնորհիվ ընդարձակում իր սահմանները արևելքում:

Մ. թ. 1-ին դարի երկրորդ կեսին՝ 72—74 թթ. Աղվանքը ենթարկվում է ալանների ավերիչ արշավանքներին: Ալանները հաստատվում են Աղվանքում և մոտ մեկուկես տասնամյակ տնօրինում այնտեղ: Հռոմին վարկարեկող այս իրադրությունը վերջ է տալիս Դոմիցիանոս կայսրը, որն 80-ական թթ. դուրս է քշում ալաններին, վերահաստատում Հռոմի գերիշխանությունը և նոր սահմաններ անցկացնում Աղվանքի ու Վիրքի միջև: Հռոմեական տիրապետությունը Աղվանքում պահպանվում է նաև ամբողջ 2-րդ դարի ընթացքում:

§ 2. ԱՂՎԱՆՔԸ Մ. Թ. Ց—ԳՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Մ. Թ. Ց-րդ դարը Առաջավոր Ասիայի պատմության մեջ մտնում է որպես քաղաքական ու սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջան։ Պարթևաստանում ծագած նոր ուժերի հարվածների տալի 226 թ. ընկնում է Պարթևական հզոր թագավորությունը և իր տեղը զիջում նոր պետության՝ Սասանյան Իրանին, որն էլ քաղաքական ասպարեզում հանդես գալու առաջին իսկ շրջանից ձգտում է գերիշխանության հասնել Առաջավոր Ասիայում։ Այդ հողի վրա նրա ու Հռոմեական կայսրության միջև սկսվում են կռիվներ, որոնք պակաս կատաղի ու անզիջում չէին, քան մինչ այդ ասպրեզների ու Հռոմի միջև ծավալված կռիվները։ Նոր իրադրությունում, էրբ հռոմեական տիրապետությունը Աղվանքում ավելի շուտ անվանական էր, քան իրական, վերջինս Մեծ Հայքի հետ կազմում է մի ընդհանուր ճակատ և հակվում գեպի Հռոմեական կայսրությունը։ Մինչդեռ Սասանյանները բնորոշ են Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի նվաճման քաղաքականությունը և դրա իրականացման համար անմիջապես շինում գործնական քայլերի։ Բայց երեք երկրները Մեծ Հայքի թագավոր Տրդատ 2-րդի կոչով ոտքի են կանգնում և նրա առաջնորդությամբ տասնմեկ տարի պատերազմելով, ի դերև հանում Սասանյանների նկրտումները։

Նշված երկրներում իր քաղաքական ազդեցությունն հաստատելու նպատակով, Արտաշիրի որդին և հաջորդը՝ Շապուհ 1-ը նորից պատերազմի է ելնում Հռոմի դեմ։ Պարսկա-հռոմեական պատերազմների այս շրջանում հաղթությունները ուղեկցում են Շապուհին Գերիշխանության հասնելով հակառակորդի նկատմամբ, արքան 263 թ. շարժվում է Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի վրա, պարտության մատնում նրանց և վերջնականապես նվաճում նաև այդ երկրները։

Դարի հաջորդ տասնամյակներում Սասանյան Իրանի ու Հռոմեական կայսրության մեջ փոփոխակի հաջողություններով շարունակվում են կռիվները, որոնք ավարտվում են 298 թ. Մծրինում կնքված 40-ամյա խաղաղության պայմանագրով։

Ավատատիրական ճառքերույթյունների առաջացումը

Արշակունյաց ճառատույթյուն Աղվանքում

Մծրինի պայմանագրով ընձեռված խաղաղությունը դրական դեր ունեցավ Աղվանքի տնտեսական կյանքում։ Վերկթ են ապրում արտադրության ուժերը, փոխվում են արտադրահարաբերությունները։ Հին տնտեսական կարգերը սկսում են ճեղքեր տալ։ Առաջանում են նոր՝ ավատատիրական հարաբերություններ, որոնք Աղվանքում սկսում են ձևավորվել 4-րդ դարում և տիրապետող դառնում 7-րդում։ Բայց Աղվանքի բնակչության կյանքումների բազմազանության պատճառով երկրի ողջ տարածքում չէ, որ գործում էր արտադրության ավատատիրական եղանակը։ Տիրապետող լինելով հիմնականում տնտեսապես զարգացած տարածաշրջաններում, Աղ-

թաղանի ու Ալազանի հովիտներում և սրանց մերձակայքում, այն չէր կարողացել հաջրահանել Կովկասյան հյւսիսէր լեռնաշղթայի ալպիական մարգագետիններով հարուստ հարավային լանդերին ապրող քաղվոր անասնապահ ցեղերի տնտեսածէք: Նրանցից էլ ավելի պարզունակ կյանքով էին ապրում մերձկասպյան շրջաններում ձկնորսութեամբ զբաղվող ցեղերը. իսկ կիրճերում ու բարձր լեռնային շրջաններում, անտառային գոտիներում բնակվողները, իրենց տնտեսական ղեշում էին նաչնիակ վերջինների: Բազմակց փոստային Աղվանքի տնտեսական կյանքի առանձնահատկությունն էր:

4-րդ դարում ավատային հարաբերությունների ձևավորմանը ղուդընթաց, Աղվանքի քաղաքական կյանքում ևս տեղի էին ունենում կազմավորվող հասարակարգին համապատասխան փոփոխություններ, որի հետեանքով տեղի նախկին թագավորական տանը փոխարինելու է գալիս նոր հարստություն՝ Արշակունյաց հարստությունը:

Աղվանքի Արշակունյաց հարստության հիմնադիրները սիրում էին Հայոց թագավոր Տրդատ 3-րդի ազգակից Սանատրուկից, որ մինչև այդ թագավոր Հայոց Մեծացա՝ դառնալու մարմաշով տարված, Աղվանից նախարարների ամենաակտիվ դորձակցութեամբ, պատերազմ էր սկսել հայոց օրինական թագավոր խոսրով Կոտակի դեմ: Մոտ 335—336 թթ. Օշականում տեղի ունեցած ճակատամարտում պարտվելուց և սպանվելուց հետո, նրա սերունդները փախչում և ապաստան են գտնում Աղվանքում, որտեղ էլ բնդդրվում են քաղաքական իշխանութեան համար մղվող պայքարի մեջ: Ունենալով Աղվանքի դժոխ նախարարների ու ազնվականության այլ ներկայացուցիչների աջակցությունը, ինչպես նաև որպես պարսից քաղաքականութեան կրողներ՝ Շապուհ 2-րդի խրախուսանքներն ու օժանդակությունը, Սանատրուկի սերունդները շուտով հասնում են Աղվանքում թագավորելու պատվին և դնում Աղվանքի Արշակունյաց թագավորական հարստության հիմքերը: Նրա առաջին ներկայացուցիչն էր Վաչագան Քաջը (338—342 թթ.): Նոր հարստության ներկայացուցիչները միմյանց փոխարինելով իշխում են Աղվանքում մինչև 6-րդ դարի առաջին տասնամյակը: Այս ամբողջ ժամանակամիջոցում Աղվանքը հանդես էր գալիս որպես Սասանյան Իրանին ենթակա երկիր: Իրանի տիրապետությունը Աղվանքում ավելի

ամուր ու կայուն էր, քան հռոմեացիներինը, և նրանք ազատ
ու անկաշկանդ տնօրինում էին նրա ճակատագիրը:

Իրենց տիրապետության սկզբնական շրջանում, Սասանյանները Աղվանքի նկատմամբ վարում էին մեղմ ու հանդուրժողական քաղաքականություն և, նույնիսկ, նրա թագավորներին բարձր պաշտոններ էին վստահում պարսից արքունիքում: Սասանյանների մոտ նման ծառայության մեջ էր վաշկ 1-ին Փաշ Աղվանից թագավորը (342—60-ական թթ.):

Աղվանքի ու Իրանի հարաբերությունները է՛լ ամփելի բարեկամական են դառնում Ուռնայրի թագավորության օրոք (IV դարի 60—70-ական թթ.), իսկ հայ-աղվանական հարաբերությունները մտնում են նոր փուլ: Օգտվելով Մեծ Հայքի համար ստեղծված ծանր դրությունից, Ուռնայրը հարձակվում և գրավում է նրա Արևելից կողմանց մի շարք գավառներ՝ Ուտի-Առանձնակ, Շակաշեն, Գարդման, Կողթ և սրանց հարակից այլ շրջաններ: Չբավարարվելով դրանով, նա ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև տեղի ունեցող հայ-պարսկական պատերազմին և զենքը ձեռքին կռվում հայոց դեմ: Հայ-պարսկական այս կռիվների բարձրագույն կետը դառնում է Ձիրավի 371 թ. հայտնի ճակատամարտը, որի ժամանակ հայերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ջարդում են տարսիկներին և լիակատար հաղթանակ տանում: Զախջախվում է և Ուռնայրը, որը պարսից հզոր բանակի ծանր պարտությունը տեսնելով՝ փախչում է: Նրան հասնում է Մուշեղ Մամիկոնյանը, բայց չի սպանում, այլ բավարարվելով սոսկ թրի տափակ կողմով նրա գլխին հարվածներ հասցնելով, մեծահոգաբար թույլ է տալիս մազապուրծ փրկվել: Ծակատամարտից շատ չանցած Մուշեղ Մամիկոնյանը ձեռնամուխ է լինում հայկական հողերի վերամիավորմանը և մի հատուկ արշավանք կատարելով դեպի Աղվանք՝ ետ գրավում Հայաստանից նրա նվաճած գավառները: Հայոց սպարապետի այս գործողությունների ջնդհիվ ոչ միայն վերականգնվում է հայ-աղվանական սահմանը, նախկինի նման անցնելով Կուր գետով, այլև Աղվանքը դառնում է Մեծ Հայքի քաղաքական ազդեցությանը ենթակա մի երկիր:

Աղվանքի համար խոսովահույզ այս իրադարձութիւններն հաշորդում է խաղաղության մի ժամանակաշրջան, որը տրնտեսական ու քաղաքական զարգացման հետ բերում է նաև հասարակական մտքի վերելք և որպէս դրա քնական հետևիւնք, 4-րդ դարի 70-ական թթ. քրիստոնէութիւնը նախադրում է պետական պաշտոնական կրօն:

Եւսեւրիւս Աղվանից թագաժորտական դահի վրա փոխարինում է Նրսիսոս Աղաղանը. (414—444 թթ.): Եւրոսնակելով պահպանել բարյաջական հարաբերութիւնները Իրանի հետ, նոր թագավորը լայն գործունէութիւն է ծախում երկրում լուսավորության, գրի ու դպրության տարածման ուղղութիւններ: Լուրջ պայքար է ծավալում հեթանոսական կրօնն արմատախիլ անելու և քրիստոնէութիւնն արմատավորելու համար և այդ նպատակով ժամաացության լեզուն՝ շատերի համար անհասկանալի հունարէնը, փոխարինվում է ժողովրդին հասկանալի տեղական լեզվով:

Աղվանքը ապրում է տնտեսական զարգացման ու մշակութային վերելքի ժամանակաշրջան:

Կրոնափոխութեան հարկադրանքը: Ազատագրական շարժումներն Աղվանքում:

5-րդ դարի 40-ական թթ. Աղվանքի վրա կախվում է իրանական լծի ծանրացման, հավատափոխութեան ու արհամիրքների սպառնալիքը: Ձգտելով Մեծ Հայքում, Աղվանքում ու Վիրքում հասնել լիակատար տիրապետութեան, Սասանյան Իրանի նոր արքա Հազկերտ Զ-րդը դիմում է նաև նրանց պաշտօնափոխութեան ենթարկելու միջոցին: Հատուկ հրովարտականերով իր մոտ կանչելով հիշյալ երկրների գլխավոր նախարարներին, ծեծի, ծանր պատիժների, սպանութեան և նրանց երկրներն ավերելու ու ժողովրդին գերեզմարելու սպառնալիքների տակ առաջարկում է ընդունել զրադաշտականութիւնը: Նախարարներն ընդունում են այն, բայց առերևոյթ. այդ միջոցով Հազկերտի որոգայթներից դուրս պրծնելով, իրենց երկրները հասնելու և դրանց պաշտպանութիւնը կազմակերպելու դիտավորութեամբ:

Հազկերտ Բ-ն նախարարների հետ նրանց երկրներ է ուղարկում նաև մեծ թվով պարսկական զօրք և մոգերի խումբ:

բերւ ընդ այս երեք երկրներէ ժողովուրդները ոտքի են կանգնում պաշտպանելու իրենց հավատն ու հայրենի երկիրը: Մինչ հայ ժողովուրդը ապստամբութեան նախապատրաստութիւն է տեսնում, Հայաստան է դալիս Աղվանքի հազարապետը և, պատմելով մոգերի ու պարսից բանակների հաստատումով երկրում ստեղծված ծանր դրութեան մասին, օգնութիւն խնդրում հայերէց: Հայերը ընդառաջում են օգնութեան կոչին, իրենց բանակը բաժանում երեք մասի և մի մասը Վարդան Մամիկոնեանի հրամանատարութեամբ ուղարկում Աղվանք: 450 թ. Վարդան Մամիկոնեանի ու պարսից զորահրամանատար Սեբուխտի միջև Աղվանքին սահմանամերձ խաղիսաղ քաղաքի մոտ տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ հայերը հաղթանակ են տանում թվապէս իրենց գերազանցող թշնամու նկատմամբ: Ոգեկորված այս հաջողութիւնին, այնուհետև հայ զորականները անցնում են ողջ Աղվանքով ու ազատագրում այն պարսիկներից: Վարդան Մամիկոնեանը վերադառնում է և անցնում հայ ապստամբների գլուխ, 451 թ. Ավարայրում տալիս գլխավոր ճակատամարտը իրանական տերութեան դեմ: Ճակատամարտում զոհվում են հայոց սպարապետն ու բազմաթիւ նախարարներ իրենց ղորքերով, բայց ճակատամարտն ստիպում է պարսից տիրակալներին փոխելու հավատափոխութեան հարկադրանքի քաղաքականութիւնը ինչպէս Մեծ Հայքում, այնպէս էլ Աղվանքում:

Հակասասանյան տրամադրութիւններն Աղվանքում, սակայն, չեն վերանում: Դրանք նոր ուժով հառնում են Վաչե 2-րդ Թագավորի (444—461 թթ.) գահակալութեան վերջին տարիներին: Օգտվելով Հազկերտի մահից (457 թ.) և նրա որդիների միջև գահի համար մղվող կռիւներից, նա երկիրը հայտարարում է անկախ: Երկամյա կռիւներից հետո հաղթելով եղբորը՝ Հազկերտի կրտսեր որդին՝ Պերոզը դիրքերը կայունացնելուց հետո, բանակները շարժում է Աղվանքի վրա՝ այն կրկին հնազանդեցնելու ցանկութեամբ: Զուգահեռով ենթարկվել Իրանին, Վաչե 2-րդը դաշինք է կնքում մասքութեան ու տասնմեկ լեռնական ցեղերի հետ և դուրս գալիս ազատագրական պատերազմի Պերոզի դեմ: Աղվանից Թագավորն ու իր դաշնակիցները մի քանի ժանր հարվածներ են հասցնում

Գերագի զորքերին: Վերջինս երկու-երեք անգամ գիժում է Վաչին և առաա նվերներով ու զանազան խոստումներով փորձում նրան խաղաղեցնել: Մերժում ստանալով, նա իր բանակները համալրում է նոր ուժերով և անցնում հարձակման: Վաչին մի ամբողջ տարի համառ կռիվներ է տալիս պարսից արքայի դեմ: Այդ անհավասար կռիվներում ազվանների ուժերը զնալով ջլատվում են: Երկիրն ընկնում է տեսնուսական ծանր կացության մեջ: Եվ Գերագին, ի վերջո, 461 թ. հաշոդվում է կոտրել ապստամբ ազվանների հերոսական դիմադրությունը և դաժան հաշվահարգար տեսնել նրանց հետ: Շատերը սպանվում են, նեալվում բանտերը, արտաքսվում հեռավոր երկրներ: Պատժից չի խուսափում նաև թագավոր Վաչին: Նա դահադուրկ է արվում և պահվում իր սեփական երկրի մայրաքաղաքում որպես պատվավոր գերի:

Աղվանքի մարզպանության կազմավորումը:

Վաչագան 8-րդ Բարեպաշտ

Հեռացնելով Վաչե 2-րդին դահից, Պերոզ արքան ընդհանրապես վերացնում է թագավորական իշխանությունը, նույն՝ 461 թ. Աղվանքում մտցնում մարզպանական վարչակարգ և տալիս մարզպաններին ի կառավարում: Բայց քանի որ մարզպանություններ հիմնելիս Սասանյանները ելնում էին նաև հարկային վարչական միավորներ ստեղծելու իրենց սկզբունքից, որի ժամանակ միմյանց էին միացնում տարբեր երկրների առանձին գավառներ, ուստի Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ Մեծ Հայքից անջատում են նրա ծայրամասային Ուտիք և Արցախ նահանգները և միավորելով Աղվանքի մարզպանության հետ, ստեղծում հարկային վարչական նոր միավոր:

Այս միավորման հետևանքով Աղվանքի մարզպանության սահմանը հարավում հասնում է մինչև Արաքս գետը: Միաժամանակ, մերձկասպյան ջրջաններում է՛լ ավելի ամրապնդվելու, հյուսիսային բոլոր ջեղերի ճանապարհը այդ կողմերից փակելու նպատակով, Սասանյանները սկսում են նվաճումներ կատարել նաև այդ ուղղությամբ: Գեղի հյուսիս շարժվելու ղուղերթաց, նրանք պաշտպանական ամրություններ են կառուցում և

նվաճած ազգագավառները (Խորվան, Շուախ, Չոզ, Ղենկաց և Թահապարաց) Եւաքնում Աղվանից մարզպանությանը։ Այս տարածքային աֆից հետո մարզպանությունը ընկալեալովում է արդէն նաև հյուսիսում, հասնելով մինչև Դերբենտի ամրութիւնները։ Ավարտուն և վերջնական տեսք ստացած Աղվանից մարզպանությունը, այսպիսով, ընդգրկում էր քրուն աշխարհն Աղուանից՝ երկիրը, Հայաստանից անջատված Ուտիք և Արցախ նահանգները և Կասպից ծովի արևմտյան ափին ընկած վերահիշյալ ազգագավառները։

Նոր քաղաքական-մարշալկան միավորի մայրաքաղաք է դառնում Պարտավը։ Այսուհետև Պարտավում էին նստում Աղվանքի մարզպանները։ Այս ամբողջ տարածքի, այդ թվում և Ուտիքի ու Արցախի վրա, որպես բոլորի համար մեկ ընդհանուր անվանում, տարածվում և մնում է «Աղվանք» անվանումը։

Աղվանքի մարզպանության բաղկացուցիչ մարզերի միջև ոչ մի օրգանական կապ չկար և նրանցից յուրաքանչյուրը՝ մասնավորապես Ուտիքն ու Արցախը, ապրում էր ինքնուրույն էլանքով։

Մարզպանական Աղվանքում ծանր իրադրութիւն էր ըստեղծվել։ Երկրի տարածքում ծայր էին առել բռնութիւնները, կամայականութիւնները, թալանն ու կողոպուտը։ Ժողովուրդը տնքում էր խուլ դժգոհութիւնից և հարմար առիթի սպասում՝ շայքարի դուրս գալու և անկախութիւն, ձեռք բերելու համար։ Այդպիսի առիթ ընձեռվում է, երբ Պերողը պատերազմի է դուրս գալիս հեփթաղների դեմ։ 481 թ. իրանական տիրության դեմ ծագում է մի ապստամբութիւն, որ խմբովում է Աղվանքում, սկսվում Վիրքում և կենտրոնանում Մեծ Հայքում՝ Վահան Մամիկոնյանի գլխավորութեամբ։ Ապստամբութիւնը տեւում է շուրս տարի և վերջանում 484 թ. Նվարսակ գյուղում Վահան Մամիկոնյանի հետ կնքված պայմանագրով։ Վերանայվում է պարսկական քաղաքական գիծը Մեծ Հայքում և նրա հարևան երկրներում, հռչակվում է դավանանքի աղատութիւն, վերականգնվում են տեղական ազնվականութեան իրավունքներն ու արտոնութիւնները, իշխանութիւնը տրվում նրանց։ Եվ որպես Նվարսակի պայմանագրի ուղղակի հետևանք, 485 թ. Աղվանքի մարզպանութեան գլուխ է կանգնում Վաչագան 2-րդը՝ Բարեպաշտ մականունով (485—510)։

Նրա իշխանությունը տարածվում էր մարզպանության
բոլոր գավառների վրա: Բայց քանի որ մայրաքաղաքի Պառ-
տավ տեղափոխմամբ, տնտեսական ու քաղաքական կենտ-
րոն էր դարձել Կուրի աշափնյակը, ուստի Վաչագանի իշխա-
նությունը ևս կենտրոնանում է այստեղ և աստիճանաբար
սկսում գործադրվել հիմնականում նրա շրջանակներում:
Սկսած այդ ժամանակներից նկատվում է մարզպանության
տրոհման ու նրա առանձին շրջաններում նոր ինքնուրույն
քաղաքական կազմավորումների առաջացման միտում:

Իշխանության գլուխ անցնելով Վաղարշ 1-ի պարսից աբքայի բաբեհա-
նությունը, Վաչագան 2-րդը ձգտում էր նրա հետ պահպանել բարեկամա-
կան հարաբերություններ: Իսկ ներքին քաղաքական կյանքում Լեանդով
ձեռնամուխ լինում երկրի գրեթե կայունացմանն ու ամրապնդմանը: Նրա
ձեռնարկումներից մեկն էլ 488 թ. Աղվին գյուղում եկեղեցական ժողովի
հրավիրումն էր, որին մասնակցում էին ինչպես հոգևոր, այնպես էլ աշ-
խարհիկ տեժիք: Այնտեղ ընդունվում են օրինավոր սրբանքներ, օրենսդրո-
ւեն ձևավորվում է ավատատերերի իրավունքը հողի և մարդկանց նկատ-
մամբ, մացվում հարկերի կայուն չափ, ամրապնդվում եկեղեցական նվիրա-
ւելությունը: Նրա օրոք երկրամասում լայն աշխատանքներ են տարվում
քրիստոնեության արմատավորման, տարբեր ազանդների վերացման, լու-
սավարության ու մշակութային կյանքի զարգացման համար:

Վաչագան Բարեպաշտի մահով վերջ է գտնում նաև Աղ-
վանքի Արշակունյաց հարստությունը: Այնուհետև մարզպա-
նությունը սկսում են զլխավորել արքունիքի կողմից նշանակ-
ված պարսիկ մարզպանները:

Աղվանական մարզպանության տրոհումը և «Աղտանք» հասկացության մոր բովանդակության առաջացումը

6-րդ դարի սկզբներին նոր ուժով սկսված հյուսիսային
քոչվոր ցեղերի ավերիչ արշավանքները Սասանյաններին հար-
կադրում են լրջորեն զբաղվելու իրենց հյուսիսային տիրույթ-
ների ու սեփական երկրի անվտանգության հարցերով: Նրանք
հարկադրված են պաշտպանական միջոցներ ձեռնարկել հա-
կապես Աղվանից մարզպանության տարածքում, քանի որ
այստեղով էին անցնում հոն-սարիրների արշավուղիները:

Պեթոգի որդի Կապառը հաշոգությամբ դուքս է թշում նբանց և կառուցում Եւաշտդանական ամրութիւնների երկրորդ շարքը՝ Ասղուտ-Կապառը նրա շուրջը կառուցում է բազմական ավաններ և զինվորներ կենտրոնացնում։ Հոր գործը շարունակում է որդին՝ խոսքով Անուշիրվանը, որն իր հերթին հաշոգությամբ պատերազմներ է մղում պատմութեան ասպարեզ նոր դուքս եկած խազարների դեմ։ Ավելին, նա տեղական իշխաններին տալիս է արառնութիւններ՝ իրենց սահմաններում ինքնիշխան կառավարելու իրավունք, շնորհում բարձր տիտղոսներ։

Սասանյանները ողջ երկրամասը բաժանում են էթնիկական, վարչաքաղաքական մասնւ միավորների՝ իրենց սեփական տիրակալներով։ Մասնատման ընթացքն իր արդշունքով ավելի զգալի էր մարզպանութեան Կուրի ձախափնյակն ընդգրկող կամ նախկին բուն Աղվանքի տարածքում։ Այստեղ քաղաքական մասնատվածութիւնը միմյանցից է՛լ ավելի է հեռացնում առանց այն էլ աշխարհագրորեն կտրտվածութեան տրամադող տնտեսական թույլ կապերի մեջ գտնվող ցեղերին ու ցեղային միութիւնները, որոնք սկսում են հանդես գալ իրենց իշխանական տների, ցեղերի կամ տվյալ աշխարհագրական վայրի անուններով։ Նրանց համար ավելորդ է դառնում մինչ այդ իրենց ընդհանուր «Աղուանք» (Աղվանք) անվանումը, և շուտով այն դադարում է այդ մարզերի վերաբերմամբ գործածական լինելուց։ Բայց «Աղուանք» անվանումը չի վերանում։ Այն շարունակվում է գործածվել Կուրի աջափնյա հայաբնակ Ուտիքի և Արցախի տարածքում, ուր պահպանվել էր Առանշահիկների ինքնուրույն իշխանութիւնը։ Իրրև մարզպանութեան բաղկացուցիչ տարածք, կրելով ողջ մարզպանութեան համար ընդհանուր «Աղուանք» անվանումը, Ուտիքն ու Արցախը իրենց միասնական, կենտրոնացված իշխանութեամբ ու միատարր հայկական էթնիկական կազմով մասնատումների չենթարկվեցին։ Այդ իսկ պատճառով «Աղուանք» անվանումը դարձավ «Հայոց Արևելից կողմանք», «Արևելից կողմանք», «Խորին աշխարհ Հայոց» անվանումներին հոմանիշ հասկացութիւն։ Այստեղ էլ 6-րդ դարի վերջերին, դարձյալ պարսից քաղաքականութեան հետևանքով, իշխանութեան գլուխ է անցնում մի նոր՝ Միհրանյանների տոհմը։

Միհրանյան տոհմը նոր Աղվանքում

Միհրանյան տոհմը սերում էր պարսից թագավորների ղարմից: Իբրև Որմիղդ թագավորի սպանության մեղսակիցներ, նրանք փախչում են նորընծա պարսից արքա Խոսրով 2-րդ Փարվեզի վրեժխնդրությունից և 590 թ. հաստատվում Ուտիք-Արցախում:

Փախուստի պատրվակի տակ երեսուն հազարանոց տոհմի այստեղ հաստատումը հետապնդում էր պարսկական տարրը ավելացնելու, իրենց զավթողական քաղաքականության համար ամուր հենարան ստեղծելու և տարածքաշրջանում վերջնականապես տիրապետության հասնելու նպատակ:

Այս նոր հարստությունը Միհրանի ղլխավորությամբ հաստատվում է զավով ու խորամանկությամբ, տեղական հայկական իշխանական տների նշանավոր ներկայացուցիչներին կոտորելով, նրանց հետ խնամիական կապեր հաստատելով և քրիստոնեության ընդունմամբ: Թվում էր թե նրանց հաստատումով և հայ նախարարական տների ոչնչացմամբ, երկրամասը Միհրանյան հարստության ազդեցության տակ կըկորցնի իր հայկականությունը, բայց տեղի է ունենում հակառակ գործընթացը. Միհրանյաններն իրենք են հայանում և յուրացնում հայ ավագանուն հատուկ սովորույթները:

Աղվանքը Միհրանյան իշխանների օրոք հասնում է քաղաքական ու տնտեսական հաջողությունների և պահպանում իր ներքին ինքնավարությունը: Այն քաղաքական հղորդության է հասնում հատկապես Զուանշիր իշխանի ժամանակ (642—683 թթ.), Վերջինիս իշխանության ժամանակաշրջանը համընկնում է Իրանի ազդեցության թուլացման և Միհրմավոր Արևելքում Արաբական խալիֆայության բարձրացման հետ, որոնց միջև էլ ծավալվում է պայքար՝ տիրապետության հասնելու համար: Նույն աշխարհագրական շրջանին տիրելու նպատակով պայքարի մեջ են ներգրավվում նաև Բյուզանդիան ու Խաղաթական խաքանությունը: Զուանշիրը հարկադրված է լինում հերթով պայքարի մեջ մտնել նրանց հետ և, ընտելելով յուրաքանչյուրին դիմադրավելու տարրեր եղանակ, երկրամասի ինքնուրույնությունն ապահովում է սոսկ հարկեր

վճարելու պայմանով: Լինելով շրջահայաց և հեռատնայն քաղաքական գործիչ՝ նա կարողանում է իր իշխանությունը տարածել Կուրի ձախափնյակի որոշ շրջանների վրա:

Օտար ներխուժումներից ապահով Աղվանքը զարգանում է նաև տնտեսապես: Ծռանդուն գործունեություն է ծավալվում երկրի շինացման ու բարգավաճման համար: Սկսվում են լայն շինարարական աշխատանքներ, որոնց օրինակը տալիս է ինքը՝ Ջուանշիրը, կառուցելով ապարանքներ, եկեղեցիներ, իջևանատներ և այլ շինություններ:

Ջուանշիրը 683 թ. դավադրաբար սպանվում է: Միհրանյանները կորցնում են իրենց նշանավոր ներկայացուցչին, իսկ երկրամասը՝ իր ինքնուրույնությունն ու անկախությունը: Արդեն նրա անմիջական հաջորդի՝ Վարազ-Տրդատի օրոք (683—699, 705—709 թթ.) Աղվանքն ամբողջապես ընկնում է արաբական տիրապետության տակ: Նրա իշխանների առջև էանդնում է նոր կողմնորոշման խնդիրը: Առաջանում են խմբակցություններ, որոնցից մեկը, հարելով բաղկեղոնականությանը, կաթողիկոս ներդնա Բաղուրի և Վարազ-Տրդատի կնոջ՝ Սպրամի (նա փոխարինել էր ամուսնուն, վերջինիս Բյուզանդիայում գերի լինելու ժամանակ) գլխավորությամբ հանդես էր գալիս որպես Բյուզանդիայի կողմնակիցներ, իսկ մյուսը՝ Շիրառնունով մի իշխանի գլխավորությամբ, տրամադրված էր դեպի Արաբական խալիֆայությունը: Պայքարն այս երկու խմբակցությունների միջև ավարտվում է երկրորդի հաղթանակով: Բայց դա էլ չի օգնում: Արաբները շարունակում են հպատակ երկրների նկատմամբ վարած իրենց դաժան քաղաքականությունը: Աղվանքի իշխանական զահը գնուն թողնելով Միհրանյան իշխանների ձեռքին, նրանք երկրի փաստական ղեկավարությունը վերցնում են իրենց վրա: Իրավիճակն երկրում է՛լ ավելի է ծանրանում, 'որ երկրամասը մտնում է Արմինիա վարչական միավորի կազմի մեջ և Պարսավո դառնում է արաբ ոստիկանների նստոցը:

Հետագայում Միհրանյան իշխանական գահին մեկը մյուսին հաջորդում են աննշան և ոչնչով աչքի չընկնող իշխաններ, որոնցից վերջինը՝ Վարազ-Տրդատ 3-րդն սպանվում է 821 թ. իր իսկ ազդականի կողմից: Նրա Առանշահիկ տիտղոսը անցնում է Շաքիի իշխան հայազգի Սահլ Սմբատյանին: 853 թվականին հայ ու աղվան շատ իշխաններ աքսորվում են միջագետք:

Միհրանյան տոհմի վերացումից հետո, երկրամասը մինչև Բագրատունյաց հարստության բարձրացումը (885 թ.) սկսում է կառավարվել միայն էմիրների միջոցով: Արաբական լծից

Հայաստանի ազատագրումով, Համամ Արևելքու ջանքերով անկախություն է ձեռք բերում Հայոց երկրի այս հատվածը ևս, և, կազմելով Բագրատունյաց Հայաստանի հայ պետական կազմավորումներից մեկը, ընդգրկվում Բագրատունիների գերագույն իշխանությունն ներքո պտնվող ավատատիրական տիրությունների համակարգի մեջ: Կուրի ձախափնյակում վերջնականապես հաստատվում են մահմեդական հարստություններ (Դերբենտում՝ Հաշիմյանները, Շիրվանում՝ Յաղդյանները): Աղվանական կոչվող ցեղերն ու ցեղային միությունները այլևս կորցնում են իրենց բնիկ էթնիկական նկարագիրը, մահմեդականացմանը ղուդընթաց աստիճանաբար ձուլվում պարբերաբար այստեղ հաստատվող պարսիկ, արաբ, քուրդ և, ի վերջո, թուրքազգի տարրի հետ: Աղվանքն իբրև քաղաքական, էթնիկական, մշակութային ու դավանական հասկացություն այլևս մոռացություն է տրվում:

§ 8. ԱՂՎԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քրիստոնեական քարոզչությունը Հայաստան էր թափանցում փոքր Ասիայից և Ասորիքից, իսկ Վիրք ու Աղվանք՝ Հայաստանից: Հնարավոր է, որ Աղվանքում ևս մինչև երկրի պաշտոնական դարձը գոյություն են ունեցել նոր դավանությանը հետևող համայնքներ: Աղբյուրների վկայությամբ, ստեփան, քրիստոնեությունն այստեղ պիտականորեն ճանաչվել է աղվանների Ուգալոր Ուռնայրի օրոք և նրա իսկ նախաձեռնությամբ: Գարաի ստույգ թվականը հայտնի չէ, բայց քանի որ այն կապվում է Ուռնայրի և Լուսավորչի թոռ Գրիգորիսի անվան հետ, ապա կարելի է թվագրել 4-րդ դարի 70-ական թվականներով: Հետագայում, մասնավորապես 7—8-րդ դդ., տեղի ունեցած դավանական քննությունների թելադրանքով, աղվանից եկեղեցին ևս մշակեց իր առաքելական լինելն ու ինքնակալությունը փաստող ավանդություն, որի համաձայն Աղվանքում քրիստոնեություն է քարոզել Նղիշա անունով լոմն առաքյալ, ուստի Հայքի ու Վիրքի նմանողությամբ իրեն առաքելական կարող էր կոչել և աղվանական եկեղեցին:

Պատմականորեն հավաստի է, սակայն, որ Աղվանքում քաղաքացիական պարելիս նահապետիկաց իրաւաւորչի թոռ Գրիգորիսը, որի նշխարներն ամփոփւած են Ամարասում, Հայոց եկեղեցական անցուղարձին հեռանելու և նմանակելու հանգամանքով է բացատրւում նաև Հոփսիսմէ կույսի նահատակութեան պատմութիւնը ընդօրինակող Քաղուհի անունով կույսի հետ կապւած ավանդութեան ձևաւորումը, որի մասին պատմում է Մովսէս Կաղանկատաւացին:

Աղվանից եկեղեցու պատմութիւնը երկու կարեւոր շրջան է ընդգրկում. հիմնադրութեան օրից շուրջ 100 տարի, մինչև հոգևոր կենտրոնը Ծորից (Դերբենդ), ապա և Կապաղակից Պարտավ տեղափոխելը, իբրև կազմակերպութիւն այն գործում էր բուն Աղվանքում, տնօրինելով աղվանական թագաւորութեան կազմ ընդգրկւած ցեղերի ու ցեղային միութիւններին, այսինքն՝ աղվանների հոգևոր կյանքը, սամնասերտ կապ ու հարաբերութիւններ պահպանելով «հավասարների մեջ առաջինը» ճանաչվող հայոց եկեղեցու հետ:

Մարզպանութեան կազմաւորումից հետո (5-րդ դարի կեսերից) աղվանական եկեղեցու գործունեութեան շրջանակներն անհամեմատ ընդլայնւեցին. այլևս նրա նվիրապետութեան շրջանակում հայտնւեցին Ուտիքի և Արցախի հայ բնակչութիւնն ու եկեղեցական թեմերը: Պատահական չէ, որ փոխւեց նաև հոգևոր սպասաւորների կազմը՝ քահանաներից մինչև եպիսկոպոսապետը: Աստիճանաբար հայախոս ու հայագիր աղվաններին ժառանգելու էին գալիս հենց հայ հոգևորականներ, որոնք պահպանում էին «աղվանական եկեղեցին» հորջորջումը, բայց այլևս դրա տակ հատկանախով ոչ թե էթնիկական Աղվանք, այլ աղվանական մարզպանութեան, ապա և Հայոց արեւելից կողմանց հայկական եկեղեցի: Արաբական արշավանքների դարաշրջանից սկսած աղվանական եկեղեցին ու աղվանական կաթողիկոսութիւնը նույն կշիռն ու բովանդակութիւնն ունեին, ինչ, ասենք, Սփ կամ Աղթամարի հայոց կաթողիկոսութիւնները:

Աղվանական եկեղեցին ևս դարերի ընթացքում ստիպւած էր մաքառելով պահպանել իր բնիկ դավանութիւնը (միաբնակութիւնը, որ ավանդաբար կոչւում ենք լուսավորչականութիւն): Հայտնի է, որ տակաւին 7-րդ դարում քաղկեդոնականութեանը հարեցին վիրքին սահմանակից որոշ գա-

վումների քնակիչներ (Գարգման), 9-րդ դարում Իշխանիկի և Նրա մոր՝
Յազուհի Գինարի հորդորով քաղկեդոնականացողների թիվն աճելացավ:

Աղվանական եկեղեցին շարունակեց իր գոյությունն ու
անունը պահպանել մինչև 1815 թ., երբ այն (Գանձասարի
կաթողիկոսություն) լուծարքի ենթարկվեց և վերածվեց միտ-
րոպոլիտոսության՝ Հայոց կաթողիկոսության կազմում: Քաղա-
ցական աննպաստ պարագաների թելադրանքով աղվանից
կաթողիկոսները հաճախ աստանդական էին լինում և տեղից-
տեղ փոխում իրենց նստոցը: Միայն Արցախի մելիքության
կազմավորմամբ նստոցը Ճալեթից փոխադրվեց Գանձասար
և մի քանի հարյուրամյակ հաստատուն մնաց իր տեղում:

Այսպիսով՝ «աղվանական» կոչված եկեղեցու պատմու-
թյունը հայոց ազգային եկեղեցու արևելյան հատվածի պատ-
մությունն է: «Աղվանական» կաթողիկոսները հաճախ նույ-
նիսկ ի լրո անգամ պատկերացում շունեին «աղվան ժողովրդի»
մասին, թեև ավանդաբար իրենք իրենց «աղվանների կաթո-
ղիկոս» էին ճանաչում՝ ինչպես, օրինակ, Գանձասարի կա-
թողիկոս Սասյի Հասան-Ջալալյանցը (18-րդ դար):

Աղվանական դպրություն: Քրիստոնեության ընդունու-
մը մեծապես նպաստեց ավատատիրական կացութթաձևի աս-
տիճանական հաստատմանը, Անդրկովկասի ժողովուրդների
ու պետական կազմավորումների քաղաքական շահերի ընդ-
հանրությանը գումարվեց նաև մշակութային-դավանական
ընդհանրության գիտակցումը, որի թելադրանքով էլ 5-րդ
դարի երկրորդ տասնամյակում Մեսրոպ Մաշտոցն ու աղվա-
նիստիքի ղեկավարները «շնորհավոր թարգմանը» ձեռնամուխ եղան աղ-
վանական այբուբենի և դպրության ստեղծմանը, ինչպես
Հայաստանում ու Վրաստանում, Աղվանքում ևս գիր ու գրա-
կանություն ունենալու առաջարկը արժանացաավ երկրի թա-
ղավոր Սավադանի և եպիսկոպոսապետ Նրեմիայի քաջալե-
րանքին ու հովանավորությանը: Այդ ամենի մասին մենք
տեղեկանում ենք Կորյունի, Մովսես Խորենացու և Մովսես
Կաղանկատվացու երկերում պահպանված հաղորդումներից:
Աղվանքում էլ զրեբրի ստեղծմանը հաջորդեց դպրանոցների
բացումն ու պաշտամունքային կիրառությունն ունեցող զեր-

քերթի թարգմանությունը՝ Առաջին հերթին թարգմանվեցին, անդունշտ, ս. Գրքի նոր կառավարանային մասն ու սաղմոսները, որոնք հույժ անհրաժեշտ էին քրիստոնեության բուժ ուսմունքին ծանոթանալու, ելնդեցական արարողություններ կատարելու և քարոզչություն ծավալելու համար Քանի որ, ինչպես տեսանք, աղվան միասնական ժողովուրդ, հետևաբար նաև միասնական մեկ ընդհանուր լեզու տակավին չէր ձևավորվել, ուստի իբրև դպրուշյան լեզու պետք է ծառայեր Աղվանքի տարածքում ապրող համեմատաբար մեծաթիվ որևէ եկեղային միության լեզու։ Խորենացու հաղորդմամբ՝ այդպիսին էր գարգարներին լեզուն։ Դատելով պատմիչների տված ընդլայնված տեղեկությունները՝ գարգարներն ճարտուտ էր հայերենին ոչ հատուկ բաղաձայններով՝ առավելապես կոկորդային ու պայթական։ Հայկական միջնադարյան երկու ձեռագրում պահպանված աղվանական այբուբենը, որ բաղկացած է 52 դրից, լիովին հաստատում է գարգարներին անսովոր հնչյունային կազմը։ Արդեն նշվել է, որ շուտով բուն Աղվանքին միացվեցին հայոց Ուտիք և Արցախ նահանգները, իսկ այդ նշանակում է, թե նոր կամ մարդանական Աղվանքի բնակչության լայնակառույց մասը հայկական էր։ Բնական է եզրակացնել, որ այդ հայ բնակչությունը պիտի շարունակեր գործածել իր մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը։

Այսպիսով, 5-րդ դարից սկսած Աղվանքում գործառու էր նույն դպրոցում ստեղծված երկու այբուբեն, երկու գրականություն՝ աղվանների համար գարգարեն, հայերի համար՝ հայերեն։ Աղվանական (գարգարական) գրի ու գրականության գործածության շրջանակը բավականաչափ սահմանափակ էր, որովհետև հասու էր բնակչության միայն մեկ մասին, իսկ մյուս մասը, այդ թվում և հայկական հոծ բնակչությունը անհաղորդ էր դրան։ Ինչպես երևում է՝ աղվանական արքունիքը ևս իբրև ընդհանրական լեզու գերադասում էր հայերենը, որը Անդրկովկասում, մանավանդ հոգևոր շրջանակներում, ազգամիջյան հաղորդակցման դեր էր ստանձնել։ Այդ էր պատճառը, որ աղվան թագավոր Ծավաղանը հայերեն էր փորագրել տվել Երուսաղեմի իր շինարարության խճանկար արձանագրությունը։ Եվ այնուամենայնիվ՝ աղվա-

նական գիրն ու գրականությունը շարունակում էին գոծածական մեալ մինչև 8—9-րդ դարերը ներառյալ։ Այդ են ապացուցում Աղվանքի տարածքում կատարած պեղումների ժամանակ (հատկապես Մինգեչաուրում) պաշտամունքային կառույցների և խեցեղենի բեկորների վրա հայտնաբերված շուրջ մեկ տասնյակի հասնող աղվաներեն արձանագրություններն ու մակադրությունները։ Նրանց աղվանական լինելը հաստատվում է գրերի այն նմանությամբ, որ առկա է ձեռագրերում ավանդված այբուբենի և այդ գրությունների միջև։ Ի՞նչ և ի՞նչ մինչև այսօր մենք չունենք աղվանական դպրությունից պահպանված այդ նշումների հավաստի ընթերցում ու թարգմանություն, ապա միայն այն պատճառով, որ հիմնովին անհայտ է այդ արձանագրությունների լեզուն՝ «աղվաներենը» և ապա դարերի ընթացքում աղվանական գիրը նույնպես փոփոխություններ է կրել (ինչպես հայերեն երկաթագիրն ու բոլորգիրը), որոնք արտացոլված չեն մեզ հասած այբուբենում (աղավաղումներ ու խաթարումներ կան նաև այբուբենի գրապատկերների մեջ)։

Այսպիսով, աղվանական գիրն ու գրականությունն ստեղծվել են 5-րդ դարի առաջին տասնամյակներում, գոյատևել մինչև 8—9-րդ դարերը և աստիճանաբար դադարել գոծածությունից ու մոռացության տրվել։ Աղվանական որոշ ցեղեր, ինչպես օրինակ՝ ուտիները, հայոց էթնիկ միջավայրում, հայերի հետ նույնազգականության պարագայում դարձան հայալեզու և հայագիր, քաղկեդոնականություն հարած նրանց մյուս հատվածները (օրինակ՝ հերերը) վրացական կողմնորոշում ընդունեցին, իսկ արաբական տիրապետության շրջանից սկսած մահմեդականություն ընդունած զանգվածները զրկվեցին իրենց նախնիների ստեղծած մշակութային ավանդույթներից, պարսկալեզու կամ արաբալեզու դարձան, իսկ ավելի ուշ, սելջուկների, մոնղոլների ու թուրքմենների նվաճումների հետևանքով լիովին կորցրին իրենց ինքնությունը՝ թուրք, թաթար, այժմ էլ ադրբեջանցի հորջորջվելով։ Ուշագրավ է, որ իրապես աղվանական ցեղերը հիմնավորապես մոռացան աղվանների երբեմնի ստեղծած մշակութթը, իրենց աղերսը Աղվանքին, մինչդեռ Հայոց արևելից կողմանց հա-

յուժյունը, այդ թվում և Կուրի ձախ ափում աղբահանները, սիրով ու հետևողաբար ժառանգեցին «աղվան» անունը՝ լիովին անգիտանալով նրա էթնիկական իմաստին և այն ընկալելով իբրև «լոռեցուն», «ջամախեցուն», «զանգեզուրցուն» համազոր մի գավառանուն։ Կուրի աջափնյակում պահպանված քրիստոնեական բոլոր հուշարձանները բացարձակորեն, իսկ ձախափնյակում եղածների մեծամասնությունը հայկական են, օժտված հայերեն շինարարական ու հիշատակագրային արձանագրություններով։ Երբ Կաղանկաավաջին ու Դասխուրանցին «Աղվանից պատմություն» էին գրում, ապա նկատի ունեին Հայ-Աղվանքը, Հայոց արևելից կողմանց պատմությունը՝ շատ աղոտ պատկերացում ունենալով բուն Աղվանքի ու բնիկ աղվանական ցեղերի մասին։ Մխիթար Գոշը, «Աղվանից ժամանակագրություն» կազմելիս չէր էլ ենթադրում, թե երբևէ այդ անվան տակ իրապես աղվաններ կփնտրեն։ Երբ «աղվանից» կաթողիկոսը և իշխանները Գոշին պատվիրում էին «Դատաստանագիրք» կազմել, ապա նրանք ինքնուրույն հայոց քաղաքական ու մշակութային շահերից՝ «Աղվանք» անունն ընկալելով իբրև վաղուց էթնիկ նշանակությունը կորցրած տերմին։ Ուստի պարզապես էթնիկ ու մշակութային բռնադատության են դիմում ադրեջանցի այն մտավորականները, որոնք աղվաններ են հայտարարում այդ մատենագիրներին, «աղվանական» պիտակավորում եկեղեցիներն ու խաչքարերը։ Նրանց այդ դրդումը ամենևին էլ «աղվանամոլությունը» չէ, այլ այն, որ հնարավորություն ունենան ադրեջանցիներին աղվանների հետնորդներ հայտարարելով՝ տիրանալ «աղվանական» հուշակած մշակույթին։

ԱՂՐՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983.

Մ. Ս. Աղարեկյան, Ստուգարանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 1, էջ 168—177.

Ս. Տ. Նեմյան, Հայաստանը բոտ «Աշխարհացոյցի», Երևան 1963 թ.

Ս. Տ. Երեմյան, Ն. Մանթրե և 7-րդ դարի Հայոց «Աշխարհացույց» և «Մանթրե և հայագիտության հարցերը», Երևան, 1968:

Ա. Շ. Մեաջակյանյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966:

Բ. Ա. Ուլուխարյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981:

А. А. Ахопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

Ю. Р. Джафаров, Гуины и Азербайджан., Баку, 1985.

С. Т. Еремян, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Варяз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, «Записки Института востоковедения АН СССР», 1939, № 7.

«К освещению проблем Албании и Восточных провинций Армении», том I, Ереван, 1991.

В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, М., 1963.

П. М. Мурадян, История — память поколений, Ереван, 1990.

К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.-Л., 1959.

ԳԼՈՒԽ յՈՐԵՐՈՐԴ

ԱՆԻՐԵՋԱՆ

§ 1. ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԷԹՆՈԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Երկրամասն առաջացումը: Հնագույն ժամանակներից մինչև 1918 թ. Արևելյան Անդրկովկասում «Ադրբեջան» անունը կրող աշխարհագրական միավոր կամ քաղաքական-էթնիկական կադմոստրոմ չի եղել: Աղվանքին վերաբերող բաժնում արդեն նշել ենք, որ այժմյան Ադրբեջանական հանրապետության կազմ ընդգրկված տարածքը պատմությանը հայտնի է բուն Աղվանք (Կուր գետից հյուսիս) և Առան (Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածք) անուններով:

Տարբեր ժամանակներում այդ անունները ևս աշխարհագրական ընդգրկման առումով խիստ կայուն չեն եղել: Բուն Աղվանքը, օրինակ, 11—16-րդ դարերի սկզբնադրյալներում առավելապես հայտնի է Շիրվան անունով:

Առանք նեղ իմաստով համապատասխանում էր հայոց Ուտիք և Արցախ և հանգնեիրին:

«Աղբրեջան» երկրանունը իրանական հնագույն աղբյուրներում հիշատակվում է Ասուրպատական նախնական ձևով: Հայկական Ասուրպատական հնչւմը դալիս է այդ նախասկզբնական ձևից, որը դիտական գրականության մեջ երկու բացատրություն ունի՝ Ասուրպատ (Ասորպատ) իշխողի տիրւթ, կամ՝ «Երակի տաճար»:

Մ. Թ. 7-րդ դարից սկսած արար հեղինակները գրառում ու գործածում են անվան տեղայնացած հնչում-տարբերակը (Աղարբայջան), որը և հետագայում ընդհանրական գործածություն գտավ պարսկական, թյուրքական, եվրոպական միջավայրում:

Հետևաբար, «Աղբրեջան» երկրանունը ավանդված է վաղուց, սակայն մինչև մեր դարի երկրորդ տասնամյակը այն չեմբարեմբել է բացառապես Արաքսից հարավ ընկած տարածքին, որ համապատասխանում է նախ Մանեա, ապա Մարաստան, Իրան երկրների մի հատվածին:

Անդրկովկասում «Աղբրեջան» անունը կրող պետական միավոր կազմավորվեց 1918 թվականին: Անվան ընտրության պարագաների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նշանավոր արևելագետ ակադ. Վ. Բարթոլդը: Քանի որ ուշ միջնադարում Ասորպատականի բնակչությունը հիմնականում թյուրքալեզու էր, որպիսին դարձել էր և Արևելյան Անդրկովկասի բնակչության նշանակալի մասը, և ենթադրելով, թե Արաքսից հյուսիս և հարավ ընկած այդ թյուրքալեզու կազմավորումները ապագայում կմիավորեն մեկ պետության շրջանակներում, «Աղբրեջան» երկրանունը կիրառելի են ճանաչում նաև Անդրկովկասում առաջացած նոր պետության վերաբերմամբ: Այդ ժամանակից սկսած պատմական ներկայիս ու Առանը կրում են վարչական մեկ անուն՝ Աղբրեջան:

Երկու տարբեր աշխարհագրական միավորների անվան նույնությունը հաճախ շփոթի ու թյուրիմացությունների առիթ է տալիս, ուստի այսօր ընդունված է Անդրկովկասում գտնվող Կոչի Հյուսիսային Աղբրեջան, իսկ իրանականը՝ Ասորպատյին:

Մինչև «Աղբրեջան» նորաստեղծ վարչական հասկացողության հաստատումը չկար նաև «աղբրեջանցի» էթնանուն այսօրվա իմաստով: «Աղբրեջանցի» անունը կրող ժողովրդի

տարրեր հատվածներ ու ցեղեր մինչև 20-րդ դարի սկիզբը տարրեր ցեղանուններով կամ տեղանուններով էին կոչվում՝ այրումներ, փաղաբներ, շահսեմաններ, զինյիներ, ջուանշերներ, շամշաղիլներ և այլն։ Փանի որ նրանց միջև եղած կարևորագույն ընդհանրությունը դավանությունն էր, ուստի իբրև ինքնանուն ու արտանուն գործածական էր նաև «մասուլման» որակումը։ Մագումանարանական նառումով ավելի արդարացված էին կիրառվող քաքար, կովկասյան քաքար և բուրբ անվանումները։ Որոշ շրջաններում, այդ թվում և արևմտահայության միջավայրում, աղբրեջանցիներին ընդունված է կոչել աղբրիներ կամ աղբրի բուրբեր։

Այդ էթնանուն իբրև վերադրուկ դալիս է Ատրպատականի բնիկների՝ աղբրի արտաբան հորջորջումից, բայց նկատի պետք է ունենալ, որ բնիկ աղբրիները իրանական ժաղամ ունեին և խոսում էին հյուսիսիրանական աղերի լեզվով։ «Աղբրի» լեզվի առանձին բառեր, նախադասություններ վկայված են միջնադարյան պատմիչների երկերում (Քալադորի, Մասուդի, Մուկադդասի և այլն), ինչպես նաև Ասադի Բուսիի «Պարսից բառադրում» (11-րդ դ.)։ Իրանական այդ լեզուն գործածական է եղել տակավին 14—15-րդ դարերում։

Ատրպատականի մայրաքաղաքը Արտաշիլն էր (հայկական աղբյուրների Մոտավետը)։

Աղբրեջանցի ժողովրդի կազմավորումը տարրեր պարագաներում է ընթացել Ատրպատականում և այսօրվա Աղբրեջանի տարածքում։ Եթե Արաքսից հարավ աստիճանաբար թյուրքալիզու դարձողը երբեմնի մարերի, պարսիկների, հրեաների, ասորիների ու հայերի հետնորդներն էին՝ 11-րդ դարից սկսած այստեղ թափանցող սելջուկների, ապա թաթարների ու թուրքմենների նստվածքների աստիճանական սերտաճումով, ապա Շիրվանում ու Առանում նշանակալի էր մարդադանական Աղվանքի տեղաբնիկ ցեղերի, ինչպես նաև արարների, մահմեդականացած հայերի, վրացիների, ուտիների մասնակցությունը այդ պրոցեսին։

Ի տարբերություն հարևան այլ ժողովուրդների (պարսիկների, հայեր, վրացիներ) աղբրեջանական ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել նոր ժամանակներում, սկսվելով 11-րդ դարի կեսերից և վերջնական ավարտի հասնելով 19-րդ դարում։

Աղբրեջանցիների կազմավորումը ուղեկցվում էր թյուրքալիզու քոչվոր ցեղերի լեզվի, դավանանքի ու սովորութիւնների պարտադրումով։ Սա շատ էական հատկանիշ է, որովհետեւ նստակյաց ու երկրագործ տեղական այլացեղ զանգվածը ձուլվում էր ռազմունակ, բայց քոչվոր անասնապահությամբ զբաղվող տարրի հետ՝ ընկալելով նրա վարքուբարքի զանազան հատկանիշներ։ Շատ հաճախ այդ ամենը պեղի էր ունենում տնտեսական ու քաղաքական հարկադրանքի եղանակով։ Սաբիրների, խազարների ու սելջուկների հետնորդները վաղուց արդեն տեղայնացել ու յուրացրել էին պարսկական, կովկասյան ու արաբական քաղաքակրթութիւնների նվաճումները, երբ 17-րդ դարում այստեղ հայտնվեցին Միջին Ասիայից քոչվոր ջիվանշիրները, որոնց ներկայացուցիչները հետագայում տիրացան Շուշի ամրոցին ու Ղարաբաղի խաները դարձան (Փանահ խան, Իբրահիմ խան)։

Նոր էթնոսի կազմավորումը պայմանավորված էր նաև իսլամի հանգամանքով։ Իբրև խալիֆայության ծավալման ընթացքում ձևավորված կրոն իսլամն անհամեմատ մարտնչող ոգի ունի, որը նրան թույլ է տալիս բավական արագ տիրապետող դառնալ, պարտադրվել այլ էթնիկ միջավայրին։ Ընդ որում՝ հաճախ ռեծացող ցեղերի ու ժողովուրդների ծագումնաբանութիւնը ամենեւին կարևոր չէ, որովհետև իսլամին պատկանելի արդեն կարող է փոխարինել էթնիկական նույն հանրության անդամը լինելուն։ Հիշյալ առումով պատահական չէ, որ աղբրեջանական միջավայրում մինչև մեր դարի 30-ական թվականները՝ մահմեդականութիւն դավանելը դիտվում էր իբրև էթնիկական հատկանիշ, փոխարինում էթնանվան։

Կուր-աբախյան միջագետքի էթնիկական կազմը Աղբրեջանական հանրապետության տարբեր տարածաշրջաններ ապրել են քաղաքական ու էթնիկական զարգացման յուրօրինակ ընթացք։ Թե ովքեր են Կուրից հյուսիս ընկած բուն Աղվանքի բնակիչները՝ գիտենք հունա-հռոմեական, հայկական ու արևելյան այլ աղբյուրներից։ Միասնական լեզվի, մշակույթի, պետական կալույն ու տնական կազմավորման փաստական բացակայութիւնը նկատելիորեն հեշտացրեց տեղաբնիկ այդ ցեղերի ու ցեղային միութիւնների ուժացումը՝ նախ դավանական հողի վրա (մահմեդականացում), ապա քաղաքական ու մշակութային (իրանիզացիա) և ի վերջո՝ լեզվական-

էթնիկական (թուրքախոսացում, աղբրեշանացում)։ Իրենց էթնիկ դիմա-
դիժը շխարդացան պահպանել նաև միջին դարերում Շիրվանում ու Առու-
նում հաստատված բավականաչափ ստվարաթիվ էթնիկ այլ համայնքներ,
այդ թվում և պարսիկներ։ Ի վերջո՝ նույն ճակտտադրին արժանացան նաև
Առանում հաստատված քրդական ցեղերը, թեև 10-րդ դարի վերջերից
սկսած նրանց ներկայացուցիչները՝ Շեղդադյանները կարևոր քաղաքական
դիրքեր էին գրավել։ Նույնը պիտի ասել Շիրվանում ապրող արաբների
մասին, որոնց թվում էր և հետագայում իրանիզացիայի ենթարկված Շալ-
բան ցեղը։

Ամբողջ միջնադարի ընթացքում Արևելյան Անդրկովկա-
սում էթնիկ խճանկարի պարզեցում էր տեղի ունենում, որը
ուշ միջնադարում հանդես նոր կազմավորման առաջացման։
Նթի շհաշվենք մինչև մեր ժամանակները հասած փոքրաթիվ
ուսոիններին ու մասամբ թալիշներին և թաթերին, ապա հիշ-
յալ տարածքում իրենց էթնիկական ինքնությունը անխաթար
ու անհողողող պահած միակ հանրությունը հայերն են, մաս-
նավորապես արցախահայությունը։

Վերջին տարիներին աղբրեշանական միջավայրում այն թեղն է զար-
գացվում, թե հանրապետության տարածքում բնակվող հայությունը եկվոր
է և այստեղ է հաստատվել 1827—1828 թվականների ռուս-պարսկական
պատերազմից հետո տեղի ունեցած դաղթի հետևանքով։ Այս «տեսությունը»
հիմնովին մտացածին է և հերքվում է նյութական ու հոգևոր մշակույթի
բազմահարկ հուշարձաններով, օտար ու հայ աղբյուրների հաստատուն
ու իրար լրացնող վկայություններով, ինչպես և հայոց լեզվի տեղական
բարբառներով ու խոսվածքներով։ Անդրկուրյան տարածքը վերջերս հիմ-
նովին հայադրկվեց, բայց այնտեղ կանգուն կամ կիսավեր պահպանվել
են հարյուրավոր հայերեն արձանագրություններ ունեցող միջնադարյան
եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր ու տապանատներ։ Նրանց մի նշանա-
կալի մասը գտնվում է այսօր աղբրեշանականացած գյուղերի տարածքում,
որ ինքնին ապացույց է տեղի երբեմնի հայության բռնի մահմեդականաց-
ման ու ձուլման։ Հնադարաններում պահպանվում են բազմաթիվ դիմումներ
էջմիածնի հոգևոր խորհրդի անունով, որ անդրկուրյան հայությունը խընդ-
րում է հայրենի հավատքին վերադառնալու արտոնություն։ Ի ղեպ, հայ-
կական հոծ համայնքների ներկայությունը հենց Ռաքվի շրջակայքի գյուղե-
րում վկայում է նաև տեղացի պատմիչ ալ-Քաթուվին (15-րդ դար), ալան-
դարար նրանց կոչելով քրիստոնյաներ։ Ինչ վերաբերում է Կուր-արաքոյան
միջադարին, ապա այն Մեծ Հայքի բաղկացուցիչ մասն էր մինչև պարս-
կական մարզպանության հաստատումը, որ Ստրաբոնի և Նորենացու տե-
ղեկությամբ ամփոփվում էր «ծայր հայկական խօսիցը» (իմա՝ Հայոց

ծայրագավառի լեզուն)։ Սակայն առ միակ վկայությունը չէ։ Բյուզանդական կայսր Կոստանդին Միրտեոսիեր (10-րդ դ.) հաշինը (Արցախի մասն է) հիշատակում է Հայաստանի կազմում, պարսիկ Անանուն աշխարհադիրը (13-րդ դ.), բառացիորեն ասում է, թե հաշինի բնակիչները հայեր են, իսկ 14—15-րդ դարերի սահմանագլխին Արցախում հրկար ժամանակ ապրած և տեղի հայերին բարբառին հմտացած գերմանացի Հանս Երլտ-բերգերը ցավում է, որ Ղարաբաղի հայությունը «անհավատներին» (իմա մահմեդականներին) իշխանության տակ են և հարկ են վճարում։ Եթե այս ամենին գումարենք Արցախի և Ուտիքի տարածքում առկա հայկական նյութական մշակույթը, ապա պարզ կդառնա, որ «եկվորություն» տեսությունը հորինված է քաղաքական նպատակներով։

Ղարաբաղի հինգ մելիքությունները բացարձակապես հայկական պետական կազմավորումներ էին, ունին իրենց պատկանելի զորական միավորները։ Այսպես, օրինակ, 1724 թ. Ռուսաց արքունիքին դիմումի մեջ նրանք փաստադրում են, որ կարող են 40.000 զորք հանել՝ դուրացնելու ռուսներին առաջնազացումը, իսկ տեղի հայ բնակչությունը կազմում է 100 000 ընտանիք։ Իշխան Ցիցիանովը ևս 1804 թ. գրած զեկուցադրում ի մասնավորի հիշատակում է Ղարաբաղի 60 000 հայ ընտանիքների ներկայությունը։ Այդ նշանակում է, թե շրջապատի քոչվոր ցեղերի հետ ունեցած ընդհարումների, հարկադրյալ արտագաղթի պատճառով 80 սարվա ընթացքում Ղարաբաղի հայությունը նվազել էր 40 հազար ընտանիքով (ավելի քան 200 000 մարդով), բայց, ինչպես տեսնում ենք, շարունակաբար նրանք կազմում են դաշտային ու լեռնային Ղարաբաղի հիմնական բնակչությունը։ Եվ պատահական չէ, որ իր կրած բազում արհամիրքներից հետո էլ 1914 թ. արցախահայությունն ուներ 222 գործող եկեղեցի, 206768 ծխական, 324 հայկական գյուղ։ Ինչ վերաբերում է 1827—1828 թվականների վերաբնակեցմանը, ապա ըստ ռուս պաշտոնյաների ստույգ տեղեկության, Ատրպատականից Ղարաբաղ է տեղափոխվել ընդամենը 750 ընտանիք (այդ թվում և հույներ), որոնցից 1831 թ. տեղում կենդանի էր մնացել «100 ընտանիքից ոչ ավելի» (ռուս պաշտոնյայի զեկուցագիր)։ Ըստ տեղեկությունների «բռնվոր թաթարները» թալանում էին եկվորներին, օրհասական դարձնում նրանց գյուղությունը։

§ 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՐ 11—17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Մոնղոլական և թուրքական արշավանքները։ Սելջուկյան պետությունը XI դ. վերջերին գահակալական կոիվների հետևանքով թուլացավ և տրոհվեց մի շարք իշխանությունների։ Անդրկովկասում ստեղծված նպաստավոր իրադրությունից՝ հմտորեն օգտվեցին Վրաստանի Բագրատունյաց տան

հաճակալները և Շիրվանի տիրակալները: Շիրվանի ենթա-
կալության ներքո էր գտնվում գրեթե արդ Արևելյան Անդրկով-
կասը: 12-րդ դ. երկրորդ կեսին Վրաստանի և Շիրվանի ռազ-
մաքաղաքական դաշինքն ավելի ամրապնդվեց:

13-րդ դ. 20-ական թվականներին Անդրկովկասում և
Իրանում իրադրությունը կտրուկ փոխվեց: Արևելքից իրենց
արշավանքներն սկսեցին մոնղոլ-թաթարները, որոնք հայ
մատենագրության մեջ հայտնի են ժաղաչ նևտողաց անվա-
նումով:

1231 թ. մոնղոլները 30 հազարանոց բանակով շարժվում
են Պարսկաստան և, գրավելով Մարագան և Թավրիզը, ներ-
խուժում Անդրկովկաս, գրավում և բռնում Շամախին և
Արևելյան Անդրկովկասի մյուս քաղաքները, Հայաստանն ու
Վրաստանի մեծ մասը:

Մոնղոլ-թաթարների տիրապետության շրջանում քաղաք-
ների ավերումը, արհեստների և բուհերի անկումը, նստակ-
յաց հողագործության քայքայումն ու քաղաքական անասնա-
պահության արմատավորումը հանգեցրեց արտագրության
խիստ սնկմանը: 13-րդ դ. 90-ական թվականներին չէր մշակ-
վում վարելահողերի 9/10-ը:

Անլուծկյան և ապա մոնղոլական արշավանքների ժա-
մանակ հետզհետե աճում էր թյուրքալեզու քոչվորների քա-
նակն ու տեսակարար կշիռը ինչպես Առաքատականում, այն-
պես էլ Անդրկովկասում ու Փոքր Ասիայում:

Առաջավոր Ասիայում ստեղծվեց մոնղոլական մի հսկա-
յածաժալ պետություն, որը հայտնի է իլխանություն անունով:

Ըոհեկյան Անդրկովկասը Լանկ Թեմուրի և Արա Ռու-
ջրդեբի օրոք: 1387 թ. Միջին Ասիայից Պարսկաստան և
Անդրկովկաս է ներխուժում Լանկ Թեմուրը: Գրավելով Քավ-
րիզը, նա արշավում է Նախիջևանի ու Շիրվանի վրա:

Այս արշավանքների ընթացքում ավերվեցին համեմատաբար քիչ
է տուժում Շիրվանը, քանի որ նա կամուրջն ընդունել էր Լանկ Թեմուրի
զինվորականությունը և զորքով մասնակցում էր նրա արշավանքներին:

Լանկ Թեմուրի մահվանից հետո, զղավելով խառնակ անցուղաբերից,
Շիրվանի տիրակալները իրենց անկախ են հայտարարում, դաշնակցում

Շաքիի և Արզեբիլի տիրակալների հետ և արշավում գեղի Գանձակ և Արցախ:

1406 թ. ամռանը Իրաքից Ատրպատական են արշավում ջեկայիրյան Ահմեդ սուլթանի զորքերը: Կարա-կոյունլու քուլ-վոր թուրքմենական ջեղերի առաջնորդների հետ դաշնակցած Թուրքիայի Ահմեդ սուլթանը գրավում է Բամվրիդը: Շուտով, սակայն, առաջնության համար պայքար է սկսվում Կարա-կոյունլուների և Ջեկայիրյանների միջև, որից հաղթող են դուրս գալիս Կարա-կոյունլուները և իշխում մինչև 1467 թ.

Կարա-կոյունլուները ձգտում են հպատակեցնել նաև Շիրվանը: Վերջինիս տիրակալները Կախեթի թաղավորի և Շաքիի կառավարչի հետ դաշնակցած 1412 թ. փորձում են դիմադրավել Կարա-կոյունլուների արշավանքին, սակայն պարտվում են և զերի ընկնում: Շիրվանը ավերվում է:

Շիրվանի տիրակալ Իբրահիմ 1-ի որդի իսախուլլա 1-ը (1417—1462) դադարում է ճանաչել Կարա-կոյունլուների գերիշխանությունը և դաշնակցում է լանկ Թեմուրի որդի Շահրուխի հետ:

1435 թ. Կարա-կոյունլուների իշխանությունը անցնում է Ջհանշահին, որը բարեկամվում է հարաբերությունները Շիրվանի հետ: 1467 թ. Մուշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Աղ-կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանը (1453—1478) պարտության է մատնում Ջհանշահին, ուրով Կարա-կոյունլուների պետությունը դադարում է գոյություն ունենալուց: Ստեղծվում է Աղ-կոյունլուների նոր պետությունը՝ Թավրիզ մայրաքաղաքով: Աղ-կոյունլուներն իրենց տիրապետությունը հաստատում են Հայաստանում, Ատրպատականում, Իրաքում, Քրդստանում, Պարսկաստանում (բացառությամբ Գիլան, Մազանդարան, և Խորասան նահանգների և Կուրդի հյուսիս ընկած տարածքների):

Աղ-կոյունլուների տիրապետությունը: Ուզուն Հասանի հիմնած պետության մեջ տիրապետող դիրք են ստանում քուլվսրական ցեղախմբերի առաջնորդները: Աղ-կոյունլուների պետությունը դիվանագիտական կապեր է հաստատում եվրոպական ու ասիական մի շարք երկրների հետ:

15-րդ դ. երկրորդ կեսին զորեղացավ Արզեբիլի Սեֆյան տիրակալների իշխանությունը: Նրանք սկսեցին վարել նվաճողական քաղաքականություն:

1499 թ. ամռանը մի խումբ շրջապաններ հեղան Արդեբիլ, որտեղ նշանց միացան Սեֆյանների հետևորդները: Վերջիններա համախմբեցին շրջակա քոչվոր թյուրքալեզու ցեղերի զինական ուժերը իրենց առաջնորդ Իսմայիլի գորշի շուրջ:

1500 թ. աշնանը շրջապաների զորքը արշավում է Շիրվան և գրավում այն: 1501 թ. Իսմայիլի զորքերը պաշարում և գրավում են նաև Բաքուն: Անուհետև Իսմայիլը շարժվում է դեպի Նախիջևան: 1501 թ. Շարուրի մոտ շրջապանները խոշոր հաղթանակ են տանում: Նվաճելով Շիրվանից Նախիջևանը րնկած տարածքը, շրջապանները շարժվում են դեպի հարավ:

1502 թ. Իսմայիլը իրեն հռչակում է շահ (1502—1524 թթ.): 1503 թ. Իսմայիլ 1-ը Համադանի մոտ պարտություն է մատնում Մուրադ փադիշահի զորքերին և վերջ տալիս Ադ-կոյունլուների պետության գոյությանը:

Արևելյան Անդրկովկասը Սեֆյանների տիրապետության տակ

1509 թ. Իսմայիլ 1-ը կրկին արշավում է Շիրվան, ապա Գերբեխից վերադառնում դաշտային Արցախ, որտեղ և ծնկում է, իսկ զարններ կրկին անցնում Թավրիզ:

Կարճ ժամանակահատվածում Սեֆյանները գրավում են նաև Իրաքը և Պարսկաստանի ու Հայաստանի մեծ մասը:

Ի տարբերություն Կարա-Այոյունլու և Ադ-կոյունլու պետությունների, որ հենվում էին քոչվոր ցեղախմբերի վրա, Սեֆյանների սոցիալական հենարանը նվաճված երկրների նստակյաց դարձած թյուրքալեզու ցեղերն էին: Զինվորական հրամանատարությունը, ֆինանսական ծառայություններն ու վարչական անձնակազմը հիմնականում բնորոշված էր այդ ցեղերի ներկայացուցիչներից, իսկ պետության կենտրոն էր բնորոշված Ատրպատականի Թավրիզ քաղաքը:

1504 թ. Օսմանյան Թուրքիայի սուլթանը ճանաչեց Սեֆյանների պետությունը: Սակայն երկու խոշոր տերությունների բնոհարումն անխուսափելի էր:

1514 թ. Թուրքիան սուլթանը 200 հազարանոց զորքով շարժվում է Սեֆյանների դեմ և Զաղարանի դաշտում (Մակուի մոտ) տեղի ունեցած

ճանապարհում ջախջախ մ. ղզլբաշների բանակը, գրավում են, Մարանդու Թավրիզ քաղաքները 1513 թ. կնքվում է զինադադար:

Թուրքիայի հետ սկսված պատերազմը ընդհատում են երեք շարունակվում է ավելի քան մեկ դար:

Կնքված զինադադարից անմիջապես հետո Սեֆյանները հարձակվում են Շիրվանի վրա, որը դադարեցրել էր հարկի վճարումը, և միայն երրորդ արշավանքից հետո գրավում այն (1519 թ.): Սեֆյանները վերացնում են Շիրվանշահների պետությունը: Շիրվանը դառնում է Սեֆյան պետության նահանգներից մեկը, և կառավարվում նշանակովի Բեկլարբեկի կողմից: 1540 թ. ղզլբաշները գրավում են նաև Բաքուն և ոչնչացնում քաղաքի բնակչության զգալի մասը, իսկ հաջորդ տարին նրանք Արցախով անցնում են Վրաստան, գրավում և խլանում Թբիլիսին, ողջ ստորին Քարթլին ու Հյուսիսային Հայաստանը և կրկին վերադառնում Գանձակ:

Արևելյան Անդրկովկասի հաջորդ վարչական միավորը, որը Սեֆյանների կողմից գրավվեց և վերացվեց, Շաքիի իշխանությունն էր:

1524 թ. Շաքիում կառավարում էր դերվիշ Մուհամադ խանը: Նա փորձում է օգնել Շիրվանին՝ Սեֆյանների դեմ պայքարի ժամանակ: 1551 թ. ղզլբաշները ուղևորվում են Շաքի. Ամրանալով Գիս (Քիշ) ամրոցում, Շաքիի զորքերի մի մասը համառ դիմադրություն է կազմակերպում, սակայն երբ համոզվում են, որ ամրոցի ավերման սպառնալիքը արգեն կատարելի հարուցում՝ հանձնվում են: Սեֆյանները Շաքիի կառավարիչ են նշանակում Հուսեյնյան անունով ոմն շամախեցու, որի հաջորդները իշխում են Շաքիում ընդհուպ մինչև տեղի խանության ստեղծումը 18-րդ դարում:

16-րդ դ. 30-ական թվականներին վերսկսված պարսկաթուրքական պատերազմները հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի և Ատրպատականի տարածքներում, և երկուստեք՝ միմյանց բանակների վիճակը ծանրացնելու նպատակով, ամայացնում էին այն տարածքները, որտեղ սպասվում էր հակառակորդի հայտնվելու հնարավորությունը:

1555 թ. նրանց միջև հաշտություն է կնքվում, ըստ որի ամբողջ Արևելյան Անդրկովկասը անցնում է իրանի տիրապետության տակ:

Շուտով, սակայն, Սեֆյանների պետութւան մեջ սկիզբ առավ զահակաշական երկարատե պայքարը, որը թուլացրեց նրա ռազմական հզօրութիւնը: Օսմանյան Թուրքիան շտապեց օգտօվել այդ իրավիճակից և 1570-ական թվականների վերջերին կրկին արշավեց Արեւելյան Անդրկովկաս, գրավելով Արեւելյան Հայաստանը, Արեւելյան Վրաստանը, Շիրվանն ու Գերբեխը, Բաքուն: Թուրքական այդ արշավանքների ժամանակ Անդրկովկաս արշավեցին նաև նրանց դաշնակից Ղրիմի թաթարները և մեծ ավերածութիւններ գործեցին հայկապետ Արցախում և Շիրվանում: Անդրկովկասում թուրքական ավարառութիւնները շարունակվում են նաև 1580-ական թվականներին:

1537 թ. զահ բարձրացած սեֆյան Աբաս I-ինին (1537—1629 թթ.) հաջողվեց լայնածավալ վերափոխումներով վերականգնել Իրանի հզօրութիւնը: 1602 թ. վերսկզբում են Բաքու-պարսկական պատերազմները: 1603—1604 թթ. Աբաս I-ինը գրավում է Թավրիզը, Նախիջևանը և Երևանը: Տեղեկանալով թուրքական հակահարձակման մասին, Շահ Աբասը պատրաստվում է նահանջելու: Թուրքական զորքերի ճանապարհին ընկած բնակավայրերը ամայացնելու և Իրանում արհեստների ու առևտրի զարգացման համար նախադրյալներ ստեղծելու նպատակով նա Անդրկովկասի մի շարք գավառներից իրականացնում է բնակչութւան զանգվածային բռնադաշտ գնդի Իրանի խորքերը:

1606—1607 թթ. կրկին հակահարձակման անցնելով, Իրանական բանակը թուրքերից գրավում է Արցախը, Գանձակը, Թրիխտին:

§ 8. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 18—19-ՐԴ ԴԴ.

Թուրք-պարսկական պատերազմների ավարտով Արեւելյան Անդրկովկասը որոշ ժամանակ խաղաղ զարգացման հնարավորութիւն է ստանում: Տնտեսական բարգաւաճման հնարավորութիւն են ստանում նաև ենթակա ժողովուրդները: Սակայն 17-րդ դ. վերջերից սկսում են ի հայտ գալ Իրանի Սեֆյան տերութւան անկման նախանշանները: Աշխուժանում են Իրանի լծից ազատագրման ծրագրերի մշակման քայլերը: Աֆղանները հարձակվում են Իրանի վրա և գրավելով մայրաքաղաքը՝ փաստորեն վերջ են

ալայիս Իրանում Սեֆյան տիրապետությունը: Խառնակ վիճակից փորժում են օգտվել ինչպես Իրանի հայատակ ժողովուրդները՝ վերականգնելու իրենց անկախությունը (Հայաստան, Վրաստան, Շիրվան), այնպես էլ հարևան խոշոր տերությունները, փորձելով գրավել նրա տարածքները: Ռուսաստանը գրավում է մերձկասպյան վայրերը, իսկ Թուրքիան՝ Իրանի արևմտյան մասերը:

Իրանական վերնախավի համախմբման ու թուրքական նվաճումների զիջադրավման կազմակերպմանը ձեռնամուխ է լինում աֆշարական ցեղի առաջնորդներից մեկը՝ զորահրամանատար Նադիրը: Նրան հաջողվում է Իրանից դուրս մղել աֆշաններին և գրավել Հերաթը: 1734 թ. նա գրավում է հոգևում է Շամախին: 1735 թ. Նադիրը գրավում է Երևանը, Բրիլիսին և Գանձակը: Նույն թվականի մարտի 10-ին Գանձակի մոտ կնքվում է ռուս-իրանական պայմանագիր, որով ռուսները թողնում են Բաքուն և Դերբենտը:

1736 թ. փետրվարին Արաս Զ-րդ անշահահաս շահի մահվան առիթով Նադիրը Մուղանում հավաքում է Իրանի ազագանուն, որտեղ հայտարարվում է Իրանի նոր շահ: Գանձակի բեկլարբեկը կտրուկ դեմ է արտահայտվում գրան: Նադիրը Գանձակի բեկլարբեկությունը թուլացնելու նպատակով մի շարք թուրքական ցեղեր, որոնք Գանձակի և Արցախի տարածքում էին հիմնավորվել, արտաքսում է Խորասան (Ջեհանշիր, Օթուզիքի և Քերիքի): Ղազարին ու Իսրաիլուն անցնում են Վրաստանի կառավարչին, իսկ Արցախի հայկական մելիքությունները Գանձակի բեկլարբեկությունից անկախ են հայտարարվում:

1747 թ. մայիսի 9-ին պալատական հեղաշրջման հետևանքով Նադիրը սպանվեց: Նրա ստեղծած պետությունը բռնկվեց միջավատատիրական և զառկալական պայքարի բողոք: Մի շարք բեկլարբեկություններ հաստատվեցին իրենց անկախությունը:

18-րդ դ. կեսերին ստեղծվեցին Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Գանձակի, Բաքվի, Նախիջևանի, Դերբենտի, Քավրդի, Արդեբիլի և այլ խանություններ:

Կենտրոնական իշխանության թուլությունը նպաստում է առաջացած խանությունների ամրապնդմանն ու անկախության հաստատմանը: Իրավիճակը չրջորեն փոխվեց 18-րդ դ. վերջերին: Իրանի զահի համար պայքարում հաղթանակ տարած Աղա-Մահմուդ խանը անդրկովկասյան խանություններից պահանջեց կրկին ճանաչել Իրանի տիրապետությունը: Այդ պահանջը մերժեցին և իրենց անկախությունը պաշտպանելու համար զենքի զիմեցին Վրաստանի թագավոր Հերակլ 2-ը և Ղարաբաղի Իրահիմ խանը: Մեկամայա պաշարումից հետո չկարողանալով գրավել Ղարաբաղի խանության կենտրոն Շուշին, Աղա-Մահմադ խանը 1795 թ. սեպտեմբերին ներ-լուծեց Քիֆլիս, ավերեց քաղաքն ու բազում գերիներով վերադարձավ Խուզանի գաղտ՝ ձմեռելու: Ջգալի ավերածությունների ենթարկվեցին նաև Շամախին և Շիրվանը:

Անդրկովկասն իր ազդեցության ոլորտում պահելու համար Ռուսաստանը 1796 թ. գններաւ Վ. Զորովի հրամանատարութեամբ իր զորքերը շարժում է գնացի Անդրկովկաս և կարճ ժամանակամիջոցում գրավում Գերբնետ, Բաքու, Շամախի և Գանձակ քաղաքները։ Մակայն ետէն թվականի եռեմբերին Եկատերինա 2-ի մահից հետո զահ բարձրացած Պալէկ 1-ին կայսեր հրամանով հաղթարեցում է այդ արշավանքը, և զորքերը վերադառնում են Ռուսաստան։ Աղա-Մանադ խանը կրկին փորձում է Ղարաբաղի խանութիւնը ենթարկել իրեն և պատժել Ռուսաստանին օժանդակութեան ցուցարարած խանութիւններին։ Նա արշավում է Շուշի, որտեղ, սակայն, սպանւում է իր իսկ պալատականների ձեռքով։ Ելնելով իր արևելյան քաղաքականութեան շահերի թելադրանքից և ժանդակ ունենալով տեղացի ժողովուրդների, հատկապէս արցախահայութեան հանդիպակած ջանքերը, 19-րդ դ. սկզբին ռուսական կայսրութիւնը վճռական բալլերի է դիմում Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համար։ 1804—1813 թթ. և 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներից հետո Ռուսաստանին է միացվում ողջ Արևելայան Անդրկովկասը։

19-րդ դ. 20-ական թվականներին խանութիւնները վերացվեցին և Արևելայան Անդրկովկասում 1840-ական թթ. ստեղծվեցին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները։ 1870 թ. անցվեցվեց գլուղացիական ռեֆորմ, որը նպատակը կրկնում ապրանքային արտադրութեան զարգացմանը։ Կառուցվեցին մի շարք երկաթուղիներ, 1888 թ. շահագործման հանձնվեց Թիֆլիս-Բաքու երկաթուղին։ Բաքուն դարձավ արդյունաբերական և հատկապէս նավթային արդյունաբերութեան խոշոր կենտրոն, որի զարգացման գործում խոշոր ներդրումներ էին կատարում հայ արդյունաբերողները։

1905—1906 թթ. Անդրկովկասում հեղափոխական շարժումները մարելու և ցարիզմի դեմ պայքարից ժողովրդական զանգվածների ուշադրութիւնը շեղելու նպատակով հրահրվեցին հայ-թուրքական ընդհարումներ, որոնք ընդգրկեցին գրեթէ ողջ Անդրկովկասը։

1917 թ. փետրվարյան հեղափոխութիւնից հետո Բաքվում ստեղծվեցին Հասարակական կազմակերպութիւնների գործադիր կոմիտե և Բանվորական զեպուտատների խորհուրդ։ Հոկտեմբերի 31-ին Բաքվում հռչակվեց խորհրդային իշխանութիւն, իսկ հաջորդ տարվա ապրիլի 25-ին ստեղծվեց Բաքվի ժողովխորհ՝ Ս. Շահումյանի գլխավորութեամբ։ Անդրկովկասյան սեյմի ցրումից հետո 1918 թ. մայիսի 27-ին հռչակվեց Աղբրե-անական հանրապետութեան ստեղծումը։ Իշխանութեան գլուխ եկած մուսուլմանականներ և օտարերկրյա ինտերվենցիայի ջանքերով 1918 թ. հուլիսի 31-ին Բաքվում խորհրդային իշխանութիւնը վերացվեց։ Օգոստոս ամսին Բաքուն օկուպացրին անգլիական, իսկ սեպտեմբերի 15-ից՝ թուրքական զորքերը։ Մուղրոսի դինաւտարով (1918 թ. հոկտեմբերի 30) Թուրքիան պարապլորվեց իր զորքերը դուրս հանել Աղբրեւանից։ 1920 թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ քանակի օժանդակութեամբ Բաքվում հաստատվեց խորհրդային իշխանութիւն։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արաքսի վերին գետահովիտը, *Պատմություն պատերազմացն, Եր., 1938*
2. Արաքսի վերին գետահովիտը, *Պատմություն, Եր., 1973*
3. Առաքել Գալստիանի, *Պատմություն, Եր., 1988*
4. Բախուստրեանցի Մ., *Աղուանից երկիր և գրացիք, Քիֆլիս, 1893*
5. Բովսա Մեծփեցի, *Պատմություն լանկ Բամուրայ և յաջորդաց իրոց, Փարիզ, 1860*
6. Կիսակոս Գեղեկեցի, *Պատմություն հայոց, Երևան, 1961*
7. Ашрафян К., Падение держав Сефевидов (1502—1722 гг.), М., 1951
8. Ашурбейли С., Государство Ширваншахов (VI—XVI вв.), Б., 1983
9. Джиди Г. А., Средневековый город Шемеха (IX—XVII вв.), Б., 1981
10. «История Азербайджана», т. I, Б., 1958.
11. «История Азербайджана», под ред. Дж. Гулнева, Б., 1979.
12. «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении», сост. П. М. Мурадян, Ер., 1991.
13. Касумова С. Ю., Южный Азербайджан в III—VII вв., Б., 1983.
14. «К проблеме этногенеза азербайджанского народа», Б., 1984.
15. Минорский В. Ф., История Ширвана и Дербента, М., 1963.
16. Мурадян П. М., История-память поколений, Ер., 1990.
17. «Народы Кавказа», т. II, М., 1962.
18. Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—XIX вв., Л., 1949.
19. Сысоев В. М., Тюркское население Азербайджана в XVII в., Б., 1926.
20. Худадов В., Современный Азербайджан, «Новый Восток», № 3, М., 1923, с. 167—189.

ԳԼՈՒԽ ՈՒՐԵՐՈՐԴ

Ի Ր Ա Ն

§ 1. ՀԻՆ ԻՐԱՆ

Էլամ պետությունը: Իրանական սարահարթը գրավում է Կասպից և Արաքսի ծովերի միջև ընկած տարածությունը,

հարելով արևմուտքում Հայկական լեռնաշխարհին, արևելքում՝ Ինդոս գետի հովտին։ Նրա հարավ-արևմտյան եզրերը իջնում են դեպի Պարսից ծոցը և Միջագետքը։ Այստեղ, Կարուն և Կերխե գետերի հովիտներով կազմված մի փոքր միջագետքում և նրան հարող լեռնային շրջաններում արդեն մ. թ. ա. 3-րդ հազ. ստեղծվել է աշխարհի հնագույն պետություններից մեկը՝ էլամը, գոյատևելով այնուհետև շուրջ 2 հազար տարի։ Էլամի մայրաքաղաքն էր Շոշը (Սուզան), էլամցիների լեզուն ազգակից էր Հնդկաստանի դրավիդյան ցեղերի լեզուներին։ Նրանք սկզբնապես օգտվում էին սեփական հիերոգլիֆիկ նշաններով, իսկ հետագայում անցան շումերա-աքքադական սեպագրին։

Էլամի թագավորության և Միջագետքի պետությունների՝ Շումերի, Աքքադի, Բաբելոնիայի և Ասորեստանի հարաբերությունները բնութագրվում են ինչպես քաղաքական ու ռազմական բազմաթիվ բախումներով, այնպես էլ տնտեսական ու մշակութային սերտ կապերով։

Մարդկության պատմության մեջ առաջին մեծ հայտնի միջպատահան պայմանագիրը կնքվել է Սրբադի Նարամ-Սուեն (մ. թ. ա. 2236—2200 թթ.) թագավորի և էլամի թագավորներից մեկի միջև։ Էլամը հաճախակի ընկել է Միջագետքի նրկերի տիրապետության տակ և, մյուս կողմից, իր ասպատակություններով բազմիցս ավերի ու ավարի ենթարկել այդ երկրները։ Այսպես, մ. թ. ա. 1157 թ. էլամի արքա Շուտրուկ-Նախուստեն դրավել է Բաբելոնը և հսկայական ավարի թվում տարել նաև Համուրաբի թագավորի հայտնի օրենքների ընագիրը պարունակող քարեղծագրը։ Բաբելոնական կրոնը մեծ ազդեցություն է գործել էլամական կրոնի վրա։ Այսպես, կյանական աստվածները հաճախ հանդես են գալիս բաբելոնյան Շամաշ, Սին, Իշտար և այլ անունների տակ։

Էլամի թագավորությունը, անցնելով վաղ ստրկատիրական հասարակության դարգացման փուլերով, հարատևել է մինչև Մեդական (Մարական) տերության անկումը մ. թ. ա. 6-րդ դ. և այնուհետև կազմել նրան հաջորդած Աքեմենյան տերության կարևորագույն մասերից մեկը։

Մեդական (Մարական) տերությունը։ Իրանական սարահարթի գերակշռող, բարձրագիթ տարածքը շատ ավելի ուշ է մտել դասակարգային և պետական դարգացման ոլորտը, քան էլամը։

Մ. թ. ա. 1-ին հազ. սկզբներին աղբյուրները վկայում են այստեղ իրանալեզու բնակչության առկայության մասին: Գոյանում են առանձին իշխանություններ, որոնք մ. թ. ա. 8-րդ դ. ընկնում են Ասորեստանի տիրապետության տակ: Հաջորդ դարում նրանք միավորվում են և ազատագրվում՝ սարահարթի հյուսիս-արևելքում բնակվող իրանական մեդա-կան ցեղերի (մարերի) առաջնորդ, այնուհետև՝ թագավոր Ֆրատրտաս-Կաշտարիտիի ղեկավարությամբ: Սրա որդի Կիլաքսարը (մ. թ. ա. 624—584 թթ.) ինքն է հարձակվում Ասորեստանի վրա և մ. թ. ա. 612 թ. բաբելոնացիների և, խնայես հաղորդում է Մովսես Խորենացին, հայոց առաջին թագավոր Պարույրի օգնությամբ, գրավում է մայրաքաղաք Նինվեն ու վերջ դնում Ասորեստանի տերությանը:

Այնուհետև, նվաճելով սարահարթի նաև արևելյան շրջանները, Կիաքսարը արշավում է Փոքր Ասիա և այստեղ, Հալիս գետի ափին, մ. թ. ա. 585 թ. Լիդիա պետության և մեդական զորքերի միջև տեղի է ունենում պատմության մեջ հայտնի այն ճակատամարտը, որն ընդհատվեց արևի խավարման հետևանքով:

Կիաքսարի ստեղծած հսկա տերությունը, որի ոլորտն էր բնկնլ նաև Հայաստանը, ժառանգում է նրա որդի Աստիագեսը (հայկական աղբյուրներում՝ Աթահակ), Հայաստանը նրա օրոք ապստամբում է և հարում սարահարթի հարավում կազմավորված մի այլ իրանական պետության ղեկավարին՝ Պարսից արքա Կյուրոսին: Վերջինս մ. թ. ա. 553—550 թթ. ընդվզում է մեդական տերության դեմ, գրավում նրա մայրաքաղաք էկրատանը, գահընկեց անում Աստիագեսին և հիմնադրում մի նոր, առավել ևս հսկայական՝ Աքեմենյանների տերությունը:

Աքեմենյանների տերության ստեղծումը: Կյուրոս Մեծը մ. թ. ա. 546 թ. հաղթում է Լիդիայի արքա Կրեսոսին և նվաճում ողջ Փոքր Ասիան՝ մինչև էգեյան ծովը: Դառնալով գետի արևելք, նա նվաճում է Միջին Ասիան և հասցնում իր տերության սահմանները մինչև Հնդկաստան: Մ. թ. ա. 539 թ. նա նվաճում է Բաբելոնիան և շարունակելով իր հաղթարշավը հասնում Միջերկրականի ափերին և Եգիպտոսի սահմանին:

Մ. ք. ա. 530 թ. Նրան հաջորդում է իր որդի Կամբիսեսը։ Սա տիրանում է Եգիպտոսին, սակայն այնտեղ էլ զտնում է իր մահը, նախապես տեղեկություն ստանալով, որ Պարսկաստանում նրա դեմ ապստամբություն է ծագել և իշխանությունը դրավել է նրա կրտսեր եղբայր Բարդիան։

Դարեհ 1-ը Վշտասպուհը։ Բարդիան շուտով, մ. ք. ա. 622 թ. սպանվում է Աքեմենյան տոհմի մի այլ ներկայացուցիչ՝ Վշտասպի որդի Դարեհի՝ վեց պարսիկ մեծատոհմիկների մասնակցությամբ կազմակերպած դավադրության հետևվանքով։

Իս հալանի Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ, սակայն, Դարեհը ազդարարում է, թե իրենց սպանածը Բարդիան չի եղել, այլ նրան նախապես զաղտնի ոչնչացրած ու նրա արտաքին տեսքով ծաղկած մի մոզ։ Ինչևիցե, Բարդիան կամ կեղծ Բարդիան հասցրել էր որոշ լավիով թեթևացնել ժողովրդի վիճակը, և Դարեհը իշխանությունը դրավելուց հետո լեզվալ համարելով նրա իրականացրած բարեփոխումները, կանգնեց տնությունը կազմող երկրների համատարած ապստամբության փառախառն։ Ապստամբնեց Բարեկոնիան՝ Նարուզդոնոսոր անվան տակ իրեն թագավոր հայտարարած հայ Արախայի ղեկավարությամբ։ Ապստամբնեցին Պարսը, Մեդիան, Էլամը, Մարգիանեն, Պարթևստանը, Միջին Ասիան, Եգիպտոսը։ Ապստամբնեց նաև Հայաստանը (Արմինան), որը, զաշնակցական հարաբերությունների մեջ լինելով Կյուրոս Մեծի հետ, այժմ նվաճման սպառնալիքի տակ էր։ Հայաստանի դեմ զործում էին Դարեհի երկու՝ հայ Գաղարշիչ և պարսիկ Վահուստա զորավարները։

Շուրջ մեկ և կես տարվա բնթացքում Դարեհին հաջողվեց ճնշել բոլոր այս ապստամբությունները և հաստատվել տերության զահին։ Այդ բոլոր իրադարձությունները մանրամասն նկարագրված են Դարեհի հայտնի Բեհիսթունյան արձանագրության մեջ։

Աքեմենյան տերության մայրաքաղաքները երկուսն էին. Պերսեպոլիսը և Էլամի նախկին կենտրոն Շուշը։ Առաջինն արքաների պաշտոնական նստավայրն էր և գանձատունը, երկրորդը՝ երկրի գործնական հանգույցը։ Թագավորական պաշտոնական արձանագրություններում օգտագործվող երեք լեզուների՝ պարսկերենի, բաբելոնեերենի և էլամերենի կողքին լայնորեն կիրառվում էր և, ըստ էության, թագավորական դիվանատների հիմնական լեզուն էր հանդիսանում արամեերենը, որը երկու տոավելություն ուներ. այն հասկանալի էր տերության բնակչության մեծամասնությանը և գրի էր առ-

վում ոչ թե բարդ ու հնացած սեպագրով, այլ պարզ սեմական այբուբենով: Արամեներենը նաև ժամանակի միջազգային չափուն էր:

Տերությունը բաժանված էր 20-ից ամիլի սատրապությունների՝ սատրապների ղեկավարությամբ: Սրանք պատասխանատու էին իրենց մարզերի կյանքի տնտեսական և ֆինանսական բնագավառների համար, իսկ ռազմական գործը հանձնարարված էր զորավարների:

Երոշ Էրկրներում, օրինակ, Կիլիկիայում, պահպանվում էր տեղի բազմաթիվ իշխանությունը, որոնք, ըստ էության, սատրապների գեր էին կատարում: Սատրապությունները հարկ էին վճարում արծաթով՝ յուրօրոքանշյունը ըստ իր կարողության: Հայաստանը բաժանված էր երկու սատրապությունների միջև, որոնք վճարում էին, մեկը՝ 400, մյուսը՝ 200 տաղանդ արծաթ (տաղանդը մոտ 30 կգ է) և ղեկավարվում, որպես կանոն, նախկինում այստեղ թագավորած Երվանդյան տոհմին. պատկանող սատրապների կողմից:

Տերության մեջ ընդգրկված տնտեսապես և մշակութային իմաստով առավել զարգացած և հարուստ երկրներն էին հինավուրց Բաբելոնիտն և Եփրատոսը, վաճառաշահ Փյունիկիան, Փոքր Ասիայի արևմտյան մասերը՝ հունական քաղաքակրթության կարեւորագույն Միլեթ, Էփեսոս և այլ կենտրոններով: Այստեղ շարունակում էր զարգանալ ստրկատիրական հասարակարգը: Տերության մյուս մասերը, ներառյալ բուն Պարսկաստանը, շատ ավելի հետամնաց էին:

Դարհհը մեծ հոգս էր տանում իր ընդարձակ տերության մեջ հաղորդակցությունը դյուրացնելու մասին, թե առեւտրատնտեսական և թե՝ առգմաքաղաքական նպատակներով: Այսպես, նա կառուցել ավելի հայտնի «Թագավորական ճանապարհը», որը բարեկարգ ու ապահով էր, օժտված լինելով բազմաթիվ օթեան-կայաններով: Սկսվելով Էֆեսյան ծովից, այն հասնում էր Պարսից ծոց: Նրա մի խոշոր մասը՝ շուրջ 350 կմ՝ 15 օթեան-կայաններով, անցնում էր Հայաստանի վրայով:

Աքեմենյան տերության մեջ ստեղծվել է հարուստ մշակույթ, մանավանդ ճարտարապետական հույակապ կոթողներ, որոնցով առանձնապես հարուստ էր մայրաքաղաք Պերսեպոլիսը: Կրոնի վրա ուժեղ էր զրադաշտականության ազդեցությունը, որն արտահայտվում էր Ահուրա-Մազդայի, որպես դիսավոր աստծո, խաղացած դերի մեջ: Բարու և լույսի այդ աստծուն հակադրված էր շարի ու խավարի աստված Անգհրո-Մանյուն: Մեծ տեղ էին գրավում նաև Միհր և Անահիտ աստ-

վածութիւնները: Արամազդ, Միհր, Անահիտ և այլ իրանական անուններով աստվածներ ընդունված են եղել նաև հին Հայաստանում, սակայն այստեղ այդ անունների տակ թաքնւում էին հին տեղական աստվածութիւններ և բացակայում էր զրադաշտականութիւնի ազդեցութիւնը:

Հռոմ-պարսկական պատերազմները և Աքեմենյան տերութեան անկումը: Դեռևս Դարեհ 1-ի օրոք սկսվեցին և շուրջ կես դար շարունակվեցին հուն-պարսկական պատերազմները: Հարձակվող կողմը Պարսկաստանն էր:

Այն դեռևս մ. թ. ա. 6-րդ դ. վերջին նվաճել էր Եգրոպայում Թրակիան և այդ գրեթէ բոլոր Հունաստանի վրա: Պատերազմն սկսվեց Փոքր Ասիայի հունական քաղաքների ապստամբութեամբ՝ Միլեթ քաղաքի գլխավորութեամբ: Նրանք օգնութիւն ստացան Հունաստանի Աթենք և էրեթրիա քաղաք-պետութիւններից և որոշ հաջողութիւնների հասան, սակայն հետո պարտութիւն կրեցին պարսիկներից:

Մ. թ. ա. 490 թ. պարսկական հսկայական բանակը, անցնելով Սեծովյան նեղուցները, մտավ Հունաստան, սակայն Մարաթոնի հայտնի ճակատամարտում այն ջախջախիչ պարտութիւն կրեց հունական, հիմնականում՝ Աթենքի զորքից և հետ շարտվեց:

Հաջորդ արշավները, առավել ևս հսկա պարսկական բանակի մասնակցութեամբ, տեղի ունեցավ մ. թ. ա. 480 թ. արդեն Դարեհի որդի Քսերքսես թագավորի օրոք: Թերմոպիլեի կիրճում 300 սպարապեհներից բաղկացած հերոսական ջոկատը իր կյանքի գնով ժամանակ շահեց հույների նախապատրաստման համար և նրանց միացյալ ուժերը Սալամինի ծովային և Պլատեայի ցամաքային ճակատամարտերում դարձյալ ջախջախեցին թշնամուն:

Պատերազմը շարունակվեց ևս երեք տասնամյակ և ավարտվեց մ. թ. ա. 449 թ. Շոշում կնքված հաշտութեամբ: Փոքր, մասնատված ու պառակտումներով տառապող բայց գեմոկրատական և ազատ Հունաստանի հաղթանակը հզոր, բայց բռնատիրական Պարսկաստանի նկատմամբ բացառելիքով է հասարակարգերի և նպատակների տարբերութեամբ: Հույները իրենց հայրենիքն էին պաշտպանում, պարսից զոր-

քերին ուշարկում էին ընդլայնելու առանց այդ էլ հսկայա-
ծավալ տերությունը:

Հունա-պարսկական պատերազմներից հետո տերությունը
հետզհետե բռնում է անկման ուղին:

Սագում են ապստամբություններ, զահի հավակնորդներ են հանդես
գալիս: Արքա Արտաքսէրքսես 2-ի եղբայր Կյուրոս Կրտսերը մ. թ. ա.
5-րդ դ. վերջում իր տիրույթ հանդիսացող Փոքր Ասիայից ստվար բանակով
դիմում է տերության կենտրոնը՝ զահին տիրանալու նպատակով: Մ. թ. ա.
401 թ. Բաբելոնի մոտերքում տեղի ունեցած ճակատամարտում նա պարտ-
վում է և սպանվում, սակայն նրա զորքի 10-հազարանոց հունական ջո-
կատը չի վնասվում և իր զորավար, հույն ականավոր պատմիչ Քսենոփոնի
ղեկավարությամբ Հայաստանի վրայով նահանջում է դեպի Սև ծով: Քսե-
նոփոնը իր «Անաբասիս» գրքում մանրամասնորեն նկարագրել է Հայաս-
տանը, նրա բնակչության նիստուկացը:

Մ. թ. ա. 4-րդ դ. տերությունից անջատվում են Եգիպտոսը, արևելյան
սատրապությունները: Մ. թ. ա. 358 թ. թագավորած Արտաքսերքսես 3-ը
արտակարգ ճիգեր է գործադրում տերությունը պահպանելու համար, սա-
կայն սպանվում է արքունիքում:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները: Արևմուտ-
քում ամպեր էին կուտակվում: Հունաստանի հարևան Մա-
կեդոնիան իր Փիլիպոս 2-րդ թագավորի օրոք միավորել էր
հունական քաղաք-պետությունները և հիմք ստեղծել Պարս-
կաստանի դեմ միացյալ պատասխան-արշավանքի համար:
Այդ արշավանքը իրականացնում է Փիլիպոսի որդի Ալեք-
սանդրը: Մ. թ. ա. 334 թ., անցնելով սևծովյան նեղուցները,
նա մի քանի ճակատամարտում ջախջախում է պարսիկներին
ռազմական ուժերը և մ. թ. ա. 331 թ. Գավգամելայի մոտ
վերջնական պարտության մատնում նրանց: Աքեմենյան վեր-
ջին թագավոր Դարեհ 3-ը, որը նախապես Կոդոմանոս ան-
վան տակ Հայաստանում սատրապ էր եղել, սպանվում է
յուրաչինների ձեռքով: Այդ ճակատամարտին պարսկական
բանակի կազմում մասնակցել են նաև Մեծ ու Փոքր Հայքերի
ջոկատները, Երվանդ և Միհրվահիշտ զորավարների ղեկա-
վարությամբ: Ալեքսանդրը գրավում է Պերսեպոլիսը և Շոշը
ու անցնում Միջին Ասիայի նվաճմանը: Նա հասնում է Հընդ-
կաստան և ձգտում ավելի հեռուն գնալ, բայց զորքը ստիպում
է նրան վերադառնալ: Ալեքսանդրը հաստատվում է Բաբելոն

քաղաքում և դառնում մարդկության պատմության մեջ իշ-
ծավալով ու ընդգրկմամբ նախադեպ շունեցած աշխարհակալ:

Կարևորն այն էր, որ նրա տերությունն ընդգրկում էր քաղաքակիրթ
աշխարհի մինչ այդ էապես անջրպետված Արևմուտքի և Արևելքի երկրները,
և այդ հանդամանքը իրական բնկում մտքրեց պատմության հետադու զար-
գացման մեջ, սկիզբ դնելով այսպես կոչված Հելլենիզմին, որի մեջ միա-
վորվում էին ու փոխբեղմնավորվում մարդկության երկու այդ մասերի տըն-
տեսական, քաղաքական ու մշակութային նվաճումները:

Սակայն այդ տերությունը, հակառակ իր թողած կարեո-
րագույն հետեանքներին, երկար կյանք չունեցավ: Ալեքսանդր
Մակեդոնացու մ. թ. ա. 323 թ. մահից հետո այն գրեթե ան-
միջապես քայքայվեց:

§ 2. ԻՐԱՆԸ ՄԵՐ ԹՎԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ

Պարթևական տերությունը: Ալեքսանդրի ստեղծած տե-
րությունը նրա հաջողակ զորավարները շուտով բաժանեցին
երեք հիմնական մասերի: Եգիպտոսն անցավ Պտղոմեոսին,
Հունաստանն ու Մակեդոնիան՝ Անտիգոնոսի հետնորդներին,
իսկ ասիական ընդարձակ հողերը՝ Սելևկոսին ու նրան հա-
ջորդած Սելևկյաններին: Մ. թ. ա. 250 թ. պարթևական իրա-
նական ցեղերը ապստամբում են Սելևկյանների դեմ և հիմ-
նադրում իրենց պետությունը՝ Արշակ-Քաղապետի ղեկավա-
րությամբ, որից էլ ծագում է պարթև Արշակունի հարստու-
թյունը:

Մ. թ. ա. 2-րդ դ. Միհրդատ 1 Արշակունու օրոք պար-
թևները ծավալվում են դեպի արևելք և արևմուտք, սեղմելով
Սելևկյաններին Միջերկրականի ափերին, և ստեղծում բա-
վական մեծ, թեև Արեմենյանների տերությանը զիջող, տե-
րություն: Սակայն մ. թ. ա. 1-ին դ. առաջին տասնամյակ-
ներում նրանք ստիպված են լինում նահանջել Մեծ Հայքի
պետության առջև, որը Տիգրան 2-րդ Մեծի ղեկավարությամբ
նվաճում է պարթևական հողերի մի մասը՝ Ատրպատականն
ու հյուսիսային Միջագետքը և կլանում Սելևկյանների պահ-
պանած բոլոր երկրները՝ Ասորիքը, Փյունիկիան, Կիլիկիան:

Շուտով, սակայն, Մերձավոր և Միջին Արևելքի պատմաբան-մոմ ակտիվանում է Հոռմեական հանրապետությունը, շեղ-քացնում Հայաստանը, և իրադարձություններն սկսում են ծավալվել պարթևա-հռոմեական հակամարտության պայ-մաններում: Պայքարն ընթանում էր փոփոխական հաջողու-թյամբ, բոլոր դեպքերում, սակայն, վտանգներ ու արհա-վիրքներ բերելով երկու ախոյանների միջև գտնվող Հայաս-տանին:

Մ. թ. ա. 53 թ. պարթևներին հաջողվում է Խառան քա-ղաքի մոտ ջախջախիչ պարտության մատնել Մարկոս Կրա-սոսի գլխավորած հռոմեական բանակը: Կրասոսը սպանվում է ճակատամարտում, ու նրա գլուխը հասցնում են Արտաշատ, որտեղ հանդիպել էին Հայոց թագավոր Արտավազդ 2-ը և Պարթև արքա Որոդը՝ դաշինք կնքելու նպատակով:

Մ. թ. ա. 37 թ. պարթևները հետ են մղում մի ուրիշ հռո-մեական զորավարի՝ Մարկոս Անտոնինոսի բանակը: Սա իր պարտության մեղքը բարդելով Արտավազդի վրա, մահվան դուռն է հասցնում նրան:

Դրանից հետո Հռոմը երկար ժամանակ խուսափում է պարթևների հետ ռազմական բախումների ունենալուց: Մինչ այդ, հասունանում էր պարթևա-հայկական սերտ դաշնակ-ցության գաղափարը, որը մարմնավորվեց Պարթև արքայա-զրն, Վաղարշ 1 թագավորի եղբայր Տրդատին մ. թ. ա. 54 թ. Մեծ Հայքի թագավոր պսակելով: 66 թ. Հռոմը ևս ճանաչու- է այդ գահակալությունը: Տրդատ 1-ը սկիզբ է տալիս Արշա-կունիների հարստության հայկական ճյուղին: Պարթևա-հայ-կական դաշինքը շարունակում է գործել մինչև պարթևական պետության անկումը:

Սասանյան տերությունը: Իրանի Պարս նահանգի կա-ռավարիչ Արտաշիր Սասանյանը, օգտվելով պարթևական պե-տության խաբխլումից, 326 թ. գահընկեց է անում վերջին տարթև Արշակունի Արտավան 5-ին և հիմնադրում պարսկա-կան Սասանյան տերությունը: Սասանյան թագավորները նոր էռանդով հարձակվում են Հոռմեական կայսրության վրա և մեծ հաջողությունների հասնում: Արտաշիրի որդի Շապուհ

1-ը (241—272 թթ.) զերի է վերցնում հռոմեական կայսր Վալերիանոսին: Սասանյանները գրոհում են նաև Հայաստանի վրա, ուր շարունակում էին իշխել Արշակունի հարբստության ներկայացուցիչները: Հայաստանը ստիպված է լինում փոխել իր քաղաքական կողմնորոշումը և դաշնակցել Հռոմի հետ:

Շապուհ Երկարակյացի օրոք (309—379 թթ.) հռոմեա-սյարսական առևակատումը շարունակվում է, դարձյալ հիմնական տուժողն է լինում Հայաստանը: 387 թ. տերութունները «լուծում» են գտնում Հայաստանի խնդրին, բաժանելով երկիրը երկու անհավասար մասերի, որոնցից փոքրը ընկնում է Հռոմի, իսկ մեծը՝ Պարսկաստանի ոլորտը: Առաջին մասում շուտով, իսկ Լերկորդում՝ 428 թ., վերացվում է հայ Արշակունիների իշխանությունը:

Սակայն հայ ժողովուրդը հզոր ապստամբություններով (451 թ. Վարդանանց պատերազմը, 481—484 թթ. Վահան Մամիկոնյանի, 571 թ. Կարմիր Վարդանի ապստամբությունները և այլն) կարողանում է պաշտպանել իր քաղաքական և հոգևոր ինքնությունը պարսիկ ուժացնողների ոտնձգություններից:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, կրոնական և սոցիալական շարժումները: Սասանյան իրանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանն էր ապրում: Տեղի էր ունենում հողային տարածքների վերաբաշխում՝ հօգուտ խոշոր տիրույթների առաջացման: Դրանք պատկանում էին թագավորի ազգականներին և շրջապատին: Մանր հողատերերը կոչվում էին «ազատներ»: Հողագործ բնակչության մեծ մասը միավորված էր գյուղական համայնքների մեջ, փոքր մասն աշխատում էր մասնատիրական տնտեսություններում՝ դաստակերտներում, ուր նաև ստրկական աշխատանք էր կիրառվում:

Երկրի տնտեսության համար կարևոր նշանակություն ուներ տարանցիկ առևտուրը: Իրանով անցնող ճանապարհները կապում էին Արևմուտքը Հնդկաստանի ու Չինաստանի հետ («Մետաքսի ճանապարհ»): Տարանցիկ առևտուրը օժանդակում էր քաղաքների զարգացմանն ու բարգավաճ-

մանը: Իրանի մայրաքաղաքը և խոշորագույն քաղաքը Բա-
բելոնից ոչ հեռու գտնվող Տիզբոնն էր:

Ֆեոդալիզմի զարգացումը և դասակարգային բեկոսացումը
հանգեցնում էին կրոնների դերի և սրանց բողի տակ հանդես
եկող սոցիալական շարժումների ուժեղացմանը: Պարթևների
տիրապետության ժամանակ նախորդ շրջանին հատուկ մոլե-
ռանդությունը թուլացել էր, իսկ այժմ, Սասանյանների օրոք
այն վերածնվում է: Զրադաշտականությունը, որի հիմքն էր
լուսսի աստված Օրմիզդի (նախկին Ահուրա-Մազդայի) և
խավարի աստված Ահրիմանի (նախկին Անգհրո-Մանյուի)
մշտենջնական ահեղ պայքարի արտահայտությունը մարշ-
կային հասարակության մեջ, վերանորոգվելով բարձրացվում
է պետական կրոնի աստիճանի ու սկսում պարտադրվել
Իրանի տերության տարածքում ապրող ժողովուրդներին:

Դրա կողքին, որպես բողոք, լայն տարածում է գտնում մանիքեական-
ությունը (նրա հիմնադիր Մանիի անունից), որն, ընդհակառակն, անգոր-
ծունություն է ճշմարտության կողքի անում և փաստորեն տարբեր կրոն-
ների՝ հուդայականության, քրիստոնեության, բուդդայականության և հենց
զրադաշտականության տարրերի խառնուրդ էր: Այստեղ գլխավոր աստ-
վածն էր համարվում Զրվանը (ժամանակը): Հակառակ Սասանյան ար-
քանների անբարենպաստ վերաբերմունքին, իր դերն էր խաղում նաև քրիս-
տոնեությունը:

5-րդ դ. վերջում և 6-րդ դարի սկզբներին Իրանը սասանվում է Մազ-
դակի հարուցած կրոնա-սոցիալական հզոր շարժումից: Մազդակյանները
հավատում էին, որ մոտ ժամանակներս ծագելու է ռուժի և բանականու-
թյան թագավորությունը, որը կառուցված կլինի ընդհանուր հավասարու-
թյան, մասնավոր սեփականության բացակայության և բարիքների հավա-
քար բաշխման սկզբունքների վրա, այսինքն, դավանում էին հերթական
ուսուպիական մի ուսմունք: Իրանի թագավորներից Կավաթը (488—
531 թթ.) փորձեց ուղղել այդ շարժումը շափազանց հզորացած ալիտա-
տիրական ալիզանու դեմ, բայց այն այնպիսի թափ ու տարածում ստա-
ցավ ամբողջ երկրում, ընդգրկելով ժողովրդական հոծ զանգվածներ, որ
իշխանությունները իրենց բոլոր ուժերը նետեցին նրա ճնշման վրա: Մազ-
դակը և նրա մերձավոր հետևորդները դաժանորեն պատժվեցին (529 թ.):

Սասանյան տերությունը 6—7-րդ դդ.: 6-րդ դ. տե-
րությունը բարգավաճում էր: Խոսքով 1 Անուշիրվան թագա-
վորը (531—579 թթ.) ամրացնում է այն իր հարկային բարե-
նորոգումներով, պետական և ռազմական ապարատի վերա-

կառուցմամբ, քրմության ազդեցութեան շահավորմամբ: Նա վարել է նաև եռանդուն արտաքին քաղաքականութիւն՝ դուրս եկել Միջերկրականի ափը, ընդլայնել տերութեան հաշիւը արևելքում և նույնիսկ գրավել հարավային Յմենը, որ մեծ պատեհութիւններ ընձեռեց միջազգային առևտրի զարգացմանը: Նրանցից հետո, սակայն, Բյուզանդիայի հետ պայքարը ընթանում էր փոփոխական հաջողութիւններ: 591 թ. տեղի հունենում Հայաստանի նոր բաժանում, ըստ որում նրա մեծ մասն այս անգամ հասնում է Բյուզանդիային: 7-րդ դ. սկըզբին, խոսքով 2-րդ թագավորի օրոք Սասանյանները իրենց վերջին ռազմական հաջողութիւններն են ունենում, ասպատակելով Նիսիստուսը, Ասորիքը, Պաղեստինը, Փոքր Ասիան և նույնիսկ հասնելով մինչև Կոստանդնուպոլսի մոտերքը: Սակայն Բյուզանդական կայսր Հերակլի հակահարձակումը, որի ժամանակ նա հասնում է մինչև Տիգրոն, ի շիք է դարձնում այդ հաջողութիւնները: Վերջին Սասանյան թագավոր Հազկերտ 3-ը (632—651 թթ.) հուսահատ ճիգեր է անում դիմադրաւիելու արաբական նվաճումներին:

§ 8. ԻՐԱՆԸ 7—15-ՐԴ ԴԴ.

Իրանի նվաճումը արաբների կողմից: 7-րդ դարի սկզբներին Սասանյան Իրանը բախվեց զեռևս նոր ձևավորված, սակայն հզոր Արաբական խալիֆայութեան հետ: Իրանական բանակը, որ կոչում էր Ռուստամ Ֆառուխզադի հրամանատարութեան ներքո, 637 թ. Կադիսիա կոչվող վայրում տեղի ունեցած ճակատամարտում ջախջախիչ պարտութիւն կրեց արաբական զորքերից: Գրավվեց և կողոպտվեց Տիգրոնն ու Սասանյանների արքունիքը: Հազկերտ 3-րդ արքան 642 թ. Նիհավենդում կրած երկրորդ պարտութիւնից հետո փախավ արևմուտք և 651 թ. սպանվեց Մերվ քաղաքում:

661 թ. սկսած իրանական ժողովուրդը ենթարկված էր նախ Գամասկոսում նստող Օմայան, իսկ 750 թվականից Բաղդադում նստող Աբասյան խալիֆներին:

Խալիֆաթի աստվածապետական իշխանութեան ներքո իր վերջնական ավարտին հասավ Իրանի իսլամացումը: Զրա-

դաշտականության մնացորդները տարագրվեցին Հեղկաստան, Ամենուրեք գրում և հաղորդակցվում էին միայն արաբներին, «սուրբ գրքի»՝ Ղուրանի լեզվով: Արաբներինը դարձավ գրականության և դիտության միակ լեզուն:

Պետական-վարչական համակարգում ազդեցիկ դիրքեր գրավեցին իրանական ծագումով անվանի գործիչներ: Հարուստ ավանդներ ունեցող իրանական պաշտոնեությունը նույն հավատարմությամբ ծառայում էր համիսլամական եկրտումներ ունեցող Բաղդադի իշխանավորությանը: Նրանցից շատերը լինելով խոշոր ֆեոդալական տների ներկայացուցիչներ, որպես խալիֆաթի վասալ էմիրներ, ժառանգաբար իշխում էին երկրի ընդարձակ նահանգներում: 9-րդ դարի վերջերից արդեն նրանցից ոմանք առավել մեծ իրավունքներ ձեռք բերելով, ձգտում էին ինքնուրույնության:

Աբասյանների իշխանության թուլացմանը նպաստեցին ժողովրդական ապստամբությունները, հատկապես Զինջինների ապստամբությունը հարավում և Բաբելի գլխավորած հզոր շարժումը Ասորպատականում: Բաղդադի խալիֆաթի թուլացումից օգտվեցին իրանի արևելյան նահանգներում իշխող էմիրները, որոնք՝ ըմբոստ դիրք գրավելով, կարողացան ազատվել խալիֆաթի ենթակայությունից և Գիմնադրել ինքնիշխան էմիրություններ:

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին պարսկալեզու գրականության զարգացման համար: Հրապարակ եկան նոր՝ «գարի» պարսկերենով ստեղծագործող անվանի գրողներ՝ Ռուդաքին, Օնսորին, Դակիկին և ուրիշներ, նրանց ավանդներով ստեղծված պարսից գրականությունը տվեց համաշխարհ հային ճանաչման արժանացած գործեր, որոնց մեջ հատկապես առանձնանում է անմահ դյուցազներգու Ֆիրդուսու «Շահնամեն»:

ԹՈՒՐԶԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՅՈՒՄԸ ԻՐԱՆ

Դեռևս խալիֆաթի տիրապետության շրջանում, սկսած 8-րդ դարից, թրքախոս քուշոր-ցեղերի ներթափանցումը իրանական բարձրավանդակի հյուսիս-արևելյան շրջանները, 10-րդ դարում ավելի մեծ չափեր ստացան: 10-րդ դ. վերջից

րին և ամբողջ 11-րդ դարում թուրքական ժաղումով էմիրները իրենց իշխանությունը տարածեցին նաև հորասանի վրա։ Կենտրոն ունենալով Ղազնե քաղաքը, իրենց շահ հռչակած էմիրները անվանվեցին Ղազնեիներ։

11-րդ դարի սկզբներին Միջին Ասիայում բնակվող Օղուշ կոչվող թուրքերի շատ ցեղախմբեր, զազնեիների հովանավորության ներքո, գալիս էին մշտական բնակություն հաստատելու հորասանի կենտրոնական շրջաններ։ Այդ ռազմիկ ցեղերից շատերը միավորվեցին Սելջուկ անունով առաջնորդի իշխանության ներքո։ 1030-ական թթ. մեծ իշխանություն էին ձևոք բերել Զադր-բեկ և Տուղրիլ-բեկ եղբայրները։ 1040 թ. նրանք պարսության մատնեցին Ղազնեիդյան սուլթան Մասուդին։ Շարունակելով հաղթական արշավը, Տուղրիլ-բեկը 1055 թ. գրավեց Բաղդադը և իրեն ենթարկեց խալիֆաթի բոլոր վասալներին։

12-րդ դ. վերջերին, օգտվելով կենտրոնական իշխանության թուլացումից, անկախություն ձևոք բերեցին երկրի տարբեր շրջաններում իշխող սելջուկյան սուլթանների գահաժառանգների խնամակալները, որոնք կոչվում էին «աթաբեկներ»։ Հզոր էին հատկապես Ատրպատականի Իլդզիդյան (1136—1226 թթ.) և Ֆարսի Սուլդուրյան (1148—1287 թթ.) աթաբեկությունները։ 1070-ական թվականներին, անկախանալով, իրենց վերանվանեցին «հորեզմշահեր», տիրելով Մավերանահրին և հորասանի հյուսիսային շրջաններին։ Խորհմշահյանները մինչև 13-րդ դ. 20-ական թվականները հանդիսանում էին իրանական պետականության շարունակողները։ Նրանց օրոք պարսկալեզու գրականությունն ու մշակույթը մեծ զարգացում ապրեց։ Խորեզմշահերի պետությունը 1231 թ. կործանվեց մոնղոլական արշավանքների ժամանակ։ Վերջին սուլթան Ջալալ էդ-դինը փախավ արևմուտք, ապստամբելով Ատրպատականը և Անդրկովկասը։

ԻՐԱՆԸ ԻԼԽԱՆՆԵՐԻ ԵՎ ԼԱՆԿ ԹԵՄԱԻՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՒՔ

Չինգիզ խանի մահից հետո (1227 թ.), նրա նվաճած լայնածավալ երկրները բաժանվեցին իր որդիների միջև։ Իրանը և ամբողջ Մերձավոր Արևելքը ժառանգեց Թուկուչու։ Նրա որդի Հուլաղու խանը 1258 թ. գրավելով Բաղդադը, հիմնադրեց Իլխանների պետությունը, որը գոյատևեց մինչև 14-րդ դարի

կեսերը: Իլխանական տերության կենտրոնները Ազերբայջանի Մարաղա և Թավրիզ քաղաքներն էին:

Մինչև 14-րդ դ. սկզբները իլխանները պահպանում էին իրենց ավանդական կրոնը: Ղազան-խանի օրոք (1295—1304 թթ.) իսլամը դարձավ իլխանների պաշտոնական կրոնը: Այս շրջանում ևս պարսկերենը մնում էր որպես պետական լեզու: Պարսկալեզու գրականությունն ու պատմագրությունը շարունակում էր զարգանալ:

Պետական պատասխանատու պաշտոններում գործում էին պարսիկ անվանի գործիչներ, ինչպես օրինակ Ղազան խանի մեծ վեզիր և սահիբ-դիվան Ֆազլուլահ Ռաշիդ էդ-դինը, որ հեղինակն է իլխանության եռհատոր պատմության: Պարսկալեզու պատմագրությունը այս շրջանում մեծ ծաղկում ապրեց: Գրականության մեջ առաջացավ սուֆիական ուղղությունը: Այդ ժանրով ստեղծագործողների չափածո նրկերը հասան գեղարվեստական մեծ կատարելության, ինչպիսին էր օրինակ Ջնալ էդ-դին Ռումին (1207—1273 թթ.), որի ստեղծագործությունները համաշխարհային ճանաչում ունեն:

Իլխանական տերության մեջ ապրող ժողովուրդները ենթակա էին դաժան հարստահարման: Մանր հարկապահանջությունը և հարկերի իրացման կապալային համակարգը երկիրը հասցրին ծայրահեղ աղքատության: Ղազան խանի օրոք, Ռաշիդ էդ-դինի նախաձեռնությամբ իրագործված բարենորոգումները թեև մասամբ բարելավեցին վիճակը, սակայն նրանք չէին կարող կանխել երկրի տնտեսության քայքայումն ու պետության վերահաս անկումը:

14-րդ դ. 80-ական թվականներին Իրանը ենթարկվեց նոր հարձակման և համատարած ավերածության: Միջին Ասիայում երևան էր եկել մի նոր տիրակալ, որ հռչակվեց Լանկ Թեմուր անունով: 1380 թ. նա դուրս եկավ արշավանքի և մինչև 1393 թ. մի քանի ավերիչ արշավանքների ընթացքում նվաճեց ողջ Իրանը:

Լանկ Թեմուրի հիմնած կայսրությունը, սակայն, ավելի անկայուն դառնվեց և նրա մահից հետո (1405 թ.) արագորեն սկսեց կազմալուծվել: Դեռևս արշավանքներից առաջ արևմտյան նահանգներում և Իրաքում գլուխ էին բարձրացրել և դրություն տեղ էին գործել նախկին մոնղոլական ցե-

դախմբերի՝ Զելալիւրյան և Չաբանյան էմիրները, որոնք, սակայն, իրար դեմ պայքարելով, ղկարողացան կայուն իշխանութիւն ստեղծել: Ավելի ուշ առավել կենտրոնացված իշխանութիւն ստեղծվեց Հայաստանում հաստատված թուրք-մենական Կարա-կոյունլու կոչվող ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆի (1388—1420 թթ.) ղլխավորութիւամբ, կենտրոն ունենալով Թավրիզ քաղաքը: Կարա-Յուսուֆը թեև պարտութիւն կրեց Լանկ Թեմուրի որդի Միրանշահից (1396 թ.), սակայն 1408 թ. գրավելով Ատրպատականը, իր իշխանութիւնը տարածեց նաև Իրանի արևմտյան նահանգների վրա: Կարա-Կոյունլուների պետութիւնը ավելի ընդարձակվեց հատկապես Կարա-Յուսուֆի որդի Զհանշահի (1435—1467 թթ.) օրոք, որն օգտվելով Թեմուրյան-կենտրոնական պետութիւն թուլացումից, նվաճեց նաև Ֆարսի նահանգը, իսկ արևելքում հասավ մինչև Խորասան և գրավեց Հերաթ քաղաքը:

1467 թ. պարտութիւն մատնելով և սպանելով Զհանշահին, Աղ-կոյունլու էմիր Հասանը, որ Գայտնի էր Ուզուն-Հասան անունով, գրավում է Թավրիզը և տեր դառնում Կարա-կոյունլուների գահին, որից հետո նրա իշխանութիւնն է ննթարկվում Իրանի մեծ մասը:

Ուզուն-Հասանը կազմեց օրենքների մի ժողովածու, որ կոչվում էր «Կանոննամե-յի Հասան-փադիշահ»: Դա Գարկային համակարգի և բնակչութիւն տարբեր խավերից գանձվող հարկերի ու տուրքերի մի կանոնագիրք էր, որ երկար ժամանակ, մինչև 18-րդ դարը, ծառայում էր որպես հարկային ու մարսային համակարգի ուղեցույց:

§ 4. ԻՐԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՍԵՖՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

14-րդ դարից սկսած Ատրպատականի Արդաբիլ քաղաքում հաստատված շիյա Սաֆի էդ-դինի սերունդները, որպես շիա մահմեդականների առաջնորդներ, մեծ հեղինակութիւն էին վայելում Ատրպատականում և Հայաստանում թափառող թրքախոս բուլղոս ցեղերի մեջ, որոնք շիյա Սաֆիին համարում էին իրենց առաջնորդը: Ամեն տարի նրանք դալխա էին իրենց

հավատարմութիւնը հավաստելու, կրելով կարմիր գլխարկ, որի համար նրանք հետո կոչվեցին «կըզըլըբաշ» (կարմրագլուխ): Նրանց գինված շոկատները գտնվում էին Արդաբիլի շէյխերի տրամագրութեան տակ:

15-րդ դարավերջում, օգտվելով Աղ-կոյունլուների թուլացումից և հենվելով կըզըլըբաշ ցեղերի վրա, շէյխ Սաֆիի թոռ Հեյդարը կարողացել էր իրեն ենթարկել շրջակա էմիրներին: Տասնամյակներ շարունակ Արդաբիլի շէյխերի և Շամախիի Շիրվանշահերի միջև ուժեղ պայքար էր գնում գերիշխանութեան համար: Պայքարը առերևույթ դավանաբանական բնույթ ուներ. շիրվանշահերը հետևում էին սուննի դավանանքին, Շիրվանշահ Ֆառուխյասարը 1489 թ. գրավելով Արդաբիլ քաղաքը, կոտորեց շէյխ Հեյդարի ամբողջ գերդաստանը: Փրկվեց միայն մանկահասակ Իսմայիլը, որին դայակները կարողացան փախցնել Գիլան, 1500 թ., երբ Իսմայիլը քնդամենը 13 տարեկան էր, կըզըլըբաշ էմիրները հավաքվելով Արդաբիլում և իրենց հավատարմութիւնը հայտնելով Իսմայիլին, արշավանքի ելան Ֆառուխյասարի դեմ:

Վրեժխնդիր լինելով, Իսմայիլը գրավեց և ավերեց Շամախին, սպանեց Ֆառուխյասարին և ապա նվաճեց մի քանի ամրություններ Ղարաբաղում: Այնուհետև պարտութեան մատնելով Աղ-կոյունլու վերջին փառիշահին՝ Ալվանդին, 1502 թ. հաղթական մուտք գործեց Քափրիզ և իրեն շահ հայտարարելով հիմնադրեց Սեֆեւիդների հարստութիւնը, որն իշխեց Իրանում մինչև 18-րդ դ. 20-ական թվականները: Այս նոր պետութիւնը, թեև շիիզմի դրոշմով կոչվում էր «Կըզըլըբաշների պետութիւն» և օժտված էր աստվածապետական տերութեանը բնորոշ հատկանիշներով, իրականում, սակայն, կռված էր վերածնելու իրանական պետականութեան ավանդները: Պարսկերենը դարձյալ շարունակում էր մնալ պետական լեզու: Շիիզմը հայտարարելով պետական կրոն, շահ Իսմայիլը ձեռք էր բերում բնակչութեան մեծամասնութեան համակրանքը: Դա, փաստորեն, նոր պետութեան հիմնական ռազմական հենարանը հանդիսացող կըզըլըբաշ թրքախոս ցեղերին միավորում էր դավանակից, սակայն առավել քաղաքակիրթ պարսկախոս զանգվածների հետ:

Արագ-ընն կազմակերպելով նոր ռազմական րանակ, շահ Իսմայիլը կարողացավ կարճ ժամանակում տիրել Իրանի մեծ մասին, Անդրկովկասին, Հայաստանին ու Միջագետքին։ Համարձակ առաջխաղացման ընթացքում նա կանգնեց դեմ հանդիման ճամանակի հզորագույն կայսրությանը՝ Օսմանյան Թուրքիային, որը թեև սուլթան-Քայազիդի (1431—1512) զորք հաշտ աչքով էր նայում նորակազմ պետության հաջողություններին և նույնիսկ պաշտոնապես շնորհավորել էր Իսմայիլի թագադրությունը, սակայն նրա հաջորդ սուլթան Սելիմի ժամանակ (1512—1520) հալածելով իր սահմաններում ապրող շիաներին, խիստ թշնամական դիրք գրավեց շահ Իսմայիլի նկատմամբ։ Եվ շուտով ծայր առան և հետզհետե ավելի մեծ ծավալ ընդունեցին թուրք-իրանական ավերիչ պատերազմները, որոնք մղվում էին մերթ Հայկական բարձրավանդակին, մերթ Անդրկովկասին, Ատրպատականին ու Միջագետքին տիրելու համար և կարճատև ընդմիջումներով շարունակվեցին մինչև 17-րդ դ. 30-ական թվականները։ 1512—1514 թթ. ծավալված ռազմական գործողություններն ավարտվեցին երկու տերությունների միջև 1515 թ. կնքված պայմանագրով, որով ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Հյուսիսային Միջագետքն անցնում էին Թուրքիային։

1524 թ. մահացավ շահ Իսմայիլը և կրգրլուալ ավագանին շահ հրդակեց նրա անշափահա սրդուն՝ Քահմասպին, որի թագավորության ավելի քան 50 տարիների ընթացքում ևս շարունակվեցին ավերիչ արշավանքները։ Պատերազմի թատերաբեմը կրկին Հայաստանն էր։ Շահ Քահմասպի զորք թուրքական զորքերը բազմիցս ռազմական ևն ենթարկել Իրանի հյուսիս-արևմտյան շրջանները։ Տեական պատերազմական վիճակը հարկադրեց շահ Քահմասպին 1548 թ. մայրաքաղաքը Քափրդիջ տեղափոխել երկրի ավելի կենտրոնական մասում գտնվող Հազվին քաղաքը։

1587 թ. Խուսիու և Ութաշլու խոշոր ցեղերի առաջնորդների և ազդեցիկ էմիրների ճնշման տակ դահ բարձրացավ Արասը։

Նրիտասարդ շահը բոլոր ուժերը կենտրոնացրեց դուրս մղելու ուզրեկ նվաճողներին, որոնք գրավել էին ամբողջ Խորասանն ու Սիսթանը։ Դրա համար էլ նա ստիպված էր համաձայնելու օսմանցիների կողմից 1590 թ. Կոստանդնու-

պոլսում Իրանին առաջարկվող հաշտության շափազանց ծանր պայմաններին, ըստ որի ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը, բացի Արդաբիլի և Բալիշի մարզերից, անցնում էին Թուրքիային:

Մայրաքաղաքը տեղափոխելով Իրանի կենտրոնում գտնվող Սպահան քաղաքը, շահ Աբասը սկսեց կազմակերպել առաջնապես պարսիկներով համալրված և նոր հրազեններով սպառազինված ժամանակակից զորամասեր (թուֆանջիներ) և կարճ ժամանակում երկրից դուրս մղելով ուզբեկ նվաճողներին, սկսեց նախապատրաստվել հտ վերցնելու օսմանցիների կողմից նվաճված տարածքները: 17-րդ դարի սկզբին, երբ արդեն տերության արևելյան սահմաններում երկարատև խաղաղություն էր ապահովված, և երբ Ջալալիների հզոր շարժումը հետզհետե ծավալվելով ընդգրկել էր Փոքր Ասիայի համարյա բոլոր կենտրոնական ու արևելյան նահանգները, ապառնալով բուն իսկ օսմանյան պետության գոյությանը, շահ ժամանակը պատեհ համարեց արշավանքի ելնել, հետ վերցնելու 1590 թ. պայմանագրով Թուրքիայի կողմից նվաճված հողերը:

1603 թ. սեպտեմբերին կզզըլբաշների բանակը դուռս եկավ Սպահանից և շարժվեց դեպի Ատրպատական, Արագոթեն նվաճվեցին Թավրիզի, Նախիջևանի և Նրևանի բերդերը: Շուտով, սակայն, հարձակման անցան օսմանյան զորքերը: Հաջիի առնելով իր ուժերը, շահ Աբասը որոշեց չճակատել օսմանցիների դեմ և կիրառելով կզզըլբաշների վաղեմի տակտիկան, հրամայեց իր զորքերին նահանջել դեպի Թավրիզ, հրկիզելով ու ավերելով ճանապարհամերձ բոլոր գյուղերն ու ավանները, այրելով ու սպառելով հացահատիկն ու ցանքսերը և բնակչությանը քշելով դեպի խորը թիկունք: Բռնագաղթի ենթարկվեց Արարատյան երկրի, Նախիջևանի և հատկապես Արաքսի ափին գտնվող հարուստ Ջուղա քաղաքի հայությունը: Գաղթականությունը մեծ կորուստներ տալով հասավ մայրաքաղաք Սպահան, որտեղ հիմնադրվեց նոր Ջուղա քաղաքը:

Օսմանյան զորքերը, անցնելով ամայացված վայրերով, հոգնած, սոված և ուժասպառ հասան մինչև Ատրպատական:

և հրաժարվեցին այլևս շարունակելու արշավանքը: Բանակը կազմալուծվեց, իսկ հրամանատար Սինան փաշան փախավ Վան: Գրավված վայրերում նորից վերահաստատվեց Սեֆևի-ների իշխանությունը: Կոիվները շարունակվեցին մինչև 1613 թ., երբ ներքին ծանր վիճակից հարկադրված սուլթան Ահմեդ 1-ը ստիպված եղավ հաշտություն խնդրել, ճանաչելով 1555 թ. սահմանները: Իրանը կրկին տեր դարձավ Ատերպատականին, Անդրկովկասին, ինչպես նաև իր իշխանությունն ենթարկեց Բաղդադն ու Մոսկվը, և շիաների սրբավայրեր Քերբելան ու Նեշեֆը:

Բնե այս հաշտությունը հետագայում ևս քանիցս խախտվեց թուրքերի կողմից (1616—1623 թթ.), սակայն այնուհետև շուրջ երկու տասնամյակ լուրջ ընդհարումներ տեղի չունեցան: Այս ընթացքում էր, որ շահ Աբասը իրագործեց մի շարք կարևոր ծրագրեր, որոնք նա նախագծել էր դեռևս դարասկզբի ռազմական գործողությունները ընթացքում: Մայրաքաղաքին կից հիմնադրված նոր Զուլայում հիմնադրված հայ արհեստավորությանը և հատկապես վաճառականությունը լայն ասպարեզ տալով, նա կարողացավ պետական վերահսկողություն ենթարկել իր ժամանակի ամենահեղինակավոր մետաքսի արտահանման գործը:

Պարսից ծոցում իր գերիշխանությունը հաստատելու և մետաքսի արտահանման ցամաքային ուղիները ծովայինով փոխարինելու նպատակով, շահը դեռ 1602 թ. գրավել էր Բահրեյն կղզին: Կարևոր էր, սակայն, Հորմուզի նեղուցի ճանապարհը, որտեղ գտնվող Հորմուզ կղզին դեռևս 1507 Ձ. գրավված էր պորտուգալացիների կողմից: 1623 թ., երբ սերված էին պորտուգալական և անգլիական գաղութարարների հարաբերությունները, վերջիններիս նավատորմի օգնությամբ նա կարողացավ հետ գրավել այդ կղզին: Նեղուցի վրա վերահսկողությունը առավել ապահովելու և ծովային առևտրին զարկ տալու նպատակով, նեղուցին շատ մոտ հիմնադրվեց նոր նավահանգիստ, որ շահի անունով կոչվեց Բանդար-Աբաս:

Շահ Աբասի թագավորության տարիները սեֆևիների տիրապետության ամենարուստ դարգացման տարիները եղան:

Նա կարողացավ ստեղծել կենտրոնացված իշխանություն, զաճմանափակեց քոչվոր արիստոկրատիայի իրավունքները, անդլիացիների մասնակցությամբ վերակազմեց ու բարեկարգեց զինված ուժերը, ամրացրեց երկրի ներքին վարչակարգը: Բացի 4 վալիություններից՝ Վրաստան, Իրաք, Լոռստան և Փուրդիստան, որտեղ իշխում էին տեղական նախկին տիրակալների կամ էմիրների սերունդները, երկիրը բաժանված էր 14 վիլայեթների, որոնք կառավարվում էին շահի նշանակած նահանգապետների կողմից: Նրանք օժտված էին լայն իրավունքներով և միաժամանակ լինելով զինվորական հրամանատարներ, կոչվում էին բեկլարբեկներ ու մեծարվում «խան» տիտղոսով:

Պիտական բյուջեն կազմվում էր բնակչությունից գանձվող հարկերից:

Բարձրաստիճան պաշտոններումն ու զինվորականությունը վարձատրվում էր թիուլային համակարգով: Ըստ զբաղեցրած պաշտոնների նրանք ստանում էին թիուլներ, որով իրավունք էին ստանում գանձել տարբեր հարկատու օբյեկտների ռենտա-հարկն ու տուրքերը: Կային պետական, արքունական, մզկիթապատկան (վակֆ), մասնավոր (մուլք) և համայնքապատկան հողեր, որոնց մշակող գյուղական համայնքները ռենտա-հարկը վճարում էին ըստ պատկանելիության:

Շահ Աբասը, որ մեծարվեց «թաթար» (մեծ) տիտղոսով, մահացավ 1629 թվականին: Սեֆևիների գահը ժառանգեց նրա թոռ Սաֆին, որի թագավորության վեցերորդ տարում՝ 1635 թ. օսմանյան զորքերը նորից անցան սահմանը և գրավեցին Անդրկովկասի և Ատրպատականի արևմտյան շրջանները: Հաջորդ տարին հակահարձակման անցած կըզըլուշների բանակը կարողացավ դուրս քշել զավթիչներին և հետ գրավել Ատրպատականն ու Նախիջևանի, Նրեանի բերդերը: Պատերազմական գործողությունները փոխադարձ հաջողություններով շարունակվեցին մինչև 1639 թ. և ավարտվեցին պայմանագրի ստորագրումով, ըստ որի Անդրկովկասն ու Ատրպատականը մնում էին Իրանին, իսկ Իրաքն անցնում էր թուրքերի տիրապետության տակ:

Շահ Սաֆին մահացավ 1642 թ., գահը թողնելով իր որդի Աբաս 2-րդին (1642—1666): Ցեպական հաշտությունը թուրքերի հետ հնարավորություն տվեց նորընծա շահին ամրացնելու երկրի արևելյան սահմանները: 1651—1654 թթ. ընթացքում նրան հաջողվեց շնդկաստանի Մեծ Մողոլ շահ Զհանից հեռ գրավել Դանդադար քաղաքը և վերահաստատել Սեֆևիների իշխանությունը Աֆղանստանում: Նրա օրոք ավելի ընդարձակվեցին տնտեսական կապերը Արևմտյան Նվբուպաշի երկրների հետ, և Իրանը ընդհանուր առ-

մամբ անտեսական վերելք ապրեց, որը տեղեց մինչև 60-ական թվականները վերջերքը:

Արաբին հաջորդած շահերի որոշ երևան եկան Իրանի ընդհանուր քաղաքական և անտեսական անկման նշանները:

1706—1715 թթ. ընթացքում պայմանագրեր կնքվեցին Ֆրանսիացի վաճառականության հետ, տալով նրանց մեծ առանձնա-նորոշումներ, որով և սկիզբ առան եվրոպացիների էքստերիտորիալ իրավունքները Իրանում, որ չարունակվեցին մինչև 20-րդ դարի 20-ական թվականները:

§ 5. ԻՐԱՆԸ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ

18-րդ դարի սկզբին սեֆևիների արքունիքում կատարյալ անգլխանություն էր տիրում: Եահն իրեն չղթապատել էր հողեօրականներով ու աստղագուշակներով: Դնալով ավելի մեծ լափերի էին հասնում պաշտոնների վաճառքն ու բնակչության սանձարձակ հարստահարությունը: Գատարկված պետական դանձարանք լցնելու նպատակով ժողովրդից գանձող հարկերը բազմապատկվեցին մի քանի անգամ: Ամենուրեք տեղի էին ունենում գյուղացիության և հարկատու բնակչության ըմբոստ ելույթներ: Կենտրոնական իշխանությունը անզոր էր կանխելու ժայռամասերում սկսված անջատողական ելույթները: Ապստամբություններ սկսվեցին Վրացացիում և Հայաստանում: Արաբ ապստամբները գրավեցին Բահրեյնը: Առանձնապես ուժեղ էր աֆղանների ապստամբությունը:

1722 թ. նրանք մեծ ուժերով անցան հարձակման, գրավեցին Քիրմանը և շարժվեցին դեպի Եզդ: Հանդիպելով դիմադրության նրանք ուղղություն վերցրեցին դեպի մայրաքաղաք Մպահան: Փաղաքից 25 կիլոմետր արևելք գտնվող Դյուլնարադ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը ճակատադրական հղավ Սեֆևիների տերության համար: Ծրլակա բնակավայրերից հապենկո հավաքված իրանական զորքերը պարտություն կրելով ցրվեցին: Մտնելով նոր Ջուզա, աֆղանները պաշարեցին մայրաքաղաքը, պահանջելով շահից անձնատուր լինելու: Եահ Իսմաիլի և Մեծ շահ Աբասի անարժան հեռանորդը 1722 թ. հոկտեմբերի 22-ին գնաց նրանց առաջնորդ Միր-Մահմուդին ընդառաջ և իր թագը անձամբ հանձնեց նրան: Սեֆևիների վերականգնումը, հեռանկարով շահին, հնազանդվեց նոր տիրակալին, մինչդեռ բնակչությունը բոլոր խավերը բուռն դիմադրություն էին ցույց տալիս նվաճողներին: Դիմադրությունը գնալով ավելի մեծ լափեր ստացավ:

Եահ Սուլթան Հուսեյնի որդին՝ Թահմասպը, որ մայրաքաղաքի պաշարման օրերին կարողացել էր փախչել երկրի հյուսիսային նահանգները, իրեն շահ հայտարարելով, կոչ էր անում ժողովրդին հավաքվելու իր շուրջը, շարունակելու համար պայքարը նվաճողների դեմ: Հանդես գալով նորաստեղծ և գլխավորելով այնտեղ հաստատված կղզւորալ ցեղերի ապստամբական ելույթները, կարճ ժամանակում մի քանի վճռական հաղթանակներ տանելուց հետո, մեծ համարով վառատակեց Աֆշար ցեղի կրքեկու ցեղախմբի

Պատկերն շարքային ռազմիկ նադիրկուլին: Եւ Քահմասպ 2-րդը սիրով
ընդունեց նադիրկուլու ծառայութիւնը՝ վերանվանելով նրան Քահմասպկուլի
խան:

1729 թ. նոյեմբերի 13-ին Սպահանից 60 կիլոմետր հեռու գտնվող
Մուրշիսոր գյուղի մոտ գլխովին շախշախելով աֆղանական զորքերը,
Նադիրը մուտք գործեց Սպահան, որից անմիջապէս հետո շահ Քահմասպ
3-րդը վերադարձավ մայրաքաղաք և բազմեց հոր գահին: Թվում էր թե
կարճատև ընդմիջումից հետո նորից վերահաստատվում էր Սեֆեիներէ
իշխանութիւնը:

Նադիրը շահը: 1732 թ. Նադիրը զահենկեց արեց Քահմասպին և իր
խնամակալութիւն ներքո շահ հայտարարեց նրա նորածին որդուն՝ Արաս
3-րդին և փաստորեն դարձավ Իրանի ինքնիշխան տերը: Բազմվորական
զահի նկատմամբ ցուցաբերած խորամանկ «անտարբերութիւնը» մեծ լա-
փով բարձրացնում էր Նադիրի հեղինակութիւնը: Նրա մեջ զուգորդված էին
խորամանկ քաղաքագետն ու մարտերում կոփված ռազմագետ զորավարը:
Եիշտ զնահատելով ստեղծված քաղաքական իրավիճակը, նա ամենայն
վճռականութեամբ համարում և խմբավորում էր բոլոր զինական ուժերը՝
հակահարված տալու Իրան ներխուժած թուրքական զորքերին: 1732 թ.
նոսների հետ կնքած պայմանագրից հետո, որով ռուսական զորքերը ան-
միջապէս պետք է հեռանային Իրանի մերձկասպյան նահանգներից, Նադիրն
արդեն հնարավորութիւն էր ստանում ամբողջ ուժերը կենտրոնացնելու
Իրաքում և Անդրկովկասում հաստատված թուրքական զորքերի դեմ:

Տեղեկանալով Նադիրի նախապատրաստութիւնների մասին, սուլթան
Մահմուդը մեծ բանակ ուղարկեց դէպի Անդրկովկաս: Այս զորաբանակը
գեո Կարս շրջան, Նադիրն արդեն Թավրիզի ու Արդաբիլի վրայով մտել
էր Եփրատ, գրավել ու ավերել Եամախին և պաշարել Գանձակի բերդը:
Վճռական ճակատամարտը Նադիրի և Արդուլա փաշայի զորաբանակներ
միջև տեղի ունեցավ 1735 թ. հուլիսի 8-ին, Երևանից ոչ շատ հեռու Եղվարդ
գյուղի մոտ, և, շնայած թվական բացարձակ գերակշռութիւնը, թուրքերն
այստեղ շախշախիշ պարտութիւն կրեցին և անկանոն ու խուճապահար նա-
հանջեցին: Սակայն նահանջի ճանապարհը փակել էին տեղի հայկական
աշխարհազորայիները: Մի կողմից իրանական հարձակվող բանակը, մյուս
կողմից հայ գյուղացիութիւնը, գլխովին ոչնչացրին նահանջող թշնամուն:
Մարտում սպանվեց նաև հրամանատար Արզուլա փաշան:

Եւստով, նոր հրամանատար նշանակված Ահմադ փաշան, հատուկ պատ-
վիրակութիւն ուղարկեց և հաշտութիւն բանակցութիւններ սկսեց Նադիրի
հետ: Թուրքերն արդեն համաձայնվում էին հանձնել Երևանի, Գանձակի և
Թիֆլիսի բերդերը և զորքերը հետ քաշել Անդրկովկասից:

Հաշտութիւն պայմանագրի կնքումից հետո՝ 1735 թ. նոյեմբերին Նա-
դիրն իր բանակով գնաց Մուղան: Այստեղից նա հրավերներ ուղարկեց նը-
կրի բոլոր նահանգների կառավարիչներին և ավագանուն համարվելու աշ-
տեղ կարևոր խորհրդակցութիւն: Հաշտող տարվա դարնանն արդեն այստեղ

էր հալածելով Իրանի աշխարհիկ և հոգևոր, մուսուլման և ալլահապաշտան ազատախորհրդային վերնախաւովը: Ներկա էին նաև հայ մելիքներն ու կաթողիկոս Աբրահամ Կրետապետն: Ավագանու ժողովը Իրանի գահի միակ արժանի թեկնածու ճանաչեց երկիրն օտար նվաճողներէից ազատագրող Նադիրին: Գարնանամուտին, պարսից ավանդական ամանորին, Մուղանում տեղի ունեցավ Նադիրի թագադրութունը:

Իրար հաջորդող հաղթանակները Նադիրին հասցրին շահնշահերի գահին: Նա կարողացավ Իրանը ազատել օտարազգի նվաճողներից, ժառանգելով, սակայն, օտար ռազմականական, անընդմեջ պատերազմների Գետեանքով ժայռահեղ աղքատութիւն հասած և տնտեսապես քայքայված լայնածավալ մի երկիր: Հաղթանակներով տարված Իրանի նոր շահնշահը, տնտեսական ծանր վիճակից դուրս գալու միջոցը Գամարում էր միայն արտաքին արշավանքների կազմակերպումը, հույս ունենալով նվաճված երկրների կողոպուտով լցնել պետական գանձարանը: 1737 թ. Նա Ներխուժեց Աֆղանստան, գրավեց Հերաթն ու Հնդկաստանի սահմանի մոտ գտնվող Գանդահար քաղաքը: Այստեղից Նա մեծ զորքով մուտք գործեց Հնդկաստան, որն այդ ժամանակ տնտեսական ու քաղաքական տագնապ էր ապրում: 1739 թ. փետրվարի 24-ին Կառնալ քաղաքի մոտ մղված մեծ ճակատամարտում զլխովին ոչնչացվեց Մուհամադ շահի բանակը, իսկ ապրիլի 20-ին գրավվեց Գելլին, կողոպուտվեց և ավարի մատնվեց Մեծ Մոզուլի շահերի ամբողջ հարստութունը, գրավվեց վիթխարի քանակությամբ ոսկի և թանկագին անեղեն:

Պետական գանձարանը անբավ հարստությամբ լցնելուց հետո, առանձին հրովարտակով Նադիրը Իրանի քնակչությանը նրեք տարի ազատեց պետական հարկերից: Դրանով Նա նպատակ ուներ թեթևացնել ռայաթների վիճակը և հնարավորութուն տալ նրանց վերականգնելու ու զարգացնելու պատերազմական արտակարգ հարկերի ու անընդհատ զորաշարժերի հետևանքով քայքայված տնտեսութունը: Սակայն արտադրողական ուժերի շափաղանց ցածր մակարդակն ու ֆեոդալական դաժան շահագործումը բացառում էին տնտեսական կյանքի արմատական բարելավման որևէ հնարավորություն: 1741—1745 թթ. Նադիրը ձեռնարկեց մի քանի անհաջող արշավանքներ (Դաղստան, Բաղդադ), որից հետո տեղի ունեցավ պետական հարկերի բարձրացում:

Նշված ռազմական անհաջողութուններից հետո և արքունիքում ծայր առած խարդալանքների հետևանքով, իր կյանքի վերջին տարիներին Նադիրը դարձել էր նեղ ու կասկածամիտ մի բռնակալ: Վակֆային և կալվածատիրական հողերի բռնագրավումները մեծ զոհողութուններ էին առաջացրել հոգևոր և աշխարհիկ ազատատերերի շարքերում: Այս անբարենպաստ պայմաններում, բռնակալներին հատուկ հիվանդագին կասկածամտութունը Նադիրին մղում էր անլուր գաղանությունների իր իսկ հարադատներին նկատմամբ: Ընթարկվելով պալատական բռնաարկություններին, Նա հրամայեց կուրացնել իր որդուն՝ Ռզակուլի Միրզային, որից հետո կորցնելով

անգործը, գտնվում էր կիսախեղագար վիճակում, մինչև որ 1747 թ. սպանվեց իր մերձավորների ձեռքով:

Կաշարների ճարտարային ճառատառումը:

Այս սպանությունից հետո երկրում անիշխանությունը ավելի մեծ լանկեր ընդունեց: Աշխուժացան անշատողական տարրերը: Առավել ուժեղ էմիրների ու խաների միջև սկսվեց պայքար միմյանց նկատմամբ զերակշռության հասնելու համար: Իսկ զահակալական պայքարում սկզբում հաջողության հասավ Նադիրի հղբոր որդի Ադիլը, որը խորասանում իրեն շահ հայտարարեց: Քիչ հետո նրանից իշխանությունը խնց իր հղբայր Իբրահիմը: Ապա հանդես եկավ Նադիրի թոռ Շահաբը, որը Նույնպես լիարժեքացավ իր իշխանությունը տարածել ամբողջ երկրի վրա:

Այս ընթացքում հյուսիսում՝ Մազանդարանում և Աստարաբադում հզորացան կաշարական ցեղախմբերի պարագլուխները:

1755 թ. կաշարները գրավեցին Քահրանը, այն դարձնելով իրենց մայրաքաղաքը: 1790 թ. մինչև 1794 թ. նրանց պարագլուխ Մուհամմադը կառուցեցավ իրեն հնթարկել Իրանի մեծ մասը:

1796 թ. Աղա Մուհամադ խանը թագադրվեց Քահրանում, իրեն հայտարարելով շահ, որով և Իրանում հաստատվեց Կաշարների թագավորական նոր հարստությունը: Նույն թվականին նորընծա շահը կարողացավ առանց պատերազմի գրավել խորասանը, շահի իրավունքներով Նադիրի ժառանգներից վերցնելով նաև նրանց հոր ողջ հարստությունը: Հաջորդ տարին արգեն նա մեծ զորքով անցավ Արաքսը և գնաց պաշարելու Շուշվա բերդը և պատժելու Ղարաբաղի խանին, որն ընդունել էր ուսուց հովանավորությունը: Սակայն բերդի գրավումից մի քանի օր անց, նա սպանվեց իր երկու ժառանգի ձեռքով, որոնք շահի հրամանով հաջորդ օրը մահապատժի պիտի ենթարկվեին: Զորքը խուճապի մատնվեց և ցրիվ գալով, ետ վերադարձավ: Եվ քանի որ, ներքինի լինելով, Աղա Մուհամադ խանը զուրկ էր ժառանգներից, Կաշարների գահը ժառանգեց նրա հղբոր որդի Բարախանը, վերանվանվելով Ֆաթ Ալի շահ:

§ 6. ԻՐԱՆԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Եվրոպական տեռայնալենքն ու Իրանը 19-րդ դարի սկզբներին: 19-րդ դարի սկզբին եվրոպական տերությունների ակտիվությունը Իրանում դեռևս թույլ էր: Սակայն հինց այդ ժամանակներից սկսած Իրանը դարձավ արևմտյան պետությունների ներխուժման թատերաբեմ: Այս խնդրում հատկապես արտահայտված էր ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը: Հյուսիսային Կովկասը գրավելուց հետո ուղտները սպառնում էին Անդրկովկասին, որը գտնվում էր իրանական տիրապետության ներքո: Ռուսական ներթափանցման սպառնալիքը անհանգստացնում էր առաջին հերթին Անգլիային, որը ուղտական առաքիազացումը վտանգավոր էր հա-

մարում իր խռրատագուն գաղութի՝ Հնդկաստանի պահպանման տեսակետից։ Իրանի նկատմամբ որոշակի հետաքրքրություն էր դրսևորում նաև Ֆրանսիան, որը ձգտում էր Իրանի տարածքը օգտագործել դեպի Հնդկաստան իր առաջնադաս ճամար։

1800 թ. Իրան ժամանեց կապիտան Մալթուլը, որը հանձնարարություն ուներ շահին գրավել Անգլիայի կողմը։ Նրան հաջողվեց շահի հետ ստորագրել պայմանագիր, որով խոստանում էր Իրանին զենք մատակարարել։ Իր հերթին Իրանը պարտավորվում էր ֆրանսիացիների դեպի Հնդկաստան շարժվելու փորձի դեպքում զորքեր ուղարկել Աֆղանստան՝ կասեցնելու Ֆրանսիայի հարձակումը։

1806 թ. Նապոլեոնը Իրան ուղարկեց ժորբրին՝ շահին առաջարկելով ռազմական դաշինք։ Այդ առաքելությունը Ֆրանսիայի առաջին օալլերից էր։ 1807 թ. մայիսի 4-ին Ֆինկինշտեյնում ստորագրվեց Ֆրանս-իրանական պայմանագիրը։ Շահը պարտավորվում էր թույլ տալ ֆրանսիական զորքերի անցումը իրանական տարածքով և ֆրանսիական ռազմականության մուտքը Գարսից ժոցի իրանական նավահանգիստներ։ Հենց այդ թվականին Իրան եկավ ֆրանսիական ռազմական պատվիրակությունը գեներալ Գարզանի գլխավորությամբ։ Սակայն շուտով Ֆրանսիայի և Ռուսաստանի կայսերի՝ Տիլզիտում կայացած հանդիպումը առկախ դարձրեց ֆրանս-իրանական համագործակցությունը։ Այս հանգամանքը օգտագործեցին անգլիացիները, և 1809 թ. Անգլիայի և Իրանի միջև նոր պայմանագիր կնքվեց։ Անգլիան Իրանին խոստանում էր 160 հազար թուման օգնություն, ինչպես նաև զինվորական հրահանգիչներ՝ իրանական բանակը վարժեցնելու համար։

Ռուս-իրանական պատերազմը։ 1801 թ. Վրաստանի միացումը Ռուսաստանին նոր հեռանկարներ էր բացում Անգրկովկասի իրանական գերիշխանության ներքո տառապող խանությունների համար և դուրաքնում ռուսական զորքերի առաջնադաս խնդիրը։

1804 թ. ռուսական զորքերը գրավեցին Փյանշան, ինչը և ռուս-իրանական պատերազմի սկիզբը դարձավ։ Իրանական զորքերի հրամանատարն էր արքայազն Աբրահ Միրզան, որն իր առաջին պարտությունը կրեց Էջմիածնի մոտակայքում տեղի ունեցած ձախառնմարտում։ Այնուհետև մի քանի խանություններ բացահայտ անցան Ռուսաստանի կողմը և ռուսական զորքերը հեշտությամբ գրավեցին Ծիրվանի, Մաթիի և Ղարաբաղի խանությունները։ Մարտնակելով իրենց հաղթարշավը, նրանք 1806 թ. վերցրին Գերբեռնը և Բաքուն։ Իրանական զորքերը կրում էին պարտություն պարտության հետևից։

1813 թ. Պյուլխտան կոչվող բնակավայրում կնքվեց ռուս-իրանական հաշտության պայմանագիր։ Հետ այս պայմանագրի Ռուսաստանին էին անցնում ռազմական գործողությունների ընթացքում գրաված տարածքները։ Ռուսաստանի գրաված Անգրկովկասյան խանություններից հատկապես կարևոր էին Փյանշայի, Գերբենի, Բաքվի, Ղարաբաղի խանությունները։ Պրանից բացի, Ռուսաստանը ձեռք էր բերում Կասպից ծովում ռազմածո-

վալին ուժեր պահելու իրավունք, մինչև հինգ տոկոսի էր իշխում Իրան մուսաբ գործող նրա ապրանքներից զանձնող հարկը: Դա նշանակում էր ռուսական ապրանքների սպառման շուկայի նշանակալի լայնացում:

Արքայա Միրզան, իր հերթին, շարունակում էր վերականգնավորել իրանական բանակը, որը կարճ ժամանակում անգլիացիների օգնությամբ դարձավ բավականին մարտունակ:

1826 թ. հուլիսի 23-ին բարձր հոգևորականությունը Զինադ (սրբազան պատերազմ) հայտարարեց Ռուսաստանին, և իրանական բանակը հարձակում սկսեց ռուսական զորքերի վրա: Ռուսական բանակը հանկարծակի զալով ստիպված նահանջեց և Արքայա Միրզային հաջողվեց զրազել Երվանը, Գյանջան և այլ քաղաքներ: Սակայն շուտով օգնության հասած ռուսական թարմ ուժերը մի քանի ճակատամարտերում պարտության մատնեցին իրանական բանակը: Վերջինս ստիպված եղավ շտապ նահանջել դեպի Արաքս գետը: Գնենրալ Պասկևիչի զորքերը 1827 թ. պաշարեցին Երևանը և հոկտեմբեր ամսին ազատագրեցին քաղաքը: Այդ կոթմաներին անձնվիրաբար մասնակցում էին հայկական կամավորական ջոկատները:

Ռուսական զորքերը անցնելով Արաքս գետը մտան իրանական Ազրբեջան և զրազեցին բազմաթիվ քաղաքներ, այդ թվում նաև նրա կենտրոն Քալբիլը: Շուտով անգլիացիների միջամտությամբ, որոնք սարսափած էին ռուսական զորքերի առաջխաղացումից, հաշտության բանակցություններ սկսվեցին: 1828 թ. փետրվարի 10-ին երկու երկրների միջև կնքվեց Քուրթ-մանչայի պայմանագիրը: Սրանով Արաքս գետը ճանաչվում էր որպես երկու երկրների սահման, Իրանը պարտավորվում էր վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք: Ռուսաստանը իրավունք էր ստանում իր հյուպատոսաբանները բացել իրանական մի շարք քաղաքներում: Դրանից բացի ձեռք էր բերվել ռազմադերձերինների փոխանակելու և, որ հատկապես կարևոր էր, տեղահանված բնակչության հայրենիք վերադառնալու մասին համաձայնություն: Այս պայմանագրով Ռուսաստանը ստանում էր կապիտուլյացիոն իրավունք, ըստ որի ռուսական հպատակները ենթակա չէին իրանական րենքներին:

Այսպիսով, Անդրկովկասի ամբողջ տարածքը անցավ Ռուսաստանին, և այնտեղ ապրող քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի ֆիզիկական գոյության համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին:

Սակայն, ոչ առանց անգլիական միջամտության, Քենդանում շարունակվում էին Ռուսաստանի դեմ ուղղված հրահրումները: Դրա հետևանքը նշավ այն, որ 1829 թ. հունվարի 30-ին մուլհանդ ամբոխը հարձակվեց Քենդանում ռուսական դեսպանության վրա: Սպանվեց ռուսական դեսպանը՝ ակադեմիկոս գրոզ Ա. Ս. Գրիբոյեզովը: Շահն իր թու խոսքով Միրզային մեծ նվերներով ուղարկեց Պետերբուրգ՝ ցարից ներողություն խնդրելու համար: Ծարն, իր հերթին, Իրանի վճարելիք ռազմատուգանքը նվազեցրեց երկու միլիոնով:

Բաքինեի շարժումը Իրանում: 19-րդ դարի կեսերին Իրանում սկզբնավորվեց սոցիալ-քաղաքական մի հոսանք, որը հայտնի է որպես

Բարինների շարժումն Գրան ժառանգեցում էին քաղաքային շրջավորութեան լայն խավերը:

Շարժումը ղեկավարում էր լոմն Ալի Մոհամեդ, որը 1844 թ. իրեն հռչակեց բար, ալանքն ալն բարձր դուռը, որի միջով իսլամի շիա ուղղութեան վերջին իմամը իր կամքն է հաղորդում մուսուլմանական աշխարհին: 1847 թ. նա հրապարակեց «Բալան» («Հայտնութուն») վերնագրով մի երկ, որը դարձավ բարինների սուրբ գիրքը: Գրքում նշվում էր, որ լուսաբանչուր դարաշրջանում մարդկութունն ունեցել է իր մարդարեն՝ Մոլանսը, Քրիստոսը, Մուհամեդը: Այժմ փոխվել է դարաշրջանը և եկել է նոր մարդարեն, ինքը՝ բարը: Նա հռչակում էր, որ բոլոր մարդիկ հավասար են, մարդկանց նոր կազմավորված համայնքները պետք է ապրեն առանձնացված նահանգներում, որտեղ գերիշխողը անհատի սեփականութեան իրավունքները կլինեն:

Իշխանութունները վախենալով շարժումից, հենց 1847 թ. ձերբակալեցին Բարին Գրանից քիչ անց հյուսիս-արևելյան Իրանում գտնվող Բեզաթ քաղաքում բարինները գումարեցին իրենց առաջին համաժողովը: Այսպիսով Բարի հետևորդներն իրենց ուսուցչից մի քայլ առաջ գնալով հռչակեցին, որ գոյություն ունեցող օրենքները այլևս ուժի մեջ չեն և ունեոր շերշանները ղրկվում են իրենց բոլոր արտոնություններից, ուրիշ իրավունքի բռնազավթումից զուլացած մասնավոր սեփականությունը անվավեր է: Համաժողովի ավարտից հետո դրա մասնակիցները մեկնեցին հյուսիսային Իրանի Մազանդարան նահանգ և Շեյխ Քարարսի կողմով վայրում հիմնեցին իրենց առաջին օրինակելի համայնքը: Նրանց կառուցած մեծ ամրոցում ապաստան գտավ մոտ երկու հազար մարդ՝ հիմնականում արհեստավորներ և գյուղացիներ: Համայնքում ամրոցը ունեցվածքը հանրայնացված էր, պատկանում էր բոլորին:

Քիչ ժամանակ անց դա՛ բարձրացած նսար էդ-Քին շահը գործեր ուղարկեց բարինների շարժմանը վերջ տալու համար: Շեյխ Քարարսի ամբողջ ուժեղ դիմադրութուն ցույց տվեց, բայց շահական զորքերին օգնութեան եկած մեծ ուժերի առաջ հարկադրված էր տեղի տալ: Գրավված ամբողջը հիմնահատակ արվեց: Սակայն դա դեռևս բարիական շարժման վերջը չէր: 1850 թ. բարինների նոր ապստամբություն սկսվեց: Զինջան քաղաքում, որը ես կարճ ժամանակում ճնշվեց: Նույնպիսի ավարտ ունեցան հարավային Իրանում, բռնկված ապստամբությունները: 1850 թ. շահի հրամանով մահապատժի ենթարկվեց Բարը:

Բարիական շարժումը հակաալատատիրական բնույթ ուներ և իր փայլով ուղղված էր օտարերկրյա կապիտալի ներթափանցման դեմ: Քննալն հաջողություն չունեցավ և ճնշվեց, սակայն մեծապես խաբխեց ավատատիրական հարարերությունների հիմքերը Իրանում:

Հետագայում Բարի հետևորդներից Բահա օլահը, զարգացնելով Նրա տեսակետները, ստեղծեց մի ուսմունք, որը հայտնի է Բահայիների շարժում տեսնով: Այն առաջացրում էր ընդհանուր հայրենիք, համամարդկային

շահեր, մեկ լեզու և այլ սկզբունքներ, որոնք դուրս էին Բաբի քաղաքների շրջանակներից:

Այդ տարիներին Նասր էգ-Պին շահի առաջին մեծ վեղիր Միրզա Բադի խան Ամիր Քարիրը փորձեց մի շարք բարեփոխումներ անցկացնել ներքում: Դրանք նպատակ ունեին ամրապնդել կենտրոնական իշխանությունը և, հստակապես, սահմանափակել Անգլիայի ազդեցությունը Իրանում:

Ամիր Քարիրի օրոք Իրանում լույս տեսավ առաջին թերթը, հիմնադրվեց առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, իրականացվեցին մի շարք այլ բարեփոխումներ: Բայց վերնախավի ներկայացուցիչների զորամասը Ամիր Քարիրը ոչ միայն հեռացվեց պաշտոնից, այլև սպանվեց աքսորում: Այսպիսով, բարեփոխումների առաջին փորձը Իրանում գրեթե ամբողջովին ձախողվեց:

Իրանի վերածուլը կիսազաղուրի: 19-րդ դարում շահը՝ Իրանի ամենակարող միապետը, անսահմանափակ իշխանություն ուներ: Երկիրը բաժանված էր նահանգների, որոնց գլուխ էին կանգնած նահանգապետները: Այդ պաշտոնին էին նշանակվում շահի որդիները կամ ազգականները: Նահանգի ամբողջ քաղաքական, վարչական և անգամ դատական իշխանությունները կենտրոնացած էին նրանց ձեռքում: Հարկերի հավաքման գործը հաճախ կապալով արվում էր հենց իրենց՝ նահանգապետներին, ինչը, անշուշտ, մեծ շարաշահումների տեղիք էր տալիս:

19-րդ դարի վերջին քաղաքում զգալի լափերի էր հասել օտարերկրյա կապիտալի մուտքը Իրան, ինչը ուժեղացնում էր կապիտալիստական տնտեսությունների տնտեսական և քաղաքական ազդեցությունը Իրանում: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Անգլիայի և ցարական Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը: Իրանը եվրոպական երկրներին հետաքրքրում էր որպես հումքի աղբյուր, սպանման շուկա և հարևան երկրներ ներթափանցելու երթուղի:

Օտարերկրյա կապիտալի ներթափանցումը իրագործվում էր անհատապես առևտրի, զանազան մենաշնորհների, հյուծող պարտքերի և այլ եղանակներով: Հատկապես ստրկացուցիչ էին օտարերկրացիներին արվող մենաշնորհները: Հնդկաստանի հետ հեռագրային կապ ստեղծելու համար Անգլիան 1862 թ. մենաշնորհ պայմանագրի կնքեց Իրանի հետ՝ ստանալով երկրի տարածքը այդ նպատակով օգտագործելու իրավունք: 1872 թ. անգլիացի կապիտալիստ բարոն Ռեյտերը ձեռք բերեց երկրի հանքային հարստությունները շահագործելու մենաշնորհ: Ռեյտերը ստացավ նաև Իրանի մաքսային եկամուտները հավաքելու իրավունքը: 1889 թ. Ռեյտերը հիմնեց երկրում առաջին բանկը, որը Իրանի ֆինանսների մեծ ներթափանցելու լուրջ քայլ էր: «Բանդե Շահնշահ» հորդորված այս հիմնարկը թղթադրամներ բաց թողնելու, ստորերկրյա հարստությունները շահագործելու իրավասություններ ուներ: Նույնպիսի մենաշնորհ իրավունք ստացավ ռուս ֆինանսիստ Պոլյակովը, որը 1890 թ. հիմնադրեց Պարսկաստանի հաշվառարկատու բանկը: Ռուսահայաստակ, ազգությամբ հայ կիսնոգովին արվեց կառավարել իրանական ափերի ձկնորսության մենաշնորհը:

1891 թ. անգլիական Քալքոթ ընկերության մենաշնորհ դարձավ ամբողջ Իրանում ծխախոտի մշակման և վաճառքի իրավունքը։ Սակայն ստարերկրացիներին հանձնված այս նոր մենաշնորհը հակառակ կողմերից ամբողջ նրկրում, որոնք հետագայում պատմագրության մեջ բնախոտի խոտովության ենթա կոչվեցին։ Իրանական պատմագրությունը ծխախոտի մենաշնորհի գնմ ժամկետից առաջ համաժողովրդական շարժումը համարում է հակահամակերպության առաջին ելույթը Իրանում։

Ժողովրդական հումկու գիմագրության ճնշման ներքո կառավարությունը ստիպված եղավ առաջ մենաշնորհը չեղյալ հայտարարել։

1879 թ. ցարական Ռուսաստանին թույլատրվեց Իրանում կազմակերպել կողակային բրիգադ, որը հետագայում վերաճեց դիվիզիայի։ Վերջինս երկրում միակ կազմակերպված դիվիզիոնական միավորն էր և բացասական դեր է խաղացել Իրանի հասարակական-քաղաքական կյանքում։

1900 թ. անգլիացիները ստացան հարավային Իրանի նավթային հանքանավայրները շահագործելու մենաշնորհը։

Իմպերիալիստական տերությունների ազդեցությունը ուժեղացնելու գործում մեծ նշանակություն ունեցան Իրանին տրվող օտարերկրյա պարտքերը։ Առաջին, Անգլիայի կողմից 1873 թ. տրված պարտքին շուտով հաջորդեցին նորանոր պարտքեր։ Զանազան առիթներով Անգլիայի և ցարական Ռուսաստանի Իրանին հատկացված գրամական փոխառությունները ավելի էին ուժեղացնում երկրի կախվածությունը, անլափ ծանրացնում Իրանական ժողովրդի վիճակը, սաստկացնում նրա շահագործումը։ Այս ամենը հող էին նախապատրաստում երկրում ստեղծված կացությունից ելք որոնելու, հասարակական-քաղաքական նոր զաղափարների ու շարժումների կազմավորման համար։ Ժողովրդական զանգվածների շրջանում հատկապես տարածում էին ստանում լուսավորիչների հայացքները։ Նրանց առաջավոր ներկայացուցիչներն առաջադրում էին վարչակարգը փոխելու միջոցով ֆեոդալական լուծը և բռնապետությունը վերացնելու զաղափարը։ Լուսավորիչները որպես երգվյալ հայրենասերներ պայքարում էին զաղութակալության դեմ, քարոզում էին հարգել և պահպանել ազգային ավանդույթները։ Հատկապես մեծ կարևորություն տալով երկրում օրինականություն հաստատելու խնդրին, լուսավորիչները պայքարում էին Իրանում սահմանադրական միապետություն հաստատելու համար։

Իրանական լուսավորիչների աչքի ընկնող ներկայացուցիչներից են Աբու Քալիբը (Քալիբով), Զեյն օլ Աբեդին Մարագեին, Մալեք օլ Մոթաթալեմին, ազգությամբ հայ Միրզա Մալքում խանը և ուրիշներ։

Լուսավորիչների գործունեությունը զաղափարական նախադրյալներ ստեղծեց Իրանի 1905—11 թթ. հեղափոխության համար։

§ 7. ԻՐԱՆԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1905—11 թթ. իրանական ճեղքափոխությունը։ 20-րդ դարի շեմին Իրանում ստեղծվել էր բավականին ծանր վիճակ։ Երկրում տիրում էին

առնական հարաբերությունները, բացակայում էին սրենքները, շահը դե-
կավարում էր միանձնյա կերպով: Ժողովուրդը շահագանջող դժգոհ էր մեծ
վեզիր Ամին էս-Սալիմանի կամայական գործողություններին: Նրան վե-
զարդում էին շնչին զոմարներին դիմաց օտարերկրացիներին երկրի շահերը
վաճառելու մեջ: Դարասկզբին Թեհրանում, Բաղրեզում, Ցաղղում և այլ
քաղաքներում արդեն ծայր առան բողոքի շանդլաձայն ցույցեր: 1903—
1904 թթ. երկրում սով սկսվեց, որի հետևանքով բազմաթիվ քաղաքներում
և խոշոր բնակավայրերում բռնկվեցին սովյալների հուղումներ: Դրանք
խաղաղեցնելու նպատակով շահը հեռացրեց մեծ վեզիրին, սակայն այդ
պաշտոնին նշանակեց հայտնի հետադիմական մի անձնավորության՝ էյն
էդ Դուլին: Տարերային շարժումները զնալով ավելի կազմակերպված ընդլի-
ստացան, Հյուսիսային Իրանում ստեղծվեցին հեղափոխական կազմակեր-
պություններ՝ Մոշահեդին անվան տակ: Շարժման մասնակիցները պահան-
ջում էին հեռացնել հետադիմական դաժան պաշտոնյաներին, անցկացնել
բարեփոխումներ և զոմարել օրենսդիր ժողով: Մոզաֆար էդ-Դին շահը
սափված տեղի աղեց՝ խոստանալով բարեփոխումներ սկսել: Շարժման
մասնակիցները այս խոստումներից որոշ չափով բավարարված վերադառ-
նան մայրաքաղաք: Սակայն շահի խոստումները խոսքից այն կողմ լանցան:

1906 թ. հուլիսին շարժումները վերսկսվեցին նոր ուժով և 1906 Պ.
օգոստոսի 5-ին հրատարակվեց շահի հրամանը, որով հռչակվում էր
Իրանի առաջին սահմանադրությունը:

Շահի սեպտեմբերի 9-ի հրովարտակով ստեղծվեց Իրանի առաջին խոր-
հրդարանը՝ մեջլիսը: Հոկտեմբերի 7-ին պաշտոնապես զոմարվեց մեջլիսի
առաջին նիստը: Մեջլիսի առաջին և զլխավոր խնդիրն էր սահմանադրու-
թյան մշակումը: Արդեն դեկտեմբերի 30-ին շահը հաստատեց «Հիմնական
օրենքը»: Այսպիսով, երկրում հաստատվում էր սահմանադրական միապե-
սություն: Հաստատվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանու-
թյունների բաժանման սկզբունքը: Երկրի տարբեր նահանգները կառավա-
րելու համար ստեղծվում էին նահանգային խորհուրդներ՝ էնջումեններ: Էն-
ջումենները առաջադիմական վերափոխությունների գործում ավելի առաջ
գնացին, քան մեջլիսը:

Սակայն սահմանադրության հաստատումով և մեջլիսի գործունեության
սկզբնավորումով հեղափոխական շարժումը չավարտվեց: Մուսով սկսվեց
Նրա հաջորդ փուլը: 1907 թ. ստորագրվեց անգլո-ռուսական մի պայմանա-
գիր, որով Իրանը փաստորեն բաժանվում էր անգլիցիստական գոտիների:
Հյուսիսը համարվում էր Ռուսաստանի անգլիցիստական գոտի, հարավը՝
Անգլիայի, և կենտրոնում թողնվում էր չեզոք մի տարածք՝ Թեհրան կենտ-
րոնով:

Մոզաֆար էդ-Դին շահի մահից հետո գահ բարձրացավ Նրա որդին՝
Մոհամեդ Ալի շահը, որը բռնապետի մոնեխանգությունը ձեռնամուխ եղավ
հեղափոխության նվաճումների վերացմանը: 1907 թ. աշնանը շահական
զորքերը շարժվեցին դեպի Թեհրան, ուր շահը մեջլիսից պահանջեց էն-
ջումենները ցրելու որոշում կայացնել, և երբ Նրա պահանջը մերժվեց, շա-

հայկան զորքերը շարժվեցին դեպի մեջլիսի շենքը: Հաջորադր Տեղափոխականներ համալսվեցին մեջլիսում՝ աչև պետականելու համար: Եանը ստիպված եղավ դիմել խոտաանալով հարգել սահմանադրությունը: 1908 թ. փետրվարի 15-ին շահի դեմ կատարված անհաջող մահափորձից հետո հետադիմությունը ուժեղացրեց իր դրժուղությունները: Իշխանությունները բացառապես պատրաստվում էին հակահեղափոխական հարձակման: Այն սկսվեց 1906 թ. հուլիսին: Հուլիսի 23-ին կողակալին բրիգադի հրամանատար, զննպակա կախումը հրամայեց ուժեղացնել մեջլիսը: Զորքերը, ներխուժելով մեջլիս, ձերբակալեցին մեծ թվով պատգամավորների և թահրանի կնշումների անդամների: Հաջորադրվեց մեջլիսի ցրման մասին: Հետադիմությունը բռնի դրժուղություններ ձեռնարկեց նաև բազմաթիվ այլ քաղաքներում:

Սակայն հեղափոխական շարժումը շարունակվեց Քալբիզում: Իրանական Ալբերկանի կնշումներ կազմված էր առաջադիմական զորքիչներից, որոնց մեջ աչիք էին ընկնում Սաթար խանը և Բադիր խանը: Եարժման մասնակիչները պահանջում էին վերականգնել սահմանադրությունը և մեջլիսի նոր ընտրություններ անցկացնել: Քալբիզի հեղափոխականներին հաջողվեց իրենց ազդեցությունը տարածել ամբողջ հյուսիս-արևմտյան Իրանում և երկրի այլ շրջաններում: Հեղափոխական շարժումը ծավալվելով ընդգրկեց Սպահան, Դիլանի նահանգային կենտրոն Բադր: 1909 թ. ապրիլի 25-ին օտարերկրյա քաղաքացիների պաշտպանության պատրվածով ուսական գալերեն, անցնելով երկրի սահմանները, զրավեցին հյուսիս-արևմտյան Իրանը և ձերբակալեցին բազմաթիվ հեղափոխականներ: 1910 թ. մարտին Սաթար խանը և Բադիր խանը Ֆիրդաւկան ջոկատներ հետ ստիպված հեռացան Քալբիզից և անցան թահրան: Սակայն ամբողջ երկրում պայքարը շարունակվում էր: Եարժումը հատկապես ընդարձակ ընդլայնվեց Դիլանի նահանգում, որտեղ զինված ջոկատների գլուխ էր կանգնած ազգությունը հայ Բիրեն Դավիթյանը, որը հայտնի էր Բիրենխան անունով: 1909 թ. զարնան Դիլանի հեղափոխականները շարժվեցին դեպի թահրան: Ապրիլին Սպահանից դեպի թահրան շարժվեցին նաև Բախտարի ջոկերի զինված ջոկատները: Սամսամ էս-Սալթանի և Սարգար Ասադի գլխավորությամբ: Հուլիսի 13-ին հեղափոխական ջոկատները հյուսիսից և հարավից մասն թահրան: Մուհամեդ Ալի շահը զահրեկեց արվեց, և միապետ հռչակվեց նրա 14 ամյա որդի Ահմեդը: Հայտարարվեց սահմանադրության վերականգնումը, նշանակվեցին մեջլիսի ընտրությունները: Նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ մեջլիսի երկրորդ գումարումը:

Թեև հետագիւմ Մուհամեդ Ալի շահն զահրեկեց եղավ, սակայն իշխանությունն անցավ լիբերալ կալվածատերերի ներկայացուցիչների ձեռքը: Սահմանադրական կարգերը վերականգնվեցին միայն արտաքնապես, և ավատատիրական համակարգը գրեթե աներևի մնաց: Շուտով սկսվեց ֆեոդալական ջոկատների զինաթափումը, որի ընթացքում սպանվեցին նաև Սաթար խանը և Բադիր խանը: Այսպես ավարտվեց 1905—11 թթ. իր-

Նախկան հեղափոխութիւնը: Դրա արդյունքները սահմանափակ եղան հատկապես այն պատճառով, որ իրանական բանվոր դասակարգը դեռեւս սահմանային վիճակում էր, իսկ գյուղացիութիւնը գրեթէ չէր մասնակցում հեղափոխական շարժմանը: 1905—11 թթ. այս հեղափոխութիւնը որակվում է որպէս բուրժուական հեղափոխութիւն՝ դեմոկրատական շարժման նկատելի տարրերով: Սկզբից եւթ շարժման մեջ երեւան եկած դեմոկրատական և լիբերալ թերթից հաղթեց լիբերալ թիւը:

Այնուամենայնիւ, 1905—11 թթ. հեղափոխութիւնը հսկայական նշանակութիւն ունեցավ Իրանի պատմութիւնի մեջ՝ նպաստելով երկրի քաղաքական հետագա առաջընթացին:

Իրանը ճամաշխարհային առաջին պատերազմի տարիներին 1914 թ. նոյեմբերի 2-ին Իրանը պաշտոնապես հայտարարեց իր շեղծութիւն մասին: Սակայն, շնայած դրան, պատերազմի տարիներին Իրանի տարածքը վերաճվեց ռազմական գործողութիւնների թատերաբեմի: 1914 թ. նոյեմբերի 14-ին թուրքական զորքերը անցան Իրանի հյուսիս-արեւմտյան սահմանը՝ պատճառաբանելով, թէ այնտեղ ռուսական զորքեր կան: Թուրքական զորքերը գրավեցին հյուսիս-արեւմտյան Իրանի մի շարք քաղաքներ: Շուտով ռուսական զորքերը հակահարձակման անցնելով հետ վերցրին գրանք: Թուրքերն այդ նակատում նահանջեցին դեպի թուրք-իրանական սահմանները, և մինչև պատերազմի վերջը այդ շրջանում այլևս ռազմական գործողութիւններ չժամայնացին:

Իրանը նշանակալի տեղ ուներ նաև կալզերական Գերմանիայի հետագա ծրագրերում: Նա քաղաքական հսկայական շանքեր էր գործադրում Իրանը իր կողմ գրավելու և նրա տարածքով դեպի Հնդկաստան արշավելու նախապարհ բացելու համար: Գերմանացիների հաշտողութիւնը հատկապես մեծ էր Իրանի հարավային շրջանում: Մայրաքաղաք Քահրանում նրանց հաշտվել էր իրենց կողմը գրավել մեջլիսի բազմաթիւ պատգամավորների, հատկապես, «դեմոկրատական» բուրժուական կուսակցութիւնի ղեկավարներին: Գերմանական ազդեցութիւնը ուժեղացումով իրադրութիւնը տաղ-նապալից էր դառնում Անգլիայի և Ռուսաստանի համար: Այդ պատճառով էլ 1915 թ. մայիսին Իրան ուղարկվեց ռուսական մի զորամաս՝ գեներալ Բաբախովի հրամանատարութիւնով: Ռուսական զորքերը առաջանալով, մատնեցան մայրաքաղաքին, և շահը ստիպված եղավ ցրել գերմանամետ Մուսթֆի օլ Մամալեքի կառավարութիւնը:

Գերմանիայի կողմնակից պատգամավորները և քաղաքական զանազան գործիչներ նոր իրադրութիւնի պայմաններում տեղափոխվեցին Ղում քաղաքը, որտեղ և կազմեցին ժամանակավոր կառավարութիւն: Վերջինիս միացան չվեզակական զինվորականների կազմակերպած ժանդարմական զորամասեր:

Նշելով նոր իրավիճակից, գեներալ Բաբախովի զորքերը շարժվեցին դեպի Ղում: Ժամանակավոր կառավարութիւնը և ժանդարմական զորամասերը նահանջեցին դեպի Թուրքիայի սահմաններին մոտ՝ Փաշան, Համադան, Քերմանշահ քաղաքները: Քերմանշահում վերակազմավորված ժամանակավոր կառավարութիւնի գլուխ կանգնեց Նեզամ է-Սալթանին: Նրանց հե-

տառչեցնելով ուսումնական զորքերը շարժվեցին դեպի Փերմանշահ, և ժամանակավոր կառավարությունը, մեղլիսի պատգամավորներն ու ժանդարմական զորամասերը գերմանական ներկայացուցիչների հետ միասին նահանջեցին դեպի Քուրքիա: Քուրքական զորքերը Միշադեւոյի Քութ ալ-Ամարա բազայում պաշարեցին անդլիական զորամասերը: Անդլիացիները հարկադրված էին խնդրել ցարին՝ օգնութիւն համար զորքեր ուղարկել: Գնեհալ Քարատովը հրաման ստացավ ներխուժել Քուրքիա՝ օգնելու անդլիացիներին: Նա արգին պատրաստվում էր ռազմական գործողություններ սկսել, երբ անդլիացիները Քութ ալ-Ամարայում ստիպված անձնատուր եղան: Ազատված թուրքական քանակը Քարատովին դիմադրաւելու համար շարժվեց դեպի Իրանի սահմանները: Ռուսական զորքերը, ի վիճակի չլինելով նահատամարտ տալ թուրքական քանակին, նահանջեցին: Քուրքական ուժերը դրավելով Փերմանշահը, հասան մինչև Համադան և պատրաստվում էին է՛լ ալեկի խորանալ իրանական տարածքում, երբ հայտնի դարձավ, որ անդլիացիները թարմ ուժեր բերելով, Միշադեւոյում նորից հարձակման են անցել և շարժվում են դեպի Բաղդադ: Իրանում գտնվող թուրքական զորքերը հրաման ստացան Բաղդադը պաշտպանելու համար անմիջապէս նահանջել Քուրքիա: Եվ երբ թուրքական քանակը նահանջեց, գնեհալ Քարատովը առաջանալով դրովեց Համադանը, Փերմանշահը և հասավ թուրքական սահմանին:

Սակայն այդ ժամանակ էր, որ Ռուսաստանում տեղի ունեցավ 1917 Ս. փետրվարյան հեղափոխությունը, և Իրանում եղած ուսումնական զորքերը կտրվեցին հայրենիքից ու ստեղծվեց միանգամայն նոր իրադրություն:

1917—1919 թթ. ազգային-ազատագրական շարժումները Իրանում 1917 թ. ցարական ինքնակալության տապալումը, բնականաբար, թուլացրեց ուսումնական ազդեցությունը Իրանում և ժողովրդի մեջ հույսեր ծնեց ընդհանրապես թոթափելու իմպերիալիստական երկրների լուծը: Ամբողջ երկրով մեկ ծայր առան ազգային-ազատագրական շարժումներ, որոնք հատկապես մեծ թափ ստացան հյուսիսային նահանգներում՝ Աղբրեշանում, Գիլանում և Խորասանում:

1919 թ. օգոստոսի 9-ին անդլիացիները Իրանին թելադրեցին մի պայմանագիր, ըստ որի Իրանը փաստորեն դառնում էր Անդլիայի պրոտեկտորատը: Այս պայմանագիրը համաժողովրդական վրդովմունք առաջացրեց, որը հատկապես սուր դրսևորվեց հյուսիս-արևմտյան Իրանում:

Իրանական Աղբրեշանում շարժումը գլխավորում էր Էդեմոկրատական կուսակցությունը՝ Եհյա Մոհամեդ Խիարանու գլխավորությամբ: 1920 թ. Քափրիզում տեղի ունեցավ ապստամբություն, որը Աղբրեշանում զեմ-կրատական կառավարություն հռչակեց: Խիարանին հայտարարեց, որ ապստամբության նպատակը Իրանի ազատագրումն է: Սակայն այս կարգախոսներին արմատական բարեփոխումներ չհետևեցին, և շարժումը խոր արմատներ չգցեց ժողովրդի մեջ: Իրանի կենտրոնական կառավարությունը, անդլիացիների անմիջական օգնութիւամբ, մի շարք զավաղորություններ նյութեց շարժման դեմ: Սեպտեմբերին կառավարական զորքերը հարձակվելով

Թավրիզի վրա, գրավեցին այն և դատաստան տեսան շարժման մասնակից-ների հետ: Սպանվեց շարժման առաջնորդ Խիարանին:

Անհամաձայն ալիլի լայն բնույթ ունեին Գիլանի նահանգում բռնկված ազգային-ազատագրական շարժումները: Այստեղ գրանց դեկավարում էին շանգալիները (անտառներում թաքնվելու պատճառով այդ անունն էին ստացել)՝ Քուլիթ խանի գլխավորությամբ:

1920 թ. հունիսի 5-ին Գիլանը հռչակվեց հանրապետություն, կազմվեց ժամանակավոր կառավարություն, որի գլուխ կանգնեց Քուլիթ խանը: Նա հայտարարեց, որ կառավարության կարևորագույն խնդիրը Իրանից անգլիացիների վտարումն է: Քուլիթ խանը ժրագրում էր Թեհրանը գրավելուց հետո սոցիալական մի շարք բարեփոխումներ անցկացնել, հողը հանձնել գյուղացիությանը:

Գիլանի Հանրապետությունը անմիջապես ձեռնամուխ եղավ իրանական բանակի կազմակերպմանը: Սակայն ոչ շատ անց տեղի ունեցած մի շարք իրադարձություններ ի յիջ դարձրին այս հզոր շարժման բոլոր ձեռքբերումները:

Թեհրանի հետադիմական կառավարությունը զինված հարձակում ձեռնարկեց Գիլանի շարժման դեմ: Կառավարական զորքերը ջախջախեցին շանգալիներին և գրավեցին Գիլանի նահանգը: Քուլիթ խանին սպանելուց հետո կառավարական զորքերը դաժան դատաստան տեսան ազատագրական շարժման մասնակիցների հետ: Անգլիացիների անմիջական օգնությամբ 1921 թ. փետրվարի 21-ին Թեհրանում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում: Հեղաշրջման ղեկավար Ռեզա խանը, որը զբաղեցնում էր ռազմական նախարարի պաշտոնը, դարձավ վարչապետ: Ի վերջո նրան հաջողվեց զահենկեց անել Կաշարներին հարստության վերջին ներկայացուցիչ Ահմեդ շահին և 1925 թ. իրեն Իրանի միապետ հռչակել: Այսպես հիմնադրվեց Փեհլևի հարստությունը:

ԱՂՔՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԷ

1. Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1977

2. Հ. Մ. Եգանյան, Իրանական պատմագրությունը Իրանի իմպերիալիստական տերությունների գաղութատիրական քաղաքականության մասին, Երևան, 1980

3. Հ. Մ. Եգանյան, Հասարակական-քառաքական հոսանքները Իրանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1986

4. М. А. Дандамаев, Культура и экономика древнего Ирана, М., 1960.

5. М. А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963.

6. И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956.

7. М. С. Иванов, Бабидские восстания в Иране (1848—1852), М., 1939.
8. М. С. Иванов, Иранская революция 1905—1911 гг., М., 1957.
9. М. С. Иванов, Очерк истории Ирана, М., 1952.
10. История Ирана, Госуниверситет, М., 1973.
11. А. Г. Периханиян, Общество и право Ирана в парфянской и сасанидский периоды, М., 1983.
12. Р. Фрай, Население Ирана, М., 1962.

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ԲԱՌԱՐԱՆ

ազգագավառ— ցեղի կամ ոչ մեծաթիվ ժողովրդի անունը կրող աշխարհագրական միավոր:

ազնաուր— ազատ

աթարեկ— խնամակալ

աղանդ— դավանության, հավատքի հարցերում ուղղափառությունից շեղում որդեգրած ուղղություն:

աղ-կոյունլու— բառացի՝ սպիտակ ուլխարականներ: Բյուրքական ցեղ, որն ալդայես էր կոչվում սպիտակ ուլխարը որպէս տոտէ՛մ (խորհրդանիշ) անշտեկու համար:

ամիրսպասալար— զորահրամանատար

ասումթավրուլի— գլխադիր

աշար— տասանորդ հարկ:

ավատ (ավատատեր, ավատատիրություն)— ժառանգության դիմաց արվող կամ ժառանգարար ստացած կալվածք (ֆեոդալ, ֆեոդալիզմ):

բազմակաթեմ— բյուզանդական ռազմավարական տարածքային բաժանման միավոր:

Բարձր Դուռ— օսմանյան կառավարության անվանումը:

բեդլին— անսպասի մարդ, քոչվոր արար:

բեկ— տես բեյ:

բեկլարբեկ— իշխանաց իշխան:

բեյ— տեր, ֆեոդալալ տն ախողոս:

բոզանո— պանդուխտ:

գաթի— զարգացման վաղ փուլում պարսկերէն լեզվի անվանումը:

գիոցեզ— Հռոմեական կայսրության խոշոր վարչա-տարածքային միավոր: Գրուզ— մուսուլմանական աղանդ:

հեիլերի— նոր զորք, հետեակային զինվորական կորպուս, որ գոյություն ուներ Թուրքիայում 14—19-րդ դդ.:

հե՛լաբեակ— քրիստոնեական դավանաբանության հետեորդ, որը Քրիստոսի մեջ ընդունում է մարդկային և աստվածային բնությունները:

զիմի— մուսուլմանական պետություններում քրիստոնյա կամ Գրեա հպատակներ, որոնք ազատ էին դավանել իրենց կրոնը և պարտավոր էին դիմահարկ (տե՛ս ջիզյա) վճարել:

գինչեր— 7—9-րդ դդ. Արենիւան Աֆրիկայից, մասնավորապէս Ջանգիբար կղզուց (արաբ. ազ-Ջինչ) խալիֆայութեան տարբեր շրջաններ բերված սեամորթ գերիներ:

դրադաշտականութիւն— նախախաձական կրօն Իրանում, որ աշխարհի հիմքում տնտեսում էր բարի ու չար ուժերի պայքարը, բարի ուժերի մարմնացում համարելով լուսնի աղբյուր արեւը:

դուլում— բռնութիւն, կեղծքում, բռնակալութիւն: Այդ անունով էր հայտնի սուլթան Արդաւի Համիդ 2-րդի տիրապետութեան շրջանը (1876—1898): Էթնոս (նաև՝ էթնիկ, էթնիկական)— ժողովուրդ, հանրութիւն:

էմիր— Արաբական խալիֆայութիւնում ֆեոդալական տիրուհոս, որ շնորհվում էր իշխաններին, նահանգապետներին, զորահրամանատարներին և այլն:

էյալեթ— տե՛ս փաշայութիւն:

էնչումեն— միութիւն, խորհուրդ: 1905—1911 թթ. իրանական հեղափոխութեան տարիներին ստեղծված հասարակական-քաղաքական միավոր: Էրանշահիկ— Իրանի շահի նշանակմամբ Աղվանքում իշխող տոհմ:

էքստերիտորիալ— կապիտալացիոն իրավունք.— օտարերկրյա քաղաքացիների՝ միայն իրենց երկրների օրենքներին ենթակա լինելու իրավունք:

էրիսթալ— իշխան

էրիսթալար— կառավարիչ, իշխան

թանգիմաթ— բարենորոգումներ, բարեփոխութիւններ. այդպես է կոչվում 1839 թ. Օսմանեան կայսրութիւնում վերափոխումների շրջանը:

թաւադ— իշխան

թարխան— ազատ գյուղացի

թեմ— եկեղեցական բաժանման տարածքային միավոր, որը ենթարկվում էր եպիսկոպոսի իշխանութեանը:

թիւու— պետութեան կողմից որոշակի ժառայութեան համար շնորհվող հողատարածք, որ հետագայում դարձավ մասնավոր հողատիրութեան ձև:

թուման— մոնղոլական շրջանի վարչական միավոր:

իլիդամ— ֆեոդալական կալվածք Եգիպտոսում, որը առաջացել է կապալով տրվող հարկի հիման վրա:

իմամ— շիաների համայնքի հոգեւոր գերագույն առաջնորդ:

իսլամ— ամենատարածված միաստվածական կրօններից մեկը: Առաջացել է 7-րդ դարում Արաբիայում: Հիմնադիրն է Մուհամմադ մարգարեն:

իսմայիլականութիւն— Շիա ուղղութիւններից մեկը, ծագել է 8-րդ դ. լիվա— վարչական միավոր

լուսավորչական— Հայաստանում Գրիգոր Լուսավորչի արմատավորած հավատքի հետեւորդ

խարաջ— հողահարկի տեսակ:

խալիֆ— բառացիորեն անդակալ, փոխանորդ, այդպես էին կոչվում Մուհամմադ մարգարեի փոխանորդները, արաբական պետութեան՝ խալիֆայութեան աշխարհիկ և հոգեւոր առաջնորդ, բոլոր մուսուլմանների

հոգեւոր առաջնորդ:

խարիշիներ— բառացի՝ հեռացածներ կամ վրդովվածներ: 7-րդ դ. առաջացած մուսուլմանական առավել ծայրահեղական կրոնական, քաղաքական հոսանքներից մեկի հետեորդները:

խաքան— խաղարների իշխանավորի տիտղոս:

խաքանատ— թյուրքական ժողովուրդների կողմից վաղ միջնադարում ստեղծված պետության տեսակ:

խեդիվ— տիրակալ, 1867- թվականից Եգիպտոսի ժառանգական կառավարչի տիտղոսը:

ժաղկոդ— նկարիչ, նկարազարդող, մասնավորապես ձեռագրերի:

կատապանություն— բյուզանդական վարչատարածքային միավոր, որը կոչված էր փոխաբերելու բանակաթևմային կառուցվածքը:

կարա-կոյունլու— բառացի՝ սև ուխտարականներ: Անունը թևակոխված է տոտեմով (խորհրդանշով):

կարմատներ— իսմայիլականության ծայրահեղական աղանդներից մեկի ներկայացուցիչները:

կյուլեմեն—սպիտակ անազատներ Իրաքում, որոնք մահմեդականացվել և պատրաստվել են զինվորական ծառայության, տե՛ս մամլուք:

կուլուֆ— բնամթերքով վճարվող հարկ:

կուրապշար— բյուզանդական տիտղոս, «պալատի հոգաբարձու»:

հազարապետ— արքունի պաշտոնյա, զորապետ

համիդիե— քրդական անկանոն հեծելազոր, սուլթան Աբդուլ Համիդի անունով:

հարստություն— նույն տոհմին պատկանող և իշխանությամբ իրար հաջորդող տիրականների ամբողջություն (դինաստիա):

հաքիմ— կառավորիչ:

հիշրա— Մուհամմադի և նրա կողմնակիցների տեղափոխությունը Մեքքայից Մադինա 622 թ.:

հուլայադանություն— հրեաների միաստվածական կրոնը: Առաջացել է Պաղեստինում մ. թ. ա. 1-ին հազարամյակում:

զալա— բնամթերքով վճարվող հարկ

զեզլուաշ— կարմրագլուխ:

Հալաբ— մուսուլմանների ս. Գիրքը:

ճղեղիդե, ճղեղիդի— Արևմտյան Վրաստանում եպիսկոպոս

Մադրիբ— Արևմուտք (արաբ.)

մամաուփալի— «հայր տեղ», սյուլեթեն

մամլուք— սպիտակ անազատներ Եգիպտոսում, հատուկ զինված և պատրաստված զինվորական ծառայության համար

Մարզարի— Աստուծոց հայտնությունների ստացող և դրանք քարոզող անձնավորություն

մարզպան— պարսկական արքունիքի կողմից նշանակված մարզի կառավարիչ:

մարտիկ— արևելյան քրիստոնեական եկեղեցիներից մեկի հետեորդ:

ժողաբիւ— շինական

ձեփե— թաղափոր

ձթափար— իշխան

ձիարեականութիւն— Քրիստոսի միայն աստվածային բնութիւնը քարոզող ուսմունք:

ձիարարութիւն— կաթոյիկ եկեղեցու հետ միավորման ձգտող դավանարանական ուղղութիւն:

ձիարողութիւն— կաթողիկոսին ենթակա եկեղեցական պաշտօնյա, որը վարում է ափական աթոռի գործերը:

ձիբի— պետական հողեր Օսմանյան կայսրութիւնում:

ձիլլեթ— ժողովորդ, ազգային խումբ: Օսմանյան կայսրութեան բնակչութիւնն ըստ ազգային-կրօնական պատկանելութեան բաժանված էր հունական, հայկական, հրեական և այլ միլլեթներով:

ձիլդեորաթութուն— արքունի դրամանյակի պետ
մութաստօրֆ— վարարքա, ինքնավար կիթանանի կառավարիչ:

ձուլթագիմ— իլլիզամի տերը:

ձուլց— մասնավոր սեփականատիրական հողեր

ձուլումաններ— իսլամի հետեորդներ

ձուրամ— խնամակալ, կառավարիչ

ձուրամութիւն— կառավարչութիւն, իշխանութիւն

ձստփիւր— զեղչուկ

նահդա— զարթոնք, աշդպես է կոչվում 19-րդ դ. արաբական երկրներում սկսված ազգային-մշակութային վերելքը:

նոր կտակարան— ս. Գրքի երկրորդ կեսը, ուր Քրիստոսի ուսմունքն է ներկայացվում:

նփրապետութիւն— եկեղեցու սպասավոր հողերականների աստիճանական, պաշտօնական սանդղակ:

նուսխուրի— բոլորգիր

քելի— ամազ, ցեղապետ:

քերիֆ— Մերքայի ժառանգական կառավարող

քիաներ— իսլամի երկու հիմնական ուղղութիւններից մեկի հետեորդները՝ խալիֆ Ալիի կողմնակիցները: Ուղղութիւնն առաջացել է 7-րդ դ.

ջվիլի— «որդի», վասալ

Պատկերամարտ— Տիեզերական եկեղեցու դավանարանական ուղղութիւն, որը չի ընդունում պատկերների պաշտամունքը:

պատկերապաշտ— Տիեզերական եկեղեցու դավանարանական ուղղութիւն, որն ընդունում է պատկերների պաշտամունքը:

քիզլա— գլխահարկ, որ մուսուլմանական պետութիւններում գանձվում էր քրիստոնյա հպատակներից:

քիզլազ— իսլամի պարտադրած սրբազան պատերազմ ընդդէմ անհավատներին

ռ. Գիրք— Փրիստոնեոսթյան ուսմունքն ամփոփող և պաշտամունքի առարկա
— գարձաժ հին ու անտիկ գրվածքների ժողովածու:

ապագրոշո— ռազմավարական խոշոր միավոր կախնթում

ապլեկո— գաղստանցի լեկների արշավանքները հետ մղելու նպատակով հա-
վածվող հարկ

առուրի— դրամական հարկ

առնջաք— վարչական փոքր միավոր, շրջան կամ մարզ:

ապարապետ— ռազմավարություն տնօրինող բարձրագույն պաշտոնյա, զո-
րավար, գլխավոր հրամանատար:

առքառնեգ— բյուզանդական բանակի զորահրամանատար, որը կարող էր
ունենալ նաև վարչական իշխանություն:

առլթան— թագավոր, մուսուլմանական երկրներում բարձրագույն կառա-
վարողի տիտղոս

առնիններ— իսլամի ուղղափառ ուղղություն հետևորդներ

առլթիզմ— իսլամական աղանդ, որն Աստծո ճշմարտությանը հասնելու
ուղին համարում էր ինքնակատարելագործումն ու ինքնազրկումը:

վալի— նահանգապետ, կառավարիչ

վահուֆ— մուսուլմանական հոգեւոր հաստատություններին պատկանող հողեր
և գույք, անշարժ կայք:

վառալ— ավատատիրոջից կախված անձ միջնադարում: Նաև՝ մեծ և ուժեղ
պետությունից կախման մեջ գտնվող պետություն:

վեդեր— մինիստր:

վիլայեթ— մոնղոլական և թուրքական խոշոր վարչական միավոր, նահանգ:

վկայարանություն— հանուն քրիստոնեական հավատքի զոհվածի՝ վկայի
կենսագրական շարագրանք:

փադիշահ— օսմանյան սուլթանի պաշտոնական տիտղոսը:

փաշա— ֆեոդալական տիտղոս, փոխարքա, նահանգի կառավարիչ:

փաշայություն— նահանգ, որը ենթակա է փաշայի:

Փաարա— բառացի՝ խորանարդ: Իսլամի գլխավոր սրբազան տաճարը
Մեքքայում: Իրենից ներկայացնում է բարձր պատեր ունեցող խորա-
նարդաձև շինություն:

քալանթար— քաղաքազուլա Իրանում և Մերձավոր ու Միջին Արևելքի այլ
երկրներում:

քաղկեդոնականություն— Փաղկեդոնում 451 թ. կայացած եկեղեցական որո-
շումների հետևորդություն, ըստ որի Քրիստոսը ե՛ր մարդ է, ե՛ր աստված:

Փեյլահ— հողագործ գյուղացի:

Փերման— հրահանգ, հրամանագիր:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1-ին, Հին Միջագետք	8
§ 1. Հին Միջագետքը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում	8
§ 2. Միջագետքը մ.թ.ա. 2-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 7-րդ դարը	14
§ 3. Հին Միջագետքը մ.թ.ա. 7-րդ դարից մինչև մ.թ.ա. 4-րդ դարը	19
Գլուխ 2-րդ. Փոքրասիական երկրներ	24
§ 1. Փոքր Ասիան մ.թ.ա. 3-րդ հազ. մինչև մ.թ.ա. VI դ. կեսերը	24
§ 2. Փոքր Ասիան Աքեմենյան Պարսկաստանի և Հռոմի տիրապետության շրջանում: Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի բախումը Փոքր Ասիայում	34
§ 3. Բյուզանդական կայսրությունը 7-ից 15-րդ դարերում	44
Գլուխ 3. Արարական երկրներ (Նդիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրաք)	
§ 1. Արարները 7—5-րդ դարերում	53
§ 2. Օսմանյան տիրապետության հաստատումը արարական երկրներում (16—18-րդ)	67
§ 3. Պայծար Օսմանյան տիրապետության տապալման համար (19-րդ դ.— 1918 թ.)	79
§ 4. Արարական երկրները Արզուլ Համիդ 2-րդի տիրապետության ներքո	88
Գլուխ 4-րդ Բուրքիա	97
§ 1. Օսմանյան պետության կազմալուծումը և վերածումը կայսրության. 13—19-րդ դդ.	97
§ 2. Օսմանյան կայսրությունը 1876—1918 թթ.	110

Գլուխ 5-րդ. Վրաստան	122
§ 1. Վրաստանի հնագույն ժամանակներից մինչև մ. թ. 4-րդ դարը	122
§ 2. Վրաստանը վաղ ավատատիրական ժամանակաշրջանում	126
§ 3. Վրաստանը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում	136
§ 4. Վրաստանը 16—18-րդ դարերում	147
§ 5. Վրաստանը կապիտալիզմի դարաշրջանում	153
§ 6. Վրացական հկնդեցին, մշակույթը	154
Գլուխ 6-րդ. Աղվանք	160
§ 1. Աղվանքը հնագույն շրջանից մինչև մ. թ. 3-րդ դարը	160
§ 2. Աղվանքը մ. թ. 3—9-րդ դարերում	166
§ 3. Աղվանական հկնդեցին և մշակույթը	177
Գլուխ 7-րդ. Ադրբեջան	
§ 1. Տարածքը և էթնիկական կազմը	183
§ 2. Արեևլյան Անդրկովկասը 11—17-րդ դարերում	188
§ 3. Արեևլյան Անդրկովկասը 18—19-րդ դարերում	193
Գլուխ 8-րդ. Իրան	196
§ 1. Հին Իրան	196
§ 2. Իրանը մեր թվարկության սկզբին	203
§ 3. Իրանը 7—15-րդ դարերում	207
§ 4. Իրանական պետության վերականգնումը և Սեֆյան հարստության հաստատումը	211
§ 5. Իրանը 18-րդ դարում	217
§ 6. Իրանը 19-րդ դարում	220
§ 7. Իրանը 20-րդ դարի սկզբին	225
Օտար բառերի և տերմինների համառոտ բացարան	232

Հաստատված է Հայաստանի Հանրապետության
լրագրության նախարարության կողմից

Ուսումնական ձեռնարկի հեղինակներ՝ Հ. Զ. ԱՆԻՍՅԱՆ, ներածու-
թյուն, Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ, գլուխ 2-րդ, § 3, Մ. Տ. ԲՈՋՈՅԱՆ, գլուխ 4-րդ,
§ 1, Հ. Մ. ԵՅԱՆՅԱՆ, գլուխ 8-րդ, § 6, 7, Ն. Հ. ՀՈՂԶԱՆՆԻՍՅԱՆ, ներա-
ծություն, գլուխ 3-րդ, § 2, 3, Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գլուխ 5-րդ, Ա. Ա.
ՄԵԼԹՈՆՅԱՆ, գլուխ 3-րդ, § 1, Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գլուխ 5, գլ. 6, § 3,
գլ. 7, § 1, Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ, գլուխ 7-րդ, § 2, 3, Ռ. Դ. ՍԱՀԱԿՅԱՆ, գլուխ
4-րդ, § 2, Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ, գլուխ 1, գլուխ 2-րդ, § 2, Հ. Ս.
ՍԱՀԱԿՅԱՆ, գլուխ 6-րդ, § 1, 2, Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆ, գլուխ 8-րդ, § 3, 4, 5,
Ա. Վ. ՔՈՍՅԱՆ, գլուխ 2-րդ, § 1, Ն. Հ. Հովհաննիսյանի, Գ. Խ. Սարգսյա-
նի, Պ. Մ. Մուրադյանի, Հ. Զ. Ալեքսանյանի խմբագրությամբ:

Հրատ. խմբագիր՝ Գ. Ռ. Հովհաննիսյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Զբաղացալանյան
Ցեխ. խմբագիր՝ Ռ. Ե. Ախիբյան

ИБ—3321

Հանձնված է շարվածքի 18. 04. 1992 թ., Ստորագրված է տպագրության
29. 06. 1992 թ., Զափսը՝ $84 \times 108^{1/32}$, Թուղթ՝ տպ. № 2, Տառատեսակ
«Գրքի սովորական», Տպագրությունը բարձր, Պայմ. 12,6 մամ., տպ. 1
գուն. թ. օտ., Հրատ. 11,0 մամ., Տպաքանակ 70.000 (II թողարկ
(40001—70.000), Պատվեր 2, Գինը՝

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կորյունի 19ա:

Издательство «Луйс», Ереван-9, ул. Корюна 19а.

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր մամուլի վարչության № 1 տպ
րան, Երևան—10, Հանրապետության 65:

Типография № 1 управления по печати при Совете Министр
Республики Армения, Ереван-10, ул. Арапетутян, 65.